ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԵՐԵՎԱՆ 1947

ՀՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ը(48.925)
Հ-42

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1274.



ԵՐԵՎԱՆ 1947

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 4-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ ԵՎ 5-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

Հայոց տանը գտնվելով Առաջավոր Ասիայի ամենաբարձրաշիր ժողում և ունենալով ստրատեգիական կարևոր նշանակություն, մշտապես հանդիսացել է պատերազմի թատերաբեմ Աբեվնելքի և Արևմուտքի մեծ պետությունների միջև։ Միայն Տիգրան II-ի ժամանակ (95—55 մ. թ. ա.) նա մի քանի ժամանակ զերծ է մնում արտաքին պետությունների կռիվների ասպարեզ դառնալուց։ Սակայն դրանից հետո, մեր տարեգրության առաջին չորս դարերի ընթացքում, Հայաստանը դարձյալ շարունակում է դառնալ երկարամյա պատերազմների կռվախնճոր Պարսկաստանի և Հռոմի միջև, մի հանգամանք, որ կազմում է հայ ժողովրդի պատմության ապեցիֆիկ կողմը և հակվածել է այլ ժողովուրդների պատմության մեջ։ Որ Հայաստանն իր պատմության ընթացքում մշտապես եղել է օտարերկրյա արշավանքների ու նվաճող բանակների ասպատակությունների թատերաբեմ, այդ մասին առավել պարզությամբ ասել է 10-րդ դարի նշանավոր արաբ աշխարհագիր Իբն-ալ-Ֆաքի Համադանին իր «Քիթաբ-ալ-Բուլդան» («Երկրների գիրք») վերնագրով աշխատության մեջ։ Նա գրում է.

«Ես գտա գրքերի մեջ... որ Մեքքան ավերում են հաբեշները, Մեդինան՝ սովը, Բասրան՝ ջրհեղեղները, Քուֆը՝ գաղթը, Ջեթալը քարուքանդ է լինում կայծակների և երկրաշարժների հարվածներից, Խորասանը՝ վանդան պատահարներից, Ռեյը՝ դելամակյինների և Թաբարստանցիների բռնություններից, իսկ ինչ վերաբերում է Հայաստանին և Ադրբեջանին, ապա այդ երկու երկրները կործանվում են բանակների ձիերի սմբակներից և մեկ էլ կայծակների ու երկրաշարժների հարվածներից»։

Իբն-ալ-Ֆաքին, որպիսզի ընդգծած լինի, որ իրոք Հայաս-

տանը շատ հաճախ քայքայվել է արշավող բանակների ասպատակություններից, բերում է հետևյալ խոսակցությունը. «Միբիացի Մաքսոլն ասաց, «Ամենից հաճախակի ավերումների ենթակա երկիրը Հայաստանն է։ Հարցրին.—Ի՞նչն է դրա պատճառը։ Նա ասաց.—Հնծելազորի սմբակները»։[1]

Նույն ձևով է նկարագրում Հայաստանի դրությունը նաև 13-րդ դարի հայ պատմիչ Մատթեոս Ուռհայեցին, երբ ասում է՝ «... Սմբակք երիվարաց նոցա մաշեցին զերկինս և զերեսս...»։[2]

Ճիշտ է, Ուռհայեցու խոսքերը վերաբերում են ավելի ուշ շրջանին, սելջուկների արշավանքներին, բայց այդ ընդհանուր երևույթ է եղել Հայաստանի համար և կրել է պարբերական բնույթ։

Հայ Արշակունյաց թագավորությունը, որ հիմնվել էր 66 թվին, չկարողանալով դիմանալ անվերջ կրկնվող արտաքին արշավանքներին, ինչպես և ներքին ֆեոդալական կենտրոնախույս տարրերի հաճախակի բարձրացրած ապստամբություններին, աստիճանաբար թուլանում, կորցնում է իր անկախ սուվերեն իրավունքը և 387 թվի Տիզբոնի դաշնագրությամբ վերջնականապես բաժան-բաժան է լինում Հայաստանը տիրելու համար պայքարող Սասանյան դինաստիայի և Հռոմեական կայսրության միջև։ Երկրի արևմտյան մասը—մեկ հինգերորդը, բաժին է ընկնում Հռոմին (հետագայում՝ Բյուզանդական կայսրության), իսկ արևելյան մասը—չորս հինգերորդը՝ անցնում է Սասանյան Պարսկաստանին։ Սահմանային գիծը ձգվում է հյուսիսից-հարավ—Տրապիզոն—Կարին—Նիփկերտ—Մծբին քաղաքներով, բաժանելով Հայաստանը երկու մասի։ Արևմտյան մասը, կամ ինչպես անվանվեց նաև Բյուզանդական Հայաստան, Արշակ III-ի մահվանից հետո, որը դեռ երկրի մասնատումից առաջ անցել էր Հայաստանի արևմտյան գավառները և իշխում էր այնտեղ, վարչականորեն միացվում է կայսրությանը և այլևս այդտեղ թագավոր չի նշանակվում։ Արևմտյան Հայաստանի կառավարման իրավունքը հանձնվում է կայսրների կողմից նշանակված կառավարիչներին, որոնք կոչվում էին կոմեսներ։ Իսկ Արևելյան կամ Պարսկական Հայաստանում հայ Արշակունյաց թագավորությունը, չնայած իր փաստական դրությանը, շարունակում է պահպանել իր սեփական գոյությունը ավելի քան 40 տարի, որի ընթացքում իրար հաջորդելով՝ թագավորում են ևս երեք հայ Արշակունի և մեկ պարսիկ դահակալ։ Այդ դահակալներից ամենից երկար իշխում է Վռամշապուհ թագավորը (391—415)։ Նրա ժամանակ Հայաստանը տնտեսական և կուլտուրական մեծ վերելք է ապրում։

Վռամշապուհ թագավորի մահվանից հետո, հայ նախարարների միջնորդությամբ, Տիզբոնի արքունիքը 415 թվին բանտից ազատում է Խոսրով III-ին և ուղարկում Հայաստան՝ կրկին անգամ թագավորելու։ Նա հազիվ կարողանում է իշխել ութ ամիս և մահանում է նույն թվին։ Պարսկաստանի թագավոր Հազկերտ I-ը (399—420) օգտվելով այդ առիթից, Հայաստանի կառավարման իրավունքը հանձնում է իր որդի Շապուհին (416—419), նպատակ ունենալով վերջ տալ հայ Արշակունիների թագավորությանն Արևելյան Հայաստանում։ Շապուհն իր զորքով մտնելով Հայաստան, ուժեղ դիմադրության է հանդիպում երկրի ներքին ուժերի կողմից։ Հայերը չէին համակրում նոր դահակալին, որովհետև զգում էին, որ նա ճանապարհ է հարթում իրենց անկախության վերացման համար։

Շապուհ պարսիկն իր վարած խիստ քաղաքականությամբ իրենից հեռացնում է մինչև անգամ պարսկական քաղաքականությանը կողմնակից հայ նախարարներին։ Նրա դեմ եղած դժգոհությունները դնալով ուժեղանում են, իսկ նա ի պատասխան դրան՝ ևս առավել խստացնում է հալածանքը, ավերածնում հարկերը և աքսորում ու բանտարկում է երկրի աչքի ընկնող գործիչներին։ Նոր հիվանդության պատճառով Շապուհը շուտով վերադառնում է Տիզբոն՝ գահը ժառանգելու։ Այդ ժամանակ Պարսկաստանում ծագած ներքին խռովությունների հետևանքով նա ապանվում է և Հայաստանը ազատվում է պարսկական այդ բռնակալից։

Շապուհի հեռանալուց հետո, հայերն ապստամբում են (420 թ.) և Հայաստանից վռնդում պարսկական զորքերին ու կառավարիչներին, սակայն Պարսկաստանում ներքին դահակա-

[1] Biblioth. Geograph Arab V, 1855, էջ 257, Н. Я. Марр „Ани", Москва-Ленинград, 1934 г. стр. 8.

[2] Մատթեոս Ուռհայեցի — «Ժամանակագրություն», Վաղարշապատ, 1890 թ., էջ 140։

լական կռիվների ժամանակ հաղթանակած Վռամ V-ը (422—439) հատուկ բանակ է ուղարկում Հայաստան (422 թ.) հայերի ապստամբությունը ճնշելու։ Երկրի ռազմական ուժերը, հայ նախարարների դիմադրությամբ ամրանալով բերդերում, ամրոցներում և անառիկ վայրերում՝ կռվի են պատրաստվում։ Պարսկա-հայկական այս կոնֆլիկտը, սակայն, վերջանում է հաշտությամբ, առանց լուրջ ընդհարումների, որովհետև Սասանյան դինաստիայի նոր գահակալը վախենում էր, որ հայերի հետ սկսվող պատերազմը կարող է նորից առաջացնել ներքին կռիվներ և երկպառակություններ Պարսկաստանում։ Կնքված հաշտությունից հետո Տիգրանի արքունիքը, հայ նախարարների հավաձայնությամբ, Հայաստանում թագավոր է կարգում Վռամշապուհի որդի Արտաշեսին (423—429), որին պարսիկները անվանում են Արտաշիր։ Արտաշեսի թագավորությամբ երկու երկրների միջև միաժամանակ հաստատվում է խաղաղություն։

Արտաշեսի թագավորությունը Հայաստանում երկար չի տևում։ Թույլ բնավորություն ունենալով, նա չի կարողանում գլխավորել պետությունը և իր շուրջը հավախմբել նախարարներին։ Արտաշեսն ավելի շուտ իրեն նվիրում է գինի ու շվայտ կյանքի, քան թե երկրի կառավարման գործին։

«Եվ Արտաշեսը մի դեռահաս և իպամոլ մարդ էր ու մեծ անառակության մեջ էր անց կացնում իր թագավորության օրերը»։

«Եւ էր Արտաշէս այր մանուկ և իպամոլ, և բաղում անառակութեամբ վարեր զթագաւորութիւնն»[1]։

Արտաշես թագավորից սկսում են դժգոհել նախարարները, առանձնապես նրանք, որոնք կապված էին Տիգրանի արքունիքի հետ։ Այդ դժգոհությունը հրահրվում էր պարսկական արքունիքի կողմից՝ Արևելյան Հայաստանում հայ Արշակունյաց թագավորությանը վերջ տալու դիտավորությամբ։

Արտաշեսից դժգոհ նախարարները դիմում են Սահակ կաթողիկոսին, որը տոգորված էր իր երկրի անկախության պահպանման գաղափարով, ժխանալու իրենց և բողոք ներկայացնելու Տիգրանի արքունիքին Արտաշես թագավորի վրա՝ նրան գահընկեց անելու համար։ «Նրանք եկան մեծ Սահակի մոտ ու բողոքեցին և նրան էլ հրավիրեցին իրենց օգնելու, որ չարաճոսեն (Արտաշիրի) վրա Պարսից թագավորի առաջ, իրենց թագավորին հրաժարեցնել և պարսիկ բերեն աշխարհին կառավարիչ։ «Որոց եկեալ առ մեծն Սահակ, զբողոք բարձին՝ հրաւիրելով և զնա յօգնականութիւն ինքեանց, չարաճոսել առ արքային Պարսից, և ի բաց ընկենուլ զթագաւորն իւրեանց, և պարսիկ ածել ունող աշխարհիս»[1]

Սահակ կաթողիկոսը, որ լավ ըմբռնում էր Տիգրանի արքունիքի քաղաքականության Հայաստանի նկատմամբ, ինչպես և մի շարք հայ նախարարների գավազրությունները ուղղված հայկական պետության և հայ թագավորի դեմ, մերժում է նախարարների առաջարկը, չցանկանալով վոխել իր «հիվանդ ոչխարն առողջ գազանի հետ»։

«Քաւ լիցի ինձ, որ ես իմ մոլորված ոչխարը գայլերին մատնեմ, և ես չպատեմ բնկվածին կամ հիվանդացածին, այլ գահավիժ անեմ... Այլ հեթանոսներին մատնել ավելի մեծ կործանման համար (ես) հանձն չեմ առնում, համաձայն այն խոսքին, թե մի՛ մատնիր գազաններին մի անձ, որ խոստովանում է քեզ, որովհետև ավազանով է զրոշմված, թևպետ և անառակ է, պոռնիկ է, բայց քրիստոնյա է...։ Եվ ինչպես կարող եմ ես իմ հիվանդ ոչխարը վոխել առողջ գազանի հետ, որի առողջությունը մեզ վնաս է»։

«Ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխարս, և ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն, այլ գահավէժ առնել։ ...Այլ հեթանոսաց, յառաւել կործանումն՝ ոչ առնում յանձն, ըստ այնմ՝ թէ «մի՛ մատնիր գազանաց զանձն խոստովանող քեզ։ Քանզի զրոշմեալ է աւազանաւն, թէպէտ և անառակ է. պոռնիկ է, այլ քրիստոնեայ է...։ Եւ զիարդ լինիցի այդ, փոխանակել պիտ ախտացեալ ոչխարն ընդ առողջ գազանին, որոյ առողջութիւնն է մեզ պատուհաս»։[2]

Սահակ կաթողիկոսի հանդիմանությունները ոչ մի ազդե-

[1] «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», էջ 39, Թիֆլիս, 1908 թ.։

[1] «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913 թ., էջ 357։

[2] Նույն տեղում, էջ 357—358։

ցութիւն չեն ունենում դէմդոհ նախարարների վրա, և որպես հոգևորականութեան ներկայացուցիչ իրենց հետ վերցնելով Բզնունեաց Սուրմակ եպիսկոպոսին գնում են Տիզբոն և բողոքում Արտաշեսի վրա։

Տիզբոնում նրանք միաժամանակ մեղադրում են նաև Սահակ կաթողիկոսին Բյուզանդիայի հետ քաղաքական հարաբերութիւններ ունենալու մեջ։

«Եվ բոլորը մեկ եղան ու գնացին Պարսից Վռամ Թագավորի մոտ Սուրմակ անունով մի Արծկեացի վառամոլ քահանայի հետ մեկտեղ, որ չարախոսեն իրենց Արտաշիր Թագավորի և մեծն Սահակի վրա, որպես թե նրանք թեքվել են հույների կողմը։

«Եւ մինչեռ ամենքին, անցին առ արքայն Պարսից Վռամ, հանդերձ Սուրմաեաւ ոմամբ Արծկէացի վառամոլ երիցու, չարախօսել զարքայէն իւրեանց զԱրտաշիրէ, և զմեծէն Սահակայ՝ զՅունաց դլեալ խորհրդովն»։[1]

Իսկ Թովմա Արծրունին ավելացնում է.

«...Սկսեցին զանազան ափեղ սփեղ խոսքերով դրպարտել սուրբ Սահակին, որպես թե նա չի ուզում, որ պարսիկները իշխեն և հարկ հավաքեն ու զորք պահեն Հայաստանում, այլ հույների իշխեն է ցանկանում»։

«...Սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսքանչելին Սահակայ, որպէս թէ ոչ կամի զթագաւորելն Պարսից և հարկել Հայոց և զօրավարել, այլ զթագաւորելն Յունաց ցանկայ գտանել...»։[2]

Սասանյան դինաստիան, որ վաղուց հարմար առիթ էր սպասում վերջ տալու հայ Արշակունյաց թագավորների ինացորդներին, օգտվում է հայ նախարարների բանսարկութիւններից, Տիզբոն է կանչում Հայոց Արտաշես թագավորին և Սահակ կաթողիկոսին,[3] մեղադրում նրանց Բյուզանդիայի հետ հարաբերութիւններ ունենալու և ապստամբութիւն բարձրացնելու մտա-

1 Մովսէս Խորենացի, էջ 358։

2 Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 129։

3 Գ. Փարպեցի, էջ 51։

դրութեան մեջ, թեև նման քայլ նրանք չէին կատարել, և զրկում է առաջինին թագավորութիւնից, իսկ երկրորդին՝ կաթողիկոսութիւնից (429 թվին)։[1]

Արտաշեսի գահընկեցութիւնից հետո, Տիզբոնի արքունիքն Արևելյան Հայաստանը վեր է ածում մի մարզի, միացնելով այն Պարսկաստանին, որպես նրա վարչական միավորներից մեկը, բայց ժամանակավորապես պահպանում է նրա ներքին ինքնավարութիւնը։ Այդ նոր մարզի կառավարման իրավունքը հանձնվում է արքունիքի կողմից նշանակված կառավարիչներին, որոնք կոչվում էին մարզպաններ։ Մարզպանները կարող էին լինել թե պարսիկ և թե պարսիկներին հարող հայ նախարարներից։ Հայաստանի առաջին մարզպանն է լինում Վեհմիհրշապուհ պարսիկը (429—441)։ Արևելյան Հայաստանն ավելի քան 200 տարի կառավարվում է պարսկական արքունիքի կողմից նշանակված մարզպաններով, դրա համար էլ այդ շրջանը կոչվեց մարզպանական։

Այդպիսով, 429 թվականից վերանում է հայ Արշակունյաց թագավորութիւնը Հայաստանում, մի թագավորութիւն, որն ունեցել է ավելի քան 360 տարվա կյանք։

Տիզբոնի արքունիքն Արտաշեսին գահընկեց անելուց հետո հայկական արքունիքի գույքը և ունեցվածքը բռնագրավում ու սեփականացնում է՝ իրեն համարելով հայ Արշակունյաց թագավորութեան ունեցվածքի իրավասու տերը։

Հայկական թագավորութեան վերացումով Հայաստանը կորցնում է իր անկախութիւնը և ընկնում պարսկական բռնակալ արքաների դաժան լծի տակ։

Այդ մասին հետաքրքիր տեղեկութիւն է տալիս Ղազար Փարպեցին։

«...վերացավ թագավորութիւն Արշակունյանց ցեղի մինչից Արտաշեսի թագավորութեան վիճակորդ տարում... և Հայաստանն ընկավ պարսից անօրեն իշխանների ծառայութեան լծի տակ»։

«...բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամի Արտաշէսի, ըստ բանի երանելոյ առն Աստուծոյ

1 Մովսէս Խորենացի, էջ 358։

մեծի քահանայապետին նեղսէին, և անկաւ աշխարհս Հայոց ընդ լծով ծառայութեան անօրէն իշխանութեան Պարսից»։[1]

Պարսկական արքունիքը Հայաստանի հարկային և դինվորական վարչութիւնները հանձնում է իր կողմից նշանակված մարզպաններին, իսկ երկրի կառավարման մյուս վարչութիւնները թողնում է հայերին։ Մարզպանի հիմնական պարտականութիւնն էր բաշխել հարկերը, հավաքել այն և ուղարկել Տիզբոնի արքունիքը, հսկել, որ երկրում ապստամբութիւններ տեղի չունենան և մարզպանական Հայաստանի սահմանները պաշտպանել արտաքին հարձակումներից։ Մարզպանների վարչական կենտրոնը դառնում է Դվին քաղաքը։ Պարսիկ մարզպաններն իրենց հետ կենտրոնից բերում էին մեծ շքախումբ և զորաժառ։

Մարզպանութիւնից բացի՝ այս շրջանում կարևոր պաշտոնութիւնները հանդիսանում էին հազարապետութիւնը և սպարապետութիւնը։ Հազարապետութեան պաշտոնի ֆունկցիան էր՝ կառավարել երկրի ներքին գործերը։ Այս պաշտոնը վերջին շրջանում վարում էին Ամատունի նախարարները։ 451 թվից առաջ այդ պաշտոնում էր Վահան Ամատունին, որին Եղիշեն համարում է «իբրև զնայր վերակացու» երկրի վրա։ Իսկ սպարապետութեան պաշտոնը ժառանգաբար վարում էին Մամիկոնյան իշխանները։

«Արևելքում կառավարութիւնը միշտ էլ ունեցել է միմիայն երեք վարչութիւն—ֆինանսական (կենդրում երկրի ներսում), ռազմական (ներքին և արտաքին երկրների ավարառութիւն), հասարակական աշխատանքների վարչութիւն (հոգատարութիւն վերարտադրութեան մասին)»։[2]

Վերոհիշյալ վարչութիւններից Տիզբոնի արքունիքն առաջին երկուսը պահում էր իր ձեռքում, իսկ վերջինը թողնում է հայ իշխաններին։

[1] Ղազար Փարպեցի, էջ 52։

[2] «Մարքս և Էնգելս», «Նամակները», հատոր I, Երևան, 1936 թ., էջ 91։

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 4-ՐԴ—6-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Ա.

Հայաստանը 4-րդ—6-րդ դարերում իրենից ներկայացնում էր տիպիկ ֆեոդալական նախարարական մի երկիր։ Ֆեոդալական հարաբերութիւնները, որոնք վերջնականապես ձևավորվում են հայ Արշակունյաց թագավորութեան շրջանում, ֆեոդալական երկու հիմնական դասակարգերով՝ ֆեոդալներով և գյուղացիներով, արագ թափով զարգանում են մարզպանութեան ժամանակ։ Հայաստանում ֆեոդալը կոչվել է «նախարար», իսկ գյուղացին՝ «շինական»։

Մինչև ֆեոդալիզմի ձևավորումը, Հայաստանը երկար ժամանակ ապրում էր գյուղական համայնքի շրջանը, իսկ գյուղական համայնքից ֆեոդալական հասարակակարգին անցնելը նույնպես տևել է երկար պրոցես, մինչև որ նախկին սատրապները, տանուտերները, պատվնորդները և կառավարիչներն աստիճանաբար տիրեցին հողային ընդարձակ տարածութիւնների, կառուցեցին ամրութիւններ և իրենց տիրապետութեան շրջանում գյուղացիութեանը կախման մեջ դրին իրենցից։ Այդպիսով Հայաստանում առաջանում է խոշոր հողատիրութիւն՝ պրիմիտիվ արտադրութեամբ, գյուղացիական ինքնուրույն, ժանր ու ցրված տնտեսութիւններով։ Այդ ձևով կազմվում է ֆեոդալական արտադրական եղանակը, ընդ որում արտադրութեան հիմնական միջոցը հողն էր, որը Հայաստանում բաժանվում էր երեք տեսակի՝ նախարարական, եկեղեցական, արքունի կամ պետական։

Հայ Արշակունյաց թագավորութեան անկումից հետո, հայ նախարարները վասալական կախվածութեան մեջ են ընկնում պարսկական թագավորից։ Տիզբոնի արքունիքն է այս անգամ կարգավորում հայ նախարարների «գահի» և «պատվի» իրավունքները։ Դա երևում է այն «գահնամակից», որ Մանակ կաթողիկոսի կողմից ուղարկվել է Տիզբոն։[1]

Պարսից թագավորի հանդեպ յուրաքանչյուր նախարարու-

[1] Տես հ. Դ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 430։

թյան համար սահմանվում է զինվորական պարտավորություն, դա երևում է «զորանամակից»։ Եթե գահնամակը սահմանում է, թե Տիզբոնի արքունիքում նախարարներն ինչպիսի տեղ կամ գահ պիտի ունենային, ապա զորանամակը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր նախարար որքան զորք կարող է տալ։ Այդ զորքի թվով էլ որոշվում էր այս կամ այն նախարարի կշիռը, դիրքն ու տեղը արքունիքում։ Զորքի քանակը սահմանվում էր ավյալ նախարարության՝ այսինքն նահանգի կամ գավառի բնակչության թվի համեմատ. դրանով էլ որոշվում էր նախարարության ուժը։ «Եվրոպայի բոլոր երկրներում ֆեոդալական արտադրությունը բնորոշվում է նրանով, որ հողը բաժանված է լինում ըստ կարելության բազմաթիվ ավատառու գյուղացիների միջև։ Ֆեոդալ իշխանների, ինչպես և ամեն մի սուվերենի հզորությունը հիմնվում էր ոչ թե նրա ստացած renտայի մեծ չափերի վրա, այլ յուր հպատակների թվի վրա, և վերջինս էլ կախված էր ինքնուրույն անտեսություն վարող գյուղացիների թվից»։[1]

Կ. Մարքսի վերոհիշյալ բնորոշումը ժամանակային համապատասխանում է նաև մարզպանական շրջանի Հայաստանի ֆեոդալական սիստեմին։

Նախարարը զորքը պահում էր իր հաշվին և անգամ ինքն էր վարում զորքի հրամանատարի պաշտոնը։ Հայ Արշակունիների ժամանակ նախարարների զորքերից կազմվում էր պետական բանակը, որի թիվը ըստ հայ մատենագրական ավյալների, հասնում էր 124 հազարի[2], որից մոտ 40 հազարը կազմում էր թագավորական կամ արքունի զորք։ Պետական այդ բանակը հավաքվում էր այն ժամանակ, երբ կարիք էր լինում երկիրը պաշտպանել արտաքին թշնամիների հարձակումներից։

Նախարարները, բացի զինվորական ծառայությունից, պարտավոր էին արքունի դանձարանին որոշ հարկ վճարել, թագավորի գահը բարձրանալու ժամանակ և նրա զավակների ամուսնության առթիվ ընծաներ տալ, ինչպես նաև արքունիքում

1 Կարլ Մարքս, «Կապիտալ», հատ. 1, Երևան, 1933, էջ 689։

2 Տես Ցովհ. Եպիսկ. Շահխաթունեանց, «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառաց Արարատայ», հատ. 2, էջ 59. Կ. Կոստանյանց, «Հիւսուածք», գիրք երրորդ, Վիեննա, 1877, էջ 33. H. Адонц, „Армения в эпоху Юстиниана", СПБ, 1908, стр. 251—252:

վարել պաշտոններ։ Վերոհիշյալ պարտավորությունների դանդաղումը համարվում էր ապստամբություն և քաղաքական մեծ հանցանք. թագավորները շատ անգամ զենքով ստիպում էին նախարարներին կատարել իրենց պարտականությունները։

Հայ խոշոր նախարարությունները, շնորհիվ իրենց հզորության, որ ձեռք էին բերել դարերի ընթացքում, ունեին անսահման իշխանություն իրենց կալվածքներում, մանավանդ ներքին գործերում։ Նրանք բանավոր կամ գրավոր կարգադրություններ էին անում իրենց ենթակա բոլոր բնակիչներին, բայց մեծ մասամբ ժողովրդին կառավարում էին ավանդական հին սովորություններով։ Նրանք հավաքում էին հարկերը, վարում դատական գործերը և պահում էին զորք։ Վերոհիշյալ իրավունքները գնալով դառնում էին նրանց համար ժառանգական իրավունքներ և անցնում էին սերնդից-սերունդ։

Հայաստանում յուրաքանչյուր նախարարի կալվածքն իրենից ներկայացնում էր մի ընդարձակ նահանգ կամ գավառ, իրարից կտրված լեռներով, լեռնաշղթաներով, ձորերով, անդունդներով, գետերով և լճերով, որոնք արգելում էին բնակիչներին իրար հետ սերտ հարաբերությունների մեջ մտնել։ Այդ նահանգների ու գավառների բնակիչներն իրենց սովորություններով, նիստ ու կացով, բարքառով և հագուստով տարբերվում էին իրարից։ Կենցաղային ու սովորույթների առանձնահատկությունները և հաղորդակցության բնական արգելքներն ավելի ևս ուժեղացնում էին ֆեոդալական մասնատվածությունը նախարարությունների միջև։

Հայաստանի ֆեոդալիզմի այդպիսի բնույթի հետևանքով կենտրոնական գերագույն իշխանությունը արտահայտվում էր միայն արտաքին ձևով։ Թագավորների հրամաններն ու կարգադրություններն անմիջապես վերաբերում էին ոչ թե ժողովրդին, այլ նախարարներին, որոնք այդ հրամաններն ի կատար էին ածում իրենց նահանգներում կամ գավառներում։ Ներքին գործերում նախարարները վայելում էին լայն իրավունք. հայ թագավորները դերազանցապես վարում էին երկրի արտաքին գործերը, պատերազմները և նշանակում էին դեսպաններ։ Արշակունյաց թագավորության ժամանակ Հայաստանի խոշոր նախարարություններից հայտնի էին՝ Սյունյաց, Արծրունյաց, Բագրա-

տուեյայց, Մամիկոնյան, Ռշտունյայց, Խորխոռունյայց, Բզնունյայց, Մոկաց և այլ նախարարութիւնները, որոնք իրենց գոյութիւնը պահպանում էին նաև մարզպանական շրջանում։ 5-րդ—6-րդ դարերում ուժեղանում են նաև Սահառունյայց և Կամսարական նախարարութիւնները։

Նախարարական կալվածքներն սկզբում կազմում էին մի ամբողջութիւն և ենթակա էին «տանուտեր»-ի իրավասութեան, իսկ 5-րդ—6-րդ դարերում նկատւում է մի նոր երևոյթ՝ «սեպուհ»-ները՝ տոհմի կրտսեր անդամները, ձգտում են իրենց բաժին կալվածքներով անջատվել տոհմական տնից և դառնալ առանձին կալվածատեր։ «Սեպուհ»-ներին հատանելիք հողաբաժինը կոչվում էր սեպուհական-սեպհական. այդ բառը հետագայում առանում է այժմյան նշանակութիւնը։ Այսպիսով, պատմական Հայաստանի տերիտորիան մարզպանական շրջանում ծածկված էր մեծ ու փոքր նախարարական տների խիտ ցանցով, որոնց կալվածքները տերիտորիալ տեսակետից տարածվում էին երկրի տարբեր նահանգներում ու գավառներում։[1]

Ըստ Ն. Ադոնցի ուսումնասիրութեան,[2] հայ նախարարութիւնների թիվը տատանվել է 50—70 տոհմաններում, իսկ 5-րդ դարի առաջին կեսի պատմագիր Փաւստոս Բուզանդացու հաղորդած տեղեկութիւնը, որ նրանց թիվը հասնում է մինչև 900-ի,[3] անշուշտ չափազանցութիւն է։

Աշխարհիկ ֆեոդալներն առանձին դաս էին կազմում և իրենց տանուտիրական իրավունքները ընդարձակելու և կալվածքները շատացնելու համար ներքին հակասութիւնների մեջ էին գտնվում թե իրար և թե պետութեան հետ։ Նրանք իրենց շահերը պաշտպանելու և դյուղացիութեանը շահագործելու համար կապված էին իրար հետ ֆեոդալական սանդուղքով-երարխիայով։ Այդ երարխիայի ամենաբարձր աստիճանը հանդիսանում էր թագավորը, որը սուվերեն էր իրեն տեր «բնակ երկրի»[4] և գերագույն իշխող։ Երարխիայի հաջորդ՝ այսինքն երկրորդ աստիճանը չորս «բդեշխներն» էին, որոնք պաշտպանում էին երկրի սահմաններն արտաքին ամեն մի հարձակումից և կոչվում էին «գահերից իշխաններ»[1] կամ «սահմանապահ», «կողմնակալք»։ Բդեշխներն երկրի կիսանկախ իշխաններն էին և շատ դեպքերում հավասարվում էին թագավորին, թեև ենթակա էին նրան։

Երարխիայի երրորդ աստիճանը կազմում էին նախարարները, որոնք բաժանվում էին երկու կարգի՝ «ավագների» և «կրտսերների»։ Հայ բանասիրութիւնը տարբեր ձևերով է մեկնաբանել «ավագ» և «կրտսեր» տերմիններըը։

Ինճիճյանը մեկնաբանում է այսպես. «...աւագ թուին կոչեցեալ նոքա՝ որոց մեծ էր կամ գործ կառավարութեան և կամ երկիր. իսկ կրտսեր նոքա՝ որոց փոքր էր պաշտօն և կամ երկիր» (Հնախօսութիւն, հատոր Բ., Վենետիկ, 1835, էջ 90)։

Կ. Կոստանյանցը տալիս է հետևյալ բացատրութիւնը. «երկու կարգի նախարարներ կային՝ ավագ և կրտսեր, առաջին կարգից էին այն նախարարները, որոնք Հայոց ամենահին աղնվական կամ նահապետական ցեղերից էին առաջացել, իսկ երկրորդ կարգից էին նոքա, որոնց նախահայրերը հատարակ մարդիկ են եղել առանց աղնվական ծագումի և նախարարութեան առացել են թագավորներից իրենց մի նշանավոր ծառայութեան կամ հավատարմութեան համար» (Կ. Կոստանյանց, «Հիւսուածք», գիրք Գ. Վիեննա, 1877 թ., էջ 38—39)։

Պրոֆ. Ա. Սամվելյանն այդ մասին նշում է. «...եղած տեղյակներից կարելի է եզրակացնել, որ այդ դասերի տարբերիչ հատկանիշներն էին ֆեոդալական տների տոհմային ծագման հնութիւնն ու աղնվազարմութիւնը, նամանավանդ տերիտորիալ հզորութիւնը» (Հին հայ. իրավունքի պատմութիւն, հատ. Ա., Երևան, 1939, էջ 209)։

Կ. Կոստանյանցի նման է բացատրել նաև Մ. Չամչյանը Խորենացու ռուսերեն թարգմանութեան հավելվածում (տես էջ 288)։ Իսկ ակադեմիկոս Հ. Մանանդյանը հետևելով ակադեմիկոս Զավախիշվիլուն[2] գրում է. «...«Ավագ» են համարվել նախարարները կամ «դասու» և կամ «տեւուրքը», կամ թե «ավագ տանու-

[1] Տես Ն. Ադոնց, „Армения в эпоху Юстиниана", էջ 298-32։
[2] Նույն տեղում, էջ 236—297։
[3] Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Դպրութ. Դ. դլ. Բ., Վենետիկ, 1889։
[4] Նույն տեղում, Դպրութ. Դ. դլ. ԾԱ։

[1] Նույն տեղում, դպր. Դ. դլ. Թ.
[2] *Джавахов И.*—„Государственный строй древней Грузии и древней Армении", СПБ, 1905, стр. 110.

տեր» ևս անվանվել են այն «տանուտեր»-ները, որոնք իրենց գահով, դիրքով կամ տարիքով ավելի բարձր էին կամ ունեին» (Ֆեոդալիզմը հին Հայաստանում», 1934 թ. Երևան, էջ 43—48)։ Պրոֆ. Ն. Ադոնցն այդ տերմինները բացատրում է «իրենց հզորության և կարևորության համեմատ» (տես «Армения в эпоху Юстиниана„, էջ 453)։

Վերոհիշյալ բացատրություններից կոստանյանցի և Էմինի պարզաբանումներն անհիմն են և պատմական ոչ մի վկայությամբ չեն հաստատվում։ Հասարակ մարդը կրտսեր նախարար չէր կարող լինել և չէր էլ կարող ազնվականների շարքը մտնել, որովհետև կրտսեր նախարարները նույնպես պետք է ունենային ազնվական ծագում։ Ակադեմիկոս Մանանդյանը, որ իր բացատրություններով հետևում է ակադեմիկոս Զավախաշվիլու մեկնաբանություններին, նույնպես ճիշտ չէ։ Նա ավագությունն որոշում է դահերեցությամբ և տարիքով, հիմնվելով Ղազար Փարպեցու մի վկայության ոչ ճիշտ ըմբռնման վրա։ Ըստ Փարպեցու Վարդան Մամիկոնյանը պարսից արքունիքում արտասանած իր ճառում ասել է. «Այս երեք երկրների (Վրաստան, Աղվանք, Հայաստան) իշխանների մեջ շատերը կան, որ գահով և տարիքով ինձանից վեր են...»։ «Բազումք են յայս երից աշխարհաց յազատոցդ, որք են աւագ քան զիս և գահու և աւուրբք...»։[1] Ղազար Փարպեցու այս վկայությամբ, որն իրենց ձեռքին զենք են գարձրել թե Զավախաշվիլին և թե Մանանդյանը, երբեք չի կարելի բացատրել «ավագ» և «կրտսեր» նախարարի տարբերությունը։ Ինչ վերաբերում է Ինճիճյանին, Ադոնցի և Սամվելյանի բնութագրություններին, ապա նրանք էլ չեն կարողացել լրիվ չափով պարզաբանել «ավագ» և «կրտսեր» նախարարությունների տարբերությունները։

Ինչպես Արևմտյան Եվրոպայում, նույնպես և Հայաստանում նախարարների ավագությունը և կրտսերությունը, ինչպես նաև նրանց հզորությունն ու դիրքը արքունիքի առաջ, որոշվում էր, ոչ թե նրանց տերիտորիալ մեծությամբ, ստացած ռենտայի քանակով, տոհմային ծագումով և կամ թե տարիքով, այլ նրանց ենթակա հպատակների—գյուղացիների քանակով և

[1] Ղ. Փարպեցի, էջ 101։

աված զորքի թվով։ Ով որ շատ զորք էր տալիս թագավորին, նա էլ մեծ դիրք ուներ արքունիքում և նա էլ հենց ձեռք էր բերում «ավագ» նախարարի աստիճան։ Հայաստանում «ավագ» նախարարությունների շարքին են պատկանել բոլոր նրանք, որոնք ունեցել են 500 և 500-ից ավելի զորք, իսկ 500-ից պակաս զորք ունեցողները մտել են կրտսեր նախարարությունների կազմի մեջ։[1] Հայտնի է, որ կրտսեր նախարարները ոչ միայն ենթարկվում էին թագավորին, այլև ավագ նախարարներին, որպես նրանց վասալներ։ Օրինակ, 7-րդ դարի պատմագիր Սեբեոսի ասելով Դիմաքսյան նախարարական տունը, որ ուներ թվով 300 զորք, վասալական կախվածության մեջ էր Բագրատունյաց տոհմից։[2] «Ավագ» նախարարները հայ պատմագիրների կողմից հաճախ անվանվել են նաև «բիւրապետք» և «հազարապետք», այսինքն 10.000 և 1000 հոգի դինվոր ունեցող։ Ըստ զորանամակի, 1000-ից ավելի զորք ունեին 23 նախարարական տուն կամ շրջան, 500-ից ավելի՝ 9 նախարարական տուն կամ շրջան, 50-ից մինչև 500՝ 52 նախարարական տուն կամ շրջան, ընդամենը հավասար է 84 նախարարական տների կամ շրջաններին, որոնցից «ավագ» նախարարների թիվը կազմում էր 32, իսկ «կրտսեր»-ներինը՝ 52։ Ն. Ադոնցն այդ թիվը իջեցնում է մինչև 50-ի։

Ֆեոդալական կարգախնայի ամենացածր աստիճանը կազմում էին «ազատ»-ները», «ոստանիկ»-ները—մանր ազնվականները, որոնք հանդիսանում էին ավագ և կրտսեր նախարարների ու

[1] Հայ մատենագրության տվյալներով, Հայաստանի զորքի թիվը Արշակունիների և մարզպանության ժամանակ հասնում էր մինչև 120 հազարի, որից 36—40 հազարը կազմում էին արքունի գնդերը, իսկ 80—84 հազարը նախարարների զորքը։ Իշխաններից ամենից շատ զորք ուներ Սյունյաց նախարարությունը—մոտ 19.400, ապա գալիս են Կամսարական —13.200, Գնունեաց բդեշխը —4500, Ընձաքինը՝ 4000, Աղձնյաց բդեշխը՝ 4000, Անդեղտունը՝ 3400, Կասպեցինը՝ 3000, Բզնունիքը 3000, իսկ Մանավազյան, Բագրատունյաց, Խորխոռունյաց, Մոփաց, Վահունյաց, Ապահունյաց, Ուտիացոց, Մամիկոնեցոց, Կորդվացոց, Արծրունյաց, Ռշտունյաց, Մոկաց, Մամիկոնյան, Վահանեցոց և Գաբրամանից իշխաններն ունեին 1000-ական զորք, Քաջաձնները 50, 100, 200, 300, 400, 500 և 600. տես «Армения в эпоху Юстиниана», стр. 251—252.

[2] «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն», գլուխ Ին, Երևան, 1939.

ՀԱՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
им. Г. Гарегина Нжде АН Арм. ССР

բդեշխների վասալները՝ «Ազատ» է կոչվել նաև ամբողջ ազնվականությունը ի հակադրություն «անազատ»-ների դասին։

Վերոհիշյալ երաբխիայի բոլոր աստիճանները՝ ներքևից վերև կապված էին իրար հետ ֆեոդալական պարտավորությամբ, որ հին Հայաստանում կոչվում էր «ծառայություն»։ Ֆեոդալական երաբխիայի այս բոլոր աստիճանները միասին վերցրած, շահագործում էին գյուղացիությանը և ապրում էին գյուղացիության հաշվին։

Ֆեոդալական դասակարգի մեջ էր մտնում նաև հոգևորականությունը, որ 5-րդ դարում զգալի ուժ էր ներկայացնում։ 4-րդ դարի չորս հիսիկոպոսական թեմերի փոխարեն. 450 թվին այդ թեմերի թիվը արդեն հասնում է 15-ի։ կառուցվում են հարյուրավոր նոր վանքեր ու եկեղեցիներ, որոնք ձեռք են բերում մեծ քանակությամբ կալվածքներ, նվիրատվության, գնման և ազատ գյուղացիական հողերի զրավման ճանապարհով։ Վանքերի, եկեղեցիների և հոգևորականների կալվածքները տարածվում էին երկրի տարբեր մասերում։ 4-րդ—6-րդ դարերից կանոնն և կիսավեր վիճակում մեզ հասած բազմաթիվ վանքերն ու եկեղեցիները վկայում են հոգևորականության ուժեղացման մասին։ Հոգևորականությունը նույնպես ազնվականների նման կազմում էր առանձին դաս, իր առանձին ֆեոդալական երաբխիայով։

387 թ. Տիզբոնի դաշնագրությունից և առանձնապես 429 թ. Արշակունյաց թագավորության վերացումից հետո, Հայաստանում հայ նախարարներին համախմբելու դերն անցնում է քրիստոնեական եկեղեցուն, որը հայերին գրերի ստեղծման շնորհիվ ավելի էր տարածվել ամբողջ Հայաստանում և դարձել միասնացող կրոն։ Նրա հեղինակությունն ու հզորությունը գնալով ժողովրդի աչքում սկսում էր բարձրանալ և մեծ ուժ դառնալ, նա ձգտում է բռնել հայ Արշակունյաց թագավորության տեղը, կենտրոնացիդ ուժ հանդիսանալ կենտրոնախույս, ցաք ու ցրիվ նախարարների մեջ։ Հայ նախարարներին համախմբելու, երկրի ներսում որոշ քաղաքական միավորում ստեղծելու և անջատանջատ ֆեոդալական իշխանությունների միջև շաղկապվող օղակի դերը, ինչպես միջնադարյան Եվրոպայում, նույնպես և Հայաստանում, վերապահված էր քրիստոնյա եկեղեցուն։

«Ֆեոդալական սիստեմի մեծ միջազգային կենտրոնը,— ասում է Ֆրիդրիխ Էնգելսը,— հռոմեական կաթոլիկ եկեղեցին է։ Չնայած բոլոր ներքին պատերազմներին, նա ամբողջ ֆեոդալական Արևմտյան Եվրոպան միացնում էր իբրև մի հակայական քաղաքական ամբողջություն...։ Նա ֆեոդալական հասարակարգը չընդունեց աստվածային շնորհի սրբազան փայլով։ Նա իր սեփական նվիրապետությունը հաստատեց ֆեոդալական օրինակի համաձայն և վերջիվերջո նա ամենախոշոր ֆեոդալական սեփականատերն էր, որովհետև նրան էր պատկանում ամբողջ կաթոլիկական հոգատերության մեկ երրորդ մասից ոչ պակասը։[1]

Ֆրիդրիխ Էնգելսի տված այս բնորոշումը կաթոլիկ եկեղեցու դերի մասին, համապատասխանում է նաև հայ եկեղեցու խաղացած դերին։ Տվյալ հարցում երկու եկեղեցիների տարբերությունը միայն այն էր, որ կաթոլիկ եկեղեցին ավելի մեծ կալվածքներ ուներ և ձգտում էր իշխել Արևմտյան Եվրոպայի բոլոր պետությունների վրա, իր կամքը թելադրել բոլոր վեհապետներին, իսկ հայ եկեղեցին ձգտում էր այդ իրավունքները տարածել Հայաստանի բոլոր նախարարների վրա և օգնել նրանց կազմակերպելու երկրի ռազմական ուժերը՝ պայքար մղելու օտար նվաճողների դեմ։ Հայ մատենագրության մեջ այդ հանգամանքը հավաստող հարյուրավոր փաստեր կան։ Ուշագրավ է թեկուզ այն փաստը՝ որ պարսկական արքունիքի առաջարկը քննելու ժամանակ, Արտաշատի ժողովում, որտեղ մասնակցում էին թե՛ նախարարներ և թե՛ հոգևորականներ, կարևոր դեր է խաղում Հովսեփ կաթողիկոսը։ Այդ պատճառով էլ հոգևորականության դերը 5-րդ—6-րդ դարերի ազատագրական պատերազմների մեջ մեծ է եղել։

Հայաստանում ֆեոդալիզմն իր մի շարք կողմերով առանձնահատուկ էր և Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմի համեմատությամբ ուներ մի քանի տարբերիչ գծեր։

Առաջին տարբերիչ գիծն այն է, որ ֆեոդալական հասարակարգի զարգացումը Հայաստանում ընթացել է բավական դանդաղ և տևել է երկար ժամանակ։ Նրա սաղմնավորումը փաստորեն սկսվել է քսենոֆոնյան դարաշրջանից, իսկ նրա քայքայումն ավարտվել է 19-րդ դարի առաջին կեսին, այսինքն

1 Ֆ. Էնգելս—«Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն», Երևան, 1933, էջ 18։

ֆեոդալական ֆորմացիան Հայաստանում ընդգրկել է մոտ երկու հազար երկու հարյուր տարի առող մի ժամանակաշրջան, որպիսին չեն ունեցել եվրոպական երկրները։ Դա ցույց է տալիս՝ որ արտադրողական ուժերի զարգացումը Հայաստանում ընթացել է շատ դանդաղ։

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ ֆեոդալական հասարակակարգը Հայաստանում ուղիղ և պրոգրեսիվ դծով չի ընթացել, չնորհիվ արտաքին այն ծանր հարվածների, որոնք երկիրը մշտապես աղետների ու արհավիրքների էին ենթարկում և շատ դեպքերում քարը քարի վրա չէին թողնում։ Ժողովուրդը հազիվ էր ոտնկ քաշում, վերաշինում ավերակ դարձած երկիրը, բայց նորից ու նորից էր ենթարկվում նոր և ավելի կործանարար արշավանքների և օտար սերրապետությունների, որոնք հաճախ նորաստեղծություններ էին բերում Հայաստանի տնտեսական և սոցիալական կյանքում։

Երրորդ առանձնահատկությունը—դա ֆեոդալների ինքնուրույն սեփական տնտեսություն վարելու խնդիրն է։ Հայտնի է, որ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում և Ռուսաստանում, ֆեոդալները մեծ մասամբ իրենք էին վարում իրենց հողերի—կալվածների մշակումը խոշոր լատիֆունդիական տնտեսությունների ձևով։ Այն ինչ Հայաստանի մասին չկա պատմական ոչ մի փաստ՝ որ ցույց տա թե հայ ֆեոդալներն զբաղված են եղել իրենց կալվածների մշակությամբ և վարել են ինքնուրույն տնտեսություն։ Նրանք հողերը հանձնում էին «շինականներին» մշակելու և միայն վերցնում էին սահմանված հարկերը։ Գյուղացին ինքն էր մշակում երկրի բոլոր հողերը իր միջոցներով՝ անկախ ֆեոդալից։ Իսկ հոգևորականները և եկեղեցին մեծ մասամբ իրենք էին մշակում իրենց կալվածները կռաչին աշխատանքի միջոցով։ Վերջինի մասին կան պատմական շատ վկայություններ։

Չորրորդը—դա այն է, որ ֆեոդալական հասարակակարգը Հայաստանում Արևմտյան Եվրոպայի նման շատ խիստ նատուրալ բնույթ չի կրել։ Նատուրալ տնտեսության կողքին տեղի է ունեցել ապրանքափոխանակությունը, ներքին ու արտաքին առևտուրը, երկրում մշտապես գործել է լայն շուկա, որտեղ փոխանակվել ու վաճառվել են գյուղի և քաղաքի արտադրանքները,

որովհետև քաղաքի և գյուղի բնակչության մի մասն առանց ապրանքափոխանակության իր գոյությունը չէր կարող պահպանել, իսկ դա ապացուցում են Դվինի և Կարինի ընդարձակ շուկաների առկայությունը 5-րդ—6-րդ դարերում։

Հինգերորդը—դա գյուղացիության իրավա-քաղաքական և կախվածության աստիճանի խնդիրն է։ Հայ բանասիրությունը և պատմագրությունը վերոհիշյալ հարցով քիչ է զբաղվել, իսկ այդ խնդրի դիտական լուսաբանումը բավական բարդ է, որովհետև պահասում են պատմական տեղեկություններ։ Գյուղացիության դրության մասին ուսումնասիրողները տարբեր կարծիքներ են հայտնել։ Նրանցից մի մասը գտնում է, որ գյուղացիությունը Հայաստանում գտնվել է ճորտական վիճակում,[1] իսկ մյուս խումբը, հատկապես ակադեմիկոս Հ. Մանանդյանը, ընդհակառակը, ընդունում է, որ գյուղացիությունը գտնվել է կիսազատ վիճակում, «ուրեմն, հին Հայաստանի «շինական»-ները հաճախ մեր դիտողությունների եղել են պատմական հնադույն այս շրջանում կիսազատ ճորտեր =hörig կամ зависимый»,[2] իսկ մի այլ տեղում ակադեմիկոս Հ. Մանանդյանը Հայաստանի «շինական»-ների դրությունը հավասարում է բյուզանդական կոլոնների հետ։[3]

Վերոհիշյալ երկու խմբի տեսակետներից, մեր կարծիքով ավելի դիտական ու հավանական է ակադեմիկոս Հ. Մանանդյանի առաջ քաշած թեզիսը, որովհետև դա իսկապես բխում է Հայաստանի այդ ժամանակվա սոցիալ-տնտեսական պայմաններից։

Գյուղացիության կախվածության աստիճանի խստացումն ու մեղմացումը կախված է նրանից, թե տվյալ երկրում կալվածատիրական որ ձևն է իշխել՝ Crundherrschaft, թե Gutsherrschaft. Crundherrschaft է կոչվել այն հողատիրական ձևը, երբ կալվածատերն իր ենթական գյուղացիներից ստանում է միայն հարկեր ու տուրքեր և ինքն իր սեփական կալվածատիրա-

[1] Ե. Սամվելյան, «Մխիթար Գոշի դատաստանագիրք», Վիեննա, 1911 թ., էջ 297, 299 և Զավախաշվիլի, էջ 134։

[2] Ակադ. Հ. Մանանդյան, «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 189։

[3] Տես նույնը, էջ 182։

կան մեծ տնտեսությունը չունեք և չի զբաղվում սեփական կալվածատիրական տնտեսություն կազմակերպելով, իսկ Gutsherrschaft է կոչվել այն կալվածատիրական ձևը, երբ ֆեոդալները թեև իրենց ենթակա գյուղացիներից ստանում են հարկեր ու տուրքեր, բայց նրանց գլխավոր եկամտային աղբյուրները կազմել են իրենց կազմակերպած կալվածատիրական խոշոր տնտեսությունները, որ նրանք մշակում էին իրենց ենթակա ճորտ գյուղացիների պարտադիր աշխատանքի միջոցով։[1]

Կալվածատիրական տնտեսության վերոհիշյալ երկու ձևերից Հայաստանում իշխում էր առաջինը, որովհետև, ինչպես ցույց տրվեց վերևում, Արշակունյաց և մարզպանական շրջաններում հայ նախարարներից ոչ մեկը չի զբաղվել սեփական կալվածատիրական տնտեսություն վարելով, այլ բավարարվել է միայն ստացած հարկերով ու տուրքերով։ Կալվածատիրական ձևերից առաջինի առկայության պայմաններում, գյուղացիության ճորտական կախվածությունն անհամեմատ ավելի թեթև է եղել, քան երկրորդում։ Իսկ այստեղից էլ հետևում է, որ հայ «շինական»-ների ճորտական կախվածության աստիճանը տվյալ ժամանակաշրջանում նույնպես մեղմ է եղել։ Նրանք ունեցել են անձնական ազատություն—տեղից տեղ շարժվելու, գույք ունենալու և օտարացնելու իրավունք և իշխանների հետ համեմատելիս, մի իշխան արժեր երկու շինական, այսինքն մեկը հավասար էր երկուսի։

Հայաստանում, բացի նախարարներին ենթակա գյուղացիներից, եղել են նաև ազատ գյուղացիներ։ Ազատ գյուղացիների կատեգորիան ունեցել է իր հողը և զգալի դեր է կատարել երկրի տնտեսական, հասարակական և քաղաքական կյանքում։

Ահա Հայաստանի ֆեոդալիզմի այն բնորոշ առանձնահատկությունները, որոնք նրան տարբերում են Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմից։

Բ

Քննության առնվող ժամանակաշրջանում Հայաստանի երկրորդ հիմնական դասակարգը, ֆեոդալներից հետո, հանդիսանում էր գյուղացիությունը, որը հայտնի էր «շինական դասա» անունով, կազմում էր աղգաբնակության ճնշող մեծամասնությունը և գտնվում էր «ի հարկի ծառայության» դրության մեջ։ «Շինական»-ների դրությունը բավական ծանր է եղել մարզպանական շրջանում։ Նրանք ենթարկվում էին կրկնակի շահագործման, ըստ որում մի կողմից շահագործում էին երկրի բնիկ տերերը, իսկ մյուս կողմից պարսկական և բյուզանդական պետությունները, որոնց ենթակա էր Հայաստանը։ Գյուղացիության կախվածության աստիճանը մարզպանական շրջանում ավելի է խստանում, համեմատած Արշակունիների ժամանակաշրջանի հետ։ Նա ամրացվում է տերերի հողերի վրա և շատ դեպքերում առանց տիրոջ թույլտվության չէր կարող հեռանալ տվյալ վայրից, որով մասամբ մշակելի հողը և հողը մշակող գյուղացին ֆեոդալի համար կազմում էին մի ամբողջություն։ Սակայն այդ դրությունը վերոհիշյալ ժամանակաշրջանում համատարած երևույթ չէր Հայաստանում։ Դա միայն նոր սկսվող պրոցես էր։

«Շինական»-ները պատկանում էին «անազատ»-ների դասին։ «Ազատ»-ների և «անազատ»-ների միջև իրավաքաղաքական տեսակետից խիստ տարբերություն է եղել։ Նրանց գործած հանցանքները տարբեր չափով էին պատժվում, «ազատ»-ների դինը համեմատած «անազատ»-ների դնի հետ ավելի է եղել երկուսը մեկի հարաբերությամբ։ «Անազատ»-ներն ի տարբերություն «ազատ»-ների, պատարանի կողմից ենթարկվում էին մարմնական պատիժների և ուղարկվում էին տարկական աշխատանքի ուրկանոցներում, իսկ «ազատ»-ների դասին պատկանողները սովորաբար ենթարկվում էին դրամական տուգանքի։ Այս հանգամանքը ցույց է տալիս դասակարգային և դասային հարաբերությունների խորացումը 5-րդ—6-րդ դարերում։

Գյուղացիության շահագործումը շատ ավելի խիստ է եղել պարսկական և բյուզանդական պետությունների կողմից։ Տեղբոնի արքունիքը գանձում էր գլխահարկ, հողահարկ և առևտրականներից մաքս։ Այս հարկերն ըստ հայկական մատենադրերի կոչվում էին՝ «հաս», «սակ» և «բաժ»։[1] Սասանյան Պարս-

[1] Ա. Մանանդյան, «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», էջ 177։

[1] Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913 թ., էջ 32։

կատանին վճարված հարկերը կոչվում էին «արքունի»[1] հարկեր։ Այդ հարկերը դանձելու համար Դվինում պահվում էր հարկամատյան-դիվան, որտեղ արձանագրում էին հարկատվության ենթակա բոլոր օթևանները։ Հարկատվությունը կանոնավորելու համար, կատարում էին աշխարհագիր, այսինքն բոլոր նկամտաբեր օթևանների և աշխատող ձեռքերի հաշվառումն ու արձանագրումը արքունի մատյանում։ Հարկերը դանձելու համար կային առանձին հարկահավաքներ, որոնք շատ հաճախ դանձում էին ավելի, քան օրինքով սահմանված էր։ Տիզրոնի արքունիքի հարկահավաքները ամեն տեսակի կամայականություններով և ապօրինություններով ավելի էին ծանրացնում հարկատու ժողովրդի վիճակը։

Գլխահարկը դանձվում էր 20-ից մինչև 50 տարեկան հասակ ունեցող տղամարդկանցից։ Տուրքաքանչյուր աշխատավորից դանձում էին 4, 6, 8, 12 դրամ,[2] համաձայն հարկատուի կարողության, իսկ հողահարկը վերցվում էր բնամթերքով, որ կազմում էր բերքի $^1/_3$-ի, $^1/_4$-ի, $^1/_5$-ի և $^1/_6$-ի չափով, նայած հողի բերքատվության, ոռոգման և մշակության տեսակին։ Բնամթերքը դրամով դանձելու դեպքում մեկ գարեբ[3] ցորենի կամ գարու մշակության հատկացված հողի տարածության համար սահմանվում էր մեկ դրամ, նույնչափ այդու տեղի համար՝ ութ դրամ[4]

[1] Տես այս հարցի մասին ակադ. Հ. Մանանդյանի ընդարձակ ուսումնասիրությունը—«Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում», Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, № 1, Երևան, 1926, էջ 3—44։

[2] Մեկ դրամը, ըստ Հ. Մանանդյանի, հավասար է 25 կոպեկի (տես Հ. Մանանդյան—«Հայաստանի արքունի հարկերը մարզպանական շրջանում», Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, № 1, 1926 թ., Երևան, էջ 11)։ Ըստ Ֆր. Շպիգելի 26—28 կոպ., ըստ Թ. Նյոլդեքեի՝ 30 կոպ., բայց ավելի շուտ Մանանդյան արծաթ դրամը հավասար էր 4 դրամի, կամ թե 45—50 կոպեկի։

[3] Մեկ գարեբ ցորենի և գարու տարածությունը մոտավորապես հավասար է 1470 քառ. մետր տարածության, բայց որոշ ուսումնասիրողներ մեծացնում կամ թե փոքրացնում են այդ տարածությունը (տես Հ. Մանանդյան—«Հայաստանի արքունի հարկերը մարզպանական շրջանում», Տեղ. ՀԽՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, № 1, էջ 6)։

[4] Տես այս մասին Հ. Մանանդյանի ընդարձակ ուսումնասիրությունը «Հայաստանի արքունի հարկերը մարզպանական շրջանում», Տեղ. ՀԽՍՀ

և այլն։ Դրամական հարկերն սկսում են կիրառվել 6-րդ դարում մոտ 1 ժամանակ (531—579)։ Այդպիսով, դյուղացիությունը—«շինական» դասը մարզպանական շրջանում հանդիսանում էր հիմնական արտադրող հարկատու դասակարգը։ Նա պարտավոր էր իր արտադրանքով կերակրել ոչ միայն հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին, այլև հարկ վճարել Սասանյան Պարսկաստանին և Բյուզանդական կայսրությանը։

«Շինական» դասը, որ հանդիսանում էր երկրի հիմնական արտադրող ու շահագործվող դասակարգը, 4-րդ—6-րդ դարերում աստիճանաբար կախման մեջ է ընկնում ֆեոդալական դասակարգից։ Հայ նախարարները հողերը բաժանում էին իրենց ենթակա գյուղացիական տնտեսություններին վրա մանր հողակտորներով, ստիպում էին նրանց մշակել և իրենց կողմից սահմանված բաժինը պահանջում նրանցից։

Մարզպանական շրջանի տնտեսական կյանքի զարգացումից դատելով, պետք է ենթադրել, որ հողի մշակությունը կատարվել է եռադաշտային սիստեմով, այսինքն հողի երկու մասը մշակում էին, իսկ երրորդը՝ թողնում էին հանգիստ։ Մշակման հիմնական գործիքը նահապետական արորն էր, բայց դրան զուգընթաց արդեն մուտք էր գործել նաև փայտե գութանը, որը սակայն մասսայաբար չէր գործադրվում և օգտագործվում էր մեծ մասամբ խոշոր տնտեսություններում։

Հայ «շինական»-ն իր նահապետական արորով ամենածանր պայմաններում մշակում էր ֆեոդալից ստացած հողաբաժինը և ստացած արդյունքից նախ բաժին էր հանում տիրոջը, վճարում էր պետական հարկը և եկեղեցու տասանորդը, իսկ մնացածը տանում էր իր տունը։ Հարկերը մեծ մասամբ վճարում էին նատուրայով և մասամբ էլ դրամով ու կոռով։ Դրամական հարկերի աճակայությունը ցույց է տալիս երկրի տնտեսական կյանքի և ներքին շուկայի զարգացումը։ Բացի վերը հիշված հարկերից, «շինական»-ները պարտավոր էին կատարել նաև պարհարկը, այսինքն պարտադիր շինարարական աշխատանք բերդերի, ամրոցների, ղղյակների, պալատների, վանքերի, եկեղեցիների, ճանա-

Գիտության և արվեստի ինստիտուտի, № 1, Երևան, 1926, էջ 3—44, կամ թե «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 148, 211։

պարիսպների, կամուրջների և այլ նման շինարարությունների վրա։ Եթե վերոհիշյալ հարկերի հետ միասին նկատի ունենանք նաև արտաքին արշավանքներից առաջացած ավերածությունները և բնական աղետները, կարելի կլինի լրիվ պատկերացում ունենալ հայ «շինական»-ի դրության մասին։

Դառը դատող հայ «շինական»-ը անսպառ տոկունությամբ դիմադրել է իր տերերի շահագործմանը, արտաքին նվաճողների, բնական աղետների և ավերիչ պատերազմների պատճառած արհավիրքներին, նրա մի մասը հաճախ կոտորվել է կամ գերեվարվել, իսկ մյուս մասը քարայրներում՝ երկրի անառիկ վայրերում իր ֆիզիկական գոյությունը պահպանելով, ավերված հայրենիքում համարյա նորից է վերսկսել իր տնտեսությունը, պայքարել իր գոյության համար, ընդվզել է բնիկ շահագործողների և շատ հաճախ էլ սուր է բարձրացրել արտաքին տիրող պետությունների դեմ։

Սակայն քննության առնվող ժամանակաշրջանում շինականությունն ամբողջությամբ վերցրած մինուչ տնտեսական պայմաններում չէր գտնվում։ Ուստի և նրա տարբեր շերտերը տարբեր չափով ֆեոդալներից կախյալ դրության մեջ էին գտնվում։ Հայաստանի հարևան Աղվանից աշխարհում 5-րդ դարում Վաչագան Թագավորի գումարած ժողովի մշակած կանոններից մեկի միջոցով մեզ հասել է մի վկայություն այդ երկրի գյուղացիության շերտավորման մասին։[1] Այդ կանոնի մեջ սահմանվում է գյուղացիության երեք շերտ՝ 1) «վար ու այգի չունեցողք», 2) «տառապյալ», 3) «քրվանիկ», այսինքն ունևոր գյուղացիություն։ Այս նույն դրությունը գոյություն ուներ նաև Հայաստանում ժարզպանական շրջանում։ «Շինական»-ների մեջ կար մի շերտ, որը ունեցել է դատական հայց հարուցանելու, ինչքը ժառանգելու իրավունք և ազատ է եղել իր ներքին անձնական կյանքում։ «Ագարակ»-ների, գյուղերի և ավանների գյուղացիների միջև գոյություն են ունեցել սոցիալական տարբերություններ։ «Ագարակ»-ների բնակիչները սոցիալական տեսակետից ավելի ցածր են դասվել, քան գյուղերի և ավանների բնակիչները։ Հայաստանի գյուղացիության այս դրությունը մարզպանական շրջանում ցույց է տալիս, որ բոլոր գյուղացիները կախյալ վիճակում չեն գտնվել և գյուղացիության դրությունն այնքան ծանր չի եղել, ինչպես այն եղել է Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում ֆեոդալիզմի զարգացած ատիճանում։

Արշակունյաց և մարզպանական շրջաններում Հայաստանում բացի ֆեոդալներից և գյուղացիներից կային նաև քաղաքացիներ, քաղաքային բնակչություն, որոնք նույնպես մտնում էին «անազատ»-ների դասի մեջ։ 4-րդ դարի երկրորդ կեսին Սասանյան բռնակալ Շապուհ II կողմից կատարված ավերածությունները չէին կարող կասեցնել Հայաստանի տնտեսական կյանքը, առանձնապես քաղաքների զարգացման ընթացքը։ 4-րդ դարի վերջերից երկրում ստեղծված խաղաղության շնորհիվ, տնտեսական կյանքն արագ կերպով սկսում է զարգանալ։ Արտաշատը, ապա նաև Դվինը դառնում են Սասանյան Պարսկաստանի մաքսային և առևտրական կենտրոններ։

Մարզպանական Հայաստանի վարչական, տնտեսական և միջազգային տրանզիտ առևտրի կենտրոնը հանդիսանում էր Դվին քաղաքը։ Միջազգային առևտրական հյուսիսային մեծ պողոտան—ճանապարհն անցնում էր Դվինի վրայով և գնում դեպի Արևմուտք, Սև ծովյան նավահանգիստները։[1] Բացի Դվինից, այդ ճանապարհի վրա էին գտնվում Վաղարշապատը, Երվանդաշատը, Զարիշատը, Զարեհավանը և Թեոդոպոլիսը (Կարինը)։ Այդ ճանապարհով էին տեղափոխում հայկական, հրեական, արաբական, հունական, վրացական և ասորական առևտրականները կոշտ մետաքս, հումեժունք, դեղորայք, թանկարժեք քարեր և այլ ապրանքներ՝ Արևելքից դեպի Արևմուտք։ Առևտրականներից շատերը բնակություն էին հաստատում վերոհիշյալ քաղաքներում, իսկ Դվինում գերազանցապես հաստատվում էին հրեա և ասորի առևտրականները։ Արևելքի և Արևմուտքի առևտրական հարաբերությունների զարգացմանը խոշոր չափով նպաստում է Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև տիրող երկարատև խաղա-

[1] Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութ. Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 99։

[1] Տես ակադ. Հ. Մանանդյանի ընդարձակ ուսումնասիրությունը—„О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен V в. до н. эры,—XV в. н. эры“), гл. IV, Эривань, 1930.

դուքյունը 5-րդ դարում։ Միջազգային առանցիտային աշխուժացող առևտուրն երկրի ներքին շուկայի ընդարձակման վրա մեծ ազդեցություն է թողնում։ Արհեստն ու առևտուրն աստիճանաբար դառնում են ուրույն զբաղմունք, նպաստում աշխատանքի լայն հասարակական բաժանմանը՝ գյուղի և քաղաքի միջև։

Հնդկաստանի, Պարսկաստանի, Վրաստանի և այլ առևտրական կանոները Դվինի շրջակայքում հռոմեական և արևելյան երկրների վաճառականների հետ առևտուր և փոխանակություն էին կատարում իրենց ապրանքներով։ Այդ մասին ուշագրավ տեղեկություն է տալիս բյուզանդական պատմիչ Պրոկոպիոսը։

«Դվինը շատ պտղաբեր վայր է, ունի առողջարար օդ և լավ ջուր.[1] Թևոդոպոլսից ութ օրվա ճանապարհ հեռու է գտնվում։ Այստեղ հարթավայրեր են և հարմար ձիով ճանապարհորդելու համար. բազմաժարդ գյուղերը, որոնք գտնվում են միմյանց մոտ, զբաղվում են առևտրով, որովհետև Հնդկաստանից, հարևան Իբերիայից (Վրաստանից) և համարյա Պարսից և մինչև անգամ հռոմայեցիներին հպատակ բոլոր ժողովուրդները, այնտեղ էին բերում ապրանքները, որոնցով նրանք առևտուր էին անում»։[2]

Մեջբերված հատվածից պարզ երևում է, որ Դվինը Հայաստանի կենտրոնում, մարզպանական շրջանում, դառնում է հեռավոր Արևելքից եկող ապրանքների փոխանակության կենտրոն և այդ հանգամանքը մեծ չափով նպաստում է ներքին շուկայի զարգացմանը։ Հայաստանը մարզպանության շրջանում ապրանքների լոկ փոխադրող չէր, նա ինքն էլ իր սեփական արտադրանքով, մեծ մասամբ գյուղատնտեսական մթերքներով, մասնակցում էր միջազգային առևտրին։ Հայաստանից արտահանում էին ձի, ջորի, ոչխար, բուրդ, գինի, ներկ, հացահատիկ, յուղ, մետաղ, կտորեղեն, զանազան տեսակի քարեր և այլն։ Ջադաքներում առաջանում և զարգանում են մի շարք արհեստներ։ Ֆա-

[1] Ճիշտ է, որ Դվինը պտղաբեր վայր է, բայց օդն ու ջուրը լավ չի եղել, պատմիչ Պրոկոպիոսը ոչքան ճիշտ է առաջինում, այնքան էլ սխալվում է երկրորդում։

[2] Procop, II, 25, ռուս. թարգմ. „Прокопия Кесарийского, История войн Римлян с Персами", СПБ, 1880, стр. 181—182.

քաքներում կենտրոնացած արհեստավորներից՝ դարբիններ, զինագործներ, ոսկերիչներ, ջուլհակներ, հյուսներ, քարտաշներ, որմնադիրներ, բրուտներ մի կողմից ապրանքներ էին արտադրում ամենօրյա դասի պատվերները կատարելով, իսկ մյուս կողմից, լայն սպառման ապրանքներ էին արտադրում ներքին և արտաքին շուկաների համար։ Վանքերին կից նույնպես կային մեծ թվով արհեստանոցներ, համապատասխան արհեստավորներով։ Հայաստանից արտահանվող ապրանքներից հատկապես աչքի էին ընկնում Դվինում պատրաստվող «ժարեցին» կոչվող կտորը, բաժակյա գործվածքները—սավաններ և բարձի երեսները, որոնք արտաքին շուկայում շատ հարգի էին, ինչպես նաև գենքերը և զրահները։ Այդպիսով, Դվինը ոչ միայն վարչական, մանրածային, առևտրական կենտրոն էր երկրի համար, այլև արհեստների խոշոր կենտրոն։

Արհեստների և առևտրի զարգացման հետ զուգընթաց առաջանում է նաև վաշխառուբյունը։ Այդ մասին հետաքրքիր է 5-րդ դարի երկրորդ կեսի Հովհան Մանդակունի կաթողիկոսի ճառերից հետևյալ կտորը։

«Ներս պարտապանն աղքատ է լինում, մշտապես հոգսերի և ալեկոծության մեջ է մաշվում, նա գիշերն անքուն և դառն նիրհերի մեջ է լինում, ցերեկը շրջում է ախուր և տրտում ու մտախոհ ու չի խանդում, թե ուր գնա։ Երբեմն ցանկանում է պակաս գնով ծախել ևղը, որ կարողանա վճարել վաշխի տոկոսները, և երբեմն տոկոս պահանջողին փոխհատուցում անելու համար, նրա մեջ ցանկություն է առաջանում հակառակ օրենքին, պղծություն կատարել, հոգին կորստյան մատնել և ստածոն հակառակ գնալ. և երբեմն էլ մտածում է գազանի կերպով գնալ օտար երկիր։ Պարտքերի ծանրության պատճառով թափառական շրջում և շատ մտածումներից մոլորվում ու մարքի շփոթությունից մոռանում է աստծուն աղոթել, և երբ ոտքի ձայն է լսում, երկյուղից ներքուստ սրտաճաք է լինում, իսկ եթե դրսում պարտապանը տեսնում է պարտատիրոջը, փախչում և թաքնվում է, ինչպես ծանր ախտից, և սիրտը թուլանում ու դողդողում է, մնում է կանգնած, գլուխը ցած և լեզուն կապված և բոլորովին չի համարձակվում նրա երեսին նայել, որովհետև վաշխի տոկոս-

նները բարձվել են նրա վրա և ոչինչ չունի տալու պարտքատիրոջը հաճելի լինելու համար»:

«Եւ եթէ աղքատ ևս իցէ վոխապարտն, ի ծուփս և ի հոգս մաշի հանապազ անքուն և դառնաքուն ի գիշերի ննջիւն նորա տխուր և տրտում և մտայուղ ի տունջհանն շրջի, և ոչ գիտէ յո երթայ: Երբեմն սուղ ինչ զպախրէն կամի վաճառել, զի հատուսցէ զվաշխէցն տոկոսիս. և երբեմն դանօրէն գողանալն ախորժէ զհոգիսն կորուսանել և դիմագարձ լինել աստուծոյ վասն պահանջողի վաշխի փողից. և երբեմն խորհի գաղտնագնաց լինել ի օտար աշխարհ: Շրջի թափառական հաղագս պարտուցն բռնութեան և ի բազում խորհրդոցն վարանիցի, և մատցն շփոթելոց զգօթսն առ Աստուած ժողանայ. և հորժամ ձայն ոտիցն հարկանի, նա ի ներքս սրտաբեկ լինի յերկիւղէն. և թէ արտաքոյ տեսանէ փոխառուն զիմոխառուն, փախչի և թագչի իբրև ի տաբակուսանաց աղետից, և սիրան թափեալ զդողի հարկանի, և կայ գլխարկեալ և լեզուակապ և ամենևիմբ յերեսս նորա նայել ոչ իշխէ և ոչ համարձակի, զի տոկոսիքն վաշխից բազմացան ի վերայ նորա, և ոչ ինչ ունի հատուցանել և հաճել զիմոխառուն»:[1]

Թեև Հովհան Մանդակունու վերոհիշյալ հատվածը կարող է իր մեջ պարունակել որոշ չափազանցություններ, բայց նա պարզ ցույց է տալիս վաշխառուության զարգացումը և մեծ չափերի հասնելը 5-րդ դարում: Այսպիսով 5-րդ դարը հանդիսանում է ոչ միայն կլասիկ ֆեոդալականության, պրակտիկական, տնտեսական, առևտրական, արհեստավորական կյանքի, այլ և վաշխառության բուռն զարգացման դարաշրջան:

Երկրի տնտեսական կյանքի զարգացման հետ զուգընթաց քաղաքներում մեծ թվով բնակչություն է կուտակվում: Քաղաքային ազգաբնակության մեջ հիմնական տեղը բռնում էին արհեստավորները թե իրենց քանակով և թե արտադրանքով: Ներքին շուկայում վաճառքի հանված ապրանքների հիմնական մասը կազմում էր գյուղացիների և արհեստավորների արտադրանքը: Արհեստների և առևտրի զարգացումը մարդպանական շրջանում քաղաքներում առաջ են բերում աղգաբնակչության սոցիալական

[1] Ցովհաննէս Մանդակունի— «Ճառք», 2-րդ տպագր., Վենետիկ, 1860, էջ 64—65:

նոր խավ, հանձին արհեստավորների և առևտրականների, որոնք լինելով «ի հարկի ծառայության» մեջ իրենց իրավունքներով, սոցիալական և անտեսական տեսակետից ավելի բարձր էին կանգնած քան գյուղացիները: Այդ մասին ուշագրավ մի վկայություն ունի Մ. Խորենացին: Ահա այն.

«Հրաման է տալիս (Վաղարշակը), որ քաղաքացի մարդիկ առավել կարգ և պատիվ ունենան, քան թէ գյուղացիները, որ գյուղացիները պատվեն քաղաքացիներին, ինչպես իշխանների և քաղաքացիները շատ չզոռոզանան գյուղացիների մոտ, այլ եղբայրաբար վարվեն, բարեկամության և աննախանձ կյանքի համար, որոնք պատճառ են կյանքի բախտավորության և խաղաղության, և ուրիշ նման բաներ»:

«Հրաման տայ (խոսքը վերաբերում է Վաղարշակ Թագավորին. Հ. Հ.) և քաղաքացեայց մարդկան արգոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց, և գեղջկայց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեայց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք. և որ ինչ նման այսոցիկ»:[1]

Այս փաստը հաստատուն մի կռվան է, որ ցույց է տալիս քաղաքացիների արտոնյալ վիճակը: Քաղաքների բնակիչները չէին ենթարկվում ֆեոդալներին, նրանք վայելում էին անձնական ազատություն և այդ հանգամանքը մեծ չափով նպաստում էր արհեստների զարգացմանը և արհեստավորների ու առևտրականների կուտակմանը քաղաքներում:

Քաղաքներում բնակչությունը զգալի թիվ էր կազմում: Դվինի բնակչությունը հասնում էր մոտ 100 հազարի, իսկ մյուս քաղաքներում՝ Նախիջևանում, Վաղարշապատում, Երվանդաշատում, Զարևհավանում, Զարիշատում, Վանում և Կարինում նույնպես մեծ թվով բնակչություն կար, միջին թվով 10—50 հազարի սահմաններում: Քաղաքների տակավությունը ցույց է տալիս, որ ֆեոդալական հասարակակարգի նախորդ բնույթը Հայաստանում այնքան էլ խիստ չի եղել, ինչպես եղել է Արևմըտ-

[1] Մովսէս Խորենացի—«Պատմություն Հայոց», գիրք Բ., գլ. Ը. էջ 110—111:

տյան Եվրոպայում, որովհետև առևտուրն ու ապրանքային տնտեսությունը զգալի դեր էին կատարում երկրում։ Սակայն Հայաստանի տնտեսական և կուլտուրական կյանքը, ինչպես ցույց են տվել հայ պատմաբաններից Աստուրյանը[1] և ակադ. Հ. Մանանդյանը,[2] զարգանում էր ավելի շուտ Արևմուտքի ազդեցության տակ։ Դեռևս Տիգրան II ժամանակաշրջանից էլ առաջ, Հայաստանի քաղաքները, առևտուրն ու արհեստը և կուլտուրան ընթանում էին հելլենիստական ուղիով, իսկ հետագա շրջաններում այդ ազդեցությունը չթուլացավ, քանի որ իրենք պարթևները ևս հետևում էին այդ կուլտուրային, և նրանց մի ճյուղը—հայ Արշակունիները, որ հաստատվեցին Հայաստանում, նույնպես զարձան Արևմտյան կուլտուրայի հետևորդներ։ Այդ ազդեցությունը մեծ չափով ուժեղանում է այն ժամանակաշրջանից, երբ հայերն ընդունում են քրիստոնեություն և ավելի են կապվում պարսիկներից տնտեսապես և կուլտուրապես շատ ավելի բարձր կանգնած արևմտյան ժողովուրդների հետ։ Հետևաբար չենք կարող համաձայնել այն ուսումնասիրողների հետ, որոնք փորձ են անում Հայաստանի տնտեսական կյանքի, կուլտուրայի և հատկապես քաղաքների զարգացումը բացատրել արևելյան երկրների ազդեցությամբ։

Փաստական բոլոր տվյալները գալիս են հաստատելու, որ Հայաստանի տնտեսական կյանքը, քաղաքների աճը և կուլտուրան 4-րդ—6-րդ դարերում շատ ավելի զարգացած են եղել, քան Պարսկաստանում և արևելյան մյուս երկրներում, չհոսելով Տիգրոն քաղաքի մասին, որի զարգացումը Պարթևական շրջանի արդյունք է։ 4-րդ—5-րդ դարերի Սասանյանների հալածանքները հայերի նկատմամբ արդյունք են այն հանգամանքի, որ հայերը տնտեսական կյանքի զարգացումով, քաղաքների ընթացքով և կուլտուրայով ավելի առաջավոր լինելով պարսիկներից, շատ դեպքերում մրցում էին նրանց հետ։ Այդ պատճառով Սասանյանների առաջ, հատկապես 5-րդ դարում, խնդիրը է դրվում վերացնել այդ մրցակցությունը, հայերին տնտեսապես, կուլտուրապես և կրոնով ձուլել պարսիկների հետ, ընդմիշտ վերացնելով այդ մրցակցությունը։

Հայերի նկատմամբ Սասանյան պարսիկների գործադրած հալածանքները, առանձնապես տնտեսական հարստահարումը, ծանրանում էր հայ գյուղացության վրա։

Գյուղացությունն իրրև երկրի հիմնական արտադրող ուժ ջահագործվող դասակարգ, բյուզանդական և պարսկական պետությունների կողմից շատ հաճախ ենթարկվում էր խիստ հարկայնության և հալածանքների։ Այդ հանդամանքները ժողովրդի մեջ առաջ են բերում դժգոհություններ և ապստամբություններ։

Սուր մենագրություն էլ հենց նվիրված է 5-րդ դարում հայ ժողովրդի ժամ ազատագրական պատերազմների լուսաբանմանը։

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՄԻՆՉԵՎ ՀԱՅՋԿԵՐՏ II-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

429 թվին Տիգրոնի արքունիքը վերջ տալով Հայաստանի անկախությանը, մոտ 10 տարի՝ մինչև Հայկերտ II-ի գահակալությունը, երկրի ներքին ինքնավարությունը պահում է անփոփոխ։ Տիգրոնի արքունիքն այդ տարիներին բավարարվում էր միայն Հայաստանից գանձված հարկերով։ Նա չէր խառնվում երկրի ներքին գործերին։ Հայ նախարարները Տիգրոնի արքունիքում ունեին իրենց հատուկ տեղերը—գահերը, ինչպես հայ Արշակունիների արքունիքում։ Դա երևում է այն «գահնամակ»-ից, որ ուղարկված է եղել Սահակ կաթողիկոսի կողմից 422 թ. Սասանյան արքունիքին։[1]

Եղիշեն վկայում է, որ հայ Արշակունյաց թագավորության վերացումից հետո, երկրի կառավարման իրավունքն անցնում է նախարարների ձեռքը։

«Երբ սրան էլ (Արտաշիրին) զրկեցին թագավորությունից, այն ժամանակ թագավորությունը Հայոց նախարարների ձեռքն անցավ. թեպետ և հարկը Պարսից արքունիքն էր գնում, բայց

1 Հ. Ց. Աստուրեան—«Քաղաքական վերաբերութիւնները ընդ մէջ Հայաստանի և Հռոմայ 190-էն ն. ք. մինչև 428 հ. ք.», Վենետիկ, 1912։

2 Ակադ. Հ. Մանանդյան—«Տիգրան Բ. և Հռոմը, նոր լուսաբանությամբ քսո սկզբնաղբյուրների», Երևան, 1940։

1 Հ. Կ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 430—431։

Հայոց այր ու ձին (հեծելազորը) ամբողջությամբ նախարարների առաջնորդության տակ էր լինում պատերազմի ժամանակ»։

«Եւ իբրև դնա ևս ներժեաց ի թագաւորութենէն, ի նախարարան Հայոց անկանէը թագաւորութիւնն. պի թէպէտ և գանձն յարքունիս Պարսից երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմին»[1]

Հայ նախարարները Արշակունյաց թագավորության վերացումից հետո, լրիվ չափով պահպանում էին իրենց «առանուանական» և «զորածակալական» բոլոր իրավունքները։ Մամիկոնյանների տոհմը, որ ժառանգաբար վարում էր սպարապետության պաշտոնը, դարձյալ մնում էր նույն պաշտոնում. Վահան Ամատունին վարում էր հազարապետության պաշտոնը, իսկ գահավորության պաշտոնը դանվում էր բարձր հոգևորականության ձեռքում։ Վերոհիշյալ պաշտոնները հիշատակվում են նաև 443 թվի Շահապիվանի եկեղեցական ժողովի կանոնների մեջ։[2] Դա նշանակում էր, որ Հայաստանի ներքին ինքնավար կյանքը հայ Արշակունյաց թագավորության անկումից հետո չէր փոփոխվել և հայ նախարարների ու հոգևորականների իրավունքները չէին սահմանափակվել։ Նույնը պետք է ասել հարկերի և տուրքերի մասին, որոնք գանձվում էին արքունիքի կողմից։

Եղիշեի այն վկայությունը, որ «թնդեաց հարկն Պարսից արքունիքն» էր գնում վերաբերվում էր այն հարկերին ու տուրքերին, որոնք գոյություն ունեին հայ Արշակունյաց թագավորների ժամանակ ու գանձվում էին որպես պետական պարտավորություն և Արշակունյաց պետության անկումից հետո տրվում էին Պարսկաստանին։ Հարկերի գանձման ուղղությամբ այսպիսով առանձին փոփոխություն չէր կատարվել։

Մարզպանության շրջանի առաջին տարիներին Հայաստանում մեծ ազդեցություն ու հեղինակություն են ձեռք բերում Սյունիքի իշխանները։ Վահրիշապուհ մարզպանին (429—441) հաջորդում է նախապես Վրաստանում մարզպան եղած Վասակ Սյունյաց իշխանը (442—451)։

421—422 թ. թ. Բյուզանդիայի դեմ վարած պատերազմի անհաջողությունից հետո, ներքին խռովություններից ու հպատակ երկրների ազատագրական ապստամբություններից վախեցած Վռամ V-ը ստիպված է լինում մեղմ ու երկարատև խաղաղասիրական քաղաքականություն վարել, որի շնորհիվ հպատակ երկրներում, առանձնապես ժողովրդական Հայաստանում, ուժեղանում և զարգանում էր ֆեոդալիզմը—խոշոր հողատիրությունը։ Վռամ V-ի խաղաղ տիրապետության ժամանակ հատկապես մեծ չափով զարգանում է երկրի տնտեսական և վարչաքաղաքական կյանքը։ Քաղաքներում աշխուժանում է արհեստն ու առևտուրը, Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև ստեղծված երկարատև խաղաղությունը լայն հնարավորություն է ստեղծում միջազգային առևտրի զարգացման համար։ Արտաշատն ու նրան մոտակա նորակառույց Դվին քաղաքները դառնում են միջազգային տրանզիտ առևտրի և մաքսային կենտրոններ։ Առանձնապես մեծ ծավալ է ստանում հայկական նորաստեղծ դրամանության։ Վռամ V-ի թագավորության տարիներին էին, որ Սահակն ու Մեսրոպը և նրանց ավագ աշակերտները զարկ են տալիս ոչ միայն թարգմանական, այլև ինքնուրույն գրականության ստեղծելու գործին և այդպիսով սկիզբ է առնում հայ գրականությանը։

IV. 451 ԹՎԻ ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Մարզպանական Հայաստանի վերոհիշյալ արտոնյալ դրությունը փոխվում է այն ժամանակ, երբ Պարսկաստանում իշխանության գլուխն է բարձրանում Վռամ V-ի որդի փառատոլ գոռ Հազկերտ II-ը (439—457) և Տիզբոնի արքունիքում կրկին անգամ ապստամբ գիրք է դրավում Պարսկաստանի ռազմատենչ ազնվականության ներկայացուցիչ Միհրներսեհ հազարապետը։ Վերջինս 422 թվի Բյուզանդիայի հետ կնքած դաշնագրությունից հետո հեռանում է քաղաքական ասպարեզից և առանձնացած կյանք է վարում իր կալվածքներում։ Բայց երբ Հազկերտ II-ը գրավում է Սասանյանների գահը, նրան նորից գործի է կանչում։ Հազկերտի ժամանակ արքունիքում մեծ ազդեցություն են ձեռք բերում մոգերը՝ մոգպետի գլխավորությամբ, որոնք շատ անդամ միացած Միհրներսեհի հետ, իրենց կամքն էին թելադրում գոռոզ Հազկերտին։

1 Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, էջ 11—12։
2 «Կանոնագիրք Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 56—82։

Տիզբոնի արքունիքը, Հազկերտ II-ի գլխավորությամբ իրեն հայտարարում է հին Աքեմինյանների ժառանգորդ, հետևաբար, ելնելով պարսից ռազմամոլ ազնվականների ու մոլեռանդ մոգերի շահերից, ձգտում էր տիրել այն երկրներին, որոնք միաժամանակ ենթակա էին հզոր Աքեմինյան բռնակալներին։ Այդ նշանակում էր, որ Տիզբոնը լուրջ ու երկարատև պայքար պիտի մղեր Արևմուտքի դեմ, ասիական երկրներից բյուզանդիային վտարելու և Պարսկական պետության սահմանները Սև, Մարմարա և Միջերկրական ծովերին հասցնելու համար։ Այդ նպատակով Տիզբոնի արքունիքը Հազկերտի գլխավորությամբ նախ ձգտում է իր հպատակ քրիստոնյա բոլոր երկրներին տնտեսապես, քաղաքականապես, կուլտուրապես և կրոնով ենթարկել Պարսկաստանին, որպես նրա անբաժանելի նահանգներ կամ վարդեր, իսկ ժողովուրդներին՝ ձուլել պարսիկների հետ, այսինքն իրանիզացիայի ենթարկել, որպեսզի դրանով կանխվեր և վերջ տրվեր հպատակ երկրներում հաճախակի բռնկվող ազատագրական ապստամբություններին։ Տիզբոնի նպատակն էր առաջին հերթին կանխել հայերի ապստամբությունները։ Հազկերտ II-ի վերոհիշյալ ծրագիրն ավելի նուրբ ձևերով շարունակում է նաև նրա հաջորդ Պերոզ թագավորը (457—484)։

451 և 481—484 թվականների հայ ժողովրդի հերոս խոշոր ազատագրական պատերազմները, որոնց նվիրված է սույն ժեստրությունը, Սասանյան արքունիքի վարած մինուճար քաղաքականության հետևանքներից առաջանալով, փաստորեն իրար շարունակություն էին կազմում։

Քրիստոնեությունը պարթևների ժամանակ 2-րդ դարի վերջում և 3-րդի առաջին քառորդում լուրջ հաջողություններ ձեռք բերել Պարսկաստանում։ Սակայն Սասանյան դինաստիայի հաղթանակից հետո (224—236), քրիստոնեական կրոնը դուրս է մղվում Իրանից։ Սասանյանները պարթևների դեմ հաջող կռիվ մղելու համար, իրենց պայքարի դրոշը դարձնում են զրադաշտականությունը, որի էության մասին խոսք կլինի քիչ հետո։ Այդ պատճառով արքունիքում մեծ տեղ են տալիս մոգերին և զրադաշտական կրոնը նորից նվաճող պարսիկների ձեռքում զենք է դառնում, իսկ դրա հակառակ Հայաստանում, Հռոմում, արևելյան մասերում, Բյուզանդիայում և մի շարք այլ երկրներում քրիստոնեությունը տարածվում և դառնում է այդ երկրների համար պետական պաշտոնական կրոն։

4-րդ դարի սկզբին Հայաստանում քրիստոնեությունը հաստատանում է որպես պետական կրոն։ Զրադաշտական Պարսկաստանի ոտքերի դեմ մաքառելու գործում հենց քրիստոնեական կրոնն էլ հայերի ձեռքում պայքարի դրոշ է դառնում, օգնական ունենալով արևմտյան քրիստոնյա երկրները։

Սասանյանները սկսած 228 թվից թշնամական դիրք են բռնում Հայաստանի նկատմամբ։ Այդ թշնամությունը մեծ չափով սկսում է ուժեղանալ Շապուհ II-ի կամ երկարակյացի ժամանակ (310—379), որը սկսած 337 թվից մինչև իր կյանքի վերջը խիստ հալածանքի է ենթարկում քրիստոնյաներին և երբ ժամանակ ձգտում էր խանգարել քրիստոնեության տարածմանն ու ամրապնդմանը Հայաստանում։ Շապուհ II-ի այդ պատճառ քաղաքականությունն որոշ չափով մեղմանում է Ներսեհի, Հազկերտ I-ի և Վռամ V-ի ժամանակ։ Սակայն Վռամի որդի Հազկերտ II-ի օրոք, Սասանյանները նորից խստացնում են իրենց քաղաքականությունը հանդեպ քրիստոնյաների՝ իրենց ենթակա հպատակ երկրներում։

387 թվի Տիզբոնի դաշնագրությամբ, Հայաստանի բաժանումով, Առաջավոր Ասիայում Պարսկաստանի ու Բյուզանդիայի մրցակցությունը չի վերանում։ Հայաստանը դեռ երկար ժամանակ ծառայում է որպես պատերազմի թատերաբեմ այդ երկու հզոր պետությունների միջև։ Սասանյան Պարսկաստանն Առաջավոր Ասիայում Բյուզանդիայի դեմ իր դիրքերը կարող էր ամրացած համարել միայն այն ժամանակ, եթե նրան հաջողվեր իր կողմը գրավել Հայաստանը, Վրաստանը և Աղվանից աշխարհը, դուրս բերելով այդ երկրների ռազմական ուժերն իր թշնամիների դեմ։ Պարսկաստանի համար, 5-րդ դարում հատկապես կարևոր նշանակություն ուներ Հայաստանը, թե՛ իր ռազմաստրատեգիական դիրքով և թե՛ իր զորական ուժերով։ Այդ տեսակետից ուշագրավ է պարսից հազարապետ Միհրներսեհի հետևյալ խորհուրդը, որ նա տալիս է արյաց արքային.

«Արդ քանի երկրներ կան, որոնց վրա դուք աստվածաբար իշխում եք, որոնց կարող եք սպանել կամ ապրեցնել։ Նախ և առաջին Հայոց մեծ երկիրն է, որ շատ պետքական է և օգ-

տակար, նրա հետն էլ Վրաստանն ու Ադվանքը... Դուք ինքնիշխող և բոլոր արհեստը գիտեն, թե ինչպես մեծ ու պետական երկիր է Հայոց աշխարհը, բայց մոտ է ու սահմանակից կայսր իշխանությանը և միևնույն օրենքն ու հավատն ունի կայսրը, որ նրանց իշխում է։ Եթե նրանց մեր հավատքին դարձնենք և վարժեցնենք մեր օրենքներին, եթե մինչև այժմ մոլորվել էին, կգան ուղիղ ճանապարհի վրա, այնուհետև կախրեն ձեզ և Արյաց աշխարհը և կհնազանդեն կայսրից ու նրա օրենքներից։ Նրանից հետո նույն աշխարհը մեր սերտ սիրով իշխանության ներքև կլինի։ Եվ եթե հայերը հաստատ մերը լինեն, վրացիներն ու աղվանները այնուհետև մերն են ու մերը»։

«Արդ՝ քանի՞ աշխարհք են, որում դուք իշխեք աստուածաբար, և դուք սպանանել կամիք իշխեք և զգաս կնոցդ անել։ Եւ նախ առաջին՝ որպես Հայոց մեծ աշխարհն պետոյ է և օգտակար, և առ նմին Վրաց և Ագուանիցն... Վասն զի դուք ինքնին գիտեք և ամենայն Արիք՝ զաշխարհն Հայոց, թե որպես մեծ է և պետական, և մօտ և սահմանակից է կայսեր իշխանութեանն, և զօրենս և պաշտօն զնոյն ունի, զի կայսր զիշխանութիւն նոցա ունի։ Եւ եթէ և մերոց օրինաց ընտանեցուցանէք զնոսա, և ընդկընուն, և կարեն ճանաչել, եթէ ցայժմ մոլորեալք էին, և արդ ի ճանապարհ հնգսցեն՝ այնուհետև զձեզ սիրեն և զԱրեաց աշխարհն, և ի կայսերէ և յօրինաց նորա և յաշխարհէն մերմէն և հետանան ի բաց։ Եւ լինի այնուհետև աշխարհն ընդ մեր սերտ սիրով և միաբանութեամբ։ Եւ յորժամ Հայք սերտիւ մեր լինին՝ Վիրք և Աղուանք այնուհետև մեր իսկ լինի»[1]

Ղազար Փարպեցու այս հետաքրքիր տեղեկությունը ցույց է տալիս, թե ինչ մեծ նշանակություն է ունեցել Հայաստանը Պարսկաստանի համար 5-րդ դարում և այդ պատճառով էլ ընդդեմ է դրվում Հայաստանում և մյուս քրիստոնյա երկրներում գործադրել Սասանյան պետության օրենքները, որոնց հիմքը կազմում էր զրադաշտական-մազդեական կրոնը։ Իսկ վիրջինի տարածումը քրիստոնյա հպատակ երկրներում կազմում էր ավյալ ժամանակաշրջանում Տիզբոնի արքունիքի քաղաքականության հիմքը։

Սասանյան Պարսկաստանում տիրում էր բռնապետական վիպակություն, աշխարհիկ ֆեոդալ-իշխանների իրավունքներն

[1] Փարպեցի, էջ 86—88։

արքունիքում և երկրում խիստ սահմանափակված էին։ Նրանք ամենուրեք հանդիսանում էին պետական պաշտոնյաներ, իշխանության մեջ ազդեցիկ դերը էր դրավում բարձր հոգևորականությունը, մոգպետան օժտված էր լայն իրավունքներով և շատ դեպքերում իր կամքն էր թելադրում թագավորին։ Իսկ Սասանյան Պարսկաստանին ենթակա Հայաստանում, Վրաստանում և այլ երկրներում դրությունն այլ էր։ Այդ երկրներում, հատկապես Հայաստանում, ինչպես նշել ենք վերևում, ֆեոդալ-նախարարներն իրենց կալվածքներում և ներքին գործերում լիակատար անկախություն էին վայելում։ Եվ դա ձեռնտու չէր Սասանյան միապետին, նա աշխատում էր առաջին հերթին սահմանափակել հայ նախարարների արտոնյալ իրավունքները և լիակատար կերպով ենթարկել նրանց Տիզբոնի արքունիքին, որպեսզի հեշտանար իրանիզացիայի քաղաքականության կիրառումը Հայաստանում։

Հազկերտ II-ի ժամանակ Հայաստանում նախարարների կողքին խիստ ուժեղացել էին եկեղեցին և հոգևորականները, որոնք իրենց եպիսկոպոսական թեմերով և կալվածատիրական հատատություններով ու քաղաքական իրավունքներով խոշոր ուժ էին ներկայացնում։ 429 թվից, Արշակունյաց պետության անկումից հետո, կաթողիկոսը, բացի կրոնական գործերից, սահմանում է նաև վարչական-քաղաքական կյանքը։ Նա ընկերանում է մարզպանին, հետևում է հարկերի բաշխմանը և հավաքմանը, հսկում աշխարհական և դատաստանական գործերին, գլխավորում է իշխանների և հոգևորականների խառն ժողովները։ Մի խոսքով, երկրի ներքին գործերի կառավարման ընագավառում նա օժտված էր լայն իրավունքներով։ 450 թվին բացի կաթողիկոսություններից, Հայաստանի մի շարք գավառներում հիմնվել էին եպիսկոպոսական թեմեր, եպիսկոպոսություններ, միաբանություններ և կուսանոցներ։ Քրիստոնեական կրոնի տարածմանն ու ամրապնդմանը խոշոր չափով նպաստեց հայոց գրերի ստեղծումը, որը զորավոր պատնեշ հանդիսացավ իրանիզացիայի դեմ, որովհետև դրանով սեփական և հելլենիստական կուլտուրայի զարգացումը Հայաստանում նոր թափ է ստանում։

V. ՀԱՅ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԻՐԱՆԻԶԱՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅԲԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

387 թվի Տիզբոնի դաշնագրությունից հետո, հայ ժողովուրդը փաստորեն կորցնում է իր անկախությունը և ընկնում պարսկական ու հռոմեական տերությունների դաժան լծի տակ, մի լուծ, որ մի կողմից երկիրը դատապարտում էր կիսքայքայման, իսկ մյուս կողմից Հայաստանի երկու մասերը կուլտուրապես, անտեսապես ու քաղաքականապես կարում, հեռացնում էր իրարից։ Քաղաքական այդ անապահով վիճակը հայերին օտարների հետ ձուլվելու լուրջ վտանգ էր սպառնում։ Ահա այդ կարևոր խնդիրը 5-րդ դարի սկզբին, հայոց Վռամշապուհ Թագավորի սերտ պատմական մասին, մանավանդ Հայոց լուրջ առարկա է դառնում երկրում։ Այդ ժամանակ Հայաստանում, առաջավոր մարդկանց շրջանում դարձնում է այն գաղափարը, թե անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մի միջոց, գնալ, որը հնարավորություն տար Հայաստանի երկու մասերի միջև քաղաքական և կուլտուրական միասնական կապ ստեղծելուն։ Այդպիսի կարևոր միջոցը, պարզ է, որ կարող էր լինել միմիայն հայերեն սեփական գրերի ստեղծումը, որն իսկապես մեծ դարկ կարող էր տալ կուլտուրային, կամեղծեր հայերի մեջ համախմբվածության և հնարավորության կատարժողովրդին պահպանելու իր ինքնուրույնությունը և կանխելու նրան օտարների հետ ձուլվելու վտանգը։

Հայերեն գրերի ստեղծումն, անշուշտ, առաջին հերթին հնարավորություն կստեղծեր վերականգնելու երկրի անկախությունը, ուժեղացնելով Արշակունյաց պետությունը։ Վռամշապուհ Թագավորը հայերեն գրերի ստեղծման մեջ տեսնում էր ոչ միայն հայ ժողովրդի կուլտուրայի զարգացումը, այլև իր Թուլացած պետության ամրապնդումը։

Հայերեն գրերի ստեղծումից ուղիղ հարյուր տարի առաջ, 4-րդ դարի սկզբին, Հայաստանում մուտք էր գործել քրիստոնեությունը և Տրդատ III-ի կողմից ճանաչվել էր այն որպես պետական կրոն։ Սակայն այդ հարյուր տարվա ընթացքում քրիստոնեական զաղափարախոսությունը լայն ծավալ չէր ստացել երկրում։ Ժողովրդական մասսաները դեռ շարունակում էին կապված մնալ իրենց հին հեթանոսական կրոնին։ Ավետարանի լեզուն անհաս-

կանալի էր ժողովրդին, նա կարգացվում էր ասորերեն և հունարեն լեզուներով ու հայերեն թարգմանվում ուղղիղներին։ Այդ տեսակետից քրիստոնյա քարոզիչների գործը շատ դժվար էր, նրանք նույնպես իրենց հերթին պահանջում էին ստեղծել հայերեն գիր և գրականություն։

Հայկական Թուլացած պետության ամրապնդումով, քրիստոնեական կրոնի լայն տարածումով և ինքնուրույն ազգային գրականության ու կուլտուրայի ստեղծումով, հայ ժողովուրդը 5-րդ դարում ձգտում էր ստեղծել Հայաստանում զորավոր մի պատնեշ ընդդեմ իրանիզացիայի, որ 4-րդ դարից սկսած անվերջ փորձում էր ներթափանցել Հայաստան և սպառնալ հայերի՝ որպես ինքնուրույն ժողովրդի գոյությանը։ Ահա թե ինչ դանի առաջն էին աշխատում առնել 5-րդ դարի սկզբի հայ նշանավոր լուսավորիչները Սահակն ու Մեսրոպը և նրանց օգնող ու հովանավորող Վռամշապուհ Թագավորը։

387 թվի Տիզբոնի դաշնագրությամբ Արևելքի և Արևմուտքի միջև տեղի է խաղաղության երկարատև մի շրջան։ Այդ խաղաղության ժամանակաշրջանում Իրանում իրար հետևից իշխում են այնպիսի Թագավորներ, որոնք վերջ տալով արտաքին պատերազմներին, զբաղվում են երկրի ներքին գործերով։ Այդ Թագավորներից հայտնի են Վռամ IV (Բահրամ, 389—399), որը կոչվում է նաև կրմանշահ (Բհրմանշահ—Կրմանի Թագավոր), որովհետև նախքան Թագավոր դառնալը, իբրև Թագաժառանգ վարում էր Կիրմանի գավառի կառավարչի պաշտոնը, և Հազկերտ I (399—420)։ Սրանք իրենց արտաքին քաղաքականության բնագավառում վարում են խաղաղ քաղաքականություն, իսկ ներքին քաղաքականության մեջ անխնա եղան ռազմատենչ աղնվականների և զրադաշտական մոգերի նկատմամբ, Թուլացնելով նրանց ազդեցությունն արքունիքում և պետական մի շարք գործերում։ Աղնվականների և մոգերի ազդեցությունն արքունիքում այնքան էր ուժեղացել, որ Թագավորների դերը Թուլացել էր ոչ միայն արքունիքում, այլև երկրում։ Վերոհիշյալ Թագավորների առաջ խնդիր էր դրված վերջ տալ արտաքին կռիվներին, զբաղվել երկրի ներքին խնդիրներով, Թուլացնել աղնվականների ու մոգերի ազդեցությունը, բարձրացնել միապետ-

ների հովինակութիւնը և երկրի ներսում ամրապնդել թուլացած միապետութիւնը։

Պարթևները Հաղկերտ I-ին «մեղավոր» անունն են տալիս, իսկ հռոմացիները հռչակում են նրան որպես մեծահոգի, պղնիվ Թագավոր,[1] որովհետև նա այնքան մեղմ էր վերաբերվում քրիստոնյաների հանդեպ, որ մինչև անգամ թույլ է տալիս նրանց 410 թվին Տիզբոն մայրաքաղաքում ժողով գումարել և ընտրել իրենց հոգևոր պետը։ Նման մեղմ քաղաքականութիւնը առաջին հերթին նպաստավոր պայման էր ստեղծում Հայաստանում, ինչպես շինարարական, նույնպես և կուլտուրական աշխատանքների ծավալման գործում։ Իրոք, հայոց Վռամշապուհ Թագավորի ժամանակ Հայաստանում ծավալվում է կուլտուրական բեղմնավոր գործունեութիւն, որը հայ ժողովրդի ազգային գոյութեան պահպանման տեսակետից պատմական մեծ նշանակութիւն ունեցավ։ Վռամշապուհ Թագավորի իշխանութեան տարիներին ձեռնարկված կուլտուրական ամենամեծ գործը հայերեն գրերի ստեղծումն էր Մեսրոպ Մաշտոցի ձեռքով 407 թվին[2]

Քրիստոնեութիւնն ամրողջ 4-րդ դարում, հակառակ Ներսես կաթողիկոսի գործադրած բոլոր ջանքերին, տիրապետող կրոն չդարձավ Հայաստանի բոլոր գավառներում։ Հեթանոսական կրոնը շարունակում էր պայքարել քրիստոնեութեան դեմ։ Մի շարք լեռնային գավառներում քրիստոնեութիւնը մինչև անգամ դեռ մուտք էլ չէր գործել, չնայած քարոզիչների ու իշխանութիւնների գործադրած բոլոր ժիջոցներին։ 5-րդ դարի սկզբին քրիստոնեութիւնը տարածելու համար կազմակերպվում է նոր շարժում, որի մեջ շատ մեծ է Վռամշապուհ Թագավորի դերը։ Փորձը ցույց էր տվել, որ բոլոր ուժի միջոցով Հայաստանում, հատկապես նրա ծայրամասային նահանգներում, հնարավոր չէր տարածել քրիստոնեական կրոնը։ Քրիստոնյա քարոզիչներն ու գործիչները փորձ են անում խաղաղ միջոցներով տարածել այն։ Այդ գործի գլուխն են կանգնում 5-րդ դարի առաջին կեսի աչքի ընկնող երկու վանականներ՝ Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցը։

1 «Արարատ» ամսագիր, հոկտեմբեր, 1895 թ., էջ 385—398։

2 Մեզ այդ մասին մեր ուսումնասիրութիւնը—«Հայոց գրերի ստեղծման պատմութիւն», Երևան, 1940 թ.

Իրանական մազդեական կրոնը, սկսած 4-րդ դարից, փորձում է ներխուժել Հայաստան։ Միայն հայկական պետութեան ամրապնդումով, կուլտուրայի զարգացումով և քրիստոնեական կրոնի տարածումով երկրում կարող էր ստեղծվել հզոր պատնեշ զրադաշտականութեան ներխուժման առաջն առնելու համար։ Բայց, ինչպես քանիցս նշել ենք, կուլտուրայի զարգացումը և վերը նշած պայմանների ստեղծումը կապված էր սեփական ազգային գիր ու գրականութիւն ունենալու խնդրի հետ, որոնցից մինչ այդ զուրկ էին հայերը։ Այդ հանճարեղ գործն հենրիմակը հանդիսանում է Տարոն գավառի Հայկակաց գյուղացու որդի Մեսրոպ Մաշտոցը, որը երկար որոնումներից հետո Սամոսատ քաղաքում[1] 407 թ. կազմում է հայոց գրերը, թվով 36 տառ և բերում Հայաստան։ Այդ թվականից հիմք է դրվում հայ դպրութեանը և միաժամանակ ծառայում է մինչև իրանիզացիայի դեմ պայքարելու գործում։

Վռամշապուհը, հայ Արշակունյայց նախնիներից նշանավոր այդ Թագավորը, ըմբռնում է հայերեն գրերի ստեղծման քաղաքական ու կուլտուրական խոշոր նշանակութիւնը երկրի համար և այդ պատճառով էլ ընդառաջում և միջոցներ է տրամադրում Սահակին ու Մեսրոպին հոբինելու գրերը։ Այդպիսով, 5-րդ դարում հայերը հայկական գիր ու գրականութեամբ ձեռք բերին, գլխավոր միջոցներից մեկը՝ իրանիզացիայի դեմ պայքարելու համար։

5-րդ դարի առաջին կեսին Սահակը, Մեսրոպը և նրանց աշակերտները, հայոց գրերի ստեղծումից հետո, մեծ գործ են տալիս գրականութեան, ըստ որում ոչ միայն թարգմանական և կրոնական գրքեր են գրվում, այլև ինքնուրույն պատմական, գիտական և փիլիսոփայական աշխատութիւններ։ Ինքնուրույն գրականութեան զարգացումը մեծ ծավալ է ստանում հատկապես 440-ական թվականներին, երբ Հայաստանը երկունքի օրեր էր ապրում Հաղկերտ II վարած դաժան քաղաքականութեան հետևանքով։ Ինքնուրույն երկերից հայտնի են Կորյուն վարդապետի «Մեսրոպի կյանքը», Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» աշխատութիւնները։ Վերոհիշյալ

1 Մենք ենթադրում ենք, որ Մեսրոպ Մաշտոցը Սամոս կղզուն է առեղծել հայոց գրերը։

պատմական գրքերում հայ պատմիչները ժողովրդի ուշադրությունը բևեռում էին անցյալի վառ էջերի վրա—դրանցով նրանք ժողովրդին հիշեցնում էին Հայաստանի անկախության գաղափարը և թագավորության շրջանի պատմությունը։ 5-րդ դարում հայ գրականությունը, առանձնապես պատմագրությունը, այնպիսի խոշոր թափ է ստանում, որ իր ժամանակի միջազգային դրականության մեջ առաջնակարգ տեղ է գրավում։ Հատկապես 5-րդ դարի երկրորդ կեսի պատմագիրները՝ Եղիշեն, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին և ուրիշները ստեղծում են այնպիսի մեծարժեք երկեր, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած մեկ-մեկ պատենշներ էին իրանիզացիայի դեմ։ Հայ ժողովուրդն իր ստեղծած գրականության մեջ տեսնում էր իր դոյության պահպանումը, և ճիշտ են այն ուսումնասիրողները, որոնք իրավացի կերպով այդ դարաշրջանը համարում են ոսկե դար։ Իրոք, այդ դարաշրջանը հայ հին գրականության ոսկե դարերից մեկն է եղել։ Դա հայ ժողովրդի ինքնագիտակցության, կուլտուրայի ստեղծման ու զոյամարտի դարաշրջանն է։

Ինքնուրույն գրական գործերից բացառիկ տեղ է խաղացել Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» փիլիսոփայական աշխատությունը, որը մի կողմից ուղղված էր պարսկական զրադաշտական կրոնի և մյուս կողմից հունական աղանդների դեմ։ Այդ աշխատությամբ Սահակ-Մեսրոպյան ավագ աշակերտ Եղնիկը, որը սովորել էր Հունաստանում խոշորագույն գիտնականների մոտ և ձեռք էր բերել իր ժամանակի բարձր կրթություն և գիտելիքներ՝ լոգիկա, բժշկություն, քրիստոնեական ուսմունք և այլն, պայքար էր մղում երկու ճակատի վրա, որովհետև 5-րդ դարի կեսին, չնայած որ Հայաստանի համար պետական վտանգը ներկայանում էր Պարսկաստանն իր մազդեական կրոնով, այնուամենայնիվ բյուզանդական վտանգը նույնպես որոշ ապառնի էր հայ իրականության համար։ Եղնիկ Կողբացու աշխատությունը հավանաբար գրված է 449—51 թվերի ժամանակաշրջանում, երբ Հայաստանն ալեկոծվում էր Տիզբոնի հալածանքների հետևանքով։ Որ Եղնիկի աշխատությունը գրված էր վերոհիշյալ թվերին, դա երևում է գրքի քաղաքական հագեցվածությունից և կրքոտությունից։ Եղնիկի աշխատության լավագույն գլուխը հանդիսանում է կոչ «Բեղին պարսից»-ը՝ մազդեական

կրոնի հերքումը։ Եղնիկը այդ աշխատությունը գրել է այն ժամանակ, երբ Հազկերտ II-ը բռնի կերպով իր կրոնն էր տարածում Հայաստանում։ Նա ժանրամասն կերպով վերլուծում է զրադաշտական կրոնի բոլոր կողմերը, բարության և չարության առասվածությունների ծագումը և նրանց մրցությունը, որը կազմել է պարսկական կրոնի հիմքը։ Եղնիկը վերլուծելով պարսկական կրոնի սկզբունքները և անհեթեթությունները, ժխտում է պարսկական մոգերի կրոնը, մի կրոն, որ Հազկերտը այնքան ջնջռեռանդ կերպով ձգտում էր տարածել Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում։ Այդպիսով, Եղնիկը հետևողականորեն պաշտպանում է քրիստոնեությունը։ Իսկ Բյուզանդիան, որ խորամանկությամբ մշտապես խոստումներ էր տալիս հայերին, հաճախ պայքարի վճռական մոմենտին ոչ միայն չէր օգնում, այլև օժանդակում էր պարսիկներին։ Այդ վտանգը հաշվի առնելով, Եղնիկն իր հարվածի բուռն ալեքն ուղղում է բյուզանդացիների դեմ։

Հայոց գրերի և գրականության ստեղծումով հայ ժողովուրդը ձեռք է բերում մի այնպիսի զենք, որով նա մի կողմից ամրապնդում է քրիստոնեական կրոնը Հայաստանում, իսկ մյուս կողմից զարկ տալով ինքնուրույն կուլտուրային ու գպրությանը, գրավոր պատենշ է ստեղծում իրանիզացիայի դեմ, և երբորդ կողմից գրանով «... ժողովուրդը, որ մինչ այդ ժամանակ գրականություն չուներ, ժամանակ քաղաքակրթ ազգերի շարքը»։[1]

Գրականության-գպրության զարգացման հետ զուգընթաց 5-րդ դարի առաջին կեսին Հայաստանում տարածվում է նաև դպրոցների լայն ցանց, գրագետ և ինտելիգենտ մարդկանց թիվը մեծ քանակությամբ ավելանում է, առաջ է գալիս գործիչների և քարոզիչների մի ամբողջ սերունդ, որոնք մեկը մյուսից գեղարվեստական գործեր են գրում ժողովրդին կազմակերպելու և դուրս բերելու պարսկական բռնակալության ու նրա քաղաքականության դեմ։ Այդ քարոզիչների մեջ ամենից ավելի աչքի է ընկնում Ղևոնդ Երեցը, որը մարմնացումն էր քրիստոնեության և հայրենիքի համար կյանքը զոհող քարոզչի։ Գրականության ու

[1] Հ. Գելցեր—«Համառոտություն Բյուզանդական կայսրների պատմության», Վաղարշապատ, 1901, էջ 18։

պրոբլեմի բուռն վերելքը և քարոզիչների այն մեծ խումբը, որը 5-րդ դարում ստեղծում է հայ ժողովուրդը, հաղթահարել չէին կարող ոչ Իրանիզացիան և ոչ էլ Հաղկեաց II-ի քաղաքական ու կրոնական հալածանքները։

Հայ գրականության ու դպրության մասին սկսմ տեղեկություն տալուց հետո, այժմ համառոտակի բացատրենք, թե ինչ էր իրենից ներկայացնում պարսկական կրոնը կամ այլ կերպ ասած՝ մազդեականությունը, որ պարսիկներն այնքան հախուռն կերպով ձգտում էին տարածել Հայաստանում։

VI. ԶՐԱԴԱՇՏԱԿԱՆ ԿՐՈՆԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Սասանյան դինաստիայի ժամանակ պարսիկների կրոնը վերակազմված զրադաշտականությունն էր, որն ավելի հին ժամանակ, մինչև անգամ Նախքան Աքեմենյան դինաստիայի հանդես գալը, գոյություն ուներ։ Այդ կրոնը դարերի ընթացքում ենթարկվելով փոփոխության, դասակարգային հասարակության մեջ դառնում է տիրողների կրոն։ Պարսկական այդ կրոնը հիմնական ու մեծ փոփոխության է ենթարկվել և հարմարվել պարսկական նոր կազմավորվող ազնվականության շահերին գեռևս 7-րդ դարում մեր թվականությունից առաջ։ Համաձայն եղած ավանդությունների այդ կրոնի ձևավորման մեջ դեր է խաղացել Զրադաշտ անունով մի գիտուն քուրմ կամ մոգ, որը գրի առնելով ու խմբագրելով այդ կրոնը, ամփոփում է այն մի գրքի մեջ և գիրքը կոչում է Զենդ—Ավեստա, այսինքն պարսիկների սուրբ գիրք։

Այդ սուրբ գիրքն այնքան մեծ էր իր ծավալով, որ Դարեհ I-ի ժամանակ (522—484) գրված էր 12 հազար կովի կաշվից պատրաստված մագաղաթյա թերթերի վրա։

Բնական երևույթները—կրակը, արևը, ջուրը, աստղերը պաշտող հին բակտրիացիները, մարերը (մեգացիները) և պարսիկները հետզհետե հասնում են զարգացման այն աստիճանին, որ կարողանում են վերացական գաղափարների օգնությամբ ստեղծել մի աստվածություն, որի մեջ թեև կա դուալիզմ, բայց և այնպես իր մեջ մարմնավորում է միաստվածության գաղափարը։ Հին պարսկական կրոնը մեր էրայից առաջ 7-րդ դարում գրի առնող ու խմբագրող Զինդ-Ավեստայի հեղինակ բակտրիացի մոգ Զրադաշտը, միաժամանակ հայտնի էր որպես օրենսդիր, որովհետև հին Արևելքի երկրների լուսավորության ու կրթության գործը նույնպես պատկանում էր մոգերին։ Այդ է պատճառը, որ Մովսես Խորենացին այդ մեծ օրենսդիր մարգարե Զրադաշտին, գեղին կամ ոսկեգույն ուղտեր ունեցողին, անվանում է «տրքայ բակտրիացւոց»,[1] որ նշան է՝ թե մոգերի ազդեցությունը պետության մեջ հասնում էր իր գագաթնակետին։

Պարսկական մազդեզական կրոնը Զինդ-Ավեստայի հեղինակի անունով կոչվում է զրադաշտականություն, որ ավելի տարածված անուն է։ Եվրոպացիք կոչում են Զորոաստրիզմ (Zoroastrizme), իսկ մազդեզյան կամ մոգական կրոն է կոչվում այն պաշտոնյաների անունով, որոնք իրրև քրմեր կամ մոգեր ծառայում էին զրադաշտական կրոնին։

Մոգերը մարական ծագում ունեն, նրանց կենտրոնը եղել է Ռագա (Rogha) կամ Ռեյ (Raia) Զրադաշտի ծննդավայրը, որ անշուշտ համապատասխանում է Ղազար Փարպեցու ժամանակված հետևյալ վայրին.

«... յԱպար աշխարհի, մերձ ի գիւղն Մոգուց որ անուանեալ կոչի Ռևանդ»։[2] Մոգերը կազմում էին առանձին դաս, մոգությունը ժառանգաբար անցնում էր որդուց որդի, ունեին իրենց պետը՝ հանձին մոգպետի կամ գենպետի, և մեծ ազդեցություն ունեին երկրում։

Մազդեական կամ զրադաշտական կրոնի հիմքը կազմում է բարու—լույսի և չարի—խավարի աստվածների պայքարը։ Բարու—լույսի աստվածը կոչվում էր Ահուրա-Մազդա (Ahura=տեր, Mazdao=մեծ գիտուն, ամենագետ)։ Նա հանդիսանում էր գերագույն աստված, որը հայտնի է նաև Որմիզդ անունով, այստեղից էլ առաջ է գալիս այդ կրոնի «որմզդական» անունը։ Ահուրա-Մազդան անսկիզբ է և անվախճան, երկինքը հանդիսանում է նրա գլխարը, աստղերը՝ նրա զարդարանքները, իսկ արեգակը՝ նրա աչքը։ Ահուրա-Մազդայի հակառակորդը Անրիմանն է, որը չարի—խավարի աստվածն էր։ Ըստ պարսկական կրոնի, նախքան աշխարհի ստեղծումը կար հավիտենական լույս և խավար։ Հավի-

[1] Մ. Խորենացի, էջ 25։
[2] Ղազար Փարպեցի, էջ 220։

ենական լույսի տերն էր Ահուրա-Մազդան, իսկ խավարինը՝ Ահրիմանը։ Ահուրա-Մազդան ստեղծում է աշխարհը և լցնում է բարի ոգիներով, որոնց բոլոր գործերը բարի են։ Նա է ստեղծել երկինքն ու երկիրը, հողը, ջուրը, լույսը, կրակը, ջերմությունը, կյանքը, մարդը և բոլոր օգտակար կենդանիներն ու բարի դրախտերը։ Նա ինքը, Ահուրա-Մազդան է կառավարում աշխարհն իր ստեղծած բարի ոգիների կամ հրեշտակների միջոցով։

Ահուրա-Մազդային հակառակ գործում է Ահրիմանը, չարի—խավարի աստվածը։ Նա նույնպես անսկիզբ է ու անվերջ, գոյություն ունի ինքնուրույն ստեղծագործելու կարողությունով։ Նա Ահուրա-Մազդային հակառակ ստեղծում է սովը, ցուրտը, մահը, հիվանդությունները, ժանտախտը, պատերազմը և բոլոր վնասակար գործերն ու էակները։ Ահրիմանը նույնպես ստեղծում է իր օգնական ոգիներին, որոնք նույնպես լցնում են աշխարհը և ստեղծում բոլոր չար գործերը։

Ահրիմանը՝ չարի-խավարի աստվածը՝ թշնամի էր Ահուրա-Մազդային և պայքարում է նրա ու նրա ստեղծած մարդու դեմ։ Մարդն այդ պայքարում պետք է օգնի և պաշտպանի Ահուրա-Մազդային չար ոգու դեմ կռվելիս, որովհետև նա վայելում է բարի աստծու ստեղծած բոլոր բարիքները։ Բարու ու չարի սկզբունքների պայքարը, ըստ հին պարսիկների հասկացողության թեև երկար է տևելու, բայց վերջ ի վերջո ավարտվելու է բարության հաղթանակով։ Հաղթելու է բարի աստվածը, այսինքն լույսը՝ խավարին, բարին՝ չարին և երկրի վրայից վերանալու է Ահրիմանի թագավորությունը և մարդը ձեռք է բերելու կատարյալ երջանկություն։ Այսպիսով, թեև Ահրիմանն անսկիզբ է, բայց անվախճան-հավիտենական չէ։ Իր էությամբ ու բովանդակությամբ պարսկական այս կրոնը դուալիստական բնույթ ունի և բնում է Իրանի սոցիալ-անտիսական ու քաղաքական յուրահատուկ պայմաններից, որոնք առանձնահատուկ են եղել անտիսական և կիսանտիսական երկրներին։

Իրանական դուալիստական կրոնի ծագումը պայմանավորված է իրանական ցեղերի բաժանումով, զրադմունքով և նստակեցությամբ։ Իրանական ցեղերի մի մասը զարձել էր նստակյաց և զրաղվում էր հողագործությամբ, իսկ մի մասը մնացել էր անասնապահ և թափառաշրջիկ, մեծ մասամբ ապրում էր թալան

նով և կողոպտուտով։ Հատկապես սպանում և կողոպտում էին հողի հետ կապված ցեղերին։ Այս ցեղերից հողագործները ստեղծում են Ահուրա-Մազդային, իսկ անասնապահ կողոպտիչները՝ Ահրիմանին։

Պարսկական վերոհիշյալ կրոնը միաժամանակ Իրանի և Թուրանի զարավոր պայքարի արտացոլումն է։ Իրանը պատկերացվում է որպես բարի-լույսի երկիր, իսկ Թուրանը՝ չարի և խավարի երկիր, որովհետև Թուրանական կիսավայրենի ցեղերը դարեր շարունակ հարձակվում էին Իրանական ժողովուրդների վրա ու կողոպտում նրանց երկրները։

Զրադաշտական կրոնն իր ծագմանն է հասնում Աքեմինյան դինաստիայի ժամանակ, այդ կրոնն իր հիմքում դնում է ոչ միայն ոչնչացնել չար Արհիմանին, այլև տիրել աշխարհին։ Հզոր Աքեմինյան թագավորները սկսած Դարեհ I-ից շատ հաճախ իրենց նվաճողական քաղաքականությունը հիմնավորում էին զրադաշտական կրոնով։ Բայց երբ Ալեքսանդր Մակեդոնացին տիրեց Արևելքին, հզոր Աքեմինյանները խոնարհվեցին նոր աշխարհակալի առաջ, զրադաշտական կրոնն էլ մի առ ժամանակ մոռացության տրվեց և Արևելքը կրոնի ու կուլտուրայի հարցերով հետևեց Արևմուտքին։

III զարի կեսերին, մեր էրայից առաջ, Իրանում հիմնվում է Պարթևական դինաստիան։ Այդ դինաստիայի ներկայացուցիչները չեն վերականգնում զրադաշտականությունը։ Նրանք նախ արհատպաշտներ էին և ավելի շատ հետևում էին հունական կուլտուրայի և կրոնի պաշտամունքին։ Հինգ հարյուր տարուց ավելի մոռացության է տրվում զրադաշտականությունը և նրանց սպասարկու մոգերի դերը։ Սակայն Սասանյան դինաստիայի հաղթանակով զրադաշտական ուսմունքը Պարսկաստանում նորից ոտքի է կանգնում և մոգերի դասը կրկին պետական գործերի տնօրինման մեջ սկսում է խաղալ մեծ դեր։

Զրադաշտական կրոնի ուսմունքի մեջ Սասանյանների ժամանակ գլխավոր պաշտամունքի առարկան էր կրակը, որի համբավն այնքան էր տարածված, որ «զրադաշտականության» փոխարեն այդ կրոնն անվանում էին «կրակապաշտություն»։ Կրակի պաշտամունքի մեջ էր տեսնում պարսիկ զրադաշտականն իր մեծ աստծու՝ Ահուրա-Մազդայի կերպարը, որ կյանք էր տալիս աշ-

խաբէին, հալածում խաւարին և մարդուն պաշտպանում չար ոգիներից, կրակին երկրպագելու համար կառուցում էին տաճարներ, որոնք կոչվում էին աքեշ—մեհյաններ—ատրուշաններ: Ատրուշաններում գրվում էին մեծ մոտավոր անոթներ՝ սեղանների վրա, լցված մոխրով, որի վրա այրվում էին անուշահոտ յուղերով օծված խուրձերով ճիպոտներ: Ատրուշանի կրակն անշեջ պահելու համար մշտապես ծառայում էին երկուսից երեք մարդ, որոնք կոչվում էին քուրմ կամ մոգ:

Ալեքսանդր Մեծի արշավանքներից հետո դրադաշտական կրոնը կորցնելով իր դերը, միայն 500 տարուց հետո՝ Սասանյանների ժամանակ վերականգնում է այն:

224 թվին քրմապետ Սասանի թոռ Պապակի որդի Արտաշիրը բարձրացնում է ապստամբություն Պարթևական դինաստիայի վերջին շահավիր Արտավան V-ի դեմ և 226 թվին հաղթում պարթևներին: Արտաշիրը Արտավան V-ին բռնելով, կտրում է նրա գլուխը, դյուժ իր ոտների տակ, զրավում պարսկական գահը և հիմք դնում Պարսկաստանում մի նոր դինաստիայի՝ Սասանյան դինաստիային Ստահար կենտրոնով: Արտաշիրը վերականգնում է զրադաշտական կրոնը, մեծ տեղ է տալիս զրադաշտական հոգևորականությանը և իր պայքարում այն օգտագործում ընդդեմ պարթևների: Այն էլ մի ժամանակ, երբ աշխարհի առաջավոր երկրների զանազան մասերում մրցություն էր սկսվել քրիստոնեական և հեթանոսական կրոնների միջև, և որոշ երկրներում նույնիսկ հաղթել էր քրիստոնեությունը: Անշուշտ, այս անգամ զրադաշտական կրոնը խիստ փոփոխությամբ է վերականգնվում և հարմարեցվում է Սասանյան դինաստիայի նվաճողական քաղաքականությանը:

Սասանյանների օրով վերականգնված զրադաշտական կրոնն արդեն կորցրել էր իր կրոնա-բարոյական մի շարք սկզբունքներ, ինչպես, օրինակ, ուսմունքը գերագույն էակի մասին և, դարձել էր իղեոլոգիական և քաղաքական մի զենք Սասանյանների ձեռքին իրենց նվաճողական քաղաքականությունը հիմնավորելու համար: Եթե Սասանյանները նման կրոնի վրա չհիմնվեին, դժվար թե կարողանային 420 տարի շարունակ տիրել Առաջավոր Ասիայի մի շարք երկրներին և ստեղծել հզոր պետություն: Սասանյանները երբ տիրեցին Առաջավոր Ասիայի շատ երկրներին, մեծ վնաս հասցրին այդ երկրների հպատակ ժողովուրդներին, որովհետև նրանք ոչ միայն ձգտում էին նվաճել օտար երկրներ, այլև բոլոր երկրներում տարածել վերականգնված զրադաշտականությունը—մոգերի օրենքը: Այդ գաղափարին ամենից շատ հետամուտ եղան Սասանյան բռնակալներից՝ Շապուհ II-ը և Հազկերտ II-ը: Բայց նրանք էլ վերջիվերջո իրենց վարած քաղաքականությամբ պարտություն կրեցին:

Աքեմենյանների օրով զրադաշտականությունը՝ մոգերի ուսմունքն առաջնակարգ նշանակություն ուներ մի շարք ժողովուրդների համար: Բայց Սասանյանների ժամանակ վերականգնված զրադաշտականությունն իր վրա պահում էր միայն այդ կրոնի բացասական կողմերը, այսինքն՝ կախարդությունը, դուշակությունը և դիվահալածությունը, մասամբ նաև աստղագիտությունը: Այդ բոլորը մեծ ուժ ու զորություն էին տալիս քրմական դասին իրենց ձեռքում պահելու Արևելքի հզոր բռնակալներին և իրենց կամքը թելադրելու շահնշահներին: Զրադաշտական կրոնը Սասանյանների ժամանակ, հատկապես մեր էրայի 5-րդ դարում, գնալով ավելի այլանդակ ձևեր է ընդունում. Զրադաշտականությունը խիստ պայքար է սկսում այն մարդկանց դեմ, որոնք հետևում են միակնությանը. նա պահանջում էր, որ մայրն ամուսնանա որդու, քույրը՝ եղբոր, աղջիկը՝ հոր հետ: Եթե մարդիկ ըստ զրադաշտական մոգերի, այդ սովորություններին չհետևեին, նրանք արդեն ընկած էին լինում չար դևերի ձեռքը: Մոգերը նման սկզբունքներով էին պատում մարդկանց: Եվ Հազկերտ II-ը ուղում էր քրիստոնեության փոխարեն 5-րդ դարի կեսերին այս կրոնը տարածել Հայաստանում:

Հայերը Տրդատ III ժամանակ քրիստոնեությունն ընդունել էին նույնպես քաղաքական նկատառումներով, այսինքն այդ կրոնի միջոցով նրանք ուզում էին պահպանել և ամրապնդել իրենց անկախությունը: Սակայն, բացի այդ հիմնական խնդրից, քրիստոնեությունը կուլտուրական և քաղաքակրթող դեր խաղաց հայերի համար: Նախ, որ նպաստող գործոններից մեկը հանդիսացավ հայոց գրերի և գրականության ստեղծման գործում, և երկրորդ, քրիստոնեությունն ընդունելով, նրա ազդեցության տակ հայերի մի շարք վայրենի, բարբարոսական սովորություններ վերացան: Օրինակ, 354 թվի Աշտիշատի

եկեղեցական ժողովը որոշում է. 1. վերացնել բազմակնությունը և ամուսնալուծությունը, 2. արգելել անչափահասների ամուսնությունը, 3. արգելել մոտիկ բարեկամների և ազգականների ամուսնությունը մինչև 7 սերունդ, 4. վերացնել մեռելների վրա ողբալու սովորությունը, 5. արգելել սատկած անասունների միսն ուտելը, 6. վերացնել արյան վրիժառության բարբարոս սովորությունը և փոխարինել այն արյան գնով, 7. վերացնել արբեցությունը[1] և այլն։ Այդ նույն ժողովը որոշում է եկեղեցուն կից բացանել հիվանդանոցներ, անկելանոցներ, որբանոցներ և դպրոցներ։ Վերոհիշյալ հիմնարկները բաց անելով, քրիստոնեական եկեղեցին հիվանդանոցներում հավաքել է տալիս երկրի անբուժելի հիվանդներին, անկելանոցներում՝ բոլոր անաշխատունակներին, որոնք տեր ու խնամակալ չունեին, որբանոցներում բոլոր անտեր երեխաներին, իսկ դպրոցներում սովորեցնում էր ուսման կարոտ դեռահասներին։ Այս օրենքներով և ձեռնարկություններով քրիստոնեությունը հայերին նկատմամբ քաղաքակրթող դեր է կատարել։ Ահա թե ինչու հայերը ոչ միայն պիտի պայքարեին իրենց ինքնուրույնության, այլև քրիստոնեության պահպանման համար։ Պարզ էր, որ եթե Սասանյան բռնակալներից որևէ մեկը կրոնափոխության առաջարկ աներ հայերին, պետք է հանդիպեր վերջինների կատաղի դիմադրության, որովհետև հայերի մեջ նորից պիտի զրադաշտական կրոնի ազդեցության տակ վերականգնվելին վերոհիշյալ բարբարոսական սովորությունները։

Հայ գրականության դերի ու զրադաշտական կրոնի էության հասկանալու համար, նախքան բուն պատերազմների պատճառների ու ընթացքի մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում համառոտ տեղեկություններ տալ 5-րդ դարում աչքի ընկնող և խոշոր դեր խաղացած Սյունյաց և Մամիկոնյան նախարարությունների մասին։

VII. ՍՅՈՒՆԻՔԸ, ՍՅՈՒՆՅԱՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՍԱԿ ՄԱՐԶՊԱՆԸ

Սյունիքը պատմական Հայաստանի մեծ նահանգներից մեկն է եղել, որի սահմանները տարածվում էին երկրի արևելյան

[1] Տես Կանոնագիրք Հայոց, էջ 12, 15։

մասում մինչև Արաքսի ձախ ափը, իր մեջ ընդգրկելով այժմյան Մեղրու, Ղափանի, Գորիսի, Սիսիանի, Ազիզբեկովի, Մխիթարյանի, Մարտունու և Նոր Բայազետի շրջանները. ինչպես նաև Օրդուբադի, Նախիջևանի և Բասարգեչարի շրջանների որոշ մասերը։ Սյունյաց նահանգն իրենից ներկայացնում էր մի լեռնաշխարհ, պատած բարձր լեռներով, լեռնագագաթներով, խոր ձորերով և անդունդներով։ Նա սահմանակից էր Պարսկաստանին։ Երկրի այդ անառիկ դիրքին համեմատ, Սյունիքի ժողովուրդը դարերի ընթացքում ձեռք էր բերել ռազմական մեծ ունակություն և պայքարի կամք։ Պատմական Սյունիքը պատմության տարբեր շրջաններում տվել է երկրին նշանավոր շատ քաջ ու ռազմիկ մարդիկ, որոնք միշտ էլ ձգտել են պահպանել թե՛ Հայաստանի և թե՛ Սյունյաց նահանգի անկախությունը։ Սյունյաց նահանգը բաժանված եղել 12 գավառի։

Սյունյաց նախարարությունը պատկանել է Հայաստանի ավագ նախարարների կազմին և առաջնակարգ դեր է ստանձնել երկրի կառավարման ու քաղաքական գործունեության մեջ։ Նա թե՛ հայ և թե՛ պարսից արքունիքներում մշտապես ունեցել է բարձր աստիճան-դաս, իսկ նրա զորքի թիվը հասնում էր մոտ 19.400-ի։

Սյունյաց նախարարությունը լինելով Հայաստանի ամենամեծ նախարարություններից մեկը, իր քաղաքական գործունեությամբ և օրիենտացիայով երբեմն հակվել է դեպի Պարսկաստան, բայց միշտ էլ նրանից զգոն է եղել և դեմ է եղել ապստամբական գրության մեջ։ Պարսկաստանի կողմը հակվելու համար կար երեք պատճառ, առաջինը՝ խաղաղ պայմանների ստեղծում Սյունյաց նահանգի համար, հաճախ հաշվի չառնելով երկրի ու մյուս նախարարությունների և տոհմերի շահերը։ Իր այդ քաղաքականությամբ Սյունյաց նախարարությունը շատ հաճախ էր վտանգում հայ ժողովրդի ընդհանուր շահերը։ Երկրորդ՝ իշխանության տենչը, ոչ միայն Սյունիքը, այլև ամբողջ Հայաստանը տիրելու համար։ Այդ պատճառով շատ հաճախ օգտվելով Տիգրանի արքունիքի հովանավորությունից, Սյունիքը ապստամբել է հայ Արշակունյաց թագավորների դեմ։

Սյունիքը չնայած հզոր նախարարություն էր և միշտ էլ անկախության էր ձգտում ապավինելով իր անմատչելի լեռնե-

բին ու բարձունքներին, բայց և այնպես նա համեմատաբար ավելի հաշտ քաղաքականություն էր վարում Տիզբոնի արքունիքի հետ։ Տիզբոնն իր հերթին հաշվի առնելով Սյունյաց իշխանների ռազմական ուժը, Սյունիքի ռազմա-ստրատեգիական բարենպաստ ու նշանակալից դիրքը, վարում էր սիրաշահող քաղաքականություն նրա նկատմամբ։ Դրանով իսկ Տիզբոնի արքունիքն առաջին լուրջ քայլն էր անում հերկլի ռազմական ուժերը երկպառակտելու՝ Հայաստանը և հայ ժողովրդի անկախությունը ոչնչացնելու համար։ Սյունյաց նախարարության հզորությունն էր այն հիմնական պատճառը, որ «պահնամակի» ու «զորանամակի» մեջ Սյունիքը միշտ էլ բռնում էր առաջին տեղը։ Սյունիքի իշխաններն իրենց վարած պարսկական քաղաքականությամբ մի հիմնական նպատակ էին հետապնդում՝ օգտագործել Սասանյանների ուժը, հզորանալ, թուլացնել հայ Արշակունիներին և ընդարձակել իրենց կալվածներն ու իրավունքները։ Ճիշտ նման ձգտում ուներ նաև Սյունյաց վաստակ իշխանը 5-րդ դարում։

Սյունյաց նախարարությունը միշտ չէ, որ վարել է պարսկասեր քաղաքականություն, ինչպես ենթադրում են ոմանք։ Երբ Տիզբոնի արքունիքը վտանգի տակ էր դնում նրա շահերը, Սյունիքը կամ ապստամբում էր և կամ հակվում դեպի Բյուզանդիան։ Բյուզանդիոնի պալատում նույնպես եղել են դործիչներ, որոնք հակվելով Սյունյաց իշխաններին հովանավորելու կողմը, նպաստել են կարել նրանց Տիզբոնի ազդեցությունից։ Սյունյաց նահապետ Անդովկ իշխանը, վաստակ մարզպանի պապը, Մամիկոնյանների փեսան, որոշ քաղաքական անբարենպաստ պայմանների շնորհիվ ընդհարվում է Շապուհ II-ի հետ և ապաստանում Բյուզանդիայում, Թեոդոս Մեծի մոտ։ Վերջինս Սյունյաց նշանավոր նախարարությունն իր կողմը դրավելու համար, բարձր աստիճան է տալիս Անդովկին, դարձնելով նրան պատրիկաց պատրիկ։[1] Բայց Անդովկը Բյուզանդիայի հովանավորությունն ընդունեց միայն այն ժամանակ, երբ նա երկարատև պատերազմ ու պայքար էր մղում Պարսկաստանի դեմ։ Այդ պա-

1 Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 37։

տերազմում Անդովկը չափազանց և պարտության մատնեց մի շարք պարսկական զորավարների և ապա ինքն էլ պարտություն կրելով փախավ Բյուզանդիա։ Իսկ բարբարոս Շապուհը Անդովկին հաղթելուց հետո, իր զորագնդերով քար ու քանդ է անում շեն ու հարուստ Սյունյաց նահանգը և գրեթե ամբողջ Հայաստանը։

Վաստակ մարզպանի հայր՝ Անդովկ իշխանի որդի Բաբիկը նախ ձեռք է բերում Սյունյաց իշխանությունը և ապա Տիզբոնի հետ բռնում է հաշտության և համաձայնության ճանապարհը։ Բաբիկի վարած քաղաքականությանն է հետևում նաև Վաստակը 5-րդ դարում։

451 թվին, Ավարայրի պատերազմի ժամանակ, Վաստակը 64 տարեկան էր։ Նրա հայրը Սյունյաց տանուտիրության իրավունքը ձեռք է բերում 378 թվին Շապուհ II թագավորության 68-րդ տարում, իսկ դրանից մոտ 10 տարի առաջ, երբ Անդովկը փախել էր Բյուզանդիա, հավանաբար Սյունիքը տանուտեր չուներ և այդ նահանգը կառավարվում էր պարսիկների կողմից նշանակված կառավարիչներով կամ թե Սյունյաց նախարարության խնամակալներով՝ ու սննդակապանների։ Շապուհ II-ը թագավորել է 310—379 թվականների ընթացում. եթե 68 տարին հանենք նրա թագավորության տարիներից, դուրս է գալիս, որ Բաբիկը Շապուհից Սյունյաց տանուտիրությունն ստանում է 378 թվին։ Ստեփանոս Օրբելյանն իր աշխատության 40-րդ էջում ավելացնում է, որ Շապուհի 68-րդ տարում և հայոց թվականությունից 138 տարի առաջ, Բաբիկը ձեռք է բերում Սյունյաց իշխանությունը։ Որքան ճիշտ է առաջին թիվը, այնքան սխալ է երկրորդը։ Բաբիկը Շապուհից տանուտիրությունը ձեռք է բերել 378 թվին և ոչ թե 413 թվին, ինչպես ստացվում է, եթե հայոց թվականությունից հանենք 138 (551—138=413), իսկ այդ թվին Սյունյաց տանուտերն էր ոչ թե հայրը՝ Բաբիկը, այլ նրա որդի Վաստակը։

Ըստ Ստեփանոս Օրբելյանի, Բաբիկը որպես Սյունյաց տանուտեր իշխել է 21 տարի, այսինքն մինչև 399 թվականը, իսկ Վաստակի ծնունդը տեղի է ունեցել հոր տանուտիրության 9-րդ տարում կամ 387 թվին, երբ Հայաստանը Տիզբոնի դաշնագրությամբ բաժանվում է Պարսկաստանի և Հռոմի մեջ։ Նա տաս տարեկան հասակում—397 թվին, որպես պատանդ տարվում է

Տիզրոն, երկու տարի հետո է այնտեղ, իսկ պատանդությունից ազատվում է 399 թվին, Հազկերտ I-ի ժամանակ, նրա գահակալության առթիվ։ Վասակի փոքրահասակ լինելու պատճառով, նրա հոր մահվանից հետո Սյունյաց տանուտիրությունը նախ անցնում է սենեկապետ Սահ Գնթունուն, ապա հորեղբայր Վաղինակ Սյունեցուն[1] (401—410 թ.թ)։ Վաղինակը, շարունակում է իր եղբոր՝ Բաբիկի շինարարական աշխատանքները Սյունիքում և աշխատում է մի կողմից վերականգնել ավերակ երկիրը, որ քանդել էր Շապուհ պարսիկը և մյուս կողմից ամրապնդել Տիզրոնի արքունիքի հետ եղած հարաբերությունները։ Նա հատկապես մեծ ջանք է գործադրում և օգնում Մեսրոպ Մաշտոցին տարածելու թե քրիստոնեությունը և թե ուսումը Սյունիքում։

410 թվին 23 տարեկան հասակում Վասակը ապանում է հորեղբայր Վաղինակին, գրավում է Սյունյաց իշխանությունը և այնուհետև անփոփոխ կառավարում է Սյունյաց նահանգը որպես տանուտեր 41 տարի, մինչև 451 թիվը, երբ զրկվում է թե մարզպանությունից և թե տանուտիրությունից։ Թեև Ստեփանոս Օրբելյանը 39 տարի է տալիս նրա տանուտիրության շրջանին, բայց երկու տարվա թվերի տարբերություն է առաջվում, Վասակի տանուտիրությունը պետք է հաշվել ոչ թե 39 տարի, այլ 41։ Սյունյաց տանուտիրության ժամանակաշրջանում Վասակն իր վարած քաղաքականության շնորհիվ մեծ համբավ է ձեռք բերում թե Հայաստանում և թե Տիզրոնի արքունիքում։ Այդ պատճառով նա բացի Սյունյաց տանուտիրությունից, վարում է նաև մի շարք աչքի ընկնող պետական պաշտոններ, մինչև անգամ հասնում է Հայաստանի մարզպանության պաշտոնին։

Վասակը շատ վաղ հասակից էր ամուսնացել, ուներ երկու տղա և մեկ աղջիկ, վերջինն ամուսնացել էր Սյունյաց իշխաններից մեկի՝ Վարազվաղանի հետ, որը Սյունյաց իշխանությունը տիրելու համար, թշնամանում է Վասակի հետ և վախչում Տիզրոն։[2] Վարազվաղանը թշնամություններ ու խռովություններ է ծրագրում և այդ ամենը շատ ծանր է նստում թե Սյունիքի և թե Հայաստանի վրա։

Վասակ Սյունեցու ազգատոհմն սկսած Անդովկ իշխանից՝

[1] Ստեփանոս Օրբելյան, էջ 50—51։
[2] Ղազար Փարպեցի, էջ 79—82։

Ա Ն Դ Ո Վ Կ

Վաղինակ	Բաբիկ	Փառանձեմ (Աբշակ II-ի կինը)
Դարա	Վասակ	Մի աղջիկ (Աբշակ III-րդի կինը)
Ջորենեբանի	Բաբիկ	Մի աղջիկ (Վարազվաղանի կինը)

441 թվին Հազկերտ II-ի հրամանով Հայաստանի մարզպան Վահրիշապուհ պարսիկը նա է կանչվում, իսկ նրա փոխարեն մարզպան է նշանակվում Սյունյաց Վասակ իշխանը, որը մինչ այդ նույն պաշտոնը վարում էր վրաստանում։ Թե որ թվին է Վասակը նշանակվել վրաց մարզպան, հայտնի չէ։ Առհասարակ, մինչև 451 թիվը պատմիչները գովեստով են խոսում Վասակի մասին։ Դա նշանակում է, որ գովաբանվելու արժանի է եղել, որովհետև դեռ վաղ հասակից նա նպաստել և օգնել է Մեսրոպին հայոց գրերի ստեղծման և կուլտուրայի զարգացման մեծ գործին։ Նա հետևողական կերպով շարունակել է հորեղբայր Վաղինակի տնտեսական, կուլտուրական և շինարարական գործունեությունը, որոնք ծավալվել էին 5-րդ դարի առաջին կեսին։ Վասակի այդ գործունեությունն ամեն է տվել Կորյունը վարդապետին հետևյալ գնահատականը տալու.

«Այն ժամանակ աստված պարգևեց, որ Սյունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Սիսակյան Վասակը, խելացի, հանճարեղ և կանխատես, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ։ Նա շատ նպաստեց ավետարանի վարդապետության գործին, ինչպես որդին հորը՝ հպատակություն ցույց տալով և ավետարանին վայել կերպով ծառայելով մինչև վերջը գործադրում էր նրա հրամանները»։

«Ցորում ժամանակի պարզևեալ յաստուծոյ, հասանէը ի գլուխ իշխանութեան Սիւնեաց քաջն Սիսականն Վասակ, այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն աստուծոյ։ Բազում ինչ նպաստութիւն ցուցանէը աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան ղերեզմանն ի գործ բերէը»։[1]

Բայց սրանով չի արդարացվում Վասակի այն դավաճանու-

[1] Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երևան, 1941, էջ 62։

թյունը, որ նա կատարից մարզպանության վերջին շրջանում։ Նա իր փառասիրության համար կարող էր զոհաբերել իր հարենիքին, եթե դա բխեր իր անձնական շահերից։

Վասակը Տիգրանի արքունիքի հետ հաշտարար քաղաքականություն էր վարում մի նպատակով՝ վերականգնել Թագավորությունը և ձեռք բերել կորցրած գահը։ Նա որդին իր վարած քաղաքականության ձեռք էր բերել Սյունյաց տանուտերությունը և մարզպանությունը, մնում էր Թագավորական գահը, որին դեռ հետաժամա էր 429 թվից։ Նրա այդ ձգտումները թեև բխում էին անհատական փառասիրությունից, բայց քանի որ նա աշխատում էր հերքի Թագավորության վերականգնման համար, հետևաբար նրա այդ քայլը պետք է համարել դրական։

Սյունյաց նախարարության և Վասակի մասին տրված այս համառոտ ակնարկից հետո, այժմ անցնենք Մամիկոնյան նախարարությանը և Վարդան Մամիկոնյանի կենսագրությանը։

VIII. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ

Ա.

Մամիկոնյան տոհմը հայ նախարարական տների մեջ նույնպես կարևոր և աչքի ընկնող դեր է կատարել։ Այդ նախարարությունը ևս մտնում էր ավագ նախարարների կազմի մեջ, ուներ հազարից ավելի զորք, ժառանգաբար վարում էր Հայաստանի ընդհանուր բանակի հրամանատարի—սպարապետության պաշտոնը։ Մամիկոնյանները մոտ 500 տարի վարեցին այդ պաշտոնը և իրենց համար փառավոր էջ բաց արին հայ ժողովրդի պատմության մեջ, նախ՝ որպես այդ ժողովրդի ազատագրական իղձերն ու ձգտումները արտահայտողներ և երկրորդ՝ որպես այդ ժողովրդի ազատագրական պայքարի առաջնորդներ։ Մեր սույն ուսումնագրությունը նպատակ է դնում իր առաջ՝ տալու 5-րդ դարի երկու խոշոր ազատագրական պատերազմների պատմությունը, որ հայ ժողովուրդը մղում է Մամիկոնյան տոհմի երկու նշանավոր զորավարների—Վարդանի և Վահանի, հորեղբոր և եղբոր որդու գլխավորությամբ՝ ընդդեմ Սասանյան հզոր իմպերիայի։

Հայոց պատմահայր Մովսես Խորենացին իր «Պատմություն

Հայոց» աշխատության երկրորդ գրքի 81-րդ գլխում,[1] հաղորդում է, որ հայոց Տրդատ 3-րդ Թագավորի դեմ ապստամբության է բարձրացնում Սլկունյաց նախարարությունը, որը վարում էր Հայաստանի սպարապետության պաշտոնը։ Սրուկ—Սլկունյաց նահապետն ապստամբելով Թագավորի դեմ, մերձենում է Տարոնի Ոդական ամրոցում և իր կողմն է գրավում Սիմ լեռան բնակիչներին ու վրդովում երկրի հանգիստը։ Այդ նախարարական սան խռովությունը ճնշելու համար, Տրդատը դիմում է հայ նախարարների օգնությանը։ Խորենացու ասելով, նրան օգնում է ճննացի Մամգունը, որի միջոցով ճնշում է Սլկունների ապստամբությունը։ Այդ տոհմը Տրդատի հրամանով գրկվեց ընծայվում և զրկվում է իր բոլոր իրավունքներից։ Սլկունների բոլոր կալվածքները Տարոն գավառով և Ոդական ամրոցով, սպարապետության պաշտոնի հետ միասին, Տրդատը հանձնում է ճննացի Մամգունին, որից էլ սկիզբ է առնում Մամիկոնյան նախարարությունը Հայաստանում։ Անշուշտ, Մամիկոնյան տոհմը շատ վաղուց գոյություն ուներ, բայց նա քաղաքական ասպարեզում հանդես է գալիս Տրդատ III-ի ժամանակ։ Իր այդ քայլով Արշակունյաց գահակալը մի կողմից պակասեցնում է իր հակառակորդ նախարարների թիվը, իսկ մյուս կողմից ավելացնում իրեն հավակրդների քանակը։

Նույն գրքի 81-րդ գլխում Մովսես Խորենացին տալիս է ճննացի Մամգունի տոհմի ծագումը։ Պատմահայրը չփոքթում է ճննացիները—ճննք—չինացիների հետ և վերջ ի վերջո Մամիկոնյաններին նա բերում է Հայաստան Չինաստանից։ Բայց իրականում Մամիկոնյանները չինական ծագում չունեն, նրանք նույն Խորենացու ասելով «...Հայաստան է եկել Մամիկոնյաններ տոհմի նախնին, արևելյան-հյուսիսային քաջատոհմիկ նշանավոր աշխարհից՝ Ճնաստանից, որ ևս բոլոր հյուսիսային ազգերի մեջ առաջին եմ համարում...»։ ... «Եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնենից արևելից հիւսիսականէն, ի քաջատոհմիկ և ի գլխաւոր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին, ասեմ իսկ ճննացն...»։[2] Հետագա գրեթե բոլոր հայ պատմիչները Մամիկոնյաններին նույնպես բերում են Չինաստանից։ Այս խնդիրը

[1] Մովսէս Խորենացի. գիրք Բ, գլ. ՀԴ։
[2] Նույնը, գիրք Բ, գլ. ՀԱ։

թեև ուսումնասիրության կարոտ է, բայց մեր կարծիքով Մամիկոնյանների նախնի հայրենիքը պետք է փնտռել Հայաստանի հյուսիսային կողմերում, հավանական է, Տայք նահանգի հյուսիսային մասերում։ Դա ցույց է տալիս պատմահոր վերը բերած հատվածը և Տայքում եղած Մամիկոնյանների կալվածքները։ Այդպիսով, Մամիկոնյաններին նույնպես պետք է համարել երկրի բնիկ նախարարական տոհմերից, միայն թե նրանք ավելի ուշ են հանդես եկել քաղաքական ասպարեզ, այսինքն Տրդատ III-ի գահակալության սկզբնական տարիներին, երբ Սլկունիներն ապըստամբել էին Արշակունյաց թագավորության դեմ։ Մամիկոնյանները ստանալով Սլկունիների կալվածքները Ոդական ամրոցով, Տայքից տեղափոխվում են այնտեղ, պահպանելով միաժամանակ իրենց ձեռքում Տայքի կալվածքները։ Ոդականը, որ գտնվում է Քարքե լեռան ստորոտում, դառնում է նրանց գլխավոր ամրոցը։ Մամիկոնյանների կալվածքները գտնվում էին միաժամանակ Տուրուբերան նահանգի Տարոն գավառում և Տայքում։

Տարոնը կենտրոն էր թե՛ հեթանոսական և թե՛ քրիստոնեական կրոնների սրբավայրերի՝ բագիններ, ժեհյաններ և վանքեր։ Այնտեղ էր գտնվում Աշտիշատը—Արածանիի գետափին, Վահագն աստծո, Անահիտ և Աստղիկ դիցուհիների բագիններն իրենց հոյակապ տաճարներով։ Հեթանոսական կրոնի սրբավայրերի այդ կենտրոնը միաժամանակ դառնում է քրիստոնեական կրոնի սրբատեղին քրիստոնյա հայերի համար, որոնք հաճախ կատարում էին ժասսայական ուխտագնացություն դեպի այդ վայրերը։

Մամիկոնյանները տեր դառնալով ու հաստատվելով Հայաստանի կենտրոնական այդ վայրին՝ Տարոնին, իրենց բախտը կապում են հայ ժողովրդի հետ և սկսած ճենացի Մամգունից մինչև Գրիգոր Մամիկոնյանը, մի կողմ թողած մի քանի անհնազան գործիչներին, հավատարիմ են մնում հայրենիքին, հայկական պետականությանը, ժողովրդին ու նրա կրոնին։ Նրանք իրենց անհատական սնափառության համար երկիրը չեն վաճառում պարսկական և բյուզանդական արքունիքներին։ Մամգունը դառնում է Տրդատ III-ի աջ բազուկը, իսկ նրա տոհմը դարերի ընթացքում մի շարք անվանի հերոսներ է տալիս, որոնք պանծալի տրադիցիաներ են ստեղծում հայ ժողովրդի պատմության

մեջ, հենարան հանդիսանում հայ Արշակունյաց գահին ու հայ ժողովրդի ազգային ինքնուրույնության պահպանման գործին։

Հետևաբար, չենք կարող համաձայնել այն բանասեր պատմաբանների հետ, որոնք Մամիկոնյաններին համարում են կենտրոնախույս տարրերի պաշտպաններ և կենտրոնական իշխանության դեմ ընդվզողներ, ինչպես այդ ցույց է տալիս ակադեմիկոս Հ. Մանանդյանն իր «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատության «Հայ Արշակունիների և կենտրոնախույս նախարարների ներքին պայքարը» գլխում։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը հետևելով պրոֆ. Մարկվարտին եզրակացնում է. «Հետաքրքիր է ու ուշագրավ, որ նախարարական վերոհիշյալ տոհմերի (կենտրոնախույս տարրերի. Հ. Հ.) փրկիչ հանդիսանում էին գրեթե միշտ Մամիկոնյանները» (էջ 273)։ «Մամիկոնյանները ոչ միայն գեմ են եղել Տիրանի վճռական քաղաքականությանը կենտրոնախույս նախարարությունների նկատմամբ, այլ նույնիսկ պատրաստ են եղել զինված դիմադրություն ցույց տալ կենտրոնական իշխանության ինքնատինքյան հասկանալի է, որ «Մարդպետության» քաղաքական այդ ձգտումը, որի նպատակն էր Արշակունյաց իշխանության տակ կազմակերպել ֆեոդալական կենտրոնացած զորեղ մի պետություն, շատ ավելի նպաստավոր էր Հայաստանի պետական զորեղացման տեսակետից, քան նախարարական բնիկ «տեր»-երի պաշտպանության քաղաքականությունը, որին հետամուտ էին Մամիկոնյանները և Գրիգորյան տոհմի կաթողիկոսները» (էջ 275—276)։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը, ինչպես նաև մյուս պատմաբանները, իրենց այս տեսակետը հաստատում են պատմագիր Փավստոս Բուզանդի վկայությամբ, նույնիսկ ավանդա-վիպական այն տվյալներով, որ Արշակունյաց այս կամ այն թագավորը, երբ պետության դեմ ընդոստացող նախարարություններին պատժելով, սրի էր քաշում տոհմի բոլոր արական սեռի ներկայացուցիչները, Մամիկոնյանների ներկայացուցիչները ընաջնջվող տոհմի արու զավակներից մեկին պահելով, փրկում են սրի քաշվող տոհմին անհետացումից։ Թեև նման փաստեր շատ կան պատմագրի Բուզանդի մոտ, բայց դրանք ընդունել իբրև հավաստի պատմական տեղեկություններ և հիմնված այդ ավանդա-վիպական տվյալների վրա Մամիկոնյաններին հայտարարել

հենարանախույտ տարբերի հովանավորողներ, ոչ միայն ճիշտ չէ, այլև մեղանչում է պատմական փաստերի առաջ։ Այդ նույն բուզանդի ավյալներից միաժամանակ երևում է, որ շատ անգամ Մամիկոնյան նշանավոր սպարապետները միացած թագավորների հետ, սրի են քաշում խռովարար տոհմերին։

Մամիկոնյան նախարարությունը սկզբից և եթ իր ձեռքն է վերցնում երկրի ռազմական ուժը և Հայաստանը պաշտպանում ներքին ու արտաքին թշնամիներից։ Մամուռնի հաջորդներից սպարապետ Վաչե Մամիկոնյանը Խոսրով II-ի (Կոտակի—կարճահասակի) ժամանակ, մեծամեծ քաջագործություններ է կատարում։ Նա հանդիսանում է խռովարար նախարարների ճնշողը, ճնշում է նաև Մանավազյանց և Որդունյանց նախարարական տոհմերի ներքին կռիվները, ինչպես և անվտանգ դարձնում նրանց ոտնձգությունները Թագավորության հանդեպ։ Նա ճնշում է նաև Աղձնյաց Բակուր բդեշխի ապստամբությունը, որը թելադրված էր Պարսից Շապուհ II թագավորի կողմից և բնաջնջում է այդ տոհմի անդամների մեծ մասին, իսկ կալվածքներն էլ հարքունիս դրավում։[1] Բայց սպարապետն այնուհետև երկար ժամանակ պատերազմ է մղում պարսից նենգամիտ Շապուհի դեմ, բազմիցս ջարդում նրա ընտիր զորագնդերը և նա մղում Հայաստանի սահմաններից։ Բայց ինքը քաջ սպարապետը նույնպես ընկնում է այդ պատերազմների ընթացքում. «... և լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին, զի բազում անգամ էր տեառն փրկութիւն տուեալ Հայոց ի ձեռն նորա...»։[2]

Մամիկոնյանները մի որոշ ժամանակ դժգոհելով Արշակ II-ից, հեռանում են քաղաքական ասպարեզից և ապրում Տայքում։ Բայց շուտով նրանց կարիքը զգացվում է և նրանք դարձի են հրավիրվում։ Արշակ II սկզբում սպարապետության պաշտոնը հանձնում է Վաչեի թոռներ—Վարդանին, ապա Վասակին։ Այս քաջ ու հմուտ զորավար Վասակը մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնում երկրին ու գահին։ Բանի որ նրա անհաղթ բազուկը կանգուն էր, պարսկական հորդաները չկարողացան ներխուժել Հայաստան։ Նրա ռազմիկ ու քաջակորով որդի

1 Փավստոս Բուզանդ, Պատմ. Գ., գլ. Թ.։

2 Նույնը, գլ. ԾԱ, էջ 26։

Մուշեղը երկար ժամանակ պատերազմ է մղում պարսիկների դեմ Պապի գահը պահպանելու համար։ Հայ մի շարք նախարարական տոհմեր իրենց փառքը ձգտում էին ձեռք բերել նենգ ու խորամանկ միջոցներով, այն ինչ Մամիկոնյան դյուցազուններն աշխատում էին հերոսության ճանապարհով ու. Հայաստանը փրկելով հասնել իրենց փառքին։ Թեև հայ նախարարների զգալի մասը նախանձում էր նրանց, բայց Մամիկոնյաններին հաջողվում էր մշտապես իշխանների մեծ մասին համախմբել Թագավորության և իրենց շուրջն ու պայքարել երկրի անկախությունը պահպանելու համար։ Մամիկոնյան դյուցազունների շարքին է պատկանում նաև Ավարայրի պատերազմի հերոս Վարդանը, որն իր գործունեությամբ լրացրեց և անժամացրեց Մամիկոնյան նշանավոր զորավարների սխրագործությունները։

Պատմագրությունը, հատկապես պատմագիր Եղիշեն, ոչ միայն կենդանացրել, այլև անմահացրել է Վարդանին, դարձնելով նրան ծանոթ գեմք բոլորի համար, քաջ ու փառապանած զորավար։ 5-րդ դարի երկրորդ կեսից սկսած, գրեթե բոլոր հայ պատմիչներն ու պատմագիրները, բանաստեղծներն ու վիպասանները գրել ու գովաբանել են Վարդանին, սակայն այդ բոլոր գրողները միայն ներքողել են Ավարայրի հերոսին, բայց նրա կենսագրության ու գործունեության մասին ժանրաժամն տեղեկություններ չեն հաղորդել։ Ուստի գժվար է տալ Վարդանի մանրամասն կենսագրությունը։

Վարդան Մամիկոնյանի ծննդյան տարեթվի մասին տեղեկություններ չկան։ Եղիշեի և Ղազար Փարպեցու երկերը, որ հիմնական աղբյուրներն են, այդ մասին ոչ մի տեղեկություն չեն հաղորդում։ Միայն Կորյունը հայտնում է, որ Սահակ Կաթողիկոսը հատուկ խնամքով իր մեծ թոռ Վարդանին կրթում և դաստիարակում էր[1]։ Իսկ Մովսես Խորենացին հաղորդում է, թե Սահակն աշխատում եր, որ Վարդանը բարձրանա և հասնի տանուտիրության և սպարապետության պաշտոնին, դրա համար էլ նրան մասնակից էր անում բոլոր կարևոր քաղաքական գործերին[2]։ Վարդանի մահը հայտնի է, որ տեղի է ունեցել 451 թ. մայիսի 26-ին

1 Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երևան, 1941 թ. էջ 58։

2 Մ. Խորենացի, Գիրք Գ. գլ. ԾԷ, ԾԸ, ԿԴ, ԿԵ։

Ավարայրի դաշտում։ Բայց կարևոր է իմանալ, թե քանի տարեկան էր Վարդանը, որ տարավ հայ ժողովրդին դեպի պատերազմի դաշտը, որ այնքան հերոսաբար կռվեց իր երկրի անկախության համար։ Վարդանի ծննդյան թվի մասին ուղղակի տեղեկություններ չլինելու պատճառով, ստիպված ենք դիմելու կողմնակի աղբյուրների ու տվյալների, նրա ծննդյան տարեթիվը ճշտելու, որն անշուշտ կարևոր նշանակություն ունի։

Հայոց պատմահայր Մովսես Խորենացին իր Պատմության երրորդ մասի 68-րդ գլխում հայտնում է, որ Սահակ Պարթևը 51 տարի կաթողիկոս է եղել։ Նրա կաթողիկոսության տարիները գնում է հայոց Խոսրով III-ի թագավորության երրորդ տարուց մինչև Պարսից Հազկերտ թագավորի առաջին տարվա սկիզբը, նավասարդ ամսի վերջը, իր ծննդյան օրը։ Դիտ Հայաստանի՝ 387 թ. առաջին բաժանումից մեկ տարի առաջ, Խոսրով III-ը հայ նախարարների պահանջով Տիզբոնի արքունիքի կողմից նշանակվում է Արևելյան Հայաստանի թագավոր, որով հետև երկրի ընդհանուր թագավոր Արշակ IV-ը գնացել էր Արևմտյան Հայաստան և իշխում էր այնտեղ։ Խորենացու տեղով Խոսրով III-ը Արևելյան Հայաստանում թագավորում է հինգ տարի (386—391),[1] հետևաբար Խոսրովի թագավորության երրորդ տարին հավասար կլինի 389 թ.։ Հայտնի է, որ 388 թ. մահացել էր Անտիոքիայի կաթողիկոսը, որն ընդամենը հինգ տարի էր եղել կաթողիկոս (383—388)։[2] Իսկ Պարսից Հազկերտ II թագավորը, ըստ Նեոլդեքեի[3] սկսել է թագավորել 438 թ. ավելի ճիշտ 439 թ. օգոստոսի 4-ից, ուստի Սահակի մահը տեղի է ունեցել 439 թ. նավասարդ ամսի 30-ին, այսինքն սեպտեմբերի 7-ին,[4] որ համընկնում է Հազկերտ II-ի թագավորության սկզբին։ Այդ

[1] Մ. Խորենացի, Գիրք Գ. գլ. Ծ։

[2] Նույնը, գիրք Գ., գլ. ՄԱ, ՄԹ, իսկ ակադեմիկոս Սեթեան Մալխասյանի հաշիվներով Անտիոքիայի կաթողիկոս է ձեռնադրվել 383 թվին և իր պաշտոնը վարել է հինգ տարի, այսինքն մինչև 388 թիվը (տես ակ. Սմ. Մալխասյանի՝ Մ. Խորենացու աշխարհաբար թարգմանության ինքնօրինակ ակնարկները, «Խորենացու Պատմության Բ. և Գ. գրքերի համար, Երևան 1940 թ., էջ 367։

[3] «Արարատ» ամսագիր, 1895 թ. հոկտեմբեր, էջ 385—388։

[4] Կորյուն—«Վարք Մաշտոցի», էջ 122։

պիսով, Սահակի կաթողիկոսության ճիշտ տարիները (388—89—439 թ. թ.), հավասար է լինում 51 տարվա։ Իսկ պատմական տվյալները ցույց են տալիս, որ Լուսավորչի այդ վերջին, բայց ամենակարկառուն շառավիղն ունեցել է մի աղջիկ, Սահականուշ անունով, որին ամուսնացրել էր Մամիկոնյան Համազասպ իշխանի հետ։ Այժմ հարց է առաջ գալիս, Սահակ կաթողիկոսի, աղջիկ Սահականուշը քանի տարեկան էր, որ ամուսնացավ Համազասպի հետ։

Սահակի հայր Ներսես Առաջինն Արշակ II թագավորի կարգադրությամբ 352 կամ 353 թ. թ. ձեռնադրվում է կաթողիկոս։ Դա նշանակում է, որ Ներսեսն արդեն կին չպետք է ունենար, որովհետև, եթե կին ունենար, կաթողիկոս ձեռնադրվել չէր կարող։ Մաղաքիա Օրմանյանի ասելով[1] Ներսեսի կինը—Մամիկոնյան Վարդանի աղջիկ Սանդուխտը, մահացել էր Կեսարիայում 349 թվին, Ներսեսի հետ տարվելիս, ուստի գրանից մի տարի առաջ պետք է ծնված լիներ Սահակը, հավանաբար 348 կամ 349 թ. թ.։ Այդ թվերից հետո, նրա ծնունդը դնել հնարավոր չէ հետևյալ պատճառներով, 1) ապացույցներ չկան Ներսեսի երկրորդ անգամ ամուսնանալու մասին, 2) նա 350 և 351 թ. թ. եղել է Կ. Պոլսում և 3) նա 352 կամ 353 թ. թ. արդեն ձեռնադրվել է կաթողիկոս։ Այստեղից էլ պարզ է, որ Սահակ կաթողիկոսի ծնունդը տեղի է ունեցել 348 կամ 349 թ. թ. և նա ապրել է շուրջ 90 տարի։ Իսկ եթե 348 կամ 349 թ. ծնված չլիներ, դժվար թե 380-ական թվականների երկրորդ կեսին հասունացած աղջիկ ունենար ամուսնացնելու համար։

Մովսես Խորենացին իր աշխատության երրորդ հատվածի 51-րդ գլխում, խոսելով Սահակի մասին ասում է. «... (Սահակը) արու զավակ չունեցավ, այլ ունեցավ մի աղջիկ Սահականուշ անունով, որ ամուսնությամբ տրվեց Համազասպ Մամիկոնյանին։ Եվ երբ հայոց քաջ սպարապետը, Սահակ տոհմը մեռավ, նա աղաչում է Խոսրովին, իսկ նրա մերձակայլեցուց հետո նրա եղբորը՝ Վասակ Պապունին, որ (Սահակ տոհմի տերը) նշանակի (Համազասպին), սակայն Վասակը հրաժարվեց այդ բանն անել առանց արքայից-արքայի (պարսից թագավորի) հրամանի,

[1] Մ. Օրմանյան, «Ազգապատում» հատ. Ա. 1913 թ., կ. Պոլիս, էջ 164։

հիշելով, որ հենց նման բաների համար վշտեր է կրում իր եղբայր Խոսրովը։ Ուստի (Սահակը) իր աղջկա թախանձելուց (Վռամշապուհից) թղթեր վերցնելով անձամբ դնաց պարսից Արտաշիր թագավորի մոտ, որ իր հոր յոթանասունամյա թագավորությունից հետո թագավորից չորս տարի։ «...Դպատրաստվեն եղուստերաց նորա, ունենալով զուստր մի Սահականոյշ կոչեցեալ որ տուաւ յամուսնութիւն Համազասպայ Մամիկոնենից։ Եւ ի մեռանիլ քաջ սպարապետին Հայոց Սահակայ սպանի՝ ի տեղի նորա դնա ագաչէր կարգել Խոսրովայ արքայի, և զինի կապանաց՝ եղբօր նորա Վռամշապուհոյ։ Այլ սա հրաժարէր առանց արքայից-արքայի առնել զայն. յիշելով, թէ սակս այսպիսի իրաց կրեաց վիշտս եղբայր նորին Խոսրով։ Վասն որոյ առեալ ի սմանէ թուղթս, ի թախանձելոյ զսակն՝ ինքնին չորս առ Արտաշիր Պարսից արքայ, որ յետ հօրեղբօրն սմա թագաւորութեան հօրն՝ կալաւ զտէրութիւնն սմա չորս»[1]

Պատմողը վերոհիշյալ տեղեկության համաձայն, առաջին հերթին պետք է պարզաբանել մի քանի թվեր, որից և կպարզվի Վարդանի ծննդյան մոտավոր թիվը։ Նախ, այս հատվածից երևում է, որ Սահականուշյի և Համազասպի ամուսնությունը տեղի է ունեցել Հայոց Խոսրով թագավորի ժամանակ (386—391 թ. թ.)։

Երկրորդ՝ սպարապետ Սահակ Բագրատունի ասպետի մահը նույնպես տեղի է ունեցել Խոսրով III օրով, որովհետև Սահակն իր փեսային սպարապետ դարձնելու համար, նախ դիմում է Խոսրովին, ապա Վռամշապուհին, իսկ եթե Սահակ ասպետը ժամանած չլիներ Խոսրովի ժամանակ, նրան չէր կարող դիմել Սահակ կաթողիկոսը։ Այստեղից էլ պարզ է, որ Սահակ ասպետի մահը հաստատ տեղի է ունեցել Խոսրով III թագավորության տարիներին և այդ ժամանակ էլ պետք է ամուսնացած լիներ Սահականուշը Մամիկոնյան Համազասպ իշխանի հետ, որովհետև նորահարսը հոր դիրքն օգտագործելով, ձգտում էր բարձրացնել Մամիկոնյան տոհմի քաղաքական կշիռը։ Հայտնի բանասեր Ներսես Բյուզանդի ասելով, Սահակ ասպետը մահացել է 338 թվին[2] այսինքն

[1] Մ. Խորենացի. դիրք Գ. գլ. ԾԱ, էջ 329։

[2] «Գիտութիւնք նորայրի», պրակ Դ. 1887 թ., էջ 20—21։

այն ժամանակ, երբ կաթողիկոս էր ձեռնադրվում կամ թե կաթողիկոսության թեկնածու էր Սահակ Պարթևը։

Երբորդ, պատմահայրը սխալվում է, երբ Սահակի այցը Տիզբոն դնում է Արտաշիր թագավորի ժամանակ (379—383—84)։ Դա պետք է եղած լիներ Վռամ IV-ի թագավորության շրջանում։ Եթե հետևելու լինենք Նեղլհեքի Սասանյան թագավորների ժամանակագրական ցուցակին, որ մեր կարծիքով մինչև այժմ եղած ուսումնասիրություններից ամենալավագույնն է, կունենանք հետևյալ ժամանակագրությունը, Շապուհ II-ից սկսած.

Շապուհ II (Երկարակյաց)	310—379.
Արտաշիր II	379—383/84.
Շապուհ III	382/84—388. Խոսրով III—386—391
Վռամ IV (Կրմանշահ)	388/89—399.
Յազկերտ I	389—420. Վռամշապուհ Հայոց 391—415.
Վռամ V	420—439.
Յազկերտ II	439—457.
Պերոզ	457—484.
Վաղարշ (Բալաշ)	484—488։[1]

Այս թվերին հետևելով պարզվում է, որ Խոսրով III թագավորությունն սատնում է ոչ թե Արտաշիրի ձեռքից, այլ Շապուհ III-ից,[2] իսկ Վռամշապուհը թագավոր է նշանակվում Վռամ IV Կրմանշահի կողմից։ Այստեղից էլ պարզ է, որ Սահակը պիտք է դիմեր Վռամ IV և ոչ թե Արտաշիրին։ Իսկ Սահականուշյի և Համազասպի ամուսնությունը համընկնում է Շապուհ III-ի թագավորության վերջին տարուն, կամ Վռամ IV-ի թագավորության առաջին երկու տարիներին, այսինքն 388—391 թ. թ. շրջանում, հավանաբար 389 թվին, այսինքն մի ժամանակաշրջան, երբ Սահակն արդեն կլիներ մոտ 40 տարեկան։ Այդպիսով, եթե Սահակի ամուսնությունը հաշվենք 20—21 տարեկան հասակից, մոտավորապես 370 թվին և Սահականուշն

[1] «Աբգարեան տոմարք», 1895 թ. էջ 330—333, 385—388։

[2] «Իսկ յետ վաղարշակայ թագաւորէ մանկին Արեւելից Խոսրով Աբգարեան հրամանաւ Շապհոյ Պարսից Աբգային. «Սեբէոսեան Տարօնեցւոյ Ասողական պատմութիւն արեղբարեան», Ս. Պետ. 1885 թ., էջ 78։

էլ ծնված լիներ անմիջապես ամուսնության առաջին կամ երկրորդ տարում (371 կամ 372 թ. թ.), այն ժամանակ, նա 387—388 թ. թ. հաղիվ կլիներ 16 տարեկան, որին չէր կարելի այդ տարիքում ամուսնացնել։ Հետևաբար այստեղից էլ եղրակացնում ենք, որ Սահականույշի և Համազասպի ամուսնությունն տեղի է ունեցել Սահակի կաթողիկոսության օծումից ոչ պակաս քան մեկ տարի հետո, այսինքն 389 կամ 390 թ. թ.։

Սահակ կաթողիկոսն իր այդ նոր բարեկամության միջոցով աշխատում էր կապվել Հայաստանի նշանավոր նախարարություններից մեկի հետ, միացնել երկու մեծ ու խոշոր ազդեցիկ տներին, Լուսավորչի և Մամիկոնյան տոհմերին իրար, մի կողմից բարձրացնել Մամիկոնյան նախարարությունը, հասցնելով նրան կրկին անգամ սպարապետության պաշտոնին, իսկ մյուս կողմից Լուսավորչի տոհմին նորից ամրացնել կաթողիկոսության աթոռի վրա և այդ երկու տոհմերը դարձնել նեցուկ՝ երկրի անկախության և քրիստոնեության պահպանման գործում։

Դեռևով Սահականույշի և Համազասպի ամուսնությունը 389—390 թ. թ., իսկ նրանց անդրանիկ որդի Վարդանը, եթե ծնված լիներ ամուսնության առաջին կամ երկրորդ տարում, այսինքն 391—392 թ., այն ժամանակ Սահականույշը կլիներ 19 կամ 20 տարեկան և, իսկապես, կարող էր մայր լինել։ Ուստի հաստատ կարելի է պնդել, որ Վարդանը ծնվել է 391 կամ 392 թ. թ.։ Այդ պիտով 451 թ. նա կլիներ մոտ 59—60 տարեկան։

Այժմ հարց է առաջ գալիս, Սահակ կաթողիկոսը երբ է առաջին անգամ մեկնել Տիզբոն։ Միակ աղբյուրն այդ մասին դարձյալ Խորենացին է։ Մեր վերը բերված հատվածից երևում է, որ Սահակը Տիզբոն է գնացել Հայոց Վռամշապուհ թագավորի խորհրդով և նրա տված թղթերով, իսկ Պարսից Վռամ IV թագավորը (ըստ Խորենացու՝ Արտաշիրը) հրամայում է Վռամշապուհին, որ նա Սահակի փեսա Համազասպին հանձնի սպարապետության պաշտոնը և Մամիկոնյան տոհմին բարձրացնի հինգերորդ աստիճանին։

Այս փաստը վկայում է, որ Սահակի Տիզբոն մեկնելը տեղի է ունեցել Հայոց Վռամշապուհ թագավորի ժամանակ, իսկ վերջինս թագավորել է 391—415 թ. թ.։ Բանի որ Խոսրով III բանտարկվելուց հետո Տիզբոնի արքունիքը վատ աչքով էր նայում Սահակ կաթողիկոսի վրա, պարզ էր, որ Վռամշապուհը, երբ թագավոր է դառնում, ոչ միայն կաթողիկոսի խնդրանքով, այլ ինքն էլ շահագրգռված էր Սահակին անձամբ ուղարկել Տիզբոն, նրա և մի շարք այլ գործեր լուծելու համար։ Դրանով Վռամշապուհը ձգտում էր Լուսավորչի տոհմին հաշտեցնել մոլեռանդ Սասանյաններին հետ, որոնք կատաղի թշնամի էին իրար։ Այդ հաշտեցմամբ Վռամշապուհն աշխատում էր, որ անպայման Սահակը միա կաթողիկոսության աթոռի վրա, լծակից դառնա իրեն՝ երկրի ինքնուրույնության պահպանման համար պայքարելու։ Այստեղից էլ պիտք է եղրակացնել, որ եթե Վռամշապուհը թագավորել է 391 թվին, պարզ է, որ Սահակ կաթողիկոսը Տիզբոն պիտք է մեկնած լիներ 391-ին, բայց ավելի ճիշտ 392 թվին, երբ նոր պիտի ծընված լիներ նրա անդրանիկ թոռ Վարդանը։ Ուստի ճիշտ չէ Բ. Վ. Կյուլասեարյանը, որ Սահակի առաջին երթը Տիզբոն դնում է 388 կամ 389 թ. թ.։[1] Սահակ կաթողիկոսի երկրորդ երթը դեպի Տիզբոն ըստ Մ. Խորենացու տեղի է ունեցել 414/15, իսկ երրորդը—428/29 թ. թ.։[2]

Հ. Դ. Ալիշանը 451 թ. Ավարայրի պատերազմում գոհված Վարդանի տարիքը հաղիվ հասցնում է 50-ի, «գոնէ չիսնամեայ պիտի ըլլար»,[3] իսկ եթե հետևելու լինենք բազմահմուտ Ալիշանին, նշանակում է, որ Վարդանը ծնված պետք է լիներ 401 թ. և ոչ թե 391 թվին։ Բայց Ալիշանի այդ կարծիքի դեմ մի քանի պատճառներ ավելանում կան, որոնցով կարելի է առարկել։ Դա Վարդանի մեկնումն է Մեսրոպի հետ դեպի Բյուզանդիա և 451 թ. մայիսի 26-ին նրա սպանվելն է Արտազ գավառի Ավարայր դաշտում։ Վարդան Մամիկոնյանը Բյուզանդիան է գնում ըստ Խորենացու այն ժամանակ, երբ Հայաստանում Պարսից Հազկերտ I-ին որդի Շապուհը չորս տարի իշխելուց հետո (416—419) իր հոր հիվանդության պատճառով մեկնում է Տիզբոն և հրամայում է իր տեղակալին հայ նախարարներին ձերբակալել և ուղարկել Պարսկաստան։

[1] Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԱ։

[1] Բ. Վ. Կյուլասեարեան, «Եղիշէ քննակ. ուսումնասիրութիւն», Վիեննա 1909, էջ 345։

[2] Մ. Խորենացի, գիրք Գ., գլ. ԾԶ, ԾԷ։

[3] Հ. Դ. Ալիշան, «Ծուշիկք», հատ. Ա. էջ՝ 266։

տան։ Երկրի այդ տագնապալի շրջանում, Սահակ կաթողիկոսն անցնում է Արևմտյան Հայաստան, բայց լավ ընդունելություն չգտնելով Բյուզանդիայի կողմից, Մեսրոպին և իր թոռ Վարդանին ուղարկում է Կ. Պոլիս Թեոդորոս կայսրի մոտ քաղաքական միսիայով։[1] Այդ մեկնումը տեղի է ունեցել 419-ին կամ ամենաուշը 420 թվին։ Եթե մի պահ հետևելու լինենք բազմահմուտ հայագետ Ալիշանին, որ Վարդանի տարիքը 451 թ. հասցնում է 50-ի, ուստի Մեսրոպի հետ Կ. Պոլիս գնալու ժամանակ նա հազիվ կլիներ 18 կամ 19 տարեկան։ Սահակ կաթողիկոսի նման հեռատես գործիչը դժվար թե երկրի այդպիսի տագնապալի մի ժամանակաշրջանում (419—422) քաղաքական կարևոր միսիայով Մեսրոպի հետ Պոլիս ուղարկեր 18 տարեկան մի պատանու, որը դեռ կյանքի ու աշխատանքի փորձ չուներ։ Բայց քանի որ Սահակն այդ գործի գլուխը դրել էր իր թոռան, նշանակում է, որ նա վստահ էր նրա վրա և Վարդանը 419 թվին ոչ թե 18 տարեկան էր, այլ 28 կամ 29, որին հանդիսատ սրտով կարելի էր քաղաքական գործերով պատգամավոր ուղարկել և լուրջ գործեր հանձնել։ Մանավանդ որ Բյուզանդիայից վերադառնալուց հետո նրան 422 թ. Սմբատ սպասի հետ ուղարկում է Պարսկաստան Արտաշես III-ին (Արտաշիրին) թագավոր նշանակելու առթիվ։ Այս հանդամանքը ևս ցույց է տալիս, որ Վարդանն արդեն լուրջ քաղաքական գործիչ էր Հայաստանում, իսկ 18 կամ 19 տարեկան պատանուն լուրջ գործի դնել չէր կարելի։ Պարզ է, որ վերոհիշյալ գործերի ժամանակ նա կլիներ 28 կամ 29 տարեկան, ուստի Ալիշանը սխալվում է, երբ 50 տարեկան է համարում Ավարայրի հերոսին։ Վարդանի տարիքը որոշելու խնդրում համեմատաբար ավելի ճիշտ է Կյուլասեբյանը, բայց նա էլ անտեղի մեծացնում է Վարդանի տարիքը, հասցնելով նրան 63 տարեկանի։[2]

Որ Վարդանը ծնվել է 391-ին կամ 392 թ. թ. և ոչ թե 401-ին, դա երևում է նաև Կորյունի այն տեղեկությունից, երբ ասում է «Երանելի Սահակն ուսման վարժությամբ զբաղեցնում էր ավելի (շատ) Մամիկոնյան մարդկանց, որոնց առաջինը անունն էր Վարդան, որ կոչվում էր Վարդկան»։ «Առաւել երանելի Սահակայ զՄամիկոնեան որեաքն՝ ի վարժս վարդապետութեանն պարապեցուցեալ, որոց առաջնոյն Վարդան անուն էր, որ և Վարդկան կոչէր»։[1] Եթե ընդունենք, որ Վարդանի կրթությունը տեղի էր ունենում հայոց գրերի գյուտից հետո, այսինքն 407 թվից սկսած, ըստ Ալիշանի, եթե Վարդանը ծնված լիներ 401 թ. այն ժամանակ հազիվ կլիներ 6—7 տարեկան, որին ուսման տալ չէր կարելի, իսկ եթե Վարդանի տարիքը 50-ի փոխարեն ընդունենք 59, այն ժամանակ հայոց գրերի առեղծումից հետո նա կլիներ 15 տարեկան, որին իսկապես կարելի էր կրթության տալ։

Մովսես Խորենացին իր գրքի երրորդ հատվածի 58-րդ գլխում ասում է, որ Սահակը Վարդանի հետ 421 թվին Արևմտյան Հայաստանից վերադառնում է Արևելյան Հայաստան, այնտեղ է թողնում Մեսրոպին և իր երկու թոռներին՝ Համայակին և Համազասպին, քննելու Բորբորիտոնների գործերը։ Եթե հետևվելու լինենք Ալիշանին, այն ժամանակ Համայակն ու Համազասպն եթե իրարից 2—3 տարի հետո ծնված լինեին, այն ժամանակ հազիվ կլինեին 14—16 տարեկան, որոնց չէր կարելի քաղաքական լուրջ գործեր հանձնել։ Պարզ է, որ թե Համայակը և թե Համազասպը 20 տարեկանից անց կլինեին։

Այսպիսով, ամփոփելով մեր ասածները տացվում է հետևյալ ժամանակագրական տախտակը, կապված Վարդան Մամիկոնյանի ծննդյան տարեթվի հետ։

Սահակ կաթողիկոսի ծնունդը	348 կամ 349 թ. թ.։
Սահակի կաթողիկոսությունը	388 կամ 389 թ. թ.։
Մեսրոպ III-ի թագավորութ.	386—391 թ. թ.։
Վռամշապուհի » »	391—415 թ. թ.։
Սահակ Բագրատունի սպասի մահը	388 կամ 389 թ. թ.։
Համազասպի և Սահականուշի ամուսնությունը	389 կամ 390 թ. թ.։
Սահակ կաթողիկոսի առաջին այցը Տիզբոն —	— 392 թ.
Սահակ » երկրորդ »	» 414 կամ 415 թ. թ.
Սահակ » երրորդ »	» 428 կամ 429 թ. թ.
Վարդան Մամիկոնյանի ծնունդը	391 կամ 392 թ. թ.

1 Ա. Ղ. Ալիշան, «Ցուցիկք» Ա., էջ 266։
2 Կյուլասեբյան, էջ 346—354։

1 Կորիւն, «Վարք Մաշտոցի», էջ 58։

Վարդանը հայ իրականության համար շատ հայտնի և ծանոթ դեմք է եղել և բոլորի կողմից քաջի անունն է ստացել։ Պատմությունը չի մոռացել այս նշանավոր անձնավորությանը, հետաքրքիր անցյալից իրեն հանելու համար։ Ճիշտ են եղել նրանք, որոնք իրավացի կերպով «կարմիր Վարդան» անունն են տվել նրան, որովհետև նա իր այդ կոչումը ձեռք է բերել արյան գնով, չխնայելով իր կյանքը երկրի ազատության համար։ Վարդանը չնայած իր քաջությանը, շատ հասարակ է թվում Մամիկոնյանների տան պանծալի գործավարների շարքում, թեև նա բոլորից էլ նշանավոր է եղել։

Վարդան Մամիկոնյանը, որի ծննդյան ժամանակը մենք համարում ենք 391 կամ 392 թ. թ. պարզ է, որ իրրև անդրանիկ որդին պիտի իր ծնողների և պապի ուշադրության առարկան դառնար։ Իրոք, նրա դաստիարակության ու կրթության գործը իրենց վրա են վերցնում մայրը, Սահականուշը և պապը՝ Սահակ կաթողիկոսը, որովհետև հայրը՝ Համազասպը, այդ ժամանակ զբաղված էր տանուտիրության և սպարապետության գործերով։ Սահակ կաթողիկոսը, որ հայտնի է եղել որպես իր ժամանակի ամենամեծ լուսավորիչն ու գիտունը, դիվանագետն ու քաղաքականագետը, անշուշտ պետք է հատուկ ուշադրություն դարձներ Վարդանի դաստիարակության վրա և տար նրան անհրաժեշտ գիտելիքներ ու իր հայրենասիրության գաղափարը։ օժտեր նրան իր սեփական հատկություններով։ Իսկապես, Վարդանը ոչ միայն Սահակի թոռն էր, այլ և նրա աշակերտը գիտության ընագավառում։ Վարդանի մայրը, Սահականուշը, նույնպես կրթված անձնավորություն է եղել։ Սահակի նման գործիչը Վարդանից առաջ դաստիարակել ու կրթել էր իր միակ աղջկանը։ Պարզ է, որ Սահականուշը նույնպես պիտի հոգար իր որդու դաստիարակության ու կրթության մասին։ Անշուշտ, մոր և պապի աված կրթությամբ չպիտի բավարարվեր Վարդանը, նրան կատարելագործելու համար տալիս են Սահակ-Մեսրոպյան բաց աշակերտական դպրոցներից մեկում սովորելու, հավանաբար Աշտիշատի և Վաղարշապատի դպրոցներում։ Վարդանն իր պապի և հմուտ վարդապետների միջոցով ձեռք է բերում իր ժամանակի համար

բարձր կրթություն ու գիտելիքներ և բացի հայերենից, տիրապետում է նաև հունարենին ու պարսկերենին։

Սահակ կաթողիկոսը դաստիարակում ու կրթում է իր թոռան մի այնպիսի ժամանակ, երբ հայ ժողովուրդն իր գրական կուլտուրայի ծնունդն ու զարգացումն էր ապրում, մի երեվույթ, որի նպատակն էր պահպանել ժողովրդի ինքնուրույն գոյությունը և պայքար մղել օտար նվաճողների ասիմիլյացիոն քաղաքականության դեմ։ Եվ Վարդանի կյանքի ծաղկումը համընկնում է այդպիսի մի ծաղկուն ժամանակաշրջանի հետ։ Այդ պատճառով էլ Վարդանն իր գարի հարազատ ծնունդն է եղել։

Սահակին քաջ հայտնի էր, որ հայ Արշակունյաց խարխուլ թագավորությունը՝ մի վասալ պետություն կախված Տիզբոնի աջքունեիցից, վերջի վերջո պիտի անկման հասներ, իսկ հայ ժողովրդի ինքնուրույնության պահպանումը, այդ ժողովրդի հետագա պայքարի կազմակերպումը, քրիստոնեական կրոնի ամրապնդումը, հեռատես կաթողիկոսը տեսնում էր հայոց գրերի ստեղծման, հայ գրականության զարգացման և Մամիկոնյան տոհմի հեղինակության բարձրացման մեջ, մի ոտն, որը մասամբ հայ Արշակունիների թագավորության ֆունկցիան պիտի վերցներ իր վրա։ Այդ պատճառով էլ նա հայոց գրերի ստեղծմանը զուգընթաց, ուշադրություն է դարձնում Մամիկոնյան տոհմի բարձրացման ու նրա զորավարների, հատկապես իր թոռների կրթության ու դաստիարակության վրա։ Նա մեծ ջանք գործադրեց իր անդրանիկ թոռ Վարդանին կրթելու և նրան Մամիկոնյան տոհմին արժանի ժառանգ դարձնելու համար։ Ապագա սպարապետին կրթելու և դաստիարակելու հետ զուգընթաց, Սահակը նրա մեջ մարմնացնում է հայրենասիրությունը, անձնազոհությունը, նվիրվածությունը, քաջությունը, ուղղամտությունը, հավատարմությունը, պարզությունը և մի շարք այլ բարձր հատկություններ։ Իսկապես Վարդանն իր պապի դաստիարակությանը հետևելով, իր կյանքը չի խնայում երկրի և ժողովրդի ազատության ու անկախության համար։

Վարդանը դաստիարակություն ու կրթություն ստանալուն զուգընթաց, սովորում է նաև ռազմական գործը, որը նրա հիմնական զբաղմունքն է լինում։ Նա ռազմական գործը սկզբում նույնպես սովորում է իր պապից և, հատկապես հորից, որը շատ հմուտ էր ռազմական արվեստում։ Սակայն հայ նախարարական ընտանիք-

ներում իշխանազների կրթությունը, առանձնապես ռազմական ուսուցումը, հանձնված էր զայակներին։ Իսկապես Վարդանն էլ իր ռազմական ուսուցումը կատարելագործում է իր զայակի մի-ջոցով, որը հայանի չէ, թե ով է եղել։ Զայակները վարժեցնում էին իրենց սաներին նետաձգության, որսորդության, ձիավարության մեջ, պատերազմական գործողությունների ձևերին ու տակտիկային։ Նրանք հին զրույցներից ու ավանդություններից պատմություններ էին անում իրենց սաներին, նրանց մեջ դնելի քաջագործության սեր առաջ բերելու համար։ Նրանք մի՞շտ հետևում էին իշխանազների յուրաքանչյուր քայլին ու նրանց կատարած գործունեությանը։ Զայակները Հայաստանում այնքան էին կապված իրենց զաստիարակած իշխանների հետ, որ շատ անգամ իրենց կյանքը վտանգի էին ենթարկում նրանց համար։

Վարդանի հայրը նրան դեռ շատ վաղ հասակից մասնակից էր անում պատերազմին, ռազմական արվեստի մեջ հմտանալուն, քաջ ռազմիկ դառնալու և իրեն փոխարինող պատրաստելու համար։ Հետագայում Վարդանը դառնալով սպարապետ մասնակցում է բազմաթիվ պատերազմների, ինքնուրույն կերպով վարում է մարտեր և ձեռք է բերում հմուտ զորավարի ունակություն ու համբավ։ Նա իր զինվորական տաղանդով արժանի տեղ է բռնում անվանի հրամանատարների շարքում։ Վարդանը քաջ է եղել թե սրտով և թե հոգով. նա իր մեջ մարմնացրել էր Մամիկոնյան զորավարների բոլոր դրական արժանիքները։

Սահակ կաթողիկոսի կողմից ձեռք առած ժիջոցների շնորհիվ Մամիկոնյան տոհմը, որ Մանվել Մամիկոնյանի մահվանից հետո զրկվել էր սպարապետության պաշտոնից, 4-րդ դարի վերջերից նորից սկսում է բարձրանալ և աչքի ընկնող դեր խաղալ երկրի քաղաքական կյանքում։ Համազասպ Մամիկոնյանը 28 տարի վարելով Մամիկոնյան տոհմի տանուտիրությունը և Հայաստանի սպարապետության պաշտոնը, մահանում է 415 թվին։ Համազասպի դերը մեծ է եղել հայկական զորական ուժերի կազմակերպման գործում։ Դա երևում է Խորենացու հետևյալ տողերից. «Որովհետև Համազասպը մեռավ և Սահակը մեծ սգի մեջ լինելով՝ ոչ ոք Հայոց գնդերը չհավաքեց, չմիաբանեց»։ «Բանզի մեռաւ Համազասպ, և ի սգի մեծի եղեալ Սահակայ, ոչ ոք ի միաբանութիւն հաւաքեաց զգունդս Հայոց»...[1] Մերուժի կաթողիկոսը սգում է Համազասպի մահը, ոչ այնքան որպես փեսայի, այլ որպես նշանավոր զորավարի, և մտահոգվում է թե նրանից հետո ո՞վ պիտի փոխարինի նրան, որ կարողանա հավաքել հայկական զորագնդերը և պահպանել երկիրն օտարերկրյա հարձակումներից։ Իսկ այդ հանդամանքը յուրյ է տալիս, որ Վարդանի դերը դեռ շատ նվազ էր, նա դեռ աչքի չէր ընկնում իր սխրագործություններով ու զինվորական տաղանդով և պապը դեռ մեծ հույսեր չէր կապում իր թոռան հետ ու չէր կարող կռահել, որ թոռը հորից պիտի անցներ իր գործունեությամբ, և իզուր չէին անցել նրա վրա գործ դրած ջանքերը, զուրգուրանքը ու նրա ստացած կրթությունը։

Թեև պատմական տեղեկություններ չկան, բայց հավանական է, որ հոր մահվանից հետո, Վարդանը որպես անդրանիկ որդի պիտի իր ձեռքը վերցներ Մամիկոնյան տան տանուտիրությունը և սպարապետության պաշտոնը, որովհետև նա 415 թվին արդեն կլիներ 23 տարեկան և նրան հանդիստ խղճով կարելի էր հանձնել նման պատասխանատու պաշտոններ։ Այդպիսով, Վարդանն ավելի քան 36 տարի, մինչև իր մահը վարել է իր տոհմի տանուտիրությունը և Հայաստանի սպարապետության պաշտոնը։ Որ Վարդանը հոր մահվանից հետո իր ձեռքն է վերցրել տանուտիրությունն ու սպարապետությունը, դա երևում է այն բանից, որ Սահակը նրան նախ մասնակից է անում երկրի կարևոր դրոջներին և ապա դնում է նշանավոր պատվիրակությունների գլուխը և ուղարկում Կ. Պոլիս ու Տիզբոն։

Մենք արդեն խոսել ենք, որ Սահակը 419 կամ 420 թվին Մեսրոպի հետ Վարդանին քաղաքական միսիայով ուղարկում է Բյուզանդիոն, հայ-բյուզանդական հարաբերությունները կարգավորելու համար։ Պարզ է, որ եթե Վարդանը պաշտոնյա և աչքի ընկած դեմք չլիներ Հայաստանում, դժվար թե նրան Մեսրոպի հետ ուղարկեին Կ. Պոլիս։ Դա նշանակում է, որ Վարդանի հեղինակությունը թե երկրում և թե Բյուզանդիայում մեծ է եղել և, իրոք, հոր մահվանից հետո 4—5 տարվա ընթացքում, նա կարողացավ ստեղծել իր համար քաղաքական դիրք։ Վարդանը

[1] Մ. Խորենացի, Գիրք գ., գլ. ԾԸ։

Մեսրոպի հետ Բյուզանդիայում ոչ միայն կարգավորում է հայ–բյուզանդական հարաբերությունները, այլև Թեոդոս կայսրից ստանում է սարատեխտի կոչում,[1] որը հավասար է սպարապետության կամ զորավարի աստիճանին,[2] իսկ դա ցույց է տալիս, որ Վարդանը արդեն վարում էր Հայաստանի սպարապետության պաշտոնը, կայսրը փաստորեն իր տված սարատեխտ կոչումով վավերացնում էր նրա սպարապետության պաշտոնը։

421 թվին Վարդանը Կ. Պոլսից վերադառնում է Հայաստան և մի տարի հետո, 422 թ. Սահակը նրան Սմբատ ասպետի հետ ուղարկում է Տիզբոն, Հայաստանի և Պարսկաստանի միջև խաղաղության հաստատելու և Արտաշեսին թագավոր նշանակելու կապակցությամբ։ Հայ պատգամավորությանը ոչ միայն հաջողվում է Վռամ V–ի հետ խաղաղություն կնքել և Վռամշապուհի որդի Արտաշեսին թագավոր նշանակել, այլև Վարդանին հաստատել որպես Հայաստանի սպարապետ։ Թե ըրանից առաջ վավերացված է եղել նրա սպարապետությունը, հայտնի չէ, բայց քանի որ Սմբատ ասպետի հետ Վարդանն է մեկնում Տիզբոն խաղաղություն կնքելու և ոչ թե մեկ ուրիշը, դա ցույց է տալիս, որ նա էր վարում սպարապետության պաշտոնը։ Որ Վարդանը 429 թվից առաջ սպարապետ է եղել, դա երևում է Խորենացու հետևյալ հատվածից. «Եթե միայն այժմ միաբանես նախարարների հետ, պարսից թագավորից ամենայն ինչ նահանջ և (նա) քո իրան՝ Վարդանին, Հայաստանի վրա կենդանակից հավասար և համապատիվ թագավորի»։ «... Եթե միայն այժմ միաբանության ընդ նախարարացդ, ամենայն ինչ քայքայէն Պարսից, և զիրան քո Վարդան կարգեսցէ ի վերայ Հայոց զուր պահավասար թագաւորին և համապատիւ»։[3]

Խորենացու այս հատվածից հարց է առաջ գալիս, թե ով պաշտոնը կարող է հավասար լինել թագավորին, պարզ է, որ միայն մարզպանությունը և ոչ թե սպարապետությունը։ Դա

[1] Մ. Խորենացի, գիրք Գ., գլ. Ծէ։

[2] Փավստոս Բուզանդը սպարապետությունն ու սարատեխտությունը նույն պաշտոնն է համարում. «Նոյնպես սարատեխտութեան սպարապետութեանն զօրավարութեանն մարթի կոչել»... Փաւստոսի Բուզանդացւոյ «Պատմութ. Հայոց», Գիրք. Գ. գլ. Բ, էջ 68։

[3] Մ. Խորենացի, գիրք Գ. գլ. ԿԴ, էջ 359։

նշանակում է, որ Վարդանն այդ ժամանակ վարում էր սպարապետության պաշտոնը, իսկ Վռամ V–ը պահանջում է, որ եթե Սահակը միանա նախարարների հետ, նրա Թոռանը թագավորին հավասար պաշտոն կտա, այսինքն մարզպանություն։

Վարդանին սպարապետության պաշտոնում Վռամը երկրորդ անգամ հաստատում է Արտաշեսի գահընկեցությունից հետո 431 կամ 432 թ. թ., որից հետո նա անփոփոխ վարում է այդ պաշտոնը մինչև իր մահը—451 թվին։

Ալիշանն իր «Այրարատ» աշխատության մեջ[1] սպարապետին միայն հեռավոր հրամանատար է համարում, իսկ «այրուձիուց զերազույն հրամանատարությունը տալիս է Բագրատունյաց ասպետներին։ Մեր կարծիքով բազմահմուտ հայագետը սխալվում է այդ հարցում, թեև Բագրատունի ասպետները վարում էին «Հայոց այրուձիուս հրամանատարի պաշտոնը, բայց զորքի այդ մասը նույնպես ժամում էր ընդհանուր բանակի կազմի մեջ. «...ի գործ պատերազմաց ի բուն ի նախնեացն կարգեաց ի Մամիկոնեան ազգին, ի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ի վերայ ամենայն զօրաց զօրավարութեանն բազմութեանն Հայոց մեծաց...»։[2] Փավստոս Բուզանդի այս հատվածից պարզ երևում է, որ սպարապետը երկրի բովանդակ ուժերի հրամանատարն է եղել, այսինքն սպարապետը դեկավարում էր թե հեծելազորը։ Մովսես Խորենացու տվյալներից երևում է, որ Համազասպ Մամիկոնյանից առաջ սպարապետության և ասպետության պաշտոնները միասին վարում էր Սահակ ասպետը։[3] Վերջինի վարած պաշտոնները նույնությամբ տրվում են Համազասպին, որից էլ անցնում են Վարդանի ձեռքը, որն Ավարայրի դաշտում դեկավարում էր և «այրուձին» և հետևակ զնդերին։ Վերոհիշյալ փաստերը դալիս են հաստատելու, որ, իրոք, թեև Բագրատունիները հաճախ վարել են «Հայոց այրուձիուս հրամանատարությունը, բայց դա չի եղել զերազույն հրամանատարություն, այլ ենթակա երկրի բանակի ընդհանուր զերազույն հրամանատարին, որը զեկավարում էր թե հետևակ և թե հեծյալ

[1] Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 421։

[2] Փավստոս Բուզանդ, Դպրություն Գ., գլ. Բ. էջ 68։

[3] Մ. Խորենացի, Գիրք Գ., գլ. Փ. Գ.։

Մամիկոնյան իշխանները, ավյալ պեպքում Վարդան Մամիկոնյանը։

Արշակունյաց թագավորության վերացումից հետո, Վարդանը մի ու ժամանակ ամրանում է Մոկաց աշխարհի անառիկ այրերում[1] իսկ երբ 431 կամ 432 թվերին կրկին անգամ վճռատաւավում է Վռամ V-ի կողմից սպարապետության պաշտոնում, այն ժամանակ նորից անցնում է Երկրի ռազմական ժողի գլուխը և դեկավարում նրանց։


Վարդանը հավանաբար 413—415 թ. թ. շրջանում ամուսնում է Դատրիկ անունով մի աղջկա հետ, որը հայտնի չէ ինչ ծագումից է։ Նա ունենում է երկու աղջիկ՝ Շուշան-Վարդան, որ ամուսնանում է Վրաց Աշուշա բդեշխի որդի Վաղենի հետ, իսկ մյուսը, Վարդանուհին՝ ամուսնանում է Աբշավիր Կամսարականի հետ։ Վարդանի եղբայրներից Հմայակն ունենում է մի որդի՝ Վահանը, Վասակը, Արտաշեսը և Վարդը, Վասակն ունենում է մի որդի Գրիգոր անունով։ Իսկ Համազասպը կամ Համազասպյանը սերունդ ունեցել է, թե ոչ հայտնի չէ։

XI. ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 5-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍԻՆ

Հազկերտ II-ն իր քաղաքականությունը Հայաստանում հաջողությամբ իրագործելու համար նախ աշխատում է իր երկրի սահմաններն ամրացնել և երկիրը ապահովել արտաքին վտանգից։ Այդ նպատակով նա չեղյալ է հայտարարում Վռամ V-ի կողմից 422 թվի հոկտեմբերի հետ կնքված պայմանագիրը և մեծ բանակով հարձակվում է հյուսիսային Միջագետքի բյուզանդական գավառների վրա[2] ու հասնում է մինչև Մծբին քաղաքը։ Հազկերտն ավերում է շատ ու բազմ է անում մի շարք գավառներ, քաղաքներ,

[1] «Թովմայի Վարդանի և Ղևոնդի Վարդանանց պատմության» մեջ Մոկաց աշխարհի այրերը հիշատակվում են որպես Վարդանի ապաստանի վայրեր։

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



գյուղեր, վանքեր և եկեղեցիներ. «(Հազկերտը) իբրև մի կատաղի գազան, հարձակվեցավ Հունաց երկրների վրա, հասավ մինչև Մծբին քաղաքը, հռոմեացիների շատ գավառներ ավերից ու կողոպտեց և բոլոր եկեղեցիները կրակ ձգեց ու այրեց։ Այս յոյժ չիմաստութեանն իբրև զգազան մի կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. եհար մինչ ի քաղաքն Մծբին, և բազում գաւառս հռոմոց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար...»[1] Հազկերտը հայերի հետագա ապստամբությունները կանխելու և նրանց ահ ու սարսափի մեջ պահելու համար, մի գեղջ զորք է ուղարկում Հայաստան, որը հաստատվում է Բագավանում։

Բյուզանդական կայսր Թեոդոս II-ը (408—450), որի դրությունն այդ ժամանակ շատ ծանր էր, ի վիճակի չէր Պարսկաստանի հետ պատերազմելու, որովհետև հոների առաջնորդ Աթիլլան իր բանակն էր դրել Պաննոնիայում և ժլատաբար ապատնում էր կայսրությանը, իսկ վանդալները և նրանց հետ միացած ծովահենները, թալանում էին տերության ծովափնյա գավառները։ Կայսրը հաշվի առնելով հզած ծանր դրությունը, ստիպված է լինում իր պետության արևմտյան երկրների կառավարիչ և զորավար Անատոլին[2] ժնծատեծ նվերներով ուղարկել Տիզբոն և կնքել խաղաղության պայմանագիր։ Ըստ այդ նոր պայմանագրի, կայսրությունը հանձն է առնում վճարելու 6000 ֆունտ ոսկի տուգանք և տարեկան 700 ֆունտ ոսկի հարկ։[3]

Այդ պայմանագրի կնսերից մեկն այն է, որ կայսրը պարտավորվում է Պարսկաստանին հանձնել բոլոր քրիստոնյա պարսիկներին, որոնք ապստամբել էին դեմ կայսրության սահմաններում։ Դրանով իսկ բյուզանդական կայսրությունը փաստորեն իր դիրքերը զիջում է Պարսկաստանի առաջ։ Վերոհիշյալ պայմանագրով կայսրությունը թուլացնում է իր ասիական սահմանների պաշտպանությունը, քանզի բոլոր ամրություններն ու

---

[1] Եղիշէ, էջ 12։

[2] Այս զորավարի անունով է, որ հետագայում Փոքր Ասիան կոչվում է Անատոլիա։

[3] Ա. Գելցեր, էջ 20։

ամրոցները։ Հազկերտը, ընդհակառակը, կարողանում է ամրապնդել իր պետության արևմտյան սահմանները վտանգավոր թշնամուց։ Այդ պայմանագրից հետո, Պարսկաստանը պատրաստվում է պատերազմ սկսել հոների հետ, որոնք նույնպես վտանգավոր թշնամի էին Տիզբոնի արքունիքի համար։ Դրանք 4-րդ—5-րդ դարերում գտնվում էին կիսավայրենի վիճակում, վարում էին թափառաշրջիկ կյանք և մեծ մասամբ իրենց կյանքն անց էին կացնում ձիու վրա։

Հոները բնակվում էին Կասպից ծովի հյուսիս-արևմտյան և արևելյան մասերում, հասնելով մինչև Միջին Ասիա։ Նրանք բաժանվում էին երկու խմբի—«սև հոներ», որոնք բնակվում էին այժմյան Դաղստանում և Վոլգայի ու Ուրալի ստորին հովիտներում, հասնելով մինչև այժմյան Կազախստանի հյուսիս-արևմտյան մարզերը և հաճախ Դերբենդի կիրճով հարձակում էին գործում Պարսկաստանի վրա ու թալանում Պարսկաստանին ենթակա երկրները։ Դերբենդի դուռը կամ բերդը կոչվել է նաև Ճորա Պահակ, որը գտնվել է Դերբենդ քաղաքի մոտ, Կասպից ծովի ափին։ Դերբենդը մի քաղաք է եղել Ադվանքի հյուսիսային մասերում և հին ժամանակներում, պատմական տարբեր իրադարձությունների պատճառով, տարբեր անուններով է կոչվել, ինչպես օրինակ, Ճորապահակ, Դերբենդի բերդ (Երկաթյա բերդ), Ադվանից, Կասպից, Հոնաց և Նագարաց դուռ անուններով։ Այդ կիսավայրենի ցեղերի առաջն առնելու համար, շատ վաղուց ամրոց էին շինել այդտեղ, սկզբում հայերը, հետո էլ պարսիկները, որոնք ստիպված էին մշտապես զորք պահել Դերբենդի կիրճում, 5-րդ դարում, Հազկերտ II-ն ավելի է ուժեղացնում պահակային զորաջոկերը Ճորա Պահակում։ Այդ գնդերի մեջ լինում էին նաև հայերը։

«Սև հոները» գլխավորապես զբաղվում էին որսորդությամբ, մորթու առևտրով։ Իսկ մյուս խումբը, որ հայտնի է «սպիտակ հոն» կամ ըստ Ղազար Փարպեցու «Հեփթաղ-Հեփթալիտ» անունով, բնակվում էր Միջին Ասիայում, այժմյան Ուզբեկստանի, Թուրքմենստանի և Կազախստանի հարավ-արևմտյան մասերում և ձգվում էր մինչև Ավղանստան ու Բելուջստան։ «Սպիտակ հոները» կողոպտում ու թալանում էին այն առևտրական քարավանները, որոնք գալիս էին Հնդկաստանից դեպի Պարսկաստանի

սահմանները։ Հայ պատմիչները հոների այս երկու ցեղերին տարբերում են իրարից։ Օրինակ, Եղիշեն ասում է, որ Հազկերտը «Նաղաց գնաց... ի վերայ աէրուեթեան Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն»[1] Իսկ մի ուրիշ տեղում ավելացնում է, որ Վարդան Մամիկոնյանը զբաղում է Ճորապահակը և մարդ է ուղարկում հոների մոտ դաշինք կնքելու ու բարեկամություն հաստատելու, իսկ Ճորապահակը Եղիշեն անվանում է «Պահակ հոնաց»։ Այստեղից էլ պարզ երևում է, որ հոների այն մասը, որ բնակվում էր Կասպից ծովի հյուսիս-արևմտյան մասում կոչվել են հոներ և դա պետք է լինեն «սև հոները», իսկ Կասպից ծովի հյուսիս-արևելյան և հարավային մասերում ապրողները կոչվել են քուշաններ, որոնք պիտի լինեն «սպիտակ հոներ» կամ «հեփթաղներ»։ Այստեղից էլ պետք է եզրակացնել, որ Եղիշեի մոտ շատ հաճախ գործ ածված «քուշաններ», «Քուշանաց աշխարհ» տերմինները պետք է հասկանալ «սպիտակ հոներ»-ի կամ «հեփթաղներ»-ի երկիր, որ ընկնում է Պարսկաստանի արևելյան մասում և այդ կողմն է գտնվել «Պահդուն» ու «Ապար աշխարհը»։ «Սպիտակ հոները» շատ հաճախ հարձակումներ էին գործում Պարսկաստանի վրա նաև արևելքից և մեծ վնասներ էին հասցնում։ Այդ է պատճառը, որ նրանց դեմ առնելու համար Տիզբոնի արքունիքը ստիպված է լինում արևելքում մշտապես զորք պահել։ Ինչ վերաբերում է 5-րդ դարին, պետք է ասել, որ Սասանյան Պարսկաստանը վճռական անվերջ պատերազմ է մղել հոների դեմ։

Վերը հիշված թշնամիներին Պարսկաստանի սահմաններից հետ մղելու համար, Հազկերտ II-ը Տիզբոն է կանչում Հայաստանի, Վրաստանի, Ադվանքի և մյուս քրիստոնյա երկրների իշխաններին իրենց զորքերով, որոնք Բյուզանդիայի պարտությունը հաշվի առնելով ստիպված են լինում մնկնել Պարսկաստան իրենց զորապետերով ու կռվել հոների դեմ (442—449)։ Տիզբոնի արքունիքն իր այդ գործունեությամբ շահում է երկուսակի։ Նախ, որ հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների ռազմական ուժերի միջոցով նա կռվում է իր թշնամիների դեմ, և երկրորդ, հեռացնելով այդ երկրների ռազմական ուժերը, է

[1] Եղիշե, էջ 18։

վիճակի էր հետաքրքրությամբ իր քաղաքականությունը կիրառել, թե Հայաստանում և թե մյուս քրիստոնյա երկրներում։

441—442 թ. թ. Հազկերտն ամրապնդելով իր երկրի արևմտյան սահմանները և անմիջապես հպատակ երկրների զորքերը Պարսկաստան կանչելով, 442 թվին պատերազմական գործողություններ է սկսում հոների դեմ։ Նա կենտրոնացնում է «ապիտակ հոների» դեմ իր ռազմական գլխավոր ուժերը, որոնց կազմի մեջ էին մտնում նաև Վրաստանի, Ալվանքի, Հայաստանի, Ծավղիքի, Կորդվաց աշխարհի, Աղձնիքի և Հյուսիսային Միջագետքի զորագնդերը։ Հազկերտը, որ կարծում էր թե շատ շուտով և հեշտությամբ կմաքրի իր հաշիվները հոների հետ, չարաչար սխալվեց։ Հոների հետ սկսած պատերազմը, որի նպատակն էր ամրապնդել երկրի արևելյան սահմանները, տևում է բավական երկար և Տիզբոնի արքունիքը ստիպված է լինում հաժառ ու երկարատև պայքար մղել Պահդուն և Ասլան աշխարհն իր ձեռքում պահելու համար։

Հազկերտ II-ը լարելով իր բոլոր ուժերը, 449 թվի դարնանը մեծ քանակությամբ նոր և թարմ ուժեր է կենտրոնացնում «ապիտակ հոների»՝ «քուշանների» դեմ,[1] վերջնականապես խորտակում է նրանց ռազմական հզորությունը, ետ շպրտելով դեպի հյուսիս-արևելք և գրավում ու թալանի է ենթարկում նրանց երկրի մեծագույն մասը։ Դրանով մի առ ժամանակ վերջանում են հոների հետ ունեցած պատերազմները և Հազկերտն ապահովում է նաև իր երկրի արևելյան սահմանները։ Դրանից հետո նա ի վիճակի է լինում գործադրելու իրանիզացիայի քաղաքականությունը հպատակ քրիստոնյա երկրներում։

[1] 1932 թ. Վիեննայում Ներսես Վ. Ակինյանը լույս է ընծայել Եղիշեի վերաբերյալ մի աշխատություն «Եղիշե վարդապետ և իր պատմությունը հայոց պատերազմի, պատմական ու մատենագրական ուսումնասիրություն», որի մեջ հեղինակը քննադատում է պատմագիր Եղիշեին և գտնում է՝ որ այդպիսի պատերազմներ պարսիկները չեն ունեցել քուշանների հետ, և հիմք ունենալով եվրոպական աղբյուրները, պնդում է, թե այդ մասին ոչինչ չկա և այդ կռիվները պարսիկները ավելի ուշ ժամանակ են մղել քուշանների դեմ։ Եղիշեին կեղծ պատմագիր է դուրս բերում և անտեղի նրան 5-րդ դարից տեղափոխում է 6-րդ դարի վերջը։ Ներսես Վ. Ակինյանի այս տեսակետը Եղիշեի մասին, լավագույն դեպքում գիտական հիպոթեզ կարող է լինել միայն և ոչ ավելին

X. 451 Թ. ՀԱՅՏԻՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԱԹԱՆԴՐՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

Սասանյան Պարսկաստանը հոների դեմ տարած հաղթանակից հետո, ձեռնամուխ է լինում իրանիզացիայի քաղաքականության տարածմանը՝ հպատակ քրիստոնյա երկրներում։ Նախ և առաջ Հազկերտն արդելում է պարսկական զորագնդերում եղած քրիստոնյա զորքերի վերադարձն իրենց երկրները։ Դեռ նախքան հոների հետ եղած պատերազմների վերջանալը, Տիզբոնի արքունիքն աշխատում էր քրիստոնյա զորքերի մեջ տարածել զրադաշտական կրոնը և մազդեական օրենքները։ Բայց զգալով, որ խաղաղ ճանապարհով հնարավոր չէ այդ գործը գլուխ բերել, նա դիմում է ավելի կոպիտ ու բռնի միջոցների, այսինքն պահանջում է զորքին վճարվելիք ռոճիկը, բնակեցնում է վատ ձմեռանոցներում, պատերազմի ժամանակ կռվի ամենավտանգավոր տեղերն է ուղարկում, որպեսզի բոլորն էլ կոտորվեն։ Նման ժամանակ միջոցներով Տիզբոնի արքունիքը նպատակ էր դրել աստիճանաբար վերջ տալ Պարսկաստանում եղած քրիստոնյա պնդերին և թույլ չտալ նրանց, որ վերադառնան իրենց երկրները։ Եղիշեն Պարսկաստանում եղած քրիստոնյա զորքերի ծանր դրության մասին գրում է.

«Եվ գունդ գունդ ուղարկում էին նրանց անապատների մեջ գտնված հեռավոր երկրները՝ թագավորի թշնամիների դեմ կռվելու համար, նրանցից շատերն այնտեղ սրի կերակուր դարձան, եվ բոլորի թոշակը սահմանվածից պակաս էին տալիս, առված ծարավ պահելով չարչարում էին. նրանց համար ձմեռանոց էին նշանակում վատ տեղեր...»։

«Եւ գունդս-գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաստան՝ յամուրս յանապատին՝ ի մարտ պատերազմի թշնամեացն արքային. և բազում իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով։ Եւ պամենեցունց վկարգեալ թոշակն նուազեցուցան էին, և ի քաղցիլ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ձմերոցի տեղիս զգժնեայ վայրսն հրամայէին նոցա...»։[1]

Չնայած Տիզբոնի արքունիքի ձեռք առած վերոհիշյալ հալածանքներին, որոնք տեղի էին ունենում 447—449 թ. թ., այնուա-

[1] Եղիշե, էջ 29։

ամենայնիվ քրիստոնյա գնդերը համառ կերպով շարունակում էին դիմադրել։

Այդ նույն միջոցին Հազկերտի կողմից, որպես արքունի գործակալ Հայաստան է ուղարկվում Դենշապուհ (Վհնդենշապուհ) անունով մի պարսիկ, աշխարհագիր կատարելու համար։ Աշխարհագիրը բառի տակ հայ հին մատենագիրները հասկանում էին բոլոր ենթարկյալների և աշխատող ձեռքերի հաշվառումն ու արձանագրումն արքունի մատյանում-գավթարում, արքունի հարկերը կանոնավոր բաշխելու և հավաքելու համար։

Մ. Գարագաշյանը Դենշապուհի աշխարհագրի ժամկետը սահմանում է 450—51 թիվը քուշաններին հաղթելուց հետո[1] ինչպես գիտենք, Եղիշեն կրոնափոխության առաջարկը Դենշապուհի աշխարհագրից հետո է դնում, այսինքն 449 թվի վերջերին։ Այստեղից էլ պարզվում է, որ այդ աշխարհագիրը տևել է ուննգից 447—449 թ. թ. ընթացքում։

Հազկերտ II-ի գլխավորությամբ Տիզբոնի արքունիքի սկսած քաղաքական հալածանքները քրիստոնյա երկրներում շարունակություն էին կազմում Սասանյանների վաղեմի հալածիչ քաղաքականության, որ գործադրում էին նրանք Հայաստանում 3-րդ և 4-րդ դարերում։ Հազկերտն իր քաղաքականությունը Հայաստանում հաջող կիրառելու համար 441 թվին Վհնդիհրշապուհ պարսիկ մարզպանին փոխում է և նրա փոխարեն մարզպան է նշանակում Սյունյաց Վասակ իշխանին։ Սասանյան դիմադրեթան հայ մարզպան նշանակելով Հայաստանում երկու նպատակ էր հետապնդում. 1. սիրաշահել հայերին և երկրում եղած դժգոհությունները կասեցնել, 2. նախարարական տներից մի քանիսին իր կողմը գրավել և հնարավոր ստեղծել իր հալածիչ քաղաքականությունը երկրում առաջ տանելու համար։

Դենշապուհի աշխարհագիրն իրր թե նպատակ ուներ թեթևացնել Հայաստանից գանձվող հարկի քանակը և զորքերի այրուձիու ծառայությունը, որոնք սովորաբար հայերը տալիս էին Պարսկաստանին։ Ըստ այդ աշխարհագրի, հարկերի գանձումը և այրուձիու ծառայությունը պետք է կատարվեր ըստ մարդաթվի, «արդար և հավասար» կերպով։ Բայց այդ բոլորը արտաքուստ էր այդպես թվում, իրականում Դենշապուհն արքունիքից պատվեր էր ստացել Հայաստանում գործադրել այնպիսի միջոցներ, որով կարողանար մի կողմից ծանրացնել հարկերը և այրուձիու ծառայությունը, իսկ մյուս կողմից սահմանափակել իշխանների ու հոգևորականների իրավունքները և թագավորի կողմը գրավել հայ նախարարների որոշ մասին՝ քանդելով նրանց միաբանությունը։ Դենշապուհի աշխարհագրի մասին Եղիշեն գրում է.

«Եվ (Հազկերտը) այս բոլոր չարությունների վրա ուրիշ խորամանկություններ ևս ավելացրեց։ Իր հավատարիմ ծառաներից մեկին գործով ուղարկեց Հայոց երկիրը, որի անունն էր Դենշապուհ, որը թագավորի հրամանով հասնելով այնտեղ և ողջույն բերելով մեծ թագավորի կողմից, խաղաղասեր կեղծավորությամբ աշխարհագիր էր կատարում բոլոր Հայոց երկրում, որպես թե հարկերը պակասեցնելու և այրուձիու ծառայությունը թեթևացնելու համար։ Թևպետ նա երեսից կեղծավոր էր, բայց նրա չարության գաղտնի խորհուրդները խկուզն երևում էին։

Առաջին, եկեղեցու ազատությունը խլեց և նրան հարկի տակ դրեց։

Երկրորդ, վանքերում բնակվող միայնակյաց քրիստոնյաներին էլ նույն աշխարհագրի մեջ մտցրեց (այսինքն հարկի տակ դրեց)։

Երրորդ, (Հայոց) աշխարհի հարկն ավելի չատացրեց։

Չորրորդ, զրպարտության միջոցով նախարարներին իրարու դեմ լարեց և ամեն տան մեջ խռովություն ձգեց։

Եվ այս բոլորն անում էր, որ մի գուցե կարողանար նրանց միաբանությունը քանդել, եկեղեցու ուխտը ցիր ու ցան անել, մխիթարիչներին փախցնել և գյուղացիներին էլ խեզճության մեջ ձգել, որպեսզի սաստիկ ազգատությունից ստիպված, ակամա ընդունեն մոգության օրենքը։

Ավելի քան չարամիտն էր հինգերորդը, որովհետև մեր երկրի հայրն ու վերակացուն համարվում էր հաղարապետը, թե աշխարհականների և թե քրիստոնյաների համար, նրա հացեին ամբաստանություն սարքեց և հանեց գործից ու նրա փոխարեն պարսիկ (հաղարապետ) բերալ մեր երկիրը, հետո էլ մի մոգ-

[1] Մ. Գարագաշյան, «Պետական պատմություն Հայոց», մաս Դ., 1855, էջ 118։

պետ՝ աշխարհին դատավոր, որպեսզի եկեղեցու փառքը խնդա-
թյուրնն։

Բայց որովհետև նրա բոլոր արարքները դաժան էին, ուստի
ոչ ոք եկեղեցուն դեռևս հայտնապես ձեռք չէը ավել, նրա արած-
ների համար ոչ ոք չընդդիմացավ, հակառակ հարկերի անտանե-
լիությանը։ Որովհետև որտեղից պետք էր առնելին հարյուր դա-
հեկան, կրկնակի էին առնում, նույն ձևով եպիսկոպոսներից և
քահանաներից և ոչ միայն շեն վայրերից, այլև ավերակ տեղե-
րից։ Բայց ով կարող է պատմել մուտքի և ասիի, հասի և բաժի,
լեռանց և դաշտաց և մայրյաց (անասունների) հարկերի ծանրու-
թյան մասին։ Չէին դանձում արքունի սահմանված կարգով,
այլև ավազակի նման հափշտակելով, որի համար իրենք էլ զար-
մանում էին, թե այսքան դանձերը դուրս գալուց հետո, ինչպես
շեն է մնում Հայոց աշխարհը»։

«Եւ յայսր ամենայնի վերայ այլ ևս չարութիւն խորամանե-
կեաց։ Զմի սմն ի հաւատարիմ ծառայիցն իւրոց ի գործ առաքէր
յերկիրն Հայոց՝ որում անունն էր Դենշապուհ, որ եկեալ հա-
սեալ հրամանաւ արքունի, զողջոյն ընդեալ զմեծ թագաւորին, և
խաղաղասէր կնճռաւորութեամբ աշխարհապիր առնելով ամենայն
երկիրն Հայոց ի Թողութիւն հարկաց և ի թեթևութիւն ծանրու-
թեանն այրեձիոյն։ Թէպէտ և ի վերին հրեաս կնճռաւոր էր, այլ
ի ներքոյ խորհուրդք չարագոյն ցուցանէին։

Առաջին, զազատութիւն եկեղեցւոյ արկանէր ի ծառայու-
թիւն։

Երկրորդ, միաբանականաց քրիստոնեայք որ բնակեալ էին ի
վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ։

Երրորդ, զնարկ աշխարհն առաւել ծանրացոյց։

Չորրորդ, զնախարարականն բանսարկութեամբ արկ ընդ
ժիմեանս, և յաժենայն տան արար խռովութիւն։

Եւ զայս ամենայն առնէր՝ զի թերևս զմիաբանութիւնն
քակտեսցէ, և զուխտն եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակեացսն
փախուսցէ, և զշինականսն վատնեսցէ. և առ յոյժ աղքատու-
թեանն՝ ակամայ դիմեսցին յօբէնս մոգուց։

Եւ ա՛ս չարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետն էր
աշխարհին՝ երբեմն զհայր վերակացու համարեալ էր աշխարհակա-
նացն քրիստոնէից. զրզուեաց յարոյց զամբաստանութիւն ի վե-

րայ նորա, և հանեալ զնա ի դործոյն՝ փոխանակ նորա պարսիկ
ած յաշխարհն, և մեռ ևս մոգպետ դատաւոր աշխարհին, որ զե-
կեղեցւոյ փառս ապաւաղեսցին։

Բայց սակայն թէպէտ և ամենայն դործքս այս դժնեայ
էին, չև էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին. վասն այ-
նորիկ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ և էր ծանրութիւն
հարկացն։ Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկան,
նոքունչափ կրկնեին և առնուին. սոյնպէս և եպիսկոպոսաց և երի-
ցանց դնէին, ոչ միայն շինաց՝ այլև աւերակաց։ Նա ընաւ ոչ
իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մատից և ասիից, բաժից և
հասից, լեռանց և դաշտաց և մայրեաց։ Ոչ ըստ արքունի սա-
ժանաւորութեանն առնուին, այլ հինարար յաւելուածելով, մին-
չև ինքեանք իսկ ժեծապես զարմանային՝ թէ ուստի այս ամե-
նայն դանձ ելանէ՝ զիմբրէ շեն կայել աշխարհն Հայաստա-
նեաց»։[1]

Եղիշեի այս ընդարձակ ժեջբերումը հաստատում է Սահա-
կյանների հետապնդած նպատակները։ Դենշապուհի աշխարհա-
գրով, ինչպես տեսանք ծանրանում է Հայաստանից դանձվող
հարկերի քանակը, եկեղեցին և հոգևորականությունը հարկա-
տվությունից են ենթարկվում, նախարարներին նա անառեղի մե-
ղադրում և հեռացնում է իրենց պաշտոններից, հարկերի դան-
ձումը և դատական դործը հանձնում է պարսիկներին, 20—50
տարիք ունեցող տղամարդկանց գլխահարկի տակ է դնում։

Եղիշեի այն պնդումը, որ ամերակ տեղերից էլ հարկ են
պահանջում, պետք է համարել չափազանցություն, իսկ ինչ վե-
րաբերում է գլխանց, դաշտաց և մայրեաց դործվածքին, դրա
տակ պետք է հասկանալ, որ արոտավայրերից ու անասուններից
նույնպես հարկ էին պահանջում։

Եղիշեն ամենաչարաղույնը համարում է հազարապետության
պաշտոնի և դատավարության դործի անցումը պարսիկների
ձեռքը։ Այստեղ պատմագիրը նկատի է առնում երկու կարևոր
խնդիր՝ առաջին, հազարապետության պաշտոնը պարսիկներին
անցնելով փաստորեն նրանց ձեռքն էր անցնում երկրի ամբողջ
տնտեսության հսկումն ու դեկավարումը, հարկերի բաշխումն

1 Նշված, էջ 31—32։

ու գանձումը և ֆինանսական գործերի կառավարումը։ Երկրորդ, դատավարության գործի անցումով, փաստորեն ժողովի միջոցով Հայաստան պիտք է բերվեին պարսկական օրենքները և դատավարական այն բոլոր ձևերը, որ գոյություն ունեին Պարսկաստանում։ Իսկ դա իրանիզացիայի քաղաքականության գլխավոր քայլերն էին, որովհետև հայերը պետք է հետևեին իրանական օրենքներին, սովորություններին, բազմակնության և կրոնին։ Եղիշեի ասելով այս բոլոր բռնությունների նպատակն այն էր, որ հայերը ակամա նեղվեն և ընդունեն մողերի օրենքն ու կրոնը։

Հազկերտի ժամանակ Հայաստանից գանձված հարկերի վերաբերյալ չափերի մասին Եղիշեն մի այլ կարևոր տեղեկություն էլ ունի իր աշխատության այն մասում, ուր նախարարները Տիզբոնի արքունիքի ատյանում պատասխանելով Հազկերտին, ասում են.

«Հիշեցնում ենք քեզ արքայից-արքա Շապուհի ժամանակը, որ քո պապ Հազկերտի հայրն էր, Աստված տվեց նրան Հայոց երկիրը ժառանգելու այն օրենքներով, որոնցով և մենք այժմ կառավարվում ենք. մեր հայրերն ու մեր հայրերի պապերը մեացին նրա ծառայության տակ, սիրով կատարում էին նրա հրամանը, և շատ անգամ նրանից ժեծամեծ պարգևներ էին ստանում։ Եվ այն ժամանակվանից մինչև քո հայրենական աթոռի վրա նըստելը, մինչև ևս մինուլն ծառայությունը կատարեցին, բայց քեզ առավելությամբ, քան քո նախորդներին»։

Այս ասելով ցույց էին տալիս իրենց ավելի քաջ լինելը զինվորական կոչի մեջ, քան իրենց նախնիքը. հիշեցնում էին թե ինչպես նրա պահանջները շատ են, հարկերն ավելի ծանր են, քան նրա նախորդների ժամանակ, որ արքունիք էին գնում։

«Նաև սուրբ հկեղեցին, որ սկզբում ազատ էր հարկերից, հարկի տակ ձգիր, և մենք քո տիրության սիրո համար ոչ մի դժվարություն ցույց չտվինք քեզ»։

«Բանդ չիշեցուցանենք քեզ ժամանակն Շապուհ արքայից արքային, որ եր հայր հաւուն քո Յազկերտի, և նա նմա Աստուած ղերկիրն Հայոց ի ժառանգութիւն տուին օրինօք որով և մեք իսկ վարիմք այժմ, և հարքն մեր և հաւք հարցն մերոց կացին նմա ի ծառայութեան վաստակս, և սիրով կատարէին

պահանջն հրամանն բանի նորա, և բազում անգամ ի նմանէ վեհապարգևք ելանէին։ Եւ յայնց ժամանակաց մինչև ի քոյ հայրենի աթոռդ՝ և մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք. բայց քեզ լավագոյն քան զառաջնոցն»։

Ձայս ասելով ցուցանէին զքաջութիւն արութեանցն լավագոյն քան զառաջնոցն ըստ զինուորութեան կարգի, իսկ զմտից և սակից, և որ այլև էին հարկ աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նորա երթայր յարքունիս։

«Նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի հարկաց ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եղիր. և մեք առ սէր քոյոյ տերութեանդ ոչ ինչ ընդդիմացաք քեզ»։[1]

Այս հատվածը ևս գալիս է հաստատելու, որ իրոք Հազկերտ II-ի ժամանակ Հայաստանից շատ ավելի հարկեր էին գանձում, քան նրա նախորդների օրոք։

Սասանյան Պարսկաստանի՝ նման քաղաքականությունը, որ վարում էր Դենշապուհը Հայաստանում, հետապնդում էր երկու գլխավոր նպատակ. առաջին՝ սահմանափակել հայ նախարարների և հոգևորականների դարավոր իրավունքները, ավելացնել երկրի հարկերն ու ամրապնդել կիզիքությունները, իսկ երկրորդ, վերացնել հայերի ինքնավարությունը, կուլտուրական և կրոնական ինքնուրույնությունը։ Դրանով Սասանյան արքունիքը փաստորեն սպառնում էր նաև Հայաստանի փաստական անկախությանը, իսկ մյուս կողմից աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների դրությանն ու երկրի տնտեսական կյանքին։ Սրանք են այն գործոնները, որ հայերին մղեցին դեպի 451 թվի պատերազմը։

Պարսկաստանի վարած վերոհիշյալ քաղաքականությունը մի ամբ ժամանակ մեղմացնում է իրենց տերերից դժգոհ հայ ինքնիշխաններին, նրանք համախմբվում են հայ իշխանների շուրջը՝ դուրս գալու արտաքին թշնամու դեմ, որը լուրջ վտանգ էր սպառնում ժողովրդի ինքնուրույնության ու կուլտուրային։

Հայ աշխատավոր մասսաները 420-ական թվականներից հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների շահագործման ուժեղացման պատճառով, սկսում են դժգոհել իրենց տերերից, որոնք

1 Եղիշե, էջ 58։

գնալով ազատանալից ընույթ են ստանում և կրում աղանդավորական շարժման ձև ու կոչվում «բորբորիտոն»[1] և «ժծդնյա» անուններով։ Թեև 420-ական թվականներին «բորբորիտոն»-ների նկատմամբ ձեռք էին առնվում խիստ միջոցներ, նրանց շարժումները լիկվիդացնելու ուղղությամբ, բայց այնքան էլ արմատական չեն լինում, որովհետև նրանք 440-ական թվականների սկզբին, կրկին անգամ զգալ են տալիս իրենց, այս անգամ «ժծդնյա» անունով։ Իշխող դասակարգը, հանձին պաշտոնական եկեղեցու, նորից ստիպված է լինում հալածանք սկսել նրանց դեմ։ 443-թվականի Շահապիվանի ժողովը քննության է առնում «ժծդնյաններին» հարցը և խիստ որոշում հանում նրանց նկատմամբ[2]։ Հատուկ կանոնով որոշում է «ժծդնյա» ապանդին հետևողների ձախտումն ազգնապրոշմ խարանել, ժառանգական տաճկանքների ենթարկել նրանց և ուղարկել տաժանակիր աշխատանքի։ Իշխող դասակարգին հաջողվում է որոշ չափով նվազ միջոցառումներով ճնշել «բորբորիտոն» և «ժծդնյա» աղանդավորների շարժումները, բայց ոչ հիմնովին։

Իշխող դասակարգի կողմից «բորբորիտոն» և «ժծդնյա» անվանումները համանիշներ էին դիտվել «վավաշոտ», «սրոսնիկ», «զարդելի», «պիղծ» որակումներին։ Այդ որակումներն աղանդավորների հասցեին, նրանց դեմ կազմակերպված պայքարի դիմքերից մեկն է եղել՝ մի հանգամանք, որ ոչնչացրել է այն ամենը, ինչ կարող էր հիշեցնել այդ ներքին շարժումները։ Այդ շարժումների մասին միայն հատ ու կտոր տեղեկություններ են հասել մեզ նրանց հակառակորդների կողմից։ Համաձայն եղած տվյալների՝ «բորբորիտոն» և «ժծդնյա» աղանդավորները պայքարել են եկեղեցու ֆեոդալական դասակարգային շահագործման, ձեռների և ճնշավորական կյանքի դեմ։ Ասել է՝ «երկնային արքայությանը» հակադրել են երկրային տանելի պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը։ Իսկ այդ բանի համար համարձակ գործելը դարձրել են իրենց նշանաբանը։

Աղանդավորներն իրենց ծրագիրն իրականացնելու համար

[1] Մ. Խորենացի, գիրք Գ., գլ. ԾԵ։

[2] Տես «Կանոնագիրք հայոց»։ Շահապիվանի կանոնները՝ «ժծդնից ապանդի մասին ԾԲ և Ի կանոնները»։

դիմել են բռնի միջոցների գործադրման, առաջ են բերել «անկարգություններ», նպատակ ունենալով հարուստների ունեցվածքը հավասար բաժանել, գործադրելով քրիստոնեական սոցիալական կոմունիզմի սկզբունքները։ Անկասկած ինչպես ֆեոդալական դասակարգն ուժեղ պայքար էր մղում նրանց դեմ, բայց քանի որ պարսկական ճնշումներն ավելի անտանելի չափերի էին հասել նույն 440-ական թվականներին, Դենշապուհի աշխարհաքաղաքական հետևանքով, երկրի բոլոր սոցիալական խավերը միասին դուրս են գալիս արտաքին ճնշողի դեմ և այս անգամ կռիվը ընդունում է պայքարի այլ ուղի՝ առանալով «ժողովրդական ազատագրական պատերազմների»-ի բնույթ։

Դենշապուհը սակ միայն աշխարհագրեր կատարող չէր, այլև արքունիքի կողմից նշանակված մի նոր պաշտոնյա, որը պետք է հսկեր Հայաստանում հայ մարզպանի գործունեությանը, իսկ այս փաստը ցույց է տալիս, որ արքունիքն այնքան էլ վստահություն չուներ վասակի վրա, որպես արքունի պաշտոնյայի։ Դենշապուհը միաժամանակ խնդիր ուներ հակոզությունն ամենալու նաև կրոնական գործերի վրա և ամրաճանապարհ տարածել զրադաշտական կրոնը։ Տիզբոնի արքունիքի վարած այդ քաղաքականությունը Հայաստանում խոր դժգոհություն է առաջ բերում ժողովրդի մեջ ընդհանրապես և

449 թվին հոների դեմ տարած հաղթանակից հետո Պարսկաստանն իր զորքերը հետ է քաշում երկրի խորքը, թողնելով պահակազոր Ֆերբևնդում և Գանձակում, որովհետև հոների վտանգը հեռացել էր պարսկական սահմաններից և երկիրը հյուսիսարևելյան կողմերից ապահովված էր նրանց ասպատակություններից։ Հոների դեմ մղած կռիվների ժամանակ վերաշինված է Դերբենդի նշանավոր ամրությունը։ Այդ նոր հաղթանակներից Տիզբոնի արքունիքը ձեռնամուխ է լինում իր վարչական ծրագրի իրագործմանը քրիստոնյա հպատակ բոլոր երկրներում և առաջին հերթին Հայաստանում։

XI. 449 Թ. ԿՐՈՆԱՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ ԵՎ ՏԻԶԲՈՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՏՅՈՒՄԸ

Հավկերտ II-ը նախքան կրոնափոխության առաջարկ անելը, ինչպես նշել ենք վերևում, հալածանք է սկսում պարս-

կական բանակում եղած քրիստոնյա զորքերի դեմ։ Նրանց արգելվում է վերադառնալ իրենց երկրները, սպանում են նրանց զորավարներին։ Հայ, վրաց և աղվանից գնդերը փաստորեն ընկել էին ծուղակի մեջ։ Սակայն, չնայած այդ դաժան հալածանքներին, այնուամենայնիվ քրիստոնյա զորքերն ըմբոստանում էին պարսիկների դեմ. Հազկերտի հրամանով ավելի են խստացնում նրանց նկատմամբ գործադրվող պատիժները։ Սակայն տեսնելով, որ նման միջոցառումներով հնարավոր չէ քրիստոնյա զորքերին ընդունել տալ զրադաշտական կրոնն ու օրենքները, այդ գնդերը ցրում և ուղարկում են հեռավոր վայրեր, ըստ որում ենթարկելով նրանց քաղցի և անլուր զրկանքների, պահում են նաև հսկողության տակ։

Քուշանների դեմ տարած վերջին հաղթական պատերազմները, ինչպես նշել ենք, տևել են ուենում 449 թվի ամառը։ Դրանից հետո, Տիզբոնի արքունիքն անվերապահորեն սկսում է գործադրել իրանիզացիայի իր քաղաքականությունը հպատակ քրիստոնյա երկրներում և առաջին հերթին Հայաստանում։ Պարսիկների հալածանքները Հայաստանում գնալով ազգային ու կրոնական բնույթ են ստանում և տևում են մինչև 450 թվի ձմեռը։ Հայ ժողովուրդը 449—450 թ. թ. տապալալի մի շրջան է ապրում։ Իր հաղթանակներով շլացած Հազկերտ թագավորը, պարսկական ռազմատենչ ազնվականության ներկայացուցիչ Միհրներսեհի, մոբեդանդ ժոզերի, գլխավոր մոգպետի և պարսկական ավազանու թելադրանքով 449 թվի վերջին կրոնափոխության առաջարկ է անում հպատակ քրիստոնյա բոլոր երկրներին և անխտիր պահանջում է, որ իր հպատակները ընդունեն պարսկական օրենքները, կենցաղը, զրադաշտական կրոնը և պաշտեն արևն ու կրակը։

Թագավորական հրովարտակին կից Միհրներսեհն ու մոգպետն ուղարկում են նաև զրադաշտական կրոնի էության բացատրագիրը, որով պարզաբանում են և բացատրում պարսից կրոնի առավելությունները և մերժում են քրիստոնեությունը, որպես կրոն։ Կրոնափոխության առաջարկը սրում է մարզպանական Հայաստանի ընդհանուր այն դժգոհությունը, որ սկսվել և խոր արմատներ էր ձգել դեռևս Դենշապուհի վարած քաղաքականությունից հետո։ Իսկ այդ քաղաքականությունից դժգոհում էին

մինչև անգամ պարսկական օրիենտացիա ունեցող նախարարները, որոնց գլուխը 5-րդ դարի կեսին կանգնած էր ժամանակի ամենաազդեցիկ դեմքերից մեկը՝ Մյունյաց Վասակ իշխանը, որն ինչպես ասել ենք, 441 թվից վարում էր երկրի մարզպանության պաշտոնը։ Նա մոտեցել էր այն քաղաքական հոսանքին, որը ձգտում էր վերականգնել երկրի անկախությունը, իսկ այդ հոսանքի գլուխը կանգնած էր երկրի սպարապետ, զորքերի հրամանատար, տաղանդավոր զորավար Վարդան Մամիկոնյանը, մի մարդ, որ ստացված էր երկրի անկախության գաղափարով և հանդիսանում էր 5-րդ դարի հայ նշանավոր դեմքերից մեկը։

449 թվի դեկտեմբերին Տիզբոնի արքունիքի հրովարտակին պատասխանելու համար մեծամեծ նախարարների հավանությամբ,[1] տանուտերների հրամանով,[2] մարզպանի թույլտվությամբ և կաթողիկոսի կարգադրությամբ ժողով են հրավիրում հակառակ Դենշապուհի կամքի։ Եղիշեի ասելով, ժողովը տեղի է ունեցել «ի Թագաւորանիստ քաղաքն Արտաշատ»[3], իսկ Ղազար Փարպեցին ժողովի տեղը ցույց չի տալիս։ Հայ գրականության մեջ կղել է այն կարծիքը,[4] որ իբր թե դրանից մոտ 200 տարի առաջ Արտաշատը դադարել էր մայրաքաղաք լինելուց։ Եղիշեի ժամ եղած Արտաշատ մայրաքաղաքի հիշատակությունը համարում էին զրչագրական սխալ և նրա տեղը դնում էին Վաղարշապատը, որպես մայրաքաղաք, որը միաժամանակ հանդիսանում էր եկեղեցական կենտրոն և կաթողիկոսության աթոռանիստ։ Այս կարծիքը ճիշտ չէ, Արտաշատը մինչև 5-րդ դարի վերջին քառորդը եղել է Հայաստանի գլխավոր մայրաքաղաքը և վարչական կենտրոնը։ Որ Արտաշատն այդպիսին է եղել մինչև 5-րդ դարի վերջը, դա երևում է այն փաստից, որ 481 թվին Վահան Մամիկոնյանը, տեսնելով ապստամբության ժամանակ, Հայաստանի գլխավորած ապստամբության ժամանակ, Հայաստանի նկատմամբ Պարսկաստանի ունեցած վերաբերմունքը, ասում է Վարդան Աւարայրնասցին, այնտեղից է փախչում[5] Պարսկաստան, իսկ թե Տիզբոնակերտը և թե մանավանդ

1 Եղիշէ, էջ 38։
2 Ղազար Փարպեցի, էջ 91։
3 Եղիշէ, էջ 38։
4 Օրմանյան, «Ազգապատում», Ա հատոր, էջ 348։
5 Փարպեցի, էջ 265։

վաղարշապատը, չնայած, որ եղել են արքայանիստ քաղաքներ և հայ թագավորները հաճախ իրենց պահերը տեղափոխել են վերահիշյալ քաղաքները, այնուամենայնիվ նրանք գլխավոր մայրաքաղաք չեն հանդիսացել. այդպիսին եղել է Արտաշատը։

Արտաշատի ժողովրդի քննվելիք թղթերի մասին տարբեր տեղեկություն են տալիս Եղիշեն և Ղազար Փարպեցին։ Սակայն նրանց տված տարբեր տեղեկությունները լրացնում են մեկը մյուսին։ Ըստ Եղիշեի՝ Արտաշատի ժողովրդի քննության է ըստ ժամ Մխիթարեանի բացատրական նամակը, իսկ ըստ Ղազար Փարպեցու՝ թագավորի հրամանը։ Ղազար Փարպեցու պատմության այս խնդրում ավելի շուտ ապացին ու պատմական է, իսկ Եղիշեի մոտ ուժեղ է կրոնական կողմը։ Այդ պատճառով էլ մեկի մոտ առաջնությունը տրվել է թագավորի հրամանին, իսկ մյուսի մոտ Մխիթարեանի կրոնական բացատրագրին։ Դրանից էլ երևում է, որ թագավորի հրամանի հետ զուգընթաց, Մխիթարեանը, մոգպետի հետ միասին, կրոնական բացատրական նամակ է ուղարկել Հայաստան, որի մեջ ցույց է տվել ըստ պահանջի կրոնի էությունը. «Բայց ես մտածելով, Արյաց աշխարհի մոգերից, մեծամեծներից և ուրիշ իմաստուն ավագ մարդկանցից տեղեկանալով, որ թագավորության իշխանության տակ գտնվող ամեն մեկ մարդուց օգուտ և հպատակություն են վայելում, այնպես էլ պարտավոր ենք նրանց բոլորի հոգու փրկության մասին ևս հոգ տանել. և եթե հանկարծ մենք ծուլանանք և անհոգ գտնվենք, մեր օրենքներից տեղեկացնենք, որ սահմաններից ծանր պատիժներ կսպասենք...։ Այս պատճառով մեր ճշմարիտ և արդար հավատքի վարդապետությունը գրել տվի և ուղարկեցի ձեզ, և կամենում ենք, որ ինչպես դուք մեր տերության օգտակար ու սիրելի եք, այնպես էլ մեր ճշմարիտ և ուղիղ հավատքն ուսանեք և ընդունեք ու չպաշտեք մի այնպիսի հավատք, որն ատելի է մեզ և հայտնի է թե ոտք է և անօգուտ։ Արդ, լսեք մեր հրամանը, կատարեք և սիրով հանձն առեք և ամենևին բնավ մեր երկյուղ, Այլև այս մեղքն էլ մենք ուզենք, որ ձեր սխալ օրենքները հրաժարեցնենք գրել և ուղարկել մեզ...», «Իսկ իմ ըստ մտաց ածեալ, ի մոգուցն և յայլ իմաստուն և յաւագ մարդկանէ Արեաց աշխարհիս տեղեկացեալ, թէ որ միանգամ ընդ իշխանութեամբ մերոյ թագաւորութեանս են, որպէս օգտիւք և այլ

հպատակությամբ վայելեմք ի նոցանէ՝ ևս առավել պարտիմք ընդ փրկութիւն և ընդ դէպ ամենայնում հոգւոց հոգալ և գտանել. և եթէ յանկարծ ծուլացեալ գտանիմք յայսպիսի մեծ յոգոյութենէ, տեղեկացաք յօրինաց մերոց, թէ ծանր պատուհաս կրելոց եմք յաստուածոցն...։ Վասն որոյ և զօրէնս մեր գտոյգ և զարդար գրեցաք ի տուաք բերել առ ձեզ (ընդգծումը մերն է։ Հ. Հ.) և կամիմք, եթէ որպէս դուք օգտակար աշխարհ էք և մեր սիրելի, զմեր արփիօք զարդար և զիշիւ օրէնս ուսանիջիք և ունէիք, և չպաշտէիք զայնպիսի օրէնս, որ ամենայնում մեզ յայտնի են, թէ սուտ են և անօգուտ։ Արդ՝ լուեալ ձեր զմեր հրամանադ՝ կամաւ և սիրով յանձն առէք, և բնաւ ամենևիւն զմիտս ընդ այլ ինչ մի տանիք։ Այլ և այս կամ եղև մեզ, զի ևս կարծեցեալ զձեր օրէնսդ առ մեզ գրել հրամայեցաք ձեզ...»։[1]

Հաղկեթի ուղարկած այս հրովարտակից, որ բերում է Ղազար Փարպեցին, պարզ երևում է, որ նա գրել է ավել և ուղարկել Հայաստան նաև մի այլ նամակ, որի մեջ բացատրված է եղել պարտականի կրոնի հիմունքները։ Ահա այս բացատրական նամակն է, որ որոշ լայնությամբ բերում է Եղիշեն իր պատմության մեջ և ցույց է տալիս որպես պաշտոնական գրություն (տե՛ս Եղիշե, էջ 33—36)։ Կարծում ենք, որ այդ երկու գրությունները էլ, թե Հաղկեթի հրովարտակը և թե նրան կից ուղարկած կրոնական բացատրագիրը Արտաշատի ժողովի քննության նյութ են դարձել, որոնցից առաջինը բերում է Ղազար Փարպեցին, իսկ երկրորդը՝ Եղիշեն։ Այդպիսով, պատմիչների տված ու բերած տեղեկությունները լրացնում են մեկը մյուսին և ավելի ամբողջացնում ու հավաստի դարձնում պատմական փաստերը։

Երկու պատմիչներն էլ ժողովի զեկավարը համարում են Հովսեփ կաթողիկոսին, իսկ դա ցույց է տալիս, որ Արշակունյաց թագավորության անկումից հետո, երկրի ընդհանուր գործերի աշխարհիկ և հոգևոր մխացյալ ժողովների զեկավարությունը կատարում էր կաթողիկոսը, որովհետև ինչպես ցույց ենք տվել, Հայկական թագավորության վերացումից հետո եկեղեցին հանդի-

[1] Փարպեցի, էջ 89—90։

ռանում էր ցաք ու ցրիվ և կենտրոնախույս տրամադրություն ունեցող ֆեոդալների համախմբողը։

Արտաշատի ժողովին մասնակցում են, ըստ Ղազար Փարպեցու՝ 18 մեծամեծ իշխաններ, 17 եպիսկոպոս, Հովսեփ կաթողիկոսը, ավագ տանուտերները, ավագ սեպուհներ, բարեպաշտ եպիսկոպոսներ և ավագ քահանաներ։ Փարպեցին անուն առ անուն հիշում է բոլոր իշխաններին, եպիսկոպոսներին և մի շարք քահանաների։[1]

Իսկ Եղիշեն տալիս է միմիայն ժողովին մասնակցած աչքի ընկնող հոգևորականների անունները։[2] Եթե հետևելու լինենք Եղիշեին, պետք է եզրակացնել, որ Արտաշատի ժողովին մասնակցում էին միմիայն հոգևորականները։ Այստեղ արդեն պատմության հավատի աղբյուրը հանդիսանում է Փարպեցու աշխատությունը, որ իրավացի կերպով Արտաշատի ժողովի դեկավարությունը և առաջնությունը տալիս է նախարարներին, և պարզ է, որ հարցը լուծողը նախարարներն էին և ոչ թե հոգևորականները։

Արտաշատի ժողովը, որի դեկավար ոգին, ըստ իս հանդիսանում էր Վարդանը, ըստ Ղազար Փարպեցու մերժում է Թադավորի հրամանը և հետևյալ պատասխանն է ուղարկում.

«Մեր հնազարեա ու լուսավոր օրենքների մեջ գրված է, որ ձեզ դատարկ բան ու պատավական խոսքեր են թվում, թե ծառաներ, հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ինչպես Աստծուն և մենք մեր կարողության չափ նախ, վախենալով մեր օրենքների հրամանից և ապա ձեր մեծ թագավորության ժամանակս դրել ենք չէ թե միայն մարդկային երկյուղով չար ծառաների պես առերես ծառայել ձեզ, այլ իսկապես կամքով և հոժարությամբ ձեր կամքն ու հրամանն ամեն բանում կատարել և ծառայել ձեզ ոչ միայն մեր ուշեցածը ծախելով, այլև մեր և մեր որդոց արյունը թափելով։ Բայց մեր հոգիների դյուտի կամ կորուստի հոգսը թող ամենևին ձեզ չնեղացնի և՛ պարզևի և պատժի համար, որ դուք աստվածներից վախենում եք. հոգիներին սիրելու պատճառով, ինչպես դուք եք ասում...։

Բայց ձեր օրենքների համար, որ գրել և ուղարկել էիք մեզ, մենք բնավ չենք կարող լսել ձեզ...։ Բայց մեր հավատից միայն այս թող ձեզ հայտնի լինի, որ տարերքներին՝ արեգակին, լուսնին, հողմերին և կրակին ծառայել չենք կարող, ինչպես դուք...»։

«Ի լուսաւոր և ի ճշմարիտ օրէնս մեր գրեալ է, որ ձեզ ընդունայնութիւն և բարբանջմունք թուին, թէ «Ծառայք, հնազանդ լերուք մարմնաւոր տերանց ձերոց՝ որպէս Աստուծոյ». և մեր ըստ կարի զօրութեան մերոյ երկուցեալ նախ ի հրամանէ օրինաց մերոց, և ապա ի ձեր ի մեծ թագաւորութենէդ, եղեալ ի ժամ՝ ոչ միայն ըստ երկիւղի մարդկան, որպէս առ ականէ, ըստ օրինի չար ծառայից ծառայել ձեզ, այլ կամաւ իսկ և յօժարութեամբ՝ յամենայնի զձեր կամս և զհրաման կատարել. և ծառայել ձեզ ոչ միայն կարասւոյ ծախիւք, այլ և զարիւն անձանց մերոց և որդւոց ի վերայ ձեր պնել։ Բայց վասն հոգւոց անձանց մերոց և որդւոյ ի վերայ ձեր պնել՝ մերոց դիւաւ և կամ կորստեան՝ զձեզ ինչ ամենևին այդ հոգ մի՛ աշխատեսցէ։ Եւ վասն պարզևի և պատուհասի որ երկնչիդ յաստուածոցդ յաղագս մերոյ ոգւոց, որպէս ասէքդ՝ ի մեր անձինս և յոգիս հասցէ յԱստուծոյ օգուտն այն և կամ պատիժ»։

«Այլ վասն օրինաց ձերոց, զոր գրեալ էր և տուեալ բերել առ մեզ՝ մեք ձեզ ոչ երբէք լսեմք...։ Բայց այս ևեթ ձեզ ի հաւաստոյս մերոյ յայտնի լիցի, զի տարերց ոչ ծառայեմք, արեգական և լուսնի, հողմոց և կրակի, որպէս դուք...»։[1]

Նախարարների այս պաշտոնական պատասխանի հետ Տիզբոն են ուղարկում նաև քրիստոնեական կրոնի ընդարձակ բացատրությունը, որ գտնում ենք Եղիշեի մոտ։[2] Նրա ասելով, այդ բացատրությունը գրել են միայն հոգևորականները։ Բայց մեր խորին համոզումով Արտաշատի ժողովը է հանձնարարել նրանց, ի պատասխան Միհրներսեհի զրադաշտական կրոնի բացատրագրին, գրել քրիստոնեական կրոնի բացատրագիրը։ Իսկ այդ նամակի ձևակերպելու և խմբագրելու գործում, անշուշտ, մեծ է եղել պատմագիր Եղիշեի դերը։ Հենց այդ կրոնական բացատրագիրն է, որ նա բնրել է իր պատմության մեջ, որպես պաշտոնական պատասխան Թագավորի հրովարտակին։ Այդպիսով, Փարպեցու մոտ եղած վավերագրերը Հաղկերտ Թագավորի ուղարկած հրովար-

[1] Փարպեցի, էջ 91—92։
[2] Եղիշէ, էջ 37—38։

[1] Փարպեցի, էջ 93—95։
[2] Եղիշէ, էջ 38—53։

307—7

տակն է ու նրա պատասխանը, որ հայ նախարարների կողմից ուղարկվել է Տիզբոն։

Ինչ վերաբերում է Եղիշեի մոտ եղած նամակներին, Միհրներսեհի և մոգպետի գրած ղրադաշտական կրոնի բացատրությունն է և նրա պատասխանը, որ Արտաշատի ժողովի հանձնաբարությամբ հայ հոգևորականները գրել են և ուղարկել Տիզբոն։ Հետևաբար այդ տեսակետից մենք երկու պատմիչների մոտ հակասություն չենք գտնում, ինչպես տեսնում են այդ Օրմանյանը[1] և ուրիշները։ Ընդհակառակը, իրենց հաղորդած վկայություններով մեր երկու պատմիչները ամբողջացնում են 451 թվի պատերազմի պատմության նախապրյալների մասին եղած տեղեկությունները։

Հաղկերտի՝ կրոնափոխության առաջարկը մերժում են նաև վրացիները, աղվանները և այլ քրիստոնյա ժողովուրդները, իսկ դա ցույց է տալիս, որ այդ ժողովուրդների մեջ ընդհանուր կռիվ է եղել և իրար հետ նախօրոք խորհրդակցել են։

Հաղկերտ II-ը մերժողական պատասխաններ ստանալուց հետո, խորհրդի է հրավիրում պարսկական ավագանուն, Միհրներսեհին և մոգպետին ու նրանց առաջ է դնում հայերի և մյուս ժողովուրդների պատասխանները։ Միհրներսեհն ու մոգպետը, որպես պարսկական ռազմատենչ ազնվականների ու մոգերի ներկայացուցիչներ, պահանջում էին թագավորից, ինչ դնով էլ լինի, հայերին կրոնափոխել և Հայաստանը ձուլել Իրանի հետ ու դարձնել այն Պարսկաստանին ենթակա նահանգներից մեկը։ Նրանք իրենց այդ պահանջը հիմնավորում էին Պարսկաստանի համար Հայաստանի ունեցած քաղաքական, ռազմական և տնտեսական խոշոր նշանակությամբ և այն կարևոր դերով, որ Հայաստանը խաղում էր պարսկա-բյուզանդական կռիվների ընթացքում։

Սակայն չնայած ժողովականների ցասկոտ տրամադրություններին, այնուամենայնիվ, Հաղկերտը հաշվի է առնում, որ երեք երկրները մեծ են մերժել իր պահանջը և այն, որ այդ մերժման դործում եղել է արտաքին միջամտություն, այսինքն որ բյուզանդական կայսր Թեոդոս Փոքրը խոստումներ տված կլիներ քրիստոնյաներին օգնելու համար, իսկ այդ երևում է Հաղկերտի հետևյալ խոսքերից «... Թե որ նրանք ոչ մի տեղից

[1] Մ. Օրմանյան, «Ազգապատում», հատոր Ա., էջ 350—351։

չունենային օգնության հույս՝ այդպիսի խոսք իրենց միտքը չեին անդամ էին վստահել...», «եթե ոչ ուստեք ունեին նոքա յայլուստ օգնականութեան յոյս՝ զայդպիսի բանդ ի միտս իսկ բերանց նկատել չէին...»[1]։ Մանավանդ, որ այդ ժամանակ լուրեր էին պատում հոների նոր արշավանքների մասին, ուստի Հաղկերտն անմիջապես խիստ միջոցների չի դիմում, այլ 450 թ. վաղ գարնանը Տիզբոն է կանչում Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի նշանավոր իշխաններին և բացատրություն պահանջում արքայական հրովարտակը մերժելու համար։

Մ. Գարագաշյանը գտնում է, որ Եղիշեի մոտ եղած նամակները պատմական չեն, այլ իրեն պատմիչի ստեղծագործություններն են։[2] Մենք հավանական և պատճառաբանված չենք գտնում Գարագաշյանի այդ տեսակետը։ Ինչպես էլ այդ նամակների բովանդակությունը խմբագրված լինի, այնուամենայնիվ, նրանց հիմքում ընկած է պատմականությունն։ Պետք է ժխտել նաև Գարագաշյանի այն տեսակետը, որ իբրև թե Հաղկերտը նպատակ չի ունեցել միանգամից բռնությամբ Հայաստանում տարածել զրադաշտական կրոնը, այլ մեղմ հնարքով[3] եթե դա ասված լինեին հոների դեմ մղած պատերազմների ժամանակ, դեռևս հասկանալի կլիներ, բայց երբ այդ տեղի է ունենում 449 թվից հետո, դա ոչ միայն հասկանալի չէ, այլև չի էլ բխում ժամանակի քաղաքական իրադրությունից։ Հաղկերտը ձգտում էր և միանգամից, և կարճ ժամանակվա ընթացքում բռնի կերպով տարածել Հայաստանում զրադաշտական կրոնը, երկիրն ենթարկել իրանիզացիայի, վերջ տալ հայ ժողովրդի գոյությանը, որ դարեր շարունակ պայքարի առարկա էր դարձել և Տիզբոնի արքունիքն ազատել այդ հոգսից։ Ճիշտ չէ նաև Գարագաշյանի այն կարծիքը, որ իբրև թե նախարարները թագավորի հրովարտակը մերժել են հոգևորականների ազդեցության տակ։ Թեև նախարարները միանգամայն կերպով չեմերժեին թագավորի առաջարկը, եթե մինչ այդ տեղի ունեցած չլիներ Դինշապուհի աշխարհագիրը և նրա վարած իրանիզացիայի քաղաքականությունը, որն առաջին հերթին վտանգում էր հենց իրենց՝ նախարարների շահերը։ Այսպիսով, կրո-

[1] Փարպեցի, էջ 96։

[2] Գարագաշյան, «Քննական պատմ. հայոց», Դ. մաս, էջ 120։

[3] Նույն տեղում, էջ 125։

նափոխութեան առաջարկն իրա նիզացիայի քաղաքականութեան մի կողմն է միայն։ Պարզ է, որ նախարարները միաբերան պիտի մերժեին այդ առաջարկը, որն առաջին հերթին խիստ էր ի-րենց և ապա հետո հոգևորականների ու ժողովրդի շահերին։

XII. ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՏԻԶՐՈՆ ՄԵԿՆԵԼՆ ՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Երբ Տիզբոնի արքունիքը Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի դեկավարներին Պարսկաստան է կանչում թագավորի առաջարկը մերժելու կապակցությամբ բացատրություն տալու համար, այն ժամանակ այդ երեք երկրների իշխանները բանակցությունների մեջ են մտնում իրար հետ իրենց հետագա անելիքների մասին միասնական եղրակացության գալու համար։ Նրանք որոշում են հաստատ մնալ իրենց վճռի վրա և չհրաժարվել իրենց տված պատասխանից։ Նրանք պայմանավորվում են իրար չդավաճանելու և միասնաբար գործելու, որի համար նրանք երդվում են ավետարանի վրա, ապա կնքում են պայմանագիր և նոր մեկնում Տիզբոն, որովհետև եթե չգնային, նրանց այդ քայլը կդիտվեր որպես անհնազանդություն, իսկ իրենք պատերազմի համար դեռ պատրաստ չէին։ Այդ մասին զրած նամակ հետաքրքիր տեղեկություն է տալիս Ղազար Փարպեցին. «Երբ որ այս հրովարտակը հասավ Հայոց, Վրաց և Աղվանից երկրները, կարդացին նրանց առաջ, երբ որ բոլորին այդպիսի շռայլով կանչեցին, խմացան, իսկույն ևեթ հավաքվեցան նրա պատճառը...։

Այնուհետև երեք երկրները (Հայոց, Վրաց և Աղվանից) պատգամավորներ ուղարկեցին միմյանց մոտ, ուխտ կապեցին և ավետարանի վրա խիստ երդումով հաստատեցին։ Նրանք մտածում էին, եթե չգնան՝ կդիտվի որպես ապստամբություն, իսկ գնալու համար էլ չվոխվում ու տարակուսում էին, երբեմն ավելի լավ համարելով...»։

«Ես հավատալ հրովարտակս այս յերեսին յաշխարհն, Հայոց, Վրաց և Աղուանից, և ընթերցեալ առաջին նոցա, իբրև լուան զայնպիսի սոխով զկոչումն զամենեցունց՝ անդէն և անդ զի-տացին զպատճառս իրացն...

Պատգամավորությունն այնուհետև երեքին աշխարհն առ միմեանս առնէին և ուխտադրություիւնս, և բազում երդմամբ Աւետարանին հաստատէին։ Ուրէքին՝ դէսերթալն որպէս ապստամբութիւն կարծեցուցանել, և զերթալն խոովեալք տարակուսէին. հաշուէին զերթալն լավագոյն...»[1]

Ղազար Փարպեցու այս մեջբերումը կրկին անգամ գալիս է հաստատելու, որ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի ժողովուրդները 5-րդ դարի կեսին միասնաբար էին ջանում պարսկական լուծը թոթափելու։

Հաղկերտը Հայաստանից անուն առ անուն հետևյալ տասը իշխաններին է[2] կանչում Տիզբոն բացատրության՝ 1) Վասակ Սյունի—մարզպան, 2) Ներշապուհ Արծրունի, 3) Արտակ Ռշտունի, 4) Գաղիշո Խորխոռունի, 5) Վարդան Մամիկոնյան-սպարապետ, 6) Արտակ Մոկացի, 7) Մանեկ Ամատունեցի, 8) Վահան Ամատունի, 9) Գյուտ Վահևունի, 10) Շմավոն Անձևացի։ Վրաստանից կանչված իշխաններից հայտնի էր Աշուշա Բդեշխը,[3] որ Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայակի քենակալն էր և Վարդանի փեսայի հայրը, որին նա շատ էր հարգում։

Երեք երկրների նախարարները վաղ գարնան ճանապարհ ընկնելով՝ Տիզբոն են հասնում 450 թ. ապրիլի 15-ին, իրենց հետ տանելով միաժամանակ քրիստոնեական դնդերը։ Տիզբոնում նախարարներին պատշաճ ընդունելություն ցույց չի տրվում, ինչպես այդ կատարվում էր առաջ հայոց նախարարների և այրուձիու նկատմամբ։ Սառն ընդունելությունը նշան էր, որ Թագավորը վրդովված էր նախարարների ուղարկած հանդուգն պատասխանների համար։ Պարսկաստան մնկնած նախարարներին, նախնական հարցաքննությունից հետո առանց ժամանակ կորցնելու, անմիջապես ներկայացնում են ատյան, ի քննություն։ Ատյանն անձամբ վարում էր ինքը Հազկերտ II-ը, որ Եղիշեի ասելով զալարվում էր որպես օձ, մռնչում էր որպես պարսան։ Առաջին հերթին քննության են ենթարկում հայ նախարարներին, ապա մյուսներին։ Թագավորը հաստատ մնալով իր որոշման վրա, պնդում է, որ անպայման պետք է ընդունեն իր առաջարկը, հակառակ դեպքում, եթե շարունակեն համառել և մերժել իր խնդիրը, այն ժամանակ կենթարկվեն, նախ՝ տան-

1 Փարպեցի, էջ 96—97։
2 Եղիշե, էջ 54—55։
3 Փարպեցի, էջ 98։

ջանքների, աքսորի ու բանտարկության, կզրկվին իրենց կալվածքներից, իրավունքներից ու պաշտոններից, ապա վերջում էլ ղորք կմացնեն նրանց երկրները և հրի ու սրի միջոցով կատրածեն զրադաշտական կրոնը։

Նախարարները տեսնելով, որ իրենց հաժառության չեն կարող ազդել գաղտնացած Թագավորի վրա, ժամանակ են պահանջում մտածելու։ Հազկերտը մի քանի օր ժամանակ տալով արձակում է տոյանը։ Պետք է ավելացնենք, որ տոյանի հարցաքննության ընթացքում նախարարների անունից համարձակ պատասխանով հանդես է գալիս սպարապետ Վարդան Մամիկոնյանը։ Նախարարները մի քանի օր անընդհատ խորհրդակցելով գալիս են այն եզրակացության, որ ծուղակի մեջ են ընկել և հնարավոր չէ ազատվել առանց զիջումների, իսկ հաժառելը կարող է դրության ավելի բարդացնել և դրդել Հազկերտին զորք մղել Հայաստան, Վրաստան և Աղվանք ու իր ժառդած ծրագիրը կենսագործել, օգտվելով հայրենիքից իշխանների և նրանց զորագնդերի բացակայությունից։

Այդ հանգամանքները հաշվի առնելով, երեք երկրների նախարարները որոշում են առերես ընդունել Թագավորի առաջարկը, վերադառնալ իրենց տեղերը և կազմակերպել ապստամբություն։

Պատմիչների ասելով, Վարդան Մամիկոնյանը չէր համաձայնում այդ որոշմանը, բայց նախարարների թախանձանքներին զիջելով ընդունում է նրանց առաջարկը։[1] Բայց ավելի հավանական է թվում մեզ, որ Հազկերտի առաջարկն առերես ընդունելու անհրաժեշտությունն ինքը՝ սպարապետը առաջ քաշած լիներ, որովհետև երկրի ու ժողովրդի մասին ամենից շատ նա էր մտածում։ Ուստի և նա չէր կարող բռնել համառության ճանապարհը, բանտարկված կամ աքսորված մնալ Պարսկաստանում, Թողնելով իր ժողովրդին բախտի քմահաճույքին։ Եթե Վարդանը հերոսի նման զորքը առնում է Ալբայքի դաշտը և քաջաբար զոհվում իր հայրենիքի համար, պարզ է, որ նա առաջինը պիտի լիներ Թագավորին մոլորեցնողը և իր որոշումով երեք երկրների նախարարներին տաներ իր հետևից։ Դրանով էլ հենց նա որպես երկրի զեկավար, որպես զորավար ավելի մեծ է դառնում, որովհետև նա իսկապես կարողանում է ըմբռնել դրության լուրջությունը և ամենազժվար պրոբլեմից դուրս գալու համար ելք գտնել, և այդ ելքը կլիներ Տիգրոնի արքունիքում Թագավորին խաբելու և այդպիսով ազատով հեռանալու քաղաքականությունը։ Որ Վարդանն ինքն է առաջ քաշել Թագավորին խաբելու քաղաքականությունը, առերես ընդունել է նրա առաջարկը իրենց երկրների ու ժողովուրդների փրկության համար, դա երևում է Ալվարայրի ճակատամարտի ժամանակ արտասանած նրա ճառի հետևյալ կտորից.

«Մանավանդ որ ես տակավին չեմ մոռացել իմ և ձեր ոմանց գործերը, որ ժամանակին անօրեն իշխանին խաբեցինք, ինչպես մի անպիտան երեխա, նրա ամբարիշտության կամքը կատարելով առերես, բայց Տերը ինքն իմանում է, թե մեր սրտում ինչպես նրանից անրաժանելի էինք մնացել։ Այս գործ ինքներդ դիտեք, որ մենք հնարք էինք գտնում մեր սիրելիներին մեծ նեղությունից ազատելու...»։

«Մանավանդ դի անմոռաց է ինձ, յիշելով զիմ և զոմանց ի ձէնջ, ի ժամանակին՝ զի զանօրէնն իշխան խաբեցաք պատրեցաք իրրև զմանուկ մի տղայ անպիտան. իբր այն եթէ ի վեցաք իրրև զմանուկ մի տղայ անպիտան. իբր այն եթէ ի վերին երևոյս զկամս նորա ամբարշտութեանն կատարեցաք. բայց ի ծածուկ զնորհուրդս Տէր ինքնին վկայէ մեզ, որպէս անքակ կացեալ եմք ի նմանէ։ Զոր և դուք ինքնին իսկ գիտէք, վասն սիրելեաց մերոց որ ի մեծի նեղութեան էին՝ հնարս խնդրէաք վասն յանդորը հանելոյ...»։[1]

Եղիշեի այս հատվածը պարզ ու որոշ ցույց է տալիս, որ Թագավորին խաբելու որոշումն առաջ է քաշել ինքը՝ Վարդան սպարապետը և մյուս իշխաններին տարել իր հետևից, եթե ոչ, նա կտրուկ կերպով չէր ասի, որ խաբեցինք անօրեն իշխանին։ Իսկ թե ինչո՞ւ պատմիչներն այդ չեն վերագրում սպարապետին և ընդհակառակն աշխատել են ցույց տալ, որ նա միշտ կառչած է մնացել կրոնին, ապա դրա նպատակն էր Վարդանին քրիստոնեական կրոնի սկզբունքի աննահանջ պաշտպան հռչակելը ու ժողովրդի մեջ այդ համոզմունք զարթնեցնելը։

Երբ հայտնի է դառնում Թագավորին նախարարների որոշումը՝ կրոնափոխ լինելու մասին, նա նորից է ընդունում նրանց, և վարում է սիրաշահելու քաղաքականություն, բայց չվստահե-

[1] Փարպեցի, էջ 110—111։

[1] Եղիշե, էջ 132։

լով իշխաններին, իր մոտ որպես պատանդ է պահում վրաց Աշուշա բդեշխին, որը Վարդանի մտերիմն էր և դրանով կաշկանդում էր նրա ձեռն ու ոտը և Վասակ Սյունեցու երկու որդիներին՝ Բարիկին և Ամիրնեներսեհին։ Դրանով էլ պարսից բռնակալն իր ձեռքն էր պահում նաև Վասակին։ Ապա նախարարներին տալով մեծամեծ նվերներ, ազատ է արձակում նրանց դեպի իրենց երկրները։ Եղիշեի մոտ այս դեպքը չի հիշատակվում։

Ըստ Եղիշեի, Հազկերտը հայ նախարարների հետ Հայաստան է ուղարկում 700 մոգ և մի մեծ զորք։ Մոգերն որոշում են վեց ամսվա ընթացքում կատարել իրենց միտքան, այսինքն վերացնել քրիստոնեությունը Հայաստանից, երկրում ամենուրեք տարածել զրադաշտական կրոն, փակել բոլոր եկեղեցիները ու վանքերը, ցրել հոգևորականներին ու կույսերին, կառուցել տաճարներ, նշանակել համապատասխան մոգեր, մոգության օրենքների համաձայն բացել պարսկական դպրոցներ, կըրթելով բոլոր երեխաներին, տղամարդկանց ու կանանց կրակապաշտության, այսինքն զրադաշտական ոգով, ժողնել բազմակնության օրենքը և այլն։

Դեռևս առեղծ «ուրացող» նախարարները Պարսկաստանում էին, երբ հայկական զորագնդի մեջ եղած քահանաները լուր են ուղարկում Հայաստան և հայտնում իշխանների ուրացության մասին։ Ուրացության լուրը ռումբի նման պայթում է Հայաստանում. այն ժամանակ նոր է զգացվում լուրջ վտանգը, որ իրոք պարսիկներն արդեն որոշ չափով հասած են լինում իրենց հետապնդած նպատակներին։ Սակայն չնայած դրան, հուսահատություն չի տիրում, երկրում մնացած իշխանները հոգևորականների հետ միասին անցնում են դժոխ ժողովրդի դերը և ձեռնամուխ են լինում ապստամբության գործին։ Նրանք մարդիկ են ուղարկում երկրի գավառները, գյուղերն ու ավանները, ժողովրդին կազմակերպելու և դուրս բերելու պարսիկների և «ուրացող» նախարարների դեմ։ Այդ գործում շատ շուտով աչքի է ընկնում Ղևոնդ Երեցը, 5-րդ դարի նվիրված հայրենասերը և քրիստոնյա առաքյալը։ Նրանք միաժամանակ որոշում են, որ երկրի ազատության համար չկնայել ոչինչ, ընդունում են որպես սկզբունք՝ հայրը չպետք է խնայի իր որդուն, որդին հորը, եղբայրը եղբորը, կինը ամուսնուն—լոզունգը։ Այդպիսով, մինչ «ուրացող» նախարարների վերադարձը Հայաստան, ողջ

երկիրն արդեն պատրաստ էր ապստամբության—պատերազմի։ Հոգևորականների գործունեությունն ու ազդեցությունն այնքան է ուժեղանում, որ նրանք ապստամբությանը տալիս են կրոնական բնույթ և քրիստոնեությունը դարձնում պայքարի դրոշ։

Նախարարները, երբ վերադառնում են Հայաստան, իրենց դիմաց արդեն տեսնում են կազմակերպված մի ամբողջ ժողովուրդ։ Այդ հանգամանքը շատ վատ ազդեցություն է թողնում «ուրացող» նախարարների վրա, որոնք մոգերի հետ բանակ են դնում Ծաղկոտն գավառի (այժմյան Դիադինի շրջան) Անգեղ ավանում։ Նախարարներին ցույց տրված դիմադրությունն առանձնապես վատ է ազդում սպարապետ Վարդան Մամիկոնյանի վրա, որովհետև ամբողջ երկիրը նրան հայրենիքի փրկաչն էր համարում։ Իսկ քանի որ անմիջապես պատերազմի դիմելը դժվար էր, որովհետև պատրաստված չէին, իսկ երկրում մնալն էլ իր համար շատ ծանր էր, ուստի Վարդանն իր եղբայր Հմայակի հետ որոշում են մի առ ժամանակ հեռանալ Պարսկաստանից և անցնել Բյուզանդական Հայաստան ու սպասել մինչև գործերի հետագա հաջող ընթացքը։ Վարդանն իր այդ որոշումով ոչ թե խուսափում է պարսիկների հետ ընդհարվելուց, այլ ժամանակ շահելու նպատակով աշխատում է հեռանալ Արեվելյան Հայաստանից հետագայում պարսիկների դեմ կազմակերպվելիք ճակատամարտը ղեկավարելու նպատակով։

Վարդանը, երբ պատրաստվում ու վերցնում է իր ընտանիքը, զորքը և մեկնում է դեպի Արևմտյան Հայաստան, այն ժամանակ մյուս նախարարներն ստիպված են լինում քաշվել իրենց կալվածքները և նույնպես հարմար առիթի սպասել, իսկ հրապարակի վրա վճռաորոշն մնում են Վասակը և հոգևորականությունը։ Սպարապետի հեռանալը Հայաստանից շատ վատ տպավորություն է թողնում առաջին հերթին ժողովրդի վրա, որովհետև նա ղեկավարում էր իր նշանավոր զորավարից, որը կարող էր նեղ պրությունից դուրս բերել իրեն և երկրորդ, նրա տոհմի հեռացումով երկիրը զրկվում էր Մամիկոնյան նախարարության քաջարի զորքերից, որոնք քանի-քանի անգամ ջարդել էին Հայաստանը հաճախակի ներխուժած պարսկական հորդաներին։

Վարդանի հեռանալն Արևելյան Հայաստանից ծանր էր նաև Վասակի համար, որովհետև Վարդանի և նրա զորքի բացակայությամբ իրոք թուլանում էր երկրի ռազմական ուժը, և այլևս

հնարավոր չէր լինում պարսկական ճնշումներին դիմադրել։ Վասակը մինչ այդ հավատարիմ էր երկրին և հույս ուներ, որ Պարսկաստանի դեմ կազմակերպված ապստամբությունն ավելի պիտի բարձրացներ նրա հեղինակությունը երկրում։ Այդ պատճառով նա իր մոտ է հրավիրում աչքի ընկնող իշխաններին, հոգևորականներին և Հովսեփ կաթողիկոսին ու խորհրդակցելով նրանց հետ որոշում են պատգամավոր ուղարկել Վարդանի մոտից և սպիտակ նրան ետ վերադառնալու։ Մարզպանն ու իշխանները լավ գիտեին, որ Հայաստանում ոչ մի բան գլուխ չէր գա առանց Վարդան սպարապետի։ Վասակը, նախարարները և հոգևորականությունը կազմում են պատգամավորություն, որի կազմի մեջ մտնում էր նաև Ղևոնդ Երեցը, նրան տրվում է բոլորի կողմից գրված, սորագրված ու կնքված նամակներ՝ հասցեագրված Վարդանին։ Պատգամավորները հետապնդելով Վարդանին, հասնում են նրան Բագրեվանդ գավառի Արմանա գյուղում, որտեղ նա իր ընտանիքով հանգստանում էր։ Սպարապետը կարդալով նամակները, ասում է. «Ես ոչ՝ որ փախուցեալս եմք՝ յերկիւղէ, ոք ինչ սրոյ կարծիցէ զայս գործիցէ...»[1]։ Ապա ոտիկված է լինում ետ վերադառնալ։ Դրանով նա փորձում է հայ նախարարներին, թե նրանք որքանով հաստատ են մնացել իրենց որոշման վրա և ինչպես են համախմբված իր շուրջը։ Վարդանը Արժանայից վերադառնալով, որոշում է 450—451 թ. ձմեռը բնակություն հաստատել Շահապիվանում և այնտեղից հետևել կատարվող դեպքերի ընթացքին։

Անգեղ գյուղաքաղաքում բնակություն հաստատող մոգերը 25 օր սպասելուց հետո փորձ են անում նույն գյուղի եկեղեցին քանդել և վերածել սարսուրանի, բայց եկեղեցական արարողություն կատարող Ղևոնդ Երեցը ժողովրդի գլուխն անցած հարձակվում է մոգերի վրա, ծեծելով ու ջարդելով ետ է քշում։ Ժողովրդի այդ ցասումից հուսահատված մոգպետը մեղադրում է Վասակին, որը շտապ մեկնել էր կոնֆլիկտի վայրը։ Մոգպետը մեղավոր է համարում Վասակին, որ նա ինչպես հարկն է չէր ծանոթացրել Թագավորին ըմբոստ ժողովրդի սրամտությանը և պահանջում էր անվիջապես նամակ գրել Հազկերտին, որպեսզի նա ետ կանգնի իր վարած քաղաքականությունից,

[1] Փարպեցի, էջ 124։

մանավանդ որ պրոպաշտական կրոնի հոգևոր պետն գործում էր, որ հայ նախարարները խաբել են Թագավորին, իսկ ինքը վորձով համոզվում է, որ երբեք Հայաստանում պարսկական կրոնը տարածել չի կարելի։ Նա ասում է. «Թող գրեմ և ցույց տամ մեծ Թագավորին, որ ձեռք վերցնի այսպիսի առաջարկությունից, որովհետև, ես ինչպես տեսա, եթե նույնիսկ մեր ասվածները մեզ օգնելու դեն, հնար չի լինում մոգության օրենքը տարածել Հայաստանում»։ «Թող գրեմ և ցուցանեմ մեծ Թագավորին, զի ի բաց Թողացուցանէ զայսպիսի իրաց առաջարկութիւնն. զի եթէ և ինքեանք ասուածքն սկսցին յօդնութիւն, չէ հնար օրինացս մոգութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն. որպէս գիտեք առ գիւրաքանչիւրն ասելոցդ»[1]։

Չնայած մոգպետի այդ պնդումներին, այնուամենայնիվ Վասակ Մարզպանը հաշվի առնելով, որ հայերը պարսիկներին դիմադրելու անհրաժեշտ պատրաստություն դեռ չեն տեսել, իսկ Թագավորին աված խոստումից ետ կանգնելը կդիմավոր որպես պետական դավաճանություն և ինքը խիստ պատժի կենթարկվեր, այդ պատճառով համոզում է մոգպետին, որ կարելի է մի քանի ժամանակ լռել մինչև որ ժողովուրդը հանդարտվի։ Վասակն անմիջապես Սյունիքից զորք է բերում, բարձրացած ապստամբական տրամադրությունները որոշ ժամանակ կասեցնելու համար, նա ոտիկում է ժողովրդին և նախարարներին առայժմ լռել։ Մոգպետն օգտվելով դրանից, հնարավորություն է ստանում իր մոգերին ցրել Հայաստանի տարբեր գավառներ, ժողովրդի մեջ տարածել զրադաշտական կրոնը և գանձել արքունի հարկերը։ Սակայն հայ հոգևորականները, որոնք չենթարկվեցին մոգպետի կարգադրությանը, իրենց քարոզներով արգելում են ժողովրդին զրադաշտական կրոնավորներին իրենց հետապնդած նպատակներին հասնելու գործում։

Այդպիսով, Հայաստանը 450 թվին գտնվում էր ալեկոծված դրության մեջ։ Չնայած հայ հոգևորականների միջոցառումներին, այնուամենայնիվ մոգպետն օգտվելով նպաստավոր հանգամանքներից, որ առայժմ նախարարները գտնվում են սպասողական դրության մեջ, ընդլայնում է իր գործունեությունը Հայաստանում։

[1] Եղիշե, էջ 75—76։

Սպարապետ Վարդան Մամիկոնյանը, որն սպասում էր Շահապիվանում, մի առ ժամանակ նույնպես ակտիվ գործողությունների չի դիմում։ Նա մտածում էր գործի հաջող ընթացքի, վրաց Աշուշա բդեշխի և Վասակի երկու որդիների փրկության մասին, որոնք պատանդ էին մնացել Տիզբոնում, բայց Վահան Ամատունին, որը Դենշապուհի կողմից և մարզպանի հանձնարարությամբ հեռացվել էր հաղարպետության պաշտոնից, և այդ պատճառով խիստ թշնամացել էր Վասակին, հոգևորականների հետ միասին հանգիստ չէր տալիս Վարդանին, և պահանջում էր՝ օր առաջ բարձրացնել պատերազմի դրոշը։ Մանավանդ որ ժողովրդական մասսաները մի քանի գավառներում արդեն առաջ էին բերել ապստամբական շարժումներ և իրենց կատարած գործողություններով սատիպում էին իշխաններին հանդես գալ և ղեկավարել այդ շարժումները։ Երկրի այդ ծանր դրությունը հաշվի առնելով, սպարապետ Վարդան Մամիկոնյանը վերջ է տալիս սպասողական դրությանը, մարզպանից գաղտնի 450 թվի օգոստոսին իր մոտ ժողովի է հրավիրում իշխաններին, ուր վերջնականապես որոշում է ընդունվում մերժել Հաղկերտի հրամանը, ետ կանգնել առերես «ուրացությունից» և բարձրացնել ազատագրական պատերազմի դրոշը, Սասանյան բռնակալների լուծը թոթափելու համար։

Այդ որոշումից հետո իշխանները իրենց զորամասերով տակ եղած զորքը բաժանում են մի քանի մասերի, նշանակում են պահապան գնդեր երկրի տարբեր գավառներում ժողովրդի համար գործունեությունը անձամբ ստուգելու համար, իսկ ինքը Վարդանն իր գնդով գնում է Անդեղ գյուղաքաղաքի կողմերը, Պարսկաստանից սպասվող զորքերին դիմադրելու համար։ Բայց չնայած դրան, Վարդանի կողմից գլխավորված զորքերը դեռևս հարձակման չեն անցնում Հայաստանում եղած պարսիկների վրա և նորից սպասողական դիրք են բռնում, մի կողմից մարզպան Վասակին պարսիկների դեմ դուրս բերելու, իսկ մյուս կողմից պատերազմին ավելի լավ պատրաստվելու նպատակով։

Մինչդեռ իշխանները դանդաղում էին իրենց գործունեության մեջ, Սահակ-Մեսրոպյան աշակերտները՝ Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ, ավելի ակտիվ գործունեություն էին

հանդես բերում ժողովրդական մասսաներին պարսկական լծի դեմ դուրս բերելու գործում։

Վարդան սպարապետը, չնայած ազատագրական պատերազմի վճիռն ընդունել էր մի շարք աչքի ընկնող իշխանների և հոգևորականների հետ, սակայն, ինչպես նշել ենք, առանց Վասակ մարզպանի պատերազմ սկսելը նա հնարավոր չէր գտնում։ Առհասարակ Մամիկոնյան տերը, չնայած իր գինվորական տաղանդին, հեղինակությանն ու ազդեցությանը, միշտ հաշվի էր առնում մարզպանին որպես լուրջ պետական գործչի և չէր ուզում երկրի ռազմական ուժը չլատել, առաջ բերել ներքին երկպառակություններ ու խռովություններ, որոնցից միայն կարող էր օգտվել Շապուհն։ Նա ձգտում էր, որքան կարելի է, Հայաստանի բոլոր կռվող ուժերը միացյալ ճակատով դուրս բերել Սասանյան դարբասանակների դեմ։ Այդ պատճառով նա մի քանի աչքի ընկնող նախարարների հետ մեկնում է Արտաշատ, որտեղ գտնվում էր մարզպան Վասակը, իրենց որոշումը նրան հայտնելու, որպես երկրի ընդհանուր կառավարչի։ Վասակը թեև դանդաղում է, բայց ժողովրդի ցասման առաջ ստիպված է լինում գնալ, և նույնիսկ անցնում է ապստամբության գլուխը։

Մոպսեստն իմանալով նախարարների որոշումն ապստամբության մասին և հայ ժողովրդի ապստամբական շարժումների ուժեղացումը, իր բոլոր ուժերը հավաքում ու կենտրոնացնում է Բագրեւանդ գավառի Զարեհավան քաղաքի մոտ, որպես ապահով վայրի, սակայն ապստամբ հայերը նշանակված օրը հարձակվում են պարսիկ ժոգերի ու նրանց պահապան զորքերի վրա, մի մասին կոտորում, իսկ մի մասին էլ ցրում ու դուրս քշում Հայաստանից, իսկ մյուս մասին ժոգերի հետ միասին դուրս քշում են Հայաստանից ու պարզում անկախության դրոշը։ Հայերը միաժամանակ քանդում են պարսիկների կառուցած բոլոր ամրոցները և նրանց տեղն անխտիր վերաշինում են ու գլորցները և նրանց տեղն անխտիր վերաշինում վանքեր ու եկեղեցիներ և բացում հայկական գլորցներ։ Այդ բոլորը ղորամասի կազմակերպած գործն էր։

Հայերի այս հաջողությունները ոգևորում են ապստամբությունը կազմակերպողներին, հատկապես Վարդանին։ Վերջինս վճռում է, որ հասել է ժամը՝ անկախության դրոշը պարզելու և Սասանյան բռնակալների լուծը թոթափելու համար։ Հայերը Հայաստանը պարսիկներից մաքրելուց հետո կազմակերպում են նորանոր զորամասեր՝ Տիգրոնի հետագա հարձակումներին պատրաստվելու։ Նրանք միաժամանակ դրսից օգնություն խնդրելու նպատակով Գնունյաց տոհմի Առոմ իշխանին,[1] պատգամավոր են ուղարկում Բյուզանդիա Թեոդոս երկրորդ կայսրի մոտ օգնություն խնդրելու, որից և առանում են դրական պատասխան։ Թե Ղազար Փարպեցին և թե Եղիշեն միաբերան վկայում են, որ Թեոդոս կայսրը խոստացել էր հայերին օգնել։ Սակայն դեսպանը դեռ Հայաստան չվերադարձած, այսինքն ճանապարհին եղած ժամանակ, Թեոդոս կայսրը 450 թվի հուլիսի 20-ին[2] մահանում է, բայց չնայած դրան, հայ դեսպանն ապստամբներին ուրախության լուր է բերում, որ «քրիստոնյա» կայսրը խոստանում է օգնել։ Հայերի ապստամբությունը ձեռնտու էր նաև կայսրության համար, որովհետև Բյուզանդիան ևս մեծամիտ ձևացան էր կրել ազիսոր Սասանյանների կողմից. հենց այդ հանգամանքն էլ ստիպում է Թեոդոս Փոքրին խոստումներ անել հայերին։

Վասակը որպես ապստամբության դեկավարներից մեկը՝ դարձյալ հանդես է բերում դանդաղկոտություն և որոշ տատանումներ։ Դրա համար նա անշուշտ ուներ իր պատճառները։ Մարզպանն զգում էր պատերազմի ծանրությունը, նախ որպես պետական պաշտոնյա—մարզպան, որ պատասխանատվություն էր կրում Տիգրոնի արքունիքի առջև, և երկրորդ, նրա երկու որդիները, ինչպես ասել ենք վերևում, որպես պատանդ գտնվում էին Պարսկաստանում։ Նա իբրև հայր և ծնող պետք է մտածեր իր որդիների կյանքի փրկության մասին։ Այդ էլ պատճառը, որ սկզբում Վարդանը նույնպես չէր արտայայտում ապստամբությունը։

Սակայն քաղաքական դեպքերը հատկանշական էին արագությամբ և հնարավորություն չէին տալիս Վասակին ձգձգելու ապստամբական պայքարը։ Ազվանից կաթողիկոսն ու հազարա-

[1] Նույնի, էջ 90։
[2] Հ. Գևոցեր, էջ 25։

պետը լուր են բերում,[1] որ Միհրներսեհի հրամանով պարսկական մի զորաբանակ Սեպուհ զորավարի գլխավորությամբ 300 մոգերի հետ[2] Դերբենդից հարձակվել է Ազվանքի վրա և երկիրը հրի ու սրի մատնել։ Համաձայն երեք երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ազվանքի միջև կնքված նախնական համաձայնության, նրանք պետք է օգնեին իրար։ Դրա համար էլ ազվանները օգնություն էին խնդրում Հայաստանից։ Իսկ դա նորից գալիս է հաստատելու, որ իրոք 5-րդ դարում Սասանյան իմպերիայի դեմ Անդրկովկասի երեք ժողովուրդները միասին են հանդես եկել։ Եվ ուշագրավն այն է, որ ազվանները գալիս են և օգնություն են խնդրում հայերից ճիշտ այնպիսի մի ժամանակ, երբ Վարդանն իր կայացրած վճռին ապստամբության մասին համաձայնեցնելու էր եկել Արտաշատ, Վասակ մարզպանի մոտ։ Վասակն ապստամբության մասին համաձայնության գալով Վարդանի և մի շարք իշխանների հետ որոշում են օգնել ազվաններին։ Առաջարկվում է Վարդանին մի զորաբանակով օգնության գնալ։ Սպարապետը չի մերժում այդ առաջարկը, բայց պահանջում է նոր գրություններ գրել Բյուզանդական կայսրությունից օգնություն խնդրելու և նոր դեսպանություն ուղարկել, որովհետև օգնություն խոստացող կայսրը մահացել էր և նրա տեղ նստել էր Մարկիանոսը։ Վարդանի առաջարկն ընդունվում է։ Վասակ մարզպանը պատրաստել է տալիս մի շարք նամակներ ու գրություններ, ուղղված Աղձնիքի, Անձևացյաց, Ծոփքի, Հաշտյանքի և Եկեղյաց գավառների բյուզանդական կառավարիչներին, Արևմտյան Հայաստանի հայ իշխաններին, ինչպես նաև Անտիոքի կուսակալ Անատոլ զորավարին։ Հատուկ գրություն է խմբագրում և ուղարկում նոր կայսր Մարկիանոսին (450—467), որը հաջորդել էր Թեոդոս Փոքրին։ Այդ բոլոր գրությունները հրվրի անունից սարքագրում և կնքում է Վասակ մարզպանը։ Կազմվում է նոր դեսպանություն, որի մեջ մտնում են աղեկիկ ու վստահելի իշխաններ՝ Վահան Ամատունուն, Հայակ Մամիկոնյանը (զորապետի եղբայրը) և Մհերուժան Արծրունուն[3] (Ազանի եղբայրը)։

[1] Նույնի, էջ 90—91։
[2] «Մովսեսի Կաղանկատուացւոյ պատմութիւն Աղուանից աշխարհի», գլ. Բ, Թիֆլիս, 1913։
[3] Ղազար Փարպեցի, էջ 134։

Վերոհիշյալ դեպքերը տեղի էին ունենում 450 թվի սեպտեմբեր ամսին։ Այդ դեպքերը միաժամանակ ցույց են տալիս, որ Վասակն ապստամբությունը կազմակերպելու գործում աչքի ընկնող դեր է կատարել։ Նա սկզբից, որպես զավաճան հանդես չի եկել, ինչպես մինչև այժմ կարծել է գրեթե ուսումնասիրողների մեծ մասը։ Իսկ եթե նա հենց սկզբից Պարսկաստանի կողմը լիներ, երբեք Վարդանի նման ազդեցիկ դեմքին չէր փորձի վերադարձնել Հայաստան և իր գլխին պատուհաս դարձնի, իր անունից դրությունները ու նամակները չէր գրի կայսրին և Արևմտյան Հայաստանի հայ իշխաններին։ Այս բոլոր փաստերը կրկին անգամ գալիս են հաստատելու, որ Վասակը սկզբում զավաճան չի եղել նա կողմնակից է եղել ապստամբությանը։

Բյուզանդական կայսրությունից օգնություն պահանջելու խնդրում Եղիշեն և Ղազար Փարպեցին իրար լրացնում են որոշ տեղեկություններ տալով։ Ըստ Եղիշեի, համապատասխան գրություններով Բյուզանդիա որպես դեսպան սկզբում ուղարկում են Ատոմ Գնունունուն. «Այն ժամանակ մեծ նախարարներից մեկին, որ Գնունյաց ցեղից էր, Ատոմ անունով, շտապ ուղարկեցին արևմտյան երկիրը...»

Եվ երբ ուղարկած պատգամավորը ներկայացավ մեծ թագավորին և կարդացին Հայոց աշխարհի ազատչանց նամակը, բերել ավելցին նույնպես շատ հին հիշատակարանների մատյաններ և գտան նրանց մեջ նույն հաստատության ուխտը։

Եվ մինչդեռ երանելի Թեոդոս կայսրը խորհուրդ էր հարցնում բոլոր սենատորներից և կամենում էր մի լավագույն հնար գտնել և մեծ հոժարությունով հոգս էր քաշում, որ արևելյան եկեղեցիները չկործանվեն հեթանոսներից. նույն միջոցին հանկարծ մահը վրա հասնելով կարեց նրա կյանքի թելը և շատ մեծ արգելք եղավ օգնության գործին։ «Յայնմ ժամանակի ոմն ի մեծ նախարարացն ի տոհմէն Գնունեաց՝ Ատոմ, ճեպով առաքեցին յերկիրն արևմտից...»

Եւ իբրև յանդիման եղեն մեծի թագաւորին, և ընթերցան զգիրս պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանս նախնեացն, բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան՝ որ զնոյն ուխտ հաստատութեան ի նոսա գտանէին։

Եւ մինչդեռ երանելին Թէոդոս հարցանէր զամենայն սինկ-

կլիտոսն, և ինարս իրացն կամէր գտանել խաղաղութեամբ, և հոգ տանէր մեծաւ յօժարութեամբ՝ զի մի եկեղեցիքն արևելից յափշտակեսցին յանօրէնն հեթանոսացն, ի նմին ժամանակի անդէն վազվազակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա, և կարի չար խափանումն լինէր գործոյն օգնականութեանն»։[1]

Այս տեղեկությունից պարզ երևում է, որ Թեոդոս Փոքրը խոստացել էր օգնել հայերին և Ատոմ Գնունին անմիջապես Հայաստան վերադառնալով հայտնում է իրողությունը։ Վարդան ազարտախտի պահանջը, ըստ որի նոր դեսպանություն պիտի ուղարկվեր Բյուզանդիայից օգնություն խնդրելու համար, պետք է տեղի ունենար Ատոմի վերադարձից հետո միայն։ Ատոմի դեսպանությունը կատարվել է նախարարների Տիզբոնից վերադառնալուց անմիջապես հետո, այսինքն հունիսի վերջին, Անգեղի դեպքերից հետո, իսկ վերադարձը Հայաստան պետք է դնել օդոստոսին կամ սեպտեմբերի սկզբին։ Այդպիսով, առնվազն նրա Բյուզանդիա գնալ-գալը պետք է հաշվենք երկու ամսից ոչ պակաս։ Իսկ Վահանի, Հմայակի և Մեհրուժանի դեսպանությունը, որ կատարվում է Վարդանի պահանջով, տեղի է ունեցել Ատոմ Գնունուց հետո, որովհետև Թեոդոս Փոքրի հաջորդ Մարկիանոս կայսրը չէր ուզում օգնություն ցույց տալ, բայց ավելի հավանական է, որ Ատոմը նոր կայսրի հետ ոչ մի բանակցություն չի վարել։ Ուստի կարելի էր ըգացվում նոր դեսպանություն ուղարկել Բյուզանդիա կայսրից օգնություն խնդրելու։ Առաջին դեսպանությունը, որը պիտի բանակցություններ մեջ մտներ նոր կայսրի հետ և նրանից օգնություն խնդրեր։ Հետևաբար Ղազար Փարպեցու աշխատության ԽԱ. գլխում եղած տեղեկությունը, որ վերոհիշյալ դեսպանությունը տեսել է Թեոդոս Փոքրին,[2] ճիշտ լինել չի կարող, որովհետև նա վաղուց մահացել էր։ Վարդանի դեսպանությունը կարող էր տեսնել և բանակցություններ վարել միմիայն Մարկիանոս կայսրի հետ։ Այսպիսով, երկու պատվիրակությունների միջև մոտ լրացնելով ավելի ամբողջացնում են պատմությունը, այսինքն, հայերը 450 թվի հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում երկու անգամ դեսպանություն են ուղարկել Բյուզանդիա կայսրից օգնություն խնդրելու։

1 Եղիշէ, 90—93։

2 Փարպեցի, էջ 156—157։

ջինը, դա Առում Դնունու առաքելությունն էր, որի մասին տեղեկացնում է Եղիշեն և որի մասին Փարպեցին ոչ մի տեղեկություն չի տալիս, իսկ երկրորդը՝ Վահանին, Հմայակի և Մհերուժանի դեսպանությունն է, որի մասին տեղեկություն է տալիս Ղազար Փարպեցին և այդ մասին ոչ մի տեղեկություն չի տալիս Եղիշեն։

Հայերը Բյուզանդիա և Արևմտյան Հայաստան գրություններ ու նամակներ և դեսպանություն ուղարկելուց հետո, բանակը, որի բոլոր զորամասերը Պարսկաստանից վերադարձել էին, բաժանում են երեք մասի։ Առաջին մասը հանձնում են Ներշապուհ Արծրունուն, որը պիտի պաշտպաններ երկրի սահմանները պարսիկների հարձակումներից Ատրպատականի կողմից, երկրորդը տրվում է սպարապետ Վարդան Մամիկոնյանին, որը վրաստանի սահմաններով պիտի դնար աղվաններին օգնության, իսկ երրորդը հանձնարարվում է Վասակ մարզպանին, որը պիտի պահպաններ երկրի ներքին կարգը և Հայաստանի սահմաններն արևվելյան կողմից։ Այդ բոլոր գործողությունները կատարելուց հետո, Հովսեփ կաթողիկոսի ներկայությամբ նախարարները երդվում են ավետարանի վրա իրենց ուխտին հաստատ մնալու համար։ Ապա Վարդան սպարապետը վերցնում է իրեն հանձնարարված զորագունդը և մեկնում է դեպի Աղվանք, իսկ Ներշապուհն էլ իր զորաբանակով շարժվում է դեպի Ատրպատականի սահմանը. երկրի ներսում մնում է միայն Վասակը։

XIII. ԱՂՎԱՆԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՎԱՍԱԿ ՄԱՐԶՊԱՆԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական զորագունդը Վարդանի գլխավորությամբ Վրաստանի վրայով մտնում է Աղվանք և պատերազմական գործողություն է սկսում պարսկական զորաբանակի դեմ, որը մտել էր Աղվանքը, զրավել ամբողջ երկիրը և այնտեղ տարածում էր զրադաշտական կրոնը։ Բուռն պատերազմ է կռվում Գանձակ Խազևատ գյուղի մոտ (այժմյան Ագստաֆի մոտերքը), Վարդանն իր զորաբանակով պատրաստվում է գլխավոր ճակատամարտի։ Նա իր զորքը բաժանում է երեք թևի։ Ա՛ջ թևը հանձնում է իր փեսա Արշավիր Կամսարականին, օգնական նշանակելով նրան Մուշ Դիմաքսյանին. ձախ թևը տալիս է Տորին Տորթոռունուն, օգնականը Հմայակ Դիմաքսյան, իսկ կենտրոնը վերցնում է ինքը։ Այդպիսով կազմելով ռազմաճակատը, քաջ սպարապետը ընդունում է ճակատամարտը, թվով շատ ավելի գիրազանց թշնամու հետ։ Բայց հակառակորդը շատ շուտով տեղի է տալիս հայերի կատաղի զրոհներին առաջ, որոնք աջ ու ձախ թևերից հարվածելով ու խուճապի մատնելով թշնամուն, ցրում են պարսից բանակը և մեծ ավար զրավում։ Խուճապի մատնված պարսիկներն աշխատում էին անցնել Քուռ գետը և փրկվել, բայց այստեղ վրա է հասնում Արշավիր Կամսարականն իր հմուտ նետաձիգներով և բազմաթիվ պարսիկների գետն է գլորում։ Թշնամին խուճապահար նահանջում է։ Այդ հաղթանակն ոգևորում է ոչ միայն հայերին, այլև աղվաններին, որոնք օգնության են հասնում և արագացնում պարսկական զորաբանակի վերջնական ջախջախումը։

Քուռի ճակատամարտից հետո սպարապետ Վարդանը տավարացնելով իր բանակը, ցրիվ եկած աղվանների զորքերով անցնում է Քուռը և առաջ շարժվելով շարունակում է ջարդել հակառակորդին ու հետզհետե գրավում Աղվանից աշխարհի այն բնակավայրերն ու ամրոցները, քաղաքներն ու գյուղերը, որոնք գրաված էին պարսիկների ձեռքում։ Հայերն անխոնջ կոտորում էին ժողովրդին և քար ու քանդ անում նրանց կառուցած ամրուշանները (կրակատները)։ Այնուհետև Աղվանից իշխանները, որոնք իրենց զորագնդերով պարսիկներից վախենալով ամրացել էին երկրի անառիկ վայրերում և Կովկասյան լեռների կիրճերում, դուրս են գալիս իրենց ամրացած վայրերից ու ամենուրեք միանում հայկական բանակին, իսկ վերջինս շարժվում է առաջ, անցնում Կուրի ձախակողմյան վտակները և հասնում մինչև Դերբենդի կիրճը, քանդում ամրությունները և կապ հաստատում հոների հետ։

Սպարապետ Վարդան Մամիկոնյանը մեծամեծ նվերներով հաստուկ դեսպան է ուղարկում հոների մոտ, նրանց հետ կնքում է պայմանագիր հայերին, վրացիներին և աղվաններին օգնելու ու միասնաբար դուրս գալու Սասանյան Պարսկաստանի դեմ։ Վարդան Մամիկոնյանը իր այդ խնամատուն քայլով պարսիկներին հետապնդությունը դնում է լուրջ վտանգի տակ, որովհետև հոները կարող էին ուժ օգնություն ցույց տալ ամբողջ ժողո-

վուրդներին։ Այդ դաշինքի մասին Փարպեցին գրում է. «Նրան (Վահան Ամատունի) զնապան ուղարկեցին Հոնաց աշխարհը և ուրիշ տեղեր տեղերում գտնվող մարդկանց մոտ, որ նրանց հետ ժողովրդով միաբանել իրենց հետ։ Նրանք հոժարությամբ հանձն առան և երդումով հաստատեցին օգնել»։

«...Եւ զնոյն արձակէին զնապան ի Հոնս և առ այլ ամրականս տեղեացն, զորս հաւանեցուսցէ միաբանել նորա գնդաւ. որոց կամաւ և յօժարութեամբ զօգնելն յանձն առեալ՝ հաստատէին երդմամբ»։[1]

Մինչ Վարդանն Ամատնում հերոսաբար կռվում էր պարսիկների դեմ և բարեկամության սերտ կապ էր ստեղծում հոների հետ, այդ նույն ժամանակաշրջանում, այսինքն 450 թվի տեղեկություններից մինչև նոյեմբերը ամիսը, միանգամայն այլ դրություն էր տիրում Հայաստանում և Բյուզանդիայում։

Բյուզանդական կայսրության վիճակը 5-րդ դարի կեսին դնալով վատանում է, հոները իրենց արշավանքներով խիստ նեղում էին նրանց, նոր կայսր Մարկիանոսը ստիպված է լինում զբաղվել միմիայն այդ հարցով։ Այդ պատճառով մերժում է հայերի առաջարկը, իր պետության արևելյան սահմաններում չցանկանալով նոր թշնամի ստեղծել իր համար ի դեմս Սասանյան Պարսկաստանի։ Մարկիանոսը ոչ միայն չի ցանկանում օգնել հայերին, որ խոստացել էր նրա նախորդ Թեոդոս Փոքրը, այլև դեսպանություն է ուղարկում Տիզբոն և վերահաստատել է տալիս նախկիններում կնքված դաշնագրությունները։ Եվ միաժամանակ հայտնում է Փոքր Ասիայի հունական բոլոր կառավարիչներին, Անատոլ զորավարին, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի հայ իշխաններին, որ նրանցից ոչ ոք օգնություն ցույց չպետք է տա հայերին։ Հայաստանի դեսպանությունը ձեռնունայն է վերադառնում։

Բյուզանդական կայսրության մերժումը նոր բնույթ է ստանում Վասակ մարզպանի գործունեության ընթացքի մեջ։ Նա որ մինչ այդ ժառանգված էր ապստամբության կազմակերպման գործով, կայսրության կողմից մերժողական պատասխան ստանալուց հետո, ետ է կանգնում պատերազմից, գտնելով, որ

[1] Փարպեցի, էջ 140—141։

առանց Բյուզանդիայի օգնության հնարավոր չէ կռվել, որովհետև պատերազմը բացի ձնասից, ոչ մի օգուտ չի բերի երկրի համար։ Վասակ մարզպանի այս քայլը երբեք արդարացվել չի կարող անաչառ պատմության դատաստանի առաջ։ Եթե նա այդ քայլը կատարեր ապստամբությունից առաջ, դեռևս արդարացման շանսեր գտնվեին, բայց քանի որ ինքն ամբողջ երկիրը մյուս նախարարների և հոգևորականների հետ ոտքի էր հանել Սասանյան դաժան բռնակալության դեմ, ուստի և դրանից ետ կանգնելը կատարյալ դավաճանություն էր, մանավանդ որ երկրի ռազմական ուժը բաժանել էր երեք մասի և երկուսը փաստորեն գտնվում էին կենտրոնից շատ հեռու, Դերբենդում և Աղբրպատականի սահմաններում։ Այդպիսի պայմաններում հանկարծ փոխել մտադրությունը և ետ կանգնել ապստամբությունից, դա դավաճանություն էր, գործին թիկունքից հարված տալ էր նշանակում։

Վասակի այդ դավաճանական քայլը երկրի ներսում առաջ է բերում ուժեղ դիմադրություն։ Սակայն նա իր տրամադրության տակ ուներ զորք, կարողանում էր գտնել համախոհ իշխաններ, և առաջ տանել իր տեսակետը։ Նա ոչ միայն ետ էր կանգնել ապստամբությունից և մտադիր էր դեսպան ուղարկել Տիզբոն ներումն խնդրելու, այլև Տիզբոնից պահանջում էր զորք, որպեսզի առաջ տանի իրանիզացիայի քաղաքականությունը Հայաստանում։ Իր կատարած այդ քայլի մասին, առանց ժամանակ կորցնելու, հայտնում է Տիզբոնի արքունիքին և պարսկական զորավարներին ու պաշտոնյաներին. «Հաղիվ մի քանի իշխան Այրարատից հեռացել էր հայոց սպարապետ Երանելի Վարդանը, Սյունյաց Վասակ իշխանը շուտով ծածուկ դեսպան ուղարկեց պարսից հազարապետ Միհրներսեհի մոտ և իր նենգավոր խորհուրդը նամակով հայտնեց նրան։ Նույնպես նամակ գրեց խորհուրդը նամակով հայտնեց նրան։ Նույնպես նամակ գրեց Նիխորական Սերուխան և մյուս մեծամեծներին, որոնց Միհրներսեհը կարգել էր հայոց վրա...»։ «Ես չև հեռացելը, առանձը օթևանս ոչ բաղում յԱյրարատոյ երանելի սպարապետն Հայոց Վարդան՝ և իշխանն Սիւնեաց Վասակ վաղվաղակի գաղտ դեսպանս առնէր առ Միհրներսեհ հազարապետն Արեաց և զիւր նենգաւոր խորհուրդն նամակաւ ծանուցանէր նմա։ Նոյնպէս արար նամակ և առ Նիխորական Սերուխան և առ այլ աւագս,

զրոս արարեալ էր Մխիթարեանին ի վերայ Հայոց...»[1] Իսկ եղիշեն ավելի պարզ է ներկայացնում դավաճան Վասակի ընթացքը. «Ահա քանդեցի հայոց ուխտի ժիւռանութիւնը,— ասում է Վասակը,— և զորքը բաժանելով երեք կողմի վրա ուղարկեցի։ Բոլոր մյուս կողով մարդկանց, որ գտնվում էին այստեղ, ցրեցի երկրի տարբեր կողմերը։ «Ահա աւազիկ քակեցի,— ասում է Վասակը,— զմիաբանութիւն ուխտին Հայոց, և ընդ երիս կողմանս գնացեալ գնացք քակեալ բաժանեցին... Եւ զայլ ամենայն որ յայր կուսոյ յաշխարհն ասա գտանէր՝ ցանցեր ցրուեցի ընդ ամենայն միջոցս աշխարհիս»[2]

Թեև Վասակն ապստամբությունից ետ կանգնելուց հետո անմիջապես դիմում է պարսիկներին և իր կողմն է դրավում երկրի ռազմական ուժի որոշ մասը, բայց և այնպես նրա հակառակորդներն ուժեղ պայքար են ծավալում նրա դեմ։ Այդպիսով 450 թվականի ուշ աշնանը Հայաստանում պատերազմի շուրջն առաջանում է երկու քաղաքական հոսանք, որոնք ստանում են «ուխտապաններ» և «ուրացողներ» անուններ։ Այդ հոսանքներից առաջինի գլուխը կանգնում է ոտանդազավոր զորավար-ոստրան, պետ Վարդան Մամիկոնյանը, իսկ երկրորդին՝ Սյունյաց Վասակ եպիսկոպոսը։

Վասակը, չնայած իր հակառակորդների դիմադրության, նախքան Վարդանի վերադարձը իր զորքը ցրում է երկրում և ամեն կերպ աշխատում է ժողովրդին ետ կանգնեցնել ապստամբությունից և հաշտեցնել նրան պարսիկների հետ։ Վասակի կողմից անցած և երկրին դավաճանած իշխանները Վասակի անունից հայտնում էին, որ Հաղկերտը ներում է շնորհում բոլոր նրանց, ովքեր մոգերին և առհասարակ պարսիկներին կոտորել էին, եթե նրանք ետ կենան ապստամբությունից և չմասնակցեն հետագա կռիվներին, չնայած որ Հաղկերտն այդպիսի կարգադրություն և խոստում երբեք չէր արել։ Այդ ճանապարհով դավաճան Վասակին հաջողվում է որոշ չափով իր կողմը գրավել մի քանի փոստամոլ իշխանների։ Նա բոնի կերպով Հայաստանի մի շարք նախարարների ընտանիքներին իրենց բերդերից հանում և փոխադրում է Սյունիք-

1 Փարպեցի, էջ 136։

2 Նույնի, էջ 95—96։

ապա այնտեղից էլ ուղարկում է Պարսկաստան, որպես պատանդ։ Միաժամանակ Պարսկաստանից զորք է բերել տալիս, ցրում է երկրի տարբեր գավառները և պարտավորեցնում է ժողովրդին կերակրել նրանց։ Դրանով նա ավելի է ծանրացնում ժողովրդի վիճակը, որովհետև դյուղացիներն ստիպված էին ամբողջ 450—451 թ. թ. ձմեռը կերակրել պարսկական զորքերին։ Իսկ ինքը, Վասակ Սյունին, վախենալով ապստամբներից, մանավանդ Վարդանից, չնայած որ նա երբեք հույս չուներ թե ապրանալու Ավարանից երկրից կարող է ողջ նա վերադառնալ, իր թիկնապահական գնդերով Արտաշատից մեկնում է Սյունիք թողնելով Արտաշատյան աշխարհն ու երկրի մեծ մասի պաշտպանությունը պարսիկների ու իր զորքերի ձեռքը։ Այդ պայմաններում Արտաշատականի սահմանը պաշտպանող Ներշապուհ Արծրունու զորաբանակը չի կարողանում որևէ գործողության ձեռնարկել և տեղն ու տեղը կանխել գավաճան Վասակի գործունեությունը, որովհետև, եթե նա լքեր սահմանը, պարսկական զորաբանակները կարող էին ներխուժել Հայաստան և կարճ ժամանակվա ընթացքում ամեն ինչ լուծել հօգուտ իրենց։

Վասակի դավաճանության լուրը շատ շուտով հասնում է սպարապետ Վարդանին, որ լուրջ բանակցություններ էր վարում հոների հետ։ Նա Ավարանքում պատերազմական գործողություններ շարունակելու և այդ երկիրը պաշտպանելու գործը նանձնում է Վահան Ամատունուն, իսկ ինքը հայկական զորագնդով 450 թվի նոյեմբերի վերջին վերադառնում է Հայաստան, երբ արդեն Վասակ Սյունեցին Արտաշատից դնացել էր Սյունիք։ Այդպիսով, Արարատյան աշխարհը փաստորեն առանց կռվի մնում է ապստամբների ձեռքը։ Որ Վարդանն Ավարանքից Հայաստան է վերադարձել նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին, դա երևում է Եղիշեի այն պնդումից, որ նա ասում է, թե ամբողջ քաղաց ամսին—դեկտեմբերին, եպիսկոպոսներն ու քահանաները հրամայում են ժողովրդին պահք պահել և ադոթք կատարել[1]

Սպարապետ Վարդանը կարճ ժամանակվա ընթացքում վերակազմում է բանակը և անցնելով երկրին հավիտյան հայրենասերների գլուխը, պայքար է սկսում պարսիկների դեմ, Հայաստանը

1 Նույնի, էջ 103։

նրանցից մաքրելու համար։ Նա կռիվը սկսելով Հայաստանի բերդերում և ամրոցներում բուն դրած պարսկական պահակազորքերի դեմ, բոլորին ջարդում է, գրավում նրանց ամրացած վայրերը, իսկ պարսկական պարապետներին բռնում է ու բանտարկում, նրանց մի մասին էլ դուրս է քշում երկրից և Հայաստանը կրկին անդամ ազատում պարսիկներից։ Իսկ պարսկական նշանավոր իշխաններից մեկին ուղարկում է Տիզբոն, և նրա միջոցով հայտնում Հազկերտին, որ վերջինս իր բռնած գործից ետ կանգնի, որովհետև բացի ձնաս կրելուց, ոչ մի օգուտ չի կարող ստանալ։

Հազկերտը պարսկական խորամանկությամբ ապստամբ հայերին խաբելու նպատակով բանակցության մեջ է մտնում նրանց հետ, իբր թե եղած կոնֆլիկտը խաղաղ կերպով լուծելու, բայց միաժամանակ զորքեր է ուղարկում Հայաստանի և Աղվանքի սահմաններին։ Դավաճան Վասակը և Միհրներսեհ հազարապետն իրենց վրա են վերցնում պատերազմի պատրաստությունը։ Նրանք փորձ են անում հայերի, վրացիների և աղվանների միությունը քանդել, զորք են ուղարկում Դերբենդի կիրճը վերցնելու և ապստամբների կապը հոներից կտրելու։ Վերջապես այդ երեք ժողովուրդների ապստամբությունը ճնշելու համար կազմում են մի մեծ բանակ, որի հրամանատարությունը հանձնում են Մուշկան-Նխալավուրա զորավարին։ Այդ մեծ բանակի հետ Տիզբոնի արքունիքը Հայաստան է ուղարկում նաև պարսկական ճանհաղթ մատյանը դունդը և պատերազմական փղեր։ Պարսիկները փղերին հարկի դիմաց բերում էին Հնդկաստանից և փոքր հասակից մարզեցնում էին կռվի համար։ Նրանց սովորեցնում էին գինի խմել, արագ շարժվել, և նրանց կռնակներին տնակ էին շինում մարդիկների համար, որոնք այնտեղից հարվածում և նետահարում էին հակառակորդին։ Կռվի ատեն պահին հարբած փղերին թողնում էին թշնամու բանակի վրա և նրանք, իրենց երկար կնճիթներով հնձում էին հակառակորդի զորքերին այնպես, ինչպես դերանդիով խոտը։ Պատերազմական փղերը միաժամանակ հնարավորություն էին տալիս հետևակին առաջ շարժվելու։ Պատերազմական փղերի դեմ կռվելու միակ միջոցը հակափղային փոսեր փորելն ու քողարկելն էր համարվում, ճիշտ այնպես, ինչպես այժմյան հակատանկային փոսերը։ Կամ թե ճահճային տարածությունների պատերազմի բռնվելը,

որը փղերին խանգարում էր մանել կռվի մեջ։ Բացի հակափղային փոսերից, այն ժամանակվա պրիմիտիվ ռազմական տեխնիկայով, նետ ու աղեղով, նիզակով և սրով հնարավոր չէր կռվել պատերազմական փղերի դեմ։ Պարսկական զորավար Մուշկան-Նխալավուրի այդ մեծ բանակին միանում են նաև դավաճան Վասակի ու նրա կողմնակից իշխանների զորքերը՝ մոտ 34.000 հոգի։

451 թ. առաջին չորս ամիսներին հայերը, Վարդանի գլխավորությամբ, նույնպես պատերազմի արտակարգ պատրաստություն են տեսնում։ Նրանք կարգի են բերում բոլոր բերդերն ու ամրոցները, որոնք քանդվել էին պարսիկների հետ տեղի ունեցած կռիվների ժամանակ, լուր են ուղարկում երկրի չորս կողմը և բոլոր հավատարիմ իշխաններից անխտիր զորք պահանջում և բանակի թիվը աստիճանաբար հասցնում 66 հազարի։ կապ են հաստատում Վրաստանի և Աղվանքի հետ՝ միասնական պատերազմական գործողություններ ծավալելու համար։ Նորից դեպան են ուղարկում հոների մոտ և օգնություն խնդրում ու հոգևորականների միջոցով ամբողջ ժողովրդին կազմակերպում և ոգու բերում Սահակյան Պարսկաստանի դեմ։

Այդպիսով երկու կողմից էլ անհրաժեշտ մարտերի համար պատերազմի լուրջ պատրաստություն են տեսնում։

Վարդանը թեև մեծ քանակությամբ զորք է հավաքում երկրի կենտրոնում, բայց նա ստիպված է լինում մեծ մասին նորից ցրել իրենց տեղերը, և հրամայել կազմ ու պատրաստ սպասել մինչև գարնանը, որովհետև կենտրոնում դավաճան Վասակը և պարսիկներն ուսելիքի ոչ մի պաշար չէին թողել։ Այդպիսով նա հնարավորություն չի ունենում անձամբ ժարզելու իր բոլոր զորքերին։ Սպարապետն իր մոտ է պահում միայն աչքի ընկնող իշխաններին իրենց զորքերով և նրանց միջոցով մի քանի անգամ արշավանք է կատարում Սյունյաց նահանգի վրա, պրավում է մի շարք գավառներ և մեծ ձնաս հասցնում դավաճան Վասակին ու նրա երկիրը։ Այդ արշավանքներով նպատակն էր բռնագրավել կամ ոչնչացնել Սյունիքում կուտակված ռազմամթերքի և ուսելիքի պաշարները, որպեսզի նրանք չօգտագործվեն պարսիկների կողմից։ Կատարած այդ գործողություններով հետևանքով, Վարդանի հեղինակությունն ավելի է բարձրանում երկրում՝ ժողովրդի աչքում։

Վասակը 451 թ. ձմրան ընթացքում նորից փորձեր է անում ժողովրդին խաբել, որ իբր Թև Թագավորը մտադիր չի եղել հայերին ճնշել և զրադաշտական կրոն տարածել նրանց երկրում։ Դրանով նա կրկին անդամ աշխատում էր մատաչին ետ պահել իրենց ազատամարտական տրամադրություններից։ Վասակն իր նենգ քաղաքականությամբ որոշ չափով կարողանում է չլսուել հայերի ռազմական ուժը։ Նա իր հետևից տանում է տաս իշխանի, իրենց զորքերի մեծ մասի հետ։ Այսպես, օրինակ, Ռշտունյաց Արտակը, որի զորքի մեծ մասը մնում է Վարդանի կողմը, Խորխոռունյաց Գագիշոն, Վահևունյաց Գյուտը, տանց զորքի, Բագրատունյաց Տիրոցը, Ապահունյաց Մանուճը, Գաբեղյան Արտենը, Ակռո Ընձուղը, Ուրծա Ներսեհը, Պալունյաց Վարազշապուհը և մի սեպուհ էլ Ամատունյաց տոհմից Մանուն անունով և որոշ թվով էլ ազատներ։[1] Ինչպես նաև հայ Արշակունյաց շրջանից մնացած արքունի դնդերի որոշ մասը։ Վասակը, օրպես մարզպան, արքունի դնդերին ինքն էր դեկավարում և ուներ մեծ ազդեցություն նրանց վրա։ Վերոհիշյալ տաս իշխաններին, արքունի և Սյունյաց իշխանի զորքերի թիվը հասնում էր մոտավորապես 30—34 հազարի, որին գավաճան Վասակը միացնում է պարսկական բանակի հետ։ Այդ թիվը փաստորեն կազմում էր Հայաստանի ընդհանուր զորքի 35 տոկոսը։ Վասակի գավաճանության պատճառով պատերազմից ետ է կանգնում նաև Սպվանքը, որն այնքան ակտիվ կերպով պայքարում էր Սասանյան Պարսկաստանի դեմ։

Սակայն, չնայած Վասակի նենգ ու խորամանկ քաղաքականությանը, այնուամենայնիվ երկրի իշխանների մեծ մասն իրենց ռազմական ուժերով հավատարիմ են մնում Վարդանին և պճռում են կռվել իրենց երկրի անկախության համար, մոռանալով անհատական շահն ու անձնական փառքը, որ այդ Վասակից պիտի ստանային հայրենիքին դավաճանելու հետևանքով։ Հավատարիմ իշխաններից հայտնի են Ներսեհ Արծրունին, Խորեն Խորխոռունին, Արտակ Պալունին, Վահան Ամատունին, Թաթուլ Դիմաքսյանը, Արշավիր Արշարունին, Շմավոն Անձևացին, Տաճատ Գնթունին, Ատոմ Գնունին, Խոսրով Գաբեղյանը, Կարեն Սահառունին, Համայակ Դիմաքսյանը, Գագրիկ Դիմաքսյանը, Ներսեհ Գաղբևորունին, Փառսման Մանդակունին, Արսեն Ընծայեցին, Այրուկ Սլիկունին, Վրեն Տաշրացին, Ապրսամ Արծրունին, Շահխոռոպատ Արծրունին, Խուրս Սրվանձտյաց, Բողյանները, Ակռացիները և Տրպատունիները, ինչպես նաև Վահունյաց, Ռշտունյաց զորքերը և բոլոր արքունի գործակալները իրենց դնդերով։[1] Վերոհիշյալ ավյալներից երևում է, որ չնայած իշխաններից մի քանիսն անցել էին Վասակի կողմը, օրինակ, Վահունյաց և Ռշտունյաց տանուտերները, բայց և այնպես նրանց զորքերը մնում են Վարդանի կողմը և կռվում են երկրի անկախության համար։ Անշուշտ, դա արդյունք է եղել այն նվիրված աշխատանքին, որ տանում էին ազատամարտության համար պայքարող մղողները։

451 թվի գարնանը Վարդան Մամիկոնյանը տեղեկություն առնելով, որ Թշնամին մոտեցել է Հայաստանի սահմաններին, անմիջապես, առանց ժամանակ կորցնելու, լուր է ուղարկում երկրի հավատարիմ բոլոր իշխաններին և ժողովրդի կռվող մասերին, որոնք ուսուիքի պատճառով ցրվել էին իրենց տեղերը, հավաքվել Արտաշատ, այնտեղից շարժվելու դեպի պատերազմի դաշտը։ Իսկ դրան զուգընթաց, Թշնամու զորքերի թիվն ստուգելու և որոշ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով Ամատունյաց Առանձաթ սեպուհի գլխավորությամբ 300 հոգուց բաղկացած հնձիվազոր է ուղարկում դեպի Ատրպատականի սահմանները։ Ատրպատականի սահմանը պաշտպանող Ներշապուհն իր գլուխը Ատրպատականի սահմանը պաշտպանող Ներշապուհն իր զորքով Վարդանի՝ Սպվանքից վերադառնալուց հետո, նույնպես վերադարձել էր Արտաշատ։

Առանձարն իր հետախույզ գնդով հանդիպում է պարսկական բանակի առաջապահ մի զորագնդի, ջարդում է նրան ու ետ շպրտում դեպի պարսկական բանակը և անդրաժեշտ տեղեկություններ վերցնելով, արագ վերադառնում է Արտաշատ՝ Վարդան Մամիկոնյանին և Հայաստանի հերոսական մոտ, որովհետև Թշնամին արդեն մտել էր Հայաստանի հերոսական ու Զարեհավանդ գավառները, որտեղից շարունակում էր շարժվել դեպի երկրի խորքը Մուշկան-Նիսալավուրտ զորավարի և նրա օգնական Դաղվեի գլխավորությամբ։

Վարդանն այդ տեղեկություններն ստանալուց հետո, առանց

[1] Նույնը, էջ 145։

[1] Եղիշե, էջ 118—119, 125։

ժամանակ կորցնելու, անմիջապես իր հավաքած զորքով Արտաշատի կամուրջն անցնելով շարժվում է դեպի սահմանագլուխ, նպատակ ունենալով Թուլլ չոտալ Թշնամուն մտնել երկրի խորքը և պատերազմ մղել սահմանապահի հեր և Զարևանդ գավառներում և երկիրը փրկել ավերածություններից։ Բայց բանակն առաջ շարժվելով՝ նա կանգ է առնում Վաստուրականի Արտազ գավառի Ավարայրի դաշտում, որի միջով անցնում է Տղմուտ գետը, որովհետև Թշնամին արդեն հասել էր այնտեղ։ Սակայն նախքան Ավարայրի պատերազմի նկարագրությանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում ճշտել ու որոշել Ավարայր դաշտի, որի անունը այնքան վեհ է եղել հայ ժողովրդի համար, Տղմուտ գետի, Ավարայր գյուղի տեղը և թե այն ճանապարհը, որով շարժվում էին իրար դեմ երկու հակառակորդ բանակները, ինչպես նաև հեր ու Զարևանդ գավառների վայրն առհասարակ։

XIV. ԱՎԱՐԱՅՐ ԴԱՇՏԻ, ՏՂՄՈՒՏ ԳԵՏԻ, ԱՎԱՐԱՅՐ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱԶ ԳԱՎԱՌՈՒՄ. ՀԵՐ ԵՎ ԶԱՐԵՎԱՆԴ ԳԱՎԱՌՆԵՐԸ

Հայ բանասիրությունը և հայոց պատմության ուսումնասիրողները շատ քիչ ուշադրություն են դարձրել Ավարայրի դաշտի վայրի ուսումնասիրության վրա։ Այդ հարցի հիմնական ուսումնասիրողներից եղել է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, իր «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» (1936 թ. Երևան, 140—156) շահեկան աշխատության մեջ։ Բայց մեր կարծիքով, թե ակադեմիկոս Հ. Մանանդյանը և թե մյուս ուսումնասիրողները ճիշտ չեն որոշել Ավարայր դաշտի տեղը։ Այդ պատճառով ստիպված ենք կանգ առնել նաև այդ հարցի լուսաբանման վրա։

Ըստ ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի Մուշկան-Նիսալա-վուրան իր զորքը Հեր և Զարևանդ գավառներից շարժում է այն հին ռազմուղիով, որ սովորական էր զորքերի տեղափոխությունների համար։ Այդ ռազմուղին անցնում էր այժմյան Ծոյ—Կըզըլ-Դիլիջան ճանապարհով, այսինքն պատմական հին Հեր գավառից, Արտազի միջով դեպի Ծաղկոտն գավառը, որը պարսկական զորքերի, մոգերի և պաշտոնյաների սովորական բանակատեղին էր։ Ինչպես ցույց ենք տվել վերևում, Տիգրոնից վերադարձած հայ նախարարները, պարսից մոգերն ու զորքը և պաշտոնյաները կանգ էին առել Ծաղկոտն գավառում և մոգերն այնտեղից են սկսում իրենց գործողությունը։ Վարդանի զորաշարժը, ըստ Հ. Մանանդյանի, նույնպես անցնում է այդ ուղիով, այսինքն Արտաշատ—Իգդիր—Կոգովիտ—Արտազ տանող ճանապարհով։ Առաջնորդվելով մի շարք ուսումնասիրողների՝ Կ. Կոստանյանցին, Կ. Բասմաճյանին, ակադեմիկոս Հ. Մանանդյանը Վարդանի ճակատամարտի վայրը—Ավարայր դաշտը համարում է Արտազ գավառի արևմտյան մասում գտնվող այժմյան Թայ-Ջավարի դաշտը, իսկ Կարա-Բուլաղ կամ Կարա-Սու գետը՝ Տղմուտ գետ։ Գրող Դեմիրճյանը հիմնականում ընդունելով Մանանդյանի տեսակետը,[1] բայց առարկելով նրան, Կարա-Սուի փոխարեն, որ հոսում էր հարավից դեպի հյուսիս, Տղմուտ գետը համարում է Ազ-Սուն, որը հոսում է Թայ-Ջավարի դաշտի հյուսիսային կողմից, արևմուտքից արևելք, ինչպես Դ. Դեմիրճյանը ճիշտ առարկելով ակադեմիկոս Հ. Մանանդյանին, որ չէր կարելի արևմուտքից և արևելքից իրար դիմաց կանգնեցնել երկու հակառակորդ բանակների ու դնել նրանց թիկունքները վտանգի տակ, այնպես էլ չի կարելի հարգելի գրողի ցույց տված փոքրիկ Ազ-Սուն իբր կարճ ընթացքով երկու մեծ բանակների համար ճակատամարտի վայր համարել, որը վիճակամայն անհարմար էր։

Սակայն այստեղ պետք է ղարմանք հայտնել ընկեր Դեմիրճյանի այն նոր տեսության առթիվ, երբ նա իր տեսակետը հաստատելու համար վկայակոչում է Գալուստ Շերմազանյանին,[2] ասելով, որ Ազ-Սուն է հենց Տղմուտ գետը և ոչ թե Կարա-Սուն։ Մեր կարծիքով, նա ճիշտ չի հասկացել Շերմազանյանին և չի հոշոտում է Մակվի գավառում եղած մի շարք Ազ-Ջայերն միմյանց հետ։ Գ. Շերմազանյանի մատնանշած Ազ-Ջայը—Սալիտակ Ջուրը, Վաստուրականի իշխանների ամառանոց հին Մառական ավանի մոտ թափվում է Կոտոր կամ Կարմիր գետը։[3] Իսկ ընկեր Դեմիրճյանի ցույց տված Ազ-Ջայը թափվում է Մակու կամ Դալին գետի մեջ։

1 Տես «Սովետական գրականություն», 1943 թ. № 4—5, էջ 37։

2 Նույն տեղ, էջ 88։

3 Տես «Արարատ» ամսագիր, 1873 թ. դեկտեմբեր, էջմիածին, էջ 184։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը, որ ցույց է տալիս թե Թայ-Զավախն է Ավարայրի դաշտը, անտեսում է ոչ միայն գնահատելով ուղղության անհրաժեշտությունը լինելը ռազմական գործողությունների համար, այլև, որ այդ վայրը պատերազմական գործողությունների համար անհարմար է նաև իր նեղությամբ, որովհետև այդ դաշտի լայնությունը հազիվ կարող է լինել 2—3 կիլոմետր, որը երբեք չէր կարող պատերազմի վայր դառնալ 300 հազարից ավելի զորաբանակների համար։ Նույնը պետք է ասել նաև ընկեր Դևոյերճյանի մատնանշած Ագ-Սուի մասին, որը հավանաբար կազմել գետն է, որ հոսում է բարձր լեռների կիրճերով ու թափվում Զանգիմար գետը, իսկ վերջինս էլ՝ Մակու գետը։ Ավարայրի դաշտի տեղադրման խնդրում ճիշտ չեն նաև Կարապետ Բասմաճյանը և Կարապետ Կոստանյանցը, որոնցից առաջինն իր «Իսկական պատմություն հայոց» աշխատության մեջ հղած քարտեզում (1919 թ., կ. Պոլիս, էջ 247), մատնացույց է անում Ավարայր դաշտի տեղն այժմյան Վլիսքենդ գյուղի հարավարևմտյան մասում, որը լեռնոտ մի վայր է և միանգամայն անհարմար պատերազմի համար։ Իսկ երկրորդն իր «Հյուսվածք» աշխատության երրորդ գրքի մեջ (Վիեննա, 1877 թ. էջ 116-121) Ավարայրի դաշտը տեղադրում է այժմյան Մարիքենդ գյուղի արևմտյան մասում տարածվող Զորքի դաշտում, որը ինչպես գիտենք, գտնվում է ոչ թե Արտազում, այլ Ճուաշ դավառում, որովհետև Մարիքենդն Աղծրունյաց Իշխանների ձմեռանոց հին Մառական ավանն է։[1]

Առարկելով վերոհիշյալ բանասերներին, մենք հնարավոր ենք գտնում Ավարայր դաշտի տեղը Արտազ գավառում։ Որ Վարդան Մամիկոնյանն իր ճակատամարտը պարսիկների դեմ մղել է Արտազ գավառում, դա անկասկած է, որովհետև բոլոր պատմիչները միաբերան վկայում և ապացուցում են այդ[2]։ Այդ պահանջով հարկ չենք համարում դրա վրա կանգ առնել։

Արտազը Մեծ Հայքի Վասպուրականի նահանգի գավառներից մեկն էր 5-րդ դարում և կազմում է այժմյան Մակվի խանության մեծ մասը։ Ծովի մակերևույթից բարձր է 900—1000 մետր։ Արևմտյան մասն ավելի լեռնոտ է։ Արտազը սահմանակից է հյուսիսից Մասյացոտին (այժմյան Սուրմալվի՝ Իգդիրի շրջանին), հարավից Հեր գավառին (այժմյան Խոյ շրջանը), արևելքից՝ Աբաքա գետին և Շարուրի դաշտին, իսկ արևմուտքից՝ Ծաղկոտն ու Կոգովիտ գավառներին (այժմյան Բայազետի վիլայեթը)։ Հնում Արտազ գավառը հայտնի էր Շավարշան անունով, իսկ մեր տարեգրության 2-րդ դարից կոչվել է Արտազ, որը հնագիտական վկայություններով շատ հարուստ է։ Արտազ գավառումն է գտնվում նաև Թադեոս առաքյալի նշանավոր վանքը։ Սակայն այդ գավառը պատմության մեջ հայտնի է դարձել Ավարայրի դաշտով և Տղմուտ գետով, որտեղ տեղի է ունեցել Վարդանանց հռչակավոր պատերազմը։

Ավարայր դաշտի մասին Եղիշեն և Փարպեցին նույնիսկ իրարից տարբեր կցկտուր տեղեկություններ են հաղորդում։ Եղիշեի տեղով, Վարդանն իր պատերազմը վարում էր պարսիկների հետ Արտազի դաշտում,[1] իսկ մի այլ տեղում ավելացնում է. «Նրանով Ավարայրի դաշտը պայծառացած կծագկի, և ոչ թե անձրևաբեր ամպերի ջրերով, այլ վիհանների սուրբ և արյունաբուխ ցանված և ցրված ոսկորների սպիտակությունով»։ «Նովաս և դաշտն էլ Աւարայրի պայծառացնել ծագկալից լինին, ոչ անձրևաբեր ամպոց, այլ ի սուրբ և յարիւնաբուխ վկայից, ցանեալ և ցրուեալք զսպիտակութիւնք սուրբ ոսկերացն»։[2] Եղիշեի այս հատվածից պարզ երևում է, որ հայերի պատերազմը պարսիկների դեմ տեղի է ունեցել Ավարայրի դաշտում։ Իսկ Փարպեցու տեղով պատերազմը տեղի է ունեցել Տղմուտ գետի դաշտում. «...Սակայն պարսից զորքերն ավելի ևս արագությամբ եկան հասան Արտազ գավառը, Ավարայր կոչված դյուղի մոտ, Տղմուտ դաշտի շրջափակ տեղում ...»։ «Եկեալ հասանէին զունդն Պարսից ի գաւառն Արտազ, հուպ ի գիւղն որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին...»։[3] Վերոհիշյալ վկայություններից պարզ երևում է, որ Վարդանը պատերազմել է մի շրջափակ դեպքում,

---

[1]. «... ի Ճուաշ դաւառ ձմերել յաւանին Մառական» (Թովմայի վարդապետի Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց», 1887, էջ 225—264։

[2] Նույնը, էջ 130, Փարպեցի, էջ 147։

[1] Նույնը, էջ 130։

[2] Նույնը, էջ 245։

[3] Փարպեցի, էջ 147։

տում, որն Ավարայր գյուղի և կամ Թև Տղմուտ գետի անունով կոչվել է «Ավարայրի դաշտ» կամ «Տղմուտի դաշտ»։

Այժմ հարց է առաջ գալիս, որտե՞ղ է գտնվում վերոհիշյալ դաշտը։ Մենք վերևում առարկեցինք այդ հարցի մասին մինչ այժմ եղած տեսակետներին։ Ուշադիր ընթերցելով Ղևոնդ Մորիների Թավրիզից դեպի Էրզրումի կատարած համփորդական ուղեգրությունները, ինչպես և նորագույն քարտեզների ուշադիր զննումից տեսնում ենք, որ այժմյան Մակվի շրջանում—հին Արտազ գավառում կան մի շարք գետեր և գետագաշտեր, հովիտներ ու սայլուղիներ։ Անշուշտ, այդ գետերն ու գետահովիտները, դաշտերն ու սայլուղիները եղել են նաև հին շրջանում։ Քարտեզների ուշադիր զննությունից երևում է, որ այժմյան Խոյի վրայով երեք գլխավոր ճանապարհ է դուրս գալիս, որոնցով կարելի է գնալ Արտաշատ (Նորվիրապ), կամ թե Արտաշատից մեկնել դեպի Խոյ։

Այդ ճանապարհներից առաջինը, որ անցնում է Խոյ-Ջուլֆա—Նախիջևան և Արտաշատ ուղղությամբ բավական երկար է, ջրատակավ և դժվարին։ Երկրորդ ճանապարհը Խոյից անցնում է Փարսչի—Խոռս-Կարապիափին-Նազիկ գյուղերով, իջնում է Արաքսի ափը, ապա այժմյան Շահթախթի մոտից անցնում է Արաքսը գետը և գնում Արտաշատ։ Երրորդ ճանապարհը, դա հին ռազմուղին է, ինչպես ցույց է տվել ակադեմիկոս Հ. Մանանդյանը, ըստ Պելիոնպերյան քարտեզի իր «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» շահեկան աշխատության մեջ (1936 թ., Երևան, էջ 139—177)։ Այդ ճանապարհն անցնում է Խոյ—Փերի—Զուբաշան-Կարինջա-Կարա-Հին-Ալ-Դիզի-Արաբ-Դիզի և Օրգավուզ գծով դեպի Ծաղկոտն գավառը, այնտեղից այժմյան Օրդուի կամ Ջընդի կիրճով, Իգդիրով դեպի Արտաշատ։ Այս ճանապարհը թեև փորձված ռազմուղի է եղել պարսիկների համար, բայց ավելի երկար է, նույնիսկ ավելի քան առաջինը։ Սակայն չնայած դրան, Մուշկան-Նիսալավուրան իր զորքն անպայման կտաներ այդ փորձված և պարսիկներին ծանոթ ճանապարհով։ Դա անտարակուսելի է և ոչ մի առարկության չի ընդունում։ Ուստի և պարսկական զորքը Հերից-Խոյից շարժվում է դեպի Արտաշատ, ակադեմիկոս Հ. Մանանդյանի ցույց տված հին ռազմուղիով, որի երկարությունը (Խոյից մինչև Արտաշատ) կլինի ոչ պակաս քան 260 կիլոմետր և այդ ռազմուղին պարսկա-

կան զորքն իր ծանրոցային գումակով և փղերի գնդով հաղիվ կկարողանար անցնել 8—9 օրվա ընթացքում։

Բայց այժմ հարց է առաջ գալիս, վարպանը, որ նախօրոք Առանձարի միջոցով տեղեկություն էր ստացել պարսկական բանակի մասին և շտապում էր օր առաջ հասնել Հայաստանի սահմանագլխի գավառները և թույլ չտալ թշնամուն մտնել Հայաստան, արդյոք նույնպես պիտի իր բանակը շարժեր այդ երկար ճանապարհով, այսինքն Արտաշատ—Իգդիր—Օրգավուզ և Խոյ ուղիով, ինչպես ցույց է տվել ակադեմիկոս Հ. Մանանդյանը։ Ի հարկե, ոչ։ Քանի որ նա շտապում էր, անշուշտ, պիտի ընտրեր ավելի կարճ ճանապարհ, որն անպայման պիտի միանար Խոյ-Օրգավուզ ռազմուղուն և կարելի պարսկական զորքի ճանապարհը, որովհետև Վարպանին քաջ հայտնի էր, որ Նիսալավուրան իր զորքը դեպի Արտաշատ էր շարժում այն ռազմուղիով, որի մասին հիշատակում է Հ. Մանանդյանը։ Այդպիսի կարճ ճանապարհ կար արդյոք, թե ոչ։ Այո, կար։ Դա Արտաշատից Փոքր Մասիսի արևելյան կողմից դեպի Մակու տանող ճանապարհն էր, որը բոլորից կարճն էր, Ավարայր հասնելու և պարսկական զորքի ճանապարհը կարելու համար։ Այդպիսով, Վարդանի երթուղին Արտաշատից դեպի Ավարայրի դաշտը անցնում է այժմյան Խորվիրապից—Շնլար—Արաքսի ալ ափով—Աշապի-Գիսաքլի, Սալեհան և Աշապի-Կյուրամեր գյուղերով մինչև դեպի արևելք, ապա թևքվելով դեպի հարավ փոքր Մասիսի արևելյան կողմից Գենջյան, Շորիկ գյուղերով կարճում է Մուսա-Գյադուկի լեռնանցքը, մոտ 1750 մետր բարձրությամբ, իջնում է դեպի Դանալի գյուղը, Սանի-Սու գետի հովիտը, ապա հասնում Մակու, որի ընդհանուր երկարությունը մոտ 60—62 կիլոմետր է։ Իսկ Մակվից Զանդիմար գետի հովիտով, Թայ-Զավարի դաշտով դեպի Թեկնիշ և Մարանդ գյուղերի հարթավայրերը և ապա իջնում Ալբի-Զայի հովիտը, այսինքն Ավարայրի դաշտը, որը կլինի մոտ 45—48 կիլոմետր հեռավորություն։ Այդպիսով, Արտաշատից մինչև Ավարայրը, վերոհիշյալ ճանապարհի երկարությունը կլինի մոտ 100—105 կիլոմետր, մինչդեռ Արտաշատ, Իգդիր, Օրգավուզ—Ավարայր տանող ճանապարհի հեռավորությունը կլինի ոչ պակաս, քան 190 կիլոմետր, մոտ երկու անգամ ավելի, քան մեր վերանշած ճանապարհը։ Պարզ է, որ Վարդանն իր զորքը կ-

շարժեր այդ կարճ ուղիով, որին հայերը լավ ծանոթ էին, որպեսզի շուտով հասնի և կարի պարսկական զորքի ճանապարհը թույլ չտալով նրան մանելու երկրի խորքը։ Հայկական զորքը վերոհիշյալ ճանապարհը կարող էր կտրել երկու օրում, իսկ հնձելազորը տասը ժամում։ Եթե մի րոպե ընդունենք, որ նույն օրը Վարդանն իր բանակը շարժում է Արտաշատից, իսկ Նիսա-լավուրտը Հեր գավառի Մոյ-Նվարսակից, առաջինի անցած ճանապարհի երկարությունը կլիներ 100—105 կիլոմետր, իսկ երկրորդինը՝ 160—165 կիլոմետր։ Եթե հաշվի առնենք, որ հայկական զորքը մեկ ու կես անգամ ավելի արագաշարժ էր, քան պարսկականը, որովհետև վերջինի գումակը և փղերի գունդը շատ դանդաղ էին շարժվում և միաժամանակ բանակը երկար ճանապարհ կտրելով պետք է, որ դանդաղեցներ իր ընթացքը, այն ժամանակ երկու բանակներն իրար պիտի հանդիպեին Ավարայրի դաշտում։ Այդպիսով, ճշտելով Վարդանի զորքի ճանապարհը Արտաշատից դեպի Ավարայր, հնում է պարզել Ավարայրի դաշտի և Տղմուտ գետի վայրերը։

Ինչպես ժամանակին ենք վերևում, ակադեմիկոս Հ. Մանանդյանի կարծիքով Ավարայր դաշտն է Թայ-Զավարը, իսկ Տղմուտ գետը՝ Կարա-Բուլաղ չայը (ընդգծումը մերն է. Հ.Հ.)։ Մենք ցույց ենք տվել, որ Թայ-Զավարի նեղ դաշտը, հարավից-հյուսիս հոսող իր փոքրիկ գետակ-ուվակով չէր կարող ճակատամարտի վայր ծառայել երկու հզոր բանակների համար։ Ուստի և Ավարայրի դաշտը պիտի փնտրել դարձյալ Ազ-Զայի (Սպիտակ Ջրի) հովտում, ինչպես այդ արել են նախորդ ուսումնասիրողներից Կ. Կոստանյանցը և Գալուստ Շերմազանյանը, բայց ոչ թե այդ գետի ստորին հովտում, որ թափվում է Կարմիր կամ Կոստր գետը, ինչպես ցույց են տվել վերոհիշյալ ուսումնասիրողները, այլ վերին հովտում, այսինքն այժմյան Թեքնիշ և Մարանդ գյուղերից հարավ՝ Մուխուր, Կարինջա, Կարակուշ, Քյուրդքենդ, Գուլքակի, Զուրալա, Զեյվա, Մահմանլի, Կարա-Դերե և Մենդելիկ գյուղերի դաշտահովիտները, որոնց միջով հոսում է Ազ-Զայ գետը իր մի շարք վտակներով, որի վերին հոսանքը կոչվում է Այրի-Զայ և սկիզբ է առնում Թուրք-պարսկական սահմանագլխի լեռներից, որոնց միջին բարձրությունը հավասար է 2500—3000 մետրի։ Վերոհիշյալ գետահովիտն ընկնում է Մոյ—Կըզլ-Դիզե տանող հին ռազմուղու վրա։ Նման հարթավայր կամ գետահովիտ չկա մեծ բանակների ճակատամարտի համար Արտաշատ գավառում, բացի Ազ-Զայի վերին հովտից, որը ընկած է վերոհիշյալ գյուղերի դաշտահովիտների շրջանում։

Միաժամանակ հայտնի է, որ այդ գետի երկարությամբ ձգվում են Շիլարեշ լեռները, որոնք հավանաբար, հին «Շավարշան» կամ «Շավարշական» անվան մնացորդն է. մեր կարծիքով, այդ լեռների հարավային մասում տարածվող դաշտը, որ Ազ-Զայի վերին հովիտն է, պետք է լինի հին «Շավարշան» կամ «Շավարշական» դաշտը։ Որ Ավարայրի դաշտն Ազ-Զայի վերին հովիտն է, դա երևում է նաև Զեյմա Մորիների Մոյից—Կըզլ-Դիզե կարին անցնելուն վերաբերվող հետևյալ նկարագրությունից. Մորիները գրում է. «Փերից մենք անցանք դյուրամատչելի լեռնեցից և Զաուվիե հասնելուց մոտ մասը մեր դաշտ՝ շրջապատված լեռներով։ Դաշտի մուտքից լեռան ալ դաշտ՝ շրջապատված լեռներով։ Դաշտի մուտքից լեռան ալ դահլիճի վրա գտնվում է Սելավան (Selavean) գյուղը, և ձախ կողմում՝ մի փոքր դյուղ, որ կոչվում է Խորե (Khore) դեպի այն (գյուղը) տանող ճանապարհի վրա երկու տաշտեններ կան, կոպիտ ու հին գերեզմանաքարերի մեջ։ Դաշտի բնակիչների մեծագույն մասը բաղկացած է հայերից։ Արեվմտյան կողմում կան շատ բարձր լեռներ, որոնց կատարները ծածկված են ձյունով...»

Ձյունը հալչում էր և հաճախ վտակներ էին վազում լեռներից։ Այնուամենայնիվ մեր մի քանի օրվա փորձառությամբ կլիման այստեղ տարբեր էր. արևածագից առաջ խայթող ցուրտ էր։ Դաշտի բոլոր մասերը մշակված էին։ Մեր անցած վայրն ամբողջությամբ սահող է, այնպես որ բացի լեռների կատարներից, գետինը ծածկված էր համատարած կանաչ կապերտով»։[1]

Զեյմա Մորիների այս նկարագրության մեջ ուշադրավ է ձախ կողմում գտնվող Խորե կոչված փոքրիկ գյուղը, որի ճանապարհի վրա գտնված հին դերեզմանաքարերի մեջ եղած երկու տաշտեններն, որոնք մեզ տանում են դեպի Հայաստանի պատմության ծոցը, ցույց են տալիս, որ այդ վայրը թյան ավելի հին շրջանը և ցույց են տալիս, որ այդ վայրը եղել է հին բնակության տեղ և, որ մինչև 19-րդ դարի սկիզբը այդ վայրի բնակչության մեծ մասը կազմում էին հայերը։ Այդ

[1] «Ուղեգրություններ», Զ. հատոր, Երևան, 1934, էջ 268։

դաշտի արևմտյան մասում ձգված բարձր լեռները, որոնք ծածկված էին ձյունով, անշուշտ Թուրք-պարսկական սահմանագիծ նպատակ ունեցող Աղ-Դաղ և Աշպի-Բալչըլի լեռներն էին, որոնց մի մասի բարձրությունը հասնում է 2500—3000 մետրի։ Պարզ է, որ այդ լեռները մայիսի վերջին և հունիսի սկզբին ձյուն կուսակցական իրենց կատարներին։ Պետք է ավելացնենք, որ Նոյից մինչև Աղ-Ձայի վերին հովիտը, և նույնիսկ դրանից հետո մինչև Կղզի-Դիզեի սահմանները, ձախ կողմում նման բարձրության լեռներ չկան, որոնց վրա հունիսի 5—10-ը ձյուն չմացած լիներ, բացի Աղ-Դաղ և Աշպի-Բալչըլի լեռներից։ Ջեյմս Մորիերի նկարագրած դաշտը շրջապատված է լեռներով ճիշտ այնպես, ինչպես նկարագրում է Ղազար Փարպեցին Տղմուտի կամ Ավարայրի դաշտը... «Ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտիդ ընարեալ յաղագս երկիւղի զօրացն Հայոց»։

Ռազմական քարտեզների ուշադիր դիտումը միաժամանակ ցույց է տալիս, որ Նոյ—Կղզի-Դիզե տանող հին ռազմուղու վրա նման ընդարձակ և լեռներով շրջապատված դաշտ չկա, բացի այժմյան Մուխուր, Կարինջա, Զուրաչա և Ջեյվա գյուղերի դաշտահովիտներից, որոնց մի մասով, ինչպես նշել ենք, հոսում է Աղ-Ձայ գետը։ Վերոհիշյալ փաստերից եզրակացնում ենք, որ Ավարայրի դաշտը Աղ-Ձայի վերին հովիտն է՝ Մուխուր, Կարինջա, Զուրաչա և Ջեյվա գյուղերի դաշտահովիտները, որոնք ընկնում են Նոյ—Կղզի-Դիզե տանող հին ռազմուղու վրա։

Աղ-Ձայը կամ Այրի-Ձայն իր սկիզբն է առնում այժմյան Թեղնեչ-Թեղնուտ գյուղի, Թերևս 5-րդ դարում Տղմուտ, արևմտյան բարձր լեռների սառցադաշտերից և հոսում է Թեղնուտ գյուղի հարավային կողմից 2—3 կիլոմետր հեռավորության վրա։ Անհավանական չի թվում ենթադրել, որ այդ Թեղնուտ կամ Տղմուտ գյուղի անունով էլ Այրի-Ձայը 5-րդ դարում կոչված լիներ Տղմուտ գետ, եթե հաշվի առնենք, որ ամբողջ վայրի ավելի ցածր մասն է, որ կոչվում է նրա անունով, ինչպես օրինակ, Մասյացոտան, և ոչ թե հարավային ավելի բարձր մասը, այլ հյուսիսային ցածր մասը։ Նույնը պետք է ասել նաև Արագածոտնի մասին։ Ուստի և Աղ-Ձայը հոսելով Թեղնուտ գյուղի հարավային ցածր մասից, գյուղի անունով պետք է կոչվեր Տղմուտ

գետ։ Ինչ վերաբերում է Ավարայր գյուղին, նա անշուշտ, 5-րդ դարում նույնպես նշանավոր գյուղ պետք է լիներ Արտաշատ գավառում և նույնպես պետք է եզած լիներ Թեղնուտ և Մարանդ գյուղերի շրջակայքում։ Ավարայրը, ինչպես ճիշտ կերպով բացատրել է Կարապետ Կոստանյանցը,[1] Ավարայրի—Այրը, կարող է լինել մատնանշված գյուղերի մոտերը, որովհետև վերոհիշյալ վայրերում այժմ էլ բազմաթիվ այրեր-մարագաններ կան, որոնք օգտագործվում են ավազակների կողմից։ Պարզ է, որ Վարդանի նման հմուտ և ռազմագետ զորավարը պետք է իր ճակատամարտի համար ընտրեր նման հարմար վայր, հարկ եղած դեպքում պաշտպանվելու։ Ավարայրը կամ այժմյան Մարանդ գյուղն է, կամ թե նրա շրջակայքը, ուրիշ տեղ փնտռել չի կարելի։ Այդպիսով, այժմյան Մակվի շրջանում գտնվող Աղ-Ձայը որ բախվում է Կարմիր կամ Կոտոր գետի մեջ հին Մառականի ավանի մոտ, Տղմուտ գետն է, Մարանդ Գյուղը-Ավարայրը, իսկ Աղ-Ջայի վերին հովիտը, որը ընկնում է Նոյ-Կղզի-Դիզե տանող հին ռազմուղու վրա, Ավարայրի դաշտը։

Իսկ ինչ վերաբերվում է Հեր և Զարևանդ գավառներին, դրանք մեզ հասած աշխարհացույցի տվյալների համաձայն եղել են Մեծ Հայքի Գարսկահայք նահանգի հյուսիսային մասի առանձին վարչական միավորներից՝ գավառներից։ Բայց պատմիչները՝ Թե Եղիշեն[2] և Թե Ղազար Փարպեցին,[3] հաճախ միասին են հիշում այդ երկու գավառները. դա ցույց է տալիս, որ նրանք գտնվել են իրար մոտ։ Հեր գավառը տարածված է եղել Ուբմիա լճի հյուսիս-արևմտյան ափերից մինչև Կարմիր-Կոտոր գետը, այսինքն այժմյան Նոյի շրջանը, քաղաքի հետ միասին, մինչև Կոտոր գյուղը։ Հեր գավառումն էր գտնվում Նվարսակ գյուղը, որ այժմյան Նիսական գյուղն է, Նոյից 15—18 կիլոմետր հեռու դեպի արևմուտք։ Իսկ Զարևանդ գավառը տարածված է եղել այժմյան Սալմաստի շրջանում։ Հետաքրքրական չէ Կոստանյանցը, որ վերոհիշյալ գավառը տեղադրում է Հեր գավառի հյուսիս-արևմտյան մասում,[4] որտեղ

1 Կ. Կոստանյանց, «Հիւսուածք», գիրք Գ., էջ 120—121։

2 Եղիշէ, էջ 95—137։

3 Փարպեցի, էջ 144, 147, 282, 351—353, իսկ 357 էջում հիշում է միայն Հեր գավառը

4 Կ. Կոստանյանց, «Հիւսուածք», գիրք Գ., էջ 116։

ինչպես դեռևնք, տարածվում են Արտազ գավառի հարավային շրջանները։ Այստեղից էլ պարզվում է, որ Նիսալավուրան իր բանակով, ինչպես նաև դրանից հետո ևկող Նիկոր իշխանը, կանգ են առել ոչ թե Զարևանդում, այլ Հեր գավառում, հավանաբար Նվարսակ գյուղում։

Ըստ երևույթին Պարսկաստանից ևկող զորաբանակները կանգ էին առնում Հայաստանի սահմանագլխի Հեր գավառի Նվարսակ գյուղում և հետո մտնում էին երկրի խորքը, անցնելով հին ռազմուղիով դեպի Ծաղկոտն գավառը, որ պարսիկների կարևոր ամրություններն էր Հայաստանում։

XV. 451 Թ. ՄԱՅԻՍԻ 26-Ի ԱՎԱՐԱՅՐԻ ՀԱԿԱՏԱՐՄԱՐՏ ԵՎ ՆՐԱ ԸՆԹԱՑՔԸ

Վարդան Մամիկոնյանն Առանձաբի բերած հավատի տեղեկություններից հետո, առանց ժամանակ կորցնելու, անմիջապես, նախ զորք Արտաշատում հավաքած զորքը մայիսի 21-ին անց է կացնում Արաքսի կամուրջից և առաջ շարժվելով դեպի ՝ ափով դեպի արևելք, վերը մատնանշված ճանապարհով, այն է Արտաշատից Փոքր Մասիսի արևելյան կողմից դեպի Մակու և Զանգիմար դեպի հովիտով ու Թայ-Զավար դաշտով մայիսի 25-ին կեսօրից հետո, հասնում և կանգ է առնում Ավարայր դաշտում, Տղմուտ գետի—Ազ-Չայի ձախ ափին, որովհետև աջ ափին արդեն կանգ էր առել ու բանակ դրել Նիսալավուրը։ Այդ հանգամանքի երկարությունը, որ Վարդանի զորքը կարել էր երկու օրվա ընթացքում, ինչպես ցույց ենք տվել վերևում, 100—105 կիլոմետր էր, որ հետևակ զորամասը հանգիստ կերպով կարող էր անցնել երկու օրվա ընթացքում։

Վարդանն իր բանակով մայիսի 25-ի երեկոյան հասնելով Ավարայրի դաշտը, թեև պարսիկներին գտնում է մինչդամայն անպատրաստ վիճակում, բայց չի հարձակվում նրանց վրա. դա ցույց է տալիս, որ նրա զորքը հոգնել էր Արտաշատից արագ առանց հանգստի Ավարայր հասնելու պատճառով, իսկ հոգնած զորքին ժամանել կռվի մեջ, թեկուզ թշնամին անպատրաստ էլ լիներ, դա նշանակում էր ճակատամարտը նախօրոք տանուլ տալ։ Ի հանգամանք, որ չէր կարող անել Վարդանի նման փորձված զորավարը, որն իր բանակն Ավարայր էր տարել պարսիկներին լուրջ հարված տալու և իրանիզացիայի քաղաքականությունը խափանելու համար, և ոչ թե նահատակվելու։ Բացի այդ, Վարդանն անձամբ ուղում էր ուսումնասիրել թշնամու ռազմական ուժը։ Այդ պատճառով նա պատերազմն սկսում է ոչ թե նույն օրը, այլ հետաձգում է հաջորդ օրվան։ Նույնը պետք է ասել նաև պարսիկների մասին։ Նիսալավուրան իր հերթին հայերի ռազմական ուժն ուսումնասիրելու և դավաճան Վասակի միջոցով հայերին իրենց մտադրություններից ետ կանգնեցնելու նպատակով, անմիջապես պատերազմական գործողություններն չի դիմում, այլ պատրաստվում է հաջորդ օրվա համար։

Հայկական բանակի հետ պատերազմի՝ Ավարայրի դաշտ էին գնացել նաև կանայք, աղջիկներ, հոգևորականներ Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ, ինչպես նաև Ղևոնդ Երեցը, կռվողներին ոգևորելու և պատերազմին համաժողովրդական բնույթ տալու համար։ Պատերազմին մասնակցում էր նաև Եղիշե Վարդանի այդ օրը պատմագիրը որպես պինվորական։ Դավաճան Վասակն այդ օրը նորից Նիսալավուրի խորհրդով գնում է ուղարկում հայերի մոտ նրանց պատերազմից ետ կանգնեցնելու դիտավորությամբ, բայց ապատամբ հայերը կրկին մերժում են Վասակի այդ վերջին առաջարկը ու պատրաստվում պատերազմի։

Պատմիչների ասելով՝ պատերազմի դաշտում հայերի կռվող զորքի թիվը հասնում էր մինչև 66,000-ի,[1] որը բաղկացած էր հետևակ և հեծյալ զորամասերից։ Հետևակի թիվն ավելի շատ էր։ Բանակի մի մասը կազմված էր կանոնավոր զորամասերից, իսկ մյուս մասն էլ ժողովրդական աշխարհազորայիններից, որոնց Վարդանը ժամանակ չունենալով ավելի լավ նախապատրաստելու պատերազմի համար։ Աշխարհազորայիններից շատերը նույնիսկ զինք չունեին և զորավարը Ավարայրի դաշտումն է զինում, հագուստ ու ձի տալիս նրանց։ Հայկական բանակն բաղկացած էր զինվածության տեսակների. բաժանվում էր—նետաձիգների, նիզակավորների, սուսերավորների, պարսատիկավորների՝ կոպալավորների, ձանր ու թեթև զրահավորների, վահանավորների և սակավորների։

---

1 Եղիշե, էջ 130։

Վարդանն իր բանակը դլխավորապես հավաքում է երկրի կենտրոնական նահանգներից՝ Այրարատից, Վասպուրականից, Տուրուբերանից և Մոկսից։ Սյունիքն ամբողջությամբ մասնակցում է Թշնամու հետ, իսկ մյուս նահանգների ու գավառների զորքերից և կամողներից շատ քչերն էին մասնակցում Ավարայրի ճակատամարտին։ Արևմտյան Հայաստանը, որ գտնվում էր Բյուզանդական կայսրության գերիշխանության ներքո, չնայած որ Հմայակ Մամիկոնյանը, սպարապետի եղբայրը, որն իբրև դեսպանության անդամ, ձեռնունայն Բյուզանդիոնից վերադարձել էր և ճանապարհին կանդ էր առել Արևմտյան Հայաստանում ու փորձում էր հայ իշխաններից զորք հավաքել և ուղարկել պարսիկների դեմ կռվի, նույնպես չկարողացավ գալ օգնության, որովհետև այնտեղի հայ իշխանները, թեև մեծ ձգտում ունեին մասնակցել կռվին, բայց կայսրից վախենալով, իրենց տեղերից չէին շարժվում։ Հմայակը շատ քիչ թվով զորք է հավաքում, այն էլ չի կարողանում հասցնել պատերազմի վայրը։ Երկրի հյուսիս-արևելյան գավառները կապված լինելով Վրաստանի և Աղվանքի հետ, նույնպես չեն մասնակցում կռվին, չնայած որ նրանցից մի քանի անգամ զորք էին պահանջել։ Երկրի հարավային պաշտպանված գավառները—Աղձնիքը, Տմորիքը, սկզբում չեղոք են մնում։ Եթե Հայաստանի բոլոր նահանգներն ու գավառները, ինչպես նաև Վրաստանն ու Աղվանքը մասնակցած լինեին ճակատամարտին, այն ժամանակ Վարդանի զորքի թիվը Ավարայրի դաշտում կրկնակի կլիներ։ Սակայն, չնայած դրան, Հայաստանի հիմնական մասը, երկրի կենտրոնական գլխավոր նահանգները, ակտիվ կերպով մասնակցում էին պատերազմին և երկրի զորքի մեծագույն մասը, երկու երրորդը գնում էր Վարդանի հետևից։

Ինչ վերաբերում է պարսկական զորքի թվին, նա հասնում էր 150—180 հազարի։ Որ Թշնամու զորքի թիվը ավելի շատ է եղել հայերից Ավարայրի դաշտում, դա երևում է Վարդանի ձառի հետևյալ հատվածից, որ արտասանել է Ավարայրի ճակատամարտի նախօրյակին՝ «Մի երկուցեալ զանգիտանացք ի բազմութենէ հեթանոսացն...»[1] Պատմիչների ասելով Նիսալավուրսը կարգադրում է, որ յուրաքանչյուր վրկ շուրջ 3000 զին-

[1] Տե՛ս նույնը, էջ 131։

վոր հավաքեն[1] և նրա պաշտպանության տակ առաջ շարժեն հետևակին։ Պատմիչները փղերի դնդին երամակ են կոչել։ Դա նշանակում է, որ նրանց թիվը շատ է եղել, և ինչքան էլ որ քիչ վերցնելու լինենք, այնուամենայնիվ Ավարայրի դաշտում թվով 50—60 փղից պակաս ընդունել չենք կարող, որովհետև 20—30 փղին երամակ անվանել հնարավոր չէր։ Եթե 50—60 փղին, յուրաքանչյուրին 3000 ռազմիկ դինվոր է նշանակում, դա ցույց է տալիս, որ պարսկական բանակի թիվը 150—180 հազարից պակաս լինել չէր կարող, այսինքն մոտ երեք անգամ ավելի, քան հայկական զորքը։ Եթե հայկական զորքը մեկը երեքի դեմ կանգնած չլիներ, Վարդանը Թշնամու բազմության խընդիրն առաջ չէր քաշի։ Պարսկական բանակի այդ թվի վրա եթե ավելացնելու լինենք զավաճան հայերի զորագնդերը, այն ժամանակ հակառակորդի բանակի թիվը ավելանալով անցնում է 200 հազարից։ Այդպիսով, Ավարայրի դաշտում 451 թ. մայիսի 26-ին յուրաքանչյուր հայի դեմ կանգնած էր երեք պարսիկ զինվոր։

Պարզելով երկու հակառակորդների զորքերի մոտավոր թիվը, մնում է պարզել նաև Ավարայրի պատերազմի ճիշտ օրը։ Հայ գրականության մեջ ավանդություն ու տրադիցիա է դարձել Ավարայրի պատերազմի օրը հաշվել հունիսի 4-ին։ Բայց այդ թիվը մեկ շաբաթով առաջ պետք է տանել, քանի որ հայ տոմարական հին հաշվումներով Պենտեկոստեի ուրբաթ օրը, որ նշում են պատմիչները, հավասար է լինում մայիսի 25-ին։ Քանի որ պատերազմը տեղի է ունեցել հաջորդ՝ շաբաթ օրը, հետևաբար Ավարայրի պատերազմը տեղի է ունեցել 451 թվի մայիսի 26-ին շաբաթ օրը և ոչ թե հունիսի 2-ին, ինչպես ենթադրվել է մինչև այժմ։

Վարդան Մամիկոնյանն իր բանակով մայիսի 25-ին հասնելով Ավարայրի դաշտը, ինչպես ժամանակ առ ժամանակ նշել ենք վերևում, անմիջապես պատերազմ չի սկսում. նախ ինքը նորից ստուգում ու ճշտում է Թշնամու ռազմական ուժը և հրամանատարական կազմը, թե ովքեր են եկել կռվի իրեն ծանոթ զորավարներից և ապա զբաղվում է իր բանակի դասավորությամբ, խրախու-

[1] Տե՛ս նույնը, էջ 119։

սում է զորքին և բացատրում, որ նման պատերազմ մինչև այդ չի եղել։ Բանակի հետ Ավարայր գնացող հոգևորականներն իրենց հերթին, նույնպես շրջելով զորքի մեջ, հատկապես զգուշացել ծերունի Ղևոնդ Երեցը, խաչը ձեռքին, ոգևորում է կռվող մարտիկներին, նրանց մեջ ավելի բորբոքելով հայրենասիրական բոցը և կրոնական ոգևորությունը։ Այս բոլորից հետո, բանակի և զորավարների առաջ հայրենասիրական մեծ ճառով հանդես է գալիս սպարապետ Վարդան Մամիկոնյանը և բնորոշում է իրենց մոտ պատերազմի բնույթը։

Մենք հենք բերում նրա ճառի հիմնական մասերը.

«Ես և դուք միասին շատ պատերազմներ ենք տվել, երբեմն մենք ենք քաջությամբ հաղթել թշնամիներին, իսկ երբեմն էլ նրանք են հաղթել մեզ և շատ անգամ հաղթել ենք, քան հաղթվել։ Եվ ամեն մեկը մեզանից ունեի իր մարմնի վրա շատ վերքեր և սպիներ, որոնց համար ստացել է մեծամեծ պարգևներ։ Այս բոլոր քաջություններն անարդ և անօգուտ եմ համարում, և բոլոր պարգևներն ունայն բաներ են, որովհետև այդ ամենն անցավոր են։

«Այժմ ապաչում եմ ձեզ, ով իմ քաջ նիզակակիցներ, մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամբ առավել են ինձանից և տոհմով երևելի քան ես, բայց որովհետև դուք ձեր հոժար կամքով եք ինձ ընտրել ձեզ առաջնորդ և զորապետ, որով էլ, թե մեծամեծներդ թե փոքրերդ քաղցրությամբ լսեցեք իմ խոսքերը։ Զերկնչենք հեթանոսների շատությունից և չպարծանենք մեր թիվունքը մահկանացու մարդու սրի առջև, եթե աստված մեզ հաղթություն տա, ջարդենք նրանց զորությունը, որ բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը սրբությամբ մեռնելու այս պատերազմի մեջ, ընդունենք սրան ուրախությամբ, բայց միայն մեր առաքինի քաջության մեջ վատություն չխառնենք։

«Մանավանդ որ ես տակավին չեմ մոռացել իմ և ձեր ոմանց գործերը, որ անօրեն իշխանին խաբեցինք, ինչպես մի անպիտան երեխա, նրա ամբարիշտության կամքը առերես կատարեցինք, բայց սիրտը ինքը իմանում է, թե մեր սրտում ինչպես նրանից անքակտելի ենք մնացել։ Այս խնդիրը ձեզ բոլորիդ հայտնի է, որ մենք հնարք էինք փնտռում մեր սիրելիներին ազատելու՝ որ նրանց հետ միասին կռվենք անօրեն իշխանի հետ մեր հայրենական աստվածատուր օրենքի համար։

«Այդ երկու և հրեք կռվի մեջ... այնպես որ քաջությանն առացանք, թագավորի զորքը չարդ ու փշուր արինք, մոդերին անխնա սատակեցրինք, կռապաշտության պղծությունը գանազան տեղերից սրբեցինք, թագավորի անօրեն հրամանը անարդեցինք։

«Հառաստ կացեք մեր ճշմարիտ զորավարի վրա, որը հրեքեք չի մոռանա ձեր նահատակության գործը։

«Այժմ ահա եկավ, հասավ ժամանակը, որ մեր անվան կեղտը հեռացնենք մեզանից։ Այն ժամանակ, ինչպես նեղացած սպավոր հոգվով և մարմնով էինք տրտմած, այսօր զվարթ հոգվով և մարմնով ենք պատճառացած։ Երկյուղը թերահավատության նշան է, մենք վաղ ենք հեռացրել մեզանից թերահավատությունը ու նրա հետ և երկյուղը կհեռանա և կանհետանա մեր մրտքից և խորհուրդներից։

«Ի բաղում պատերազմունս մտել է իմ, և ձեր ընդ իս. է ուրեք դի քաջապես յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք դի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է որ յաղթող գտել ենք և ոչ յաղթեալք... Եւ մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս բազումս և բազում այն քաջութիւն իցէ՝ վասն որոյ առեալ իցէ և պարգես մեծամեծս։ Անարդ և անօգուտ գքաջութիւնն համարիմ, և առ ոչինչ զպարգեան բազում. վասն դի ամենեքեան խափանելոց են...։

...«Արդ ապաչեմ զձեզ, ով քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ դի բազմամբ ի ձէնջ լավագոյնք էք քան զիս արութեամբ, և գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձեզ կամօք և յօժարութեամբ առաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէք, հնձա և բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծացն և ի փոքունց։ Մի երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք, դի եթէ ասցէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զղօրութիւն նոցա, դի բարձրասցի կողմն ճշմարտութեան. և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ տութեան. և եթէ

մանուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան՝ վատութիւն մի խառնեսցուք։

«Մանաւանդ ղի անմոռաց է ինձ, յիշելով զիմ և զոմանց ի ձենջ, ի ժամանակին՝ զի զաւօրեան իշխաց[1] խաբեցաք (ընդգծումը մերն է. Հ. Հ.) պատրեցաք իբրև զմանուկ մի տղայ անմիտան. իբր այն նթէ ի վերին երեսս զկամս նորա ամբարշտութեանն կատարեցաք. բայց ի ծածուկ զխորհուրդս Տէր ինքնին վկայէ մեզ, որպէս անքակ կացեալ ևնք ի նմանէ։ Զոր և դուք ինքնին իսկ գիտէք, վասն սիրեցեալ մերոց, որ ի միջի նեղութեան էին հնարս խնդրէաք վասն յանդորը հանելոյ. զի նոքօք հանդերձ մարտ եդեալ կռուեսցուք ընդ անօրէնն իշխանին վասն հայրենի աստուածատուր օրինացն...

«Իսկ արդ յերկուս և յերիս կռեալս... զլօրսն արքունի չաքաչէր հարաք, և զմոգսն անողորմ սատակեցաք, և զպղծութիւն կռապաշտութեանն ի տեղեաց տեղեաց սրբեցաք, զանօրէնն հրամանն թագաւորին եղծաք տապականեցաք...։

«Հաստատուն կացեք յանշուշտ զօրագլուխն մեր, որ ոչ երբեք մոռացի զգործս նահատակութեան ձերոյ։

«Ես ահա ևկն ևհաս ժամանակ, զի զամենայն զկեղտ անուն ի ձենջ ի բաց բարձցուք։ Յայնժամ իբրև զթաթխծեալ սպաւոր՝ հոգի և մարմին էաք սրսմաալք, այսօր զուարթացեալ և զպատացեալք յերկոսեան առ հասարակ ևմք լըվացեալք... Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի ձենջ վազ մերժեցաք, ընդ նմին և երկիւղն փախիցէ ի մաց և ի խորհրդոց մերոց»։[2]

Քաջ զորավարի այս ճառը մինչև այսօր էլ չի կորցրել իր նշանակութիւնը, և ամեն մի հայ կարդալով այն, կոգևորվի իր հայրենիքի անկախութեան պաշտպանման գաղափարով ընդդեմ օտար նվաճողների։ Այս ճառի մեջ միաժամանակ երևում է զորավարի հավատարմութիւնը, որը զարգացում է քաջ ռազմիկին։ Նա թեև բոլորից քաջ ռազմագետ էր, բայց և այնպես ցույց է տալիս, որ իրենից ավելի քաջ և տոհմական ծագմամբ ավելի բարձր մարդիկ կան։ Ապա կրկին անգամ ստուգում է զորքի կարգապահութիւնն ու զինվածութիւնը, զենք

[1] Խոսքը վերաբերում է Հազկերտ թագավորին։
[2] Եղիշէ, էջ 130—135։

ու հագուստ չունեցողներին զենք ու հագուստ է տալիս ու քաջ նախնիների մասին զրույցներ անելով, ոգևորում է զավոդներին։ Իսկ վերջում իր զինվորական խորհրդի որոշման համաձայն, հայկական բանակը բաժանելով առանձին զորագնդերի, նշանակում է զորագլուխներ և օգնականներ ու դասավորում այն լայն ճակատով՝ թշնամու բանակի դիմաց, Տղմուտ գետի հյուսիսային եզերքին։

Սպարապետ Վարդանն իր բանակն ըստ Եղիշեի[1] բաժանում է չորս մասի։ Առաջին զորագունդը հանձնում է Ներշապուհ Արծրունուն, նրան օգնական տալով Մոկաց մեծ իշխանին։ Երկրորդ զորագունդը հանձնում է Խորեն Խորխոռունուն, տալով օգնականներ Ընծայեցուն և Ներսեհ Քաջբերունուն։ Երրորդ զորագունդը հանձնում է Թաթուլ Վանանդեցուն, օգնական նշանակելով Տաճատ Գնթունունուն։ Չորրորդ գունդը վերցնում է ինքը, որպես օգնականներ նշանակում է իր փեսա Աբշավիր Կամսարականին և իր փոքր եղբայր Համազասպյանին։ Իսկ Ղազար Փարպեցու ասելով,[2] բանակը բաժանում է երեք թևի և մի վերջապահ պնդի։ Մի թևը հանձնում է Ներշապուհ Արծրունուն, տալով նրան որպես օգնականներ Ներշապուհ Մարզպետունուն, Աբշավիր Արշարունուն (Կամսարականին) և Արտակ Մոկացուն։ Մյ թևը հանձնում է Խորեն Խոռխորունուն, տալով օգնականներ Թաթուլ Դիմաքսյանին և Ներսեհ Քաջբերունուն։ Ձախ թևը, որի դիմաց կանգնած էր պարսկական բանակի աջ թևը, վերցնում է ինքը, օգնական նշանակելով Փապակ Առավեղյանին։ Վերջապահ գունդը հանձնում է իր եղբայր Համազասպյանին։

Պատմիչների վերոհիշյալ տվյալները Ավարայրի գաշտում Վարդանի զորքի դասավորման մասին իրար չեն հակասում, այլ լրացնում են մեկը մյուսին։ Երկու պատմիչների ասելով՝ Վարդանն իր բանակը բաժանում է չորս մասի։ Առաջին երկու զորամասերի զորագլուխները նույնն են, տարբերվում են միայն երրորդ և չորրորդ զորամասերի հրամանատարները և գրեթե բոլոր օգնականները։ Այստեղ մենք հետևում ենք Եղիշեին և

[1] Եղիշէ, էջ 151։
[2] Փարպեցի, էջ 152—153։

կարծում ենք, որ Վարդանն որպես բանակի ընդհանուր հրամանատար, չէր կարող իր զորքը թողնել բախտի քմահաճույքին և բանակի մի մասը վերցնելով կռվի մտնել Թշնամու հետ, մարտի ընդհանուր ճակատի մի մասում։ Պարզ է, որ նա պիտի զորքի չորրորդ մասը իր հրամանատարության տակ պահեր, որպես ռեզերվ, օգնական ջոկատներ ուղարկեր թուլացող այս կամ այն ճակատն ուժեղացնելու նպատակով, պահպաններ թիկունքը և հետևեր ճակատամարտի ընդհանուր դործողություններին։

Պատերազմի նույնպիսի պատրաստություն էր տեսել նաև Նիսալավուրը։ Մայիսի 26-ի վաղ առավոտյան կռվի ու պատրաստ իրար դիմաց կանգնած էին հայկական և պարսկական բանակները։ Առաջինն իր քաջ զորավար Վարդանի գլխավորությամբ պատրաստ էր պաշտպանելու իր երկրի ու ժողովրդի անկախությունը մինչև իր արյան վերջին կաթիլը. իսկ երկրորդն եկել էր Հայաստանը նվաճելու, բռնի կերպով իրանիզացիայի քաղաքականություն այնտեղ տարածելու և ժողովրդին կողոպտելու համար։ Առաջինը մղում էր արդարության ազատագրական պատերազմ, իսկ երկրորդը՝ անարդարացի, զավթողական։

Մայիսի 26-ի առավոտյան դեռ նոր էր արևը ծագել և իր ճառագայթներով ողողել Ավարայրի կանաչազարդ ծաղկալից հովիտը, երբ սկսվում է ահեղ կռիվը, նախ նետաձգությամբ ու խանգարում դաշտի խաղաղ անդորրությունը և ժարտիկների աղաղակներով խլացնում Տմուտ գետի ազմուկը. իսկ հետո սուսերամարտի անցնելիս վահանների և սրերի բախումներից առաջացած դղրդը և ազեղների լարերի ճարճատյունը խլացնում էին մարդկանց լսողությունը և լցնում հովիտը անասելի գոչյուններով։ Հայոց սպարապետ քաջ Վարդանը, որ հեծած էր սպիտակ ձին, սուրը մերկացրած, իր խրոխտ ու առնական ձայնով, մեծ սարտեզի ռազմությունների, ազատագրության մեծ մարտի էր տանում իր բանակը Սասանյան հավերժակիչների դեմ։

Հայերի հմուտ նետաձիգների ու պարսատիկավորների հարվածների տակ, պարսկական զորամասերն «անհաղթ մաեյանն» գնդերի հետ գամվում են գետի մյուս ափին, տալով մեծ զոհեր։ Նետաձգությունը շուտով փոխարինվում է նիզակի և սրի մենամարտի։ Սկզբում հաղթանակի շանսերը հայերի կողմն էր, Թշնամու բանակում առաջանում է խառնաշփոթություն. հայկական գրվող զորագնդերը, ոգևորված հայրենիքի վեհ գաղափարով, ամենանաբար մոտենում են գետին, նեղում Թշնամուն, անցնում են գետը և հարվածն ավելի շեշտակի դարձնելով՝ մեծ ջնջում հասցնում պարսիկներին։

Երկու հակառակորդ բանակների արևմտյան՝ հայերի աջ և պարսիկների ձախ թևերն իրար դիմաղրում են մինչև երեկո. այդ թևում հայ զորավարներից ընկնում են Խորենը, Աբսենը և Ներսեհը։ Կենտրոնական հատվածում նույնպես մարտն ընթանում էր հավասարազոր չափով, և նույնիսկ հաճախ հայերը նեղում են պարսիկներին։ Իսկ արևելյան՝ հայերի ձախ և պարսիկների աջ թևերը, որտեղ հայերի դեմ մասամբ կռվում էին դահճան Վասակի զորքերը, պատերազմն ավելի կատաղի բնույթ է ստանում։ Հայերը նեղում են պարսիկներին, կոտորելով վերջինի աջ թևը և ջրում գետի կենտրոնը։ Հակառակորդի բանակում եղած խուճապն ավելի է ուժեղանում, դնելով Նիսալավուրտին ծանր պայմանների մեջ։ Սակայն այդ վճռական ժամենտին, հայկական զորամասից մի թուլամորթ գունդ, Վասակ Սյունեցու հորդորմամբ մի քանի ազդեցության տակ, երկչոտաբար դուրս է գալիս պատերազմի դաշտից և վախչում։ Դրանով այդ գունդը շփոթ է առաջացնում հայերի մեջ, բայց Վարդանը՝ իր զինվորական տաղանդի և հմտության շնորհիվ, կարողանում է շատով վերականգնել կարգը և առաջացած խուճապի առաջն առնել։ Բայց այդ խուճապը և հայկական գնդի փախուստը փոխում է պատերազմի ելքը հօգուտ պարսիկների։

Վարդանը նկատելով, որ իր բանակի ձախ թևը նեղվելով Թշնամուց ետ է քաշվում, վերջապես մի գնդով օգնության է գնում ու կասեցնում հայերի նահանջը, ապա անցնելով առաջ հարձակվում է պարսկական աջ թևի վրա։ Նա չարդելով և ետ մղելով այդ հատվածի զորքերին, ջրում է նրանց մինչև պարսկական բանակի կենտրոնը։ Այդ դեպքից ոգևորվելով ճակատի կենտրոնական հատվածի հայկական զորամասի զորավարներն Վահան Ամատունու գլխավորությամբ ուժգին գրոհով հարձակվում են պարսկական բանակի վրա, շփոթեցնում Թշնամուն և ջրում գետի արևելք, որով և պարսկական բանակի երկու թևերը խառնվում են իրար, ընկնում Վարդանի ու Վահանի խաչաձև հարվածների տակ։ Եվ հայկական այդ երկու փոքրիկ զորա-

զնդերի թիվը մեծ լիներ և վերջապահ գունդը կարողանար ժամանակին օգնության հասնել, խուճապի մատնված պարսկական բանակը վճռական ու մահացու հարված կստանար։ Սակայն այնուամենայնիվ, նրանք իրենց վճռական հարվածներով ճեղքում են այսպես կոչված պարսկական 10 հազար հոգուց բաղկացած «անհաղթ մատյան» գունդը, 140 մարդ սպանում նրանցից, խուճապի մատնում պարսկական հսկայական բանակին և հարկադրում նրան բռնել փախուստի ճանապարհը։

Բայց այդ վճռական րոպեին իր զնդով հանդես է գալիս Վասակ Սյունին։ Սպարապետ Վարդանը վրեժով լցված, զառնում է դեպի զավաճանը, որը օձի պես սողալով Վարդանի ոտից փախչում ու թաքնվում է փղերի զնդում։ Դա մի դիվանագիտական նենգ խաղ էր խորամանկ Սյունեցու կողմից, որով նա ձգտում էր սոսկել Վարդանին իրան հետապնդելով խորանալ փղերի զնդի մեջ, որպեսզի այդտեղ, հենց այդ փղերի մեջտեղում առյուծը զառնար իր կյանքի վերջը։ Բայց սպարապետը վառված վրեժխնդրության բոցով, առանց իրեն հաշիվ տալու, իր փոքրաթիվ զնդով հետապնդում է զավաճանին, մտնում փղերի զնդի մեջ և աջ ու ձախ հարվածում թշնամուն, մոռանալով, որ կտրվում է իր հիմնական զորամասերից և փղերի կողմից շրջապատվելու վտանգ է ստեղծվում թե իրեն և թե իր զնդի համար։

Պարսկական բանակի զորավար Նիսալավուրը, որ կենաց ու մահվան կռիվ էր մղում և պարտությունն անխուսափելի էր համարում, նկատելով Վարդան սպարապետի խորանալն իր բանակի մեջ, որի հետևանքով առաջացել էր կտրվածություն հայկական բանակի կենտրոնի ու ձախ թևի միջև, օգտվում է այդ առիթից, ոգևորվելով ու խրախուսվելով վերացնում է շփոթվածությունը իր զորամասերի մեջից, նորից վերադասավորում է բանակը, վերականգնում շփոթված ու ցրիվ եկած «անհաղթ մատյան» գունդը և կրկին վերսկսում պատերազմական գործողությունները։ Նիսալավուրն այս անգամ իր բանակը բաժանում է երկու մասի, մի մասը կենտրոնացնում է Վարդանի և Վահանի փոքրաթիվ զնդերի դեմ, իսկ մյուս մասը կենտրոնացնում է վերոհիշյալ զնդերից բավական հեռու մնացած հայկական զորքերի ձախ և աջ թևերի դեմ։ Նա միաժամանակ հրամայում է իր զորավար Սրատաշիրին, իրարից հեռու գտնվող այդ երկու

հայկական զորամասերին անջատել իրարից փղերի զնդով։ Իրոք, Սրատաշիրը մի կողմից փղերի հրամաններով փակում է իրարից բաժանված հայկական զնդերի միջև եղած անցուղին, իսկ մյուս կողմից, պարսկական հատուկ մի զորագնդով և փղերի օգնությամբ առաջ է անցնում, երեք կողմից շրջապատելով Վարդանին և նրա զնդին, որն արդեն կտրված էր հայկական բանակի գլխավոր ուժերից։

Վարդանը Վահանի հետ շրջապատվելով պարսկական զորամասերի կողմից, չի հուսահատվում։ Նրանք փոքրաթիվ զորքերով մի քանի ժամ անընդհատ հերոսաբար կռվում են պարսիկների դեմ և հարյուրավոր պարսիկ զինվորներ ոչնչացնում։ Զորավարն իր խրոխտ ու առնական ձայնով մշտապես հուսադրում էր յուրայիններին։ Բայց հայկական գլխավոր ուժերից օգնություն չստանալով, չի կարողանում ճեղքել պաշարումը և դուրս գալ շրջապատումից, որովհետև պարսիկները չորս կողմից փղեր էին կենտրոնացրել, իսկ հեռվում դանդող հայկական զնդերի փոքրաթիվը Վարդանին պաշարումից դուրս բերելու համար, ժամանակում են անհաջողություն։ Ըստ հայկական տեղեկությունների, Վարդանը, Վահան Արծրունին և մի շարք գլխավորներ մինչև վերջին շունչը կռվելով, օրվա երեկոյան կողմը ընկնում են պատերազմի դաշտում հերոսի մահով։ Վարդանի և Վահանի հետ միասին պատերազմի դաշտում հայ զորավարներից փառապանծ մահով ընկնում են նաև Տաճատ Գնթունին, Արտակ Պալունին, Հմայակ Դիմաքսյանը, Վահան Գնունին, Գաբրիել Սրվանձտյանը, Խորեն Խորխոռունին և Արսեն Ընձայցին։ Վերոհիշյալ անուննները ցույց են տալիս, որ պատերազմի դաշտում ընկնում են հայ ազնիվ ընկնող զորավարները, որոնց թվում մինչև անգամ ռազմաճակատի առանձին թևերի հրամանատարները և դա հետևանք էր այն անձնուրաց հայրենասիրության, որ հայ ժողովրդի զավակները Վարդանի գլխավորության ժամը վճռել էին կռվել հանուն իրենց հայրենիքի ազատության և անկախության։

Հայկական բանակի հրամանատարական կազմը, հաշվի առնելով գլխավոր հրամանատարի և մի շարք աչքի ընկնող զորավարների մահը, հայկական բանակի մեջ տիրող հուսահատությունը և այն, որ այլևս հնարավոր չէր շարունակել պատերազ-

մը, մանավանդ որ հոնների կողմից խոստացված օգնությունը չէր ստացվել, վրացիներն ու արևմտյան հայ իշխաններն իրենց զորքերը ժամանակին չէին ուղարկել Կովի դաշտը, ուր Երեկոյան որոշում են Կովի դաշտից դուրս բերել զորքը, նա քաշվել երկրի խորքը, ամրանալ անառիկ վայրերում, բերդերում, ամրոցներում, լեռնային մասերում և շարունակելով կռիվը, ստիպել պարսկական բանակին մասերի բաժանվել և զբաղվել առանձին բերդերի, ամրոցների պաշարման ու գրավման գործով։ Դրանով հայերի նպատակն էր հյուծել և մաշել պարսկական մեծ բանակը՝ Հայաստանի լեռներում, կիրճերում, ամրոցների և բերդերի պարիսպների տակ։ Այդպիսով, 451 թվի մայիսի 26-ին հայկական բանակը մի ամբողջ օր կատարի կռվից հետո, Երեկոյան կողմը պատերազմի դաշտում լուրջ հարված տալով պարսկական բանակին, և ինքն էլ թողնելով 1036 դեմ, նա է քաշվում և միանում վերջապահ զնդին ու ցրվում երկրի տարբեր մասերը։ Հայկական բանակը թողնելով բաց ճակատամարտը, ամրանալով երկրի անմատչելի բերդերում, ամրոցներում և անառիկ վայրերում, նորից շարունակում է դիմադրությունը ցույց տալ պարսկական բանակին։ Ավարայրի մեծ պատերազմում, իրենց անձնվեր ու ապնիվ զործողությամբ աչքի են ընկնում վերջապահ զնդի հրամանատարները Համազասպ Մամիկոնյանը, Վարդան սպարապետի փոքր եղբայրը և Արշավիր Կամսարականը՝ Վարդանի փեսան։

Ավարայրի դաշտից հայկական բանակի նա քաշվելը պարտության հետևանք չէր, ինչպես սովորաբար ընդունված է ասել մինչև այժմ։ Այդ նշանակում էր բայց և ընդհանուր ճակատամարտից խուսափելով անցնել պարտիզանական կռիվներին և թշնամուն հյուծելու ռազմական տակտիկային,

Մայիսի 26-ի Ավարայրի ճակատամարտում, ըստ Եղիշեի, հայերից ընկնում են 9 զորավար, 287 զինվոր ազատներից և 740 շարքային զինվոր գյուղացիներից՝ աշխարհազորականներից։

«Այս երկու հարյուր ութսուն և յոթ նահատակները, ինք մեծամեծ նախարարների հետ միասին այնտեղ վայր ընկեցին իրենց կյանքը։ Բացի այս երկու հարյուր ութսուն և յոթ մարդուց, այդ նույն օրը մեծ պատերազմում իրենց անուններն գրեցին արքայության մատյանում այլևս յոթ հարյուր քառասուն

մարդ։ Բոլոր նահատակների թիվը միասին լինում է հազար երեսուն և վեց։

Իսկ ուրացողների և հեթանոսների կողմից այդ օրը սպանվեցին երեք հազար հինգ հարյուր քառասուն և չորս մարդ և նրանցից ինը հոգի մեծ և պատվավոր մարդիկ էին, այդ պատճառով շատ սաստիկ վիրավորվեցավ Մուշկան Նիսալավուրը»։

«Այս երկերիւր ութսուն և եօթն նահատակք, ընդ իւրեանց մեծամեծ նախարարան անդէն ի տեղւոջն կատարեցան...։ Բազ զայս երկերիւր ութսուն և եօթն, և այլ ևս եօթն հարիւր և քառասուն այլ, որք գտանուանս իւրաքանչիւր ի գպրութիւն կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծ պատերազմին։ Եւ միահամուռ լինի ամենայն հազար Ա երեսուն և վեց։

Իսկ ի կողմանէ ուրացելոցն և հեթանոսաց անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր։ Ինն այր ի նոցանէ ի մեծ պատուաւորացն էր, վասն որոյ և կարի յոյժ ի խոր խոցեցաւ Մուշկան Նիսալաւուրն»։[1] Այդպիսով Եղիշեի բերած թվերը հաշվելով ստացվում է 287+9+740=1036 հոգու, որոնք սպանվում են նույն օրը Ավարայրի պատերազմում, իսկ պարսիկների սպանվածների թիվը ցույց է տալիս 3544 հոգի, այսինքն մոտ երեք ու կես անգամ ավելի, քան հայերի կորուստները։ Դազար Փարպեցու ասելով, Ավարայրի պատերազմում հայերից սպանվում են 9 զորավար և 276 նախարար ու դինվոր, իսկ 750 հոգի էլ ամրոցներից իջեցնելով պարսիկները սպանում են Ավարայրի պատերազմից հետո. «Ինչպես շատ քննութեամբ իմացանք, նույն պատերազմի դաշտում մեծ նախարարների հետ նահատակվածների թիվը երկու հարյուր յոթանասուն և վեց էր։ Եվ նրանք, որոնց ամրոցներից իջեցնելով սրով սպանին և փղերի ոտքերով կոխոտեցին, յոթն հարյուր և հիսուն էին, որոնք բոլորը միասին լինում են հազար երեսուն և վեց մարդ...։ Իսկ պարսից զորքերից, որոնք սպանվեցան այն օրը պատերազմի մեջ և որը պարսից զորագլուխներից ստույգ տեղեկանալով՝ պատմեցին մեզ երեք հազար հինգ հարյուր քառասուն և չորս մարդ էին»։ «Եւ որպէս շատ խուզիւ և բազում քննութեամբ հարցեալ և ուսաք զնահատակելոցն թիւս, որք ի

[1] Եղիշե, էջ 156։

տեղւոջ պատերազմին պսակեցան ընդ աւագ նախարարան՝ երկերիւք եօթանասուն և վից այր։ Եւ զորս յամրոցացն իջուցեալ սպանին սրով և կամ փղօք կոխեցին՝ եօթն հարիւր և յիսուն այր. որք լինին միահամուռ հազար երեսուն և վից այր... Իսկ ի զօրացն Պարսից, որք անկան ի պատերազմին յաւուրն յայնմիկ, զոր սուտիւ համարեալ պատմեցին մեզ, տեղեկացեալք ի զօրագլխացն Պարսից, երեք հազարք հինգ հարիւր քառասուն և չորս այր»։[1] Այսպիսով, ըստ Փարպեցու հաշիվների, ոչ թե Ավարայրի պատերազմում, այլև ամբողջ 451 թվի կռիվների ընթացքում հայերից սպանվել էին 276+9+750=1035 հոգի, տարբերությունը Եղիշեից մեկ հոգու մեջ է։ Իսկ պարսիկների սպանվածների թվի մասին երկու պատմիչներն էլ համաձայն են իրար հետ։ Գլխավոր տարբերությունն այն է, որ ըստ Եղիշեի Ավարայրի կռվում սպանվում են 1036, իսկ ըստ Ղազար Փարպեցու՝ միայն 285 հոգի, մնացած 750-ը սպանվում են Ավարայրից հետո, Հայաստանի տարբեր մասերում։ Այստեղ ճիշտ պետք է համարել Եղիշեի տվյալները, որովհետև պարսիկներից սպանվածների թիվը երկու պատմիչներն էլ ցույց են տալիս 3544 հոգի, իսկ հայերից ըստ Փարպեցու՝ միայն 285 հոգի։ Վերջին թիվը երբեք ճիշտ լինել չէր կարող, քանի որ պարսիկները ունեին ավելի մեծ ուժ, մանավանդ որ հայերի զորքը կռվի դաշտից հետ էր քաշվել դեպի երկրի խորքերը, ճակատամարտը հղել էր կատաղի, հայերը կորցրել էին իրենց զորավարների մի զգալի մասը (միայն Վարդանի տոհմակից դինվորներից սպանվում են 133 մարդ և այլն), հետևաբար նման կատաղի ու մեծ ճակատամարտում, երբ վերջում հայերի համար պայմաններն աննպաստ էին, նրանց կողմից չէին կարող զոհվել այդքան քիչ լինելու։ Ուստի հավանական պետք է համարել Եղիշեի ցույց տված թիվը, այսինքն Ավարայրի ճակատամարտում ընկել են իրոք 1036 հոգի։

Այս թվերի համեմատությունը մեզ բերում է այն եզրակացության, որ Եղիշեի գիրքը Փարպեցու աշխատությունից առաջ է գրվել և Փարպեցին, եթե չի օգտվել Եղիշեից, գոնե լսել է նրա մասին մարդկանցից։ Փարպեցին նույնիսկ չի ճշտում,

[1] Փարպեցի, էջ 154—155։

թե արդյոք իր բերած թվերի գումարը համապատասխանում է 1036-ի, թե ոչ։ Փարպեցու մեջ բերած թվերի գումարը հավասար է 276+9+750=1035 հոգու, նրա բերած թվերի գումարը 1036 չի տալիս։ Սրանից պարզ երևում է, որ Փարպեցին 1036 թիվը ուղղակի կամ անուղղակի վերցրել է Եղիշեից։ Վերոհիշյալ թվերը, որոնք ցույց են տալիս պատմիչները, նորից գալիս են ապացուցելու, որ Ավարայրի ճակատամարտը կրել է կատաղի բնույթ թե մեկ և թե մյուս կողմերի համար։ Սակայն, Ավարայրի ճակատամարտից հետո, անշուշտ, կատարածներն ու սպանությունները երկու կողմից էլ տեղի են ունեցել, թերևս հայերից ավելի շատ, որոնք չեն մտնում վերը բերված թվերի մեջ։ Իսկ ինչ վերաբերում է Ավարայրի դաշտում սպանվածներին երեք մասի բաժանելուն, մեր կարծիքով, Եղիշեի մատնանշած 9 հոգին այն ընկնող իշխան-զորավարներն են, 287 հոգին՝ իշխանների—աղնվական ծագում ունեցող կռվողներ և 740 հոգին հասարակ դինվորներ, այսինքն գյուղացիներ։ Նույնը պետք է ասել Ղազար Փարպեցու ցույց տված 9, 276 և 750 թվերի մասին։

Այժմ անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչու հայերն առանց լուրջ պատրաստության են ձգտում Ավարայրի դաշտից դեպի երկրի խորքը, մի հանգամանք, որ որոշ ուսումնասիրողներին բերել է այն եզրակացության, թե այդ ճակատամարտում հայկական բանակը պարտություն է կրել։ Ավարայրի ճակատամարտից հայերի հետ քաշվելու պատճառները հետևյալներն են. նախ պետք է նկատի ունենալ, որ Վասակին հաջողվել էր, ինչպես ցույց ենք տվել, բավական մեծ թվով նախարարներ, նրանց զորքը և հայ Արշակունյաց ժամանակվանից պահպանված արքունի գնդերի որոշ մասը գրավել իր կողմը,[1] որոնք փոխանակ հայերի կողմում կռվելու, ընդհակառակ, կռվում էին հայերի դեմ։ Այս ներքին հիմնարար հակասությունը Հայաստանում միանակար էր հայերի և ընդհակառակը շահավետ՝ պարսիկների համար։ Փաստորեն, դավաճան Վասակին հաջողվել էր չլուծել երկրի կռվող ուժը և նրա մեկ երրորդ մասը իր կողմը գրավել. դրանով նա ուժեղ հարված էր հասցրել հայերին Ավարայրի դաշտում։

Երկրորդ, որ ինչպես Արևմտյան Հայաստանի հայ

[1] Եղիշե, էջ 118—119։

իշխաններից, ինչպես նաև Փոքր Ասիայի Անատոլ զորավարից հայերը ոչ մի օգնություն չստացան, այնինչ, հատկապես հայ նախարարները, մեծ օգնություն կարող էին ցույց տալ։ Բյուզանդական նոր կայսր Մարկիանոսը, ինչպես նշել ենք, ոչ միայն չի հաճանձնում օժանդակել հայերին, այլև կարդագրում է հայ իշխաններին և արևելյան հունական բոլոր զորավարներին, ոչ մի օգնություն և օժանդակություն ցույց չտալ։

Երրորդ պատճառը, թուլլ կազն է հայ վրացի և ազվանժողովուրդների միջև։ Ճիշտ է, որ սկզբում երեք երկրների կառավարիչները որոշում են միասին վճռական պայքար մղել, բայց Աղվանքի Վաչագան Թագավորը 451 թվին հաշտվում է Տիզբոնի արքունիքի հետ և չի մասնակցում պատերազմին, վրաստանից էլ առանձին օգնական զորք չի գալիս և 451 թվին վրացիները թուլլ մասնակցություն են հանդես բերում պարսիկների դեմ մղված պայքարում, մանավանդ Ավարայրի ճակատամարտում։

Չորրորդ, հոները, որ խոսք էին տվել վարդան Մամիկոնյանի դեսպաններին պարսիկների վրա միշտանք կատարելու, ուշ են սկսում իրենց հարձակումները, այսինքն այն ժամանակ, երբ արդեն հայերը Ավարայրի դաշտից հետ էին քաշվել, և Պարսկաստանը գրեթե իր բոլոր ռազմական ուժերը կենտրոնացրել էր Ավարայրում։ Այսպիսով, փաստորեն 451 թվի մայիսի 26-ին Ավարայրի ճակատամարտում պարսիկների դեմ կռվում էին միայն հայկական զորքերը, այն էլ ոչ բոլորը։

Հինգերորդ պատճառը պարսկական բանակի թվական և ռազմական գերակշռությունն էր հայկական զորքի նկատմամբ։ Տիզբոնի արքունիքն իր ձեռքն ու ոտքն աղատելով մի շարք արտաքին արշավանքներից, պատերազմներից ու ներքին կռիվներից, իր ամբողջ ուշադրությունը դարձրել էր Հայաստանի ապատամբությունը ճնշելու վրա։ Պարսկական կանոնավոր բանակի թիվը Ավարայրի դաշտում հասնում էր մոտ 180 հազարի, պատերազմի էին դուրս բերել արքունի «անհաղթ մատյան» գունդը և պատերազմական փղերը։ Պարսկական բանակին էր միացել նաև զավաճան հայ իշխանների զորքերը՝ վասակի գլխավորությամբ։ Պարսկական մեծ բանակի դիմաց հայերն ունեին 66 հազարանոց բանակ, որի մի մասն էլ լավ սպառազինված չէր։ Դա ցույց է տալիս, որ վարդանի բանակի զգալի մասը կազմում էին աշխարհազորականները՝ գյուղացիները, որոնք դուրս էին եկել կռվի պարսկական զաժան լուծը թոթափելու համար։

Վեցերորդ, դա վարդան սպարապետի, որպես զորավարի, կատարած մի քանի տակտիկական սխալներն էին։ Ավարայրում։ 1. Որ նա պատերազմ է մղում պարսիկների դեմ բաց ու լայն դաշտում և թուլլ է տալիս թշնամուն մեծ բանակին մանևրելու։ 2. Տմոուտ գեղն անպնելով վարդանը հողնեցրել ու թուլացրել էր զորքը, որը չէր կարողանում մանևրել հետ ու առաջ։ 3. Վարդանը փաստորեն իր բոլոր զորամասերը մասնակից էր արել կռվին և չէր առևղծել ուժեղ պահեստային զորամաս հարկ եղած դեպքում այս ու այն թևին լուրջ օգնություն ցույց տալու համար։ Ճիշտ է, նա առևղծել էր մի չորրորդ զորամաս, բայց այդ զորամասն ավելի շուտ պահպանում էր թիկունքը և հնարավորություն չուներ լուրջ օժանդակություն ցույց տալ թշնամուց նեղվող թևին։ 4. Որ ինքը՝ վարդանը, որպես զորավար չպետք է մասնակցեր անձամբ կռվին ու սպանվեր և բանակը թողներ անգլուխ, առանց դեկավարի։ Ճիշտ է, որ նրա՝ կռվի մեջ մտնելը ոգևորում է զորքի մի մասին, բայց զգալի մասը հեռու է ճնում նրա տեսադաշտից։ Վարդանը պետք է պարսիկների դեմ պատերազմ վարեր նրանց համար անծանոթ վայրում, մանր կռիվների տակտիկայով թշնամուն նեղելու, հյուծելու քաղաքականության միջոցով և ինքը միշտ պետք է գլխավորեր կռվողներին առանց իր անձը վտանգելու։ Նա չպետք է Տմոուտ գեղն անցներ և հնարավորություն տար փղերին ազատ գործելու։ Նա միշտ պետք է մնար Տմոուտ գեղի հյուսիսային ափին, բոլոր պատրաստությունները ընթացք, մշտապես պահեր հաղորդակցությունը Տմոուտի հարավային ճահիճների միջև։ Ահա այն հիմնական պատճառները, որոնց հետևանքով հայերը Ավարայրի պատերազմից հետ են քաշվում դեպի երկրի խորքը, բայց համատարած փոխադրելով մանր կռիվների տակտիկայով։ Սակայն, չնայած դրան, այնուամենայնիվ հայերն իրենց նվիրվածությամբ մեծ ջարդ են տալիս պարսկական մեծ բանակին և մի օր տևող կռվում կոտորում են 3544 պարսիկ այն ժամա-

նակվա պրիմիտիվ տեխնիկայի ու ռազմական տակտիկայի պայմաններում։ Այդ մեկը մեծաժամանակ ցույց է տալիս հայ ժողովրդի հերոսական դիմադրությունն Ավարայրում, որը հայ-պարսկական պայքարի կուլմինացիան կնան էր։

XVI. ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՆԵՐԸ ԱՎԱՐԱՅՐԻՑ ՀԵՏՈ

Ավարայրի ճակատամարտից հետո հայերը այլևս գլխավոր և բաց ճակատամարտ չեն տալիս, նրանք կռվի դաշտից հետ քաշվելով, ցրվում են իրենց նահանգներն ու գավառները, ամրանում երկրի բերդերում, ամրոցներում և անառիկ վայրերում ու շարունակում են դիմադրությունն ցույց տալ պարսկական բանակին, պարտիզանական կռվի ձևով։ Մուշկան-Նիսալավուրքը և Վասակը նույնպես իրենց զորքերը ցրում են Հայաստանի տարբեր գավառներում և հետապնդելով հետ քաշվող հայերին՝ նպատակ են դնում իրենց առաջ, կարճ ժամանակվա ընթացքում վերջ տալ հայկական զորքերի դիմադրությանը։ Սակայն հեշտ չէր կոտրել մի ամբողջ ժողովրդի համառությունն ու հաստատակամությունը, որը վճռել էր կռվել մինչև իր կյանքի վերջին շունչը և խորտակել պարսկական բանության շղթաները։ Հայ ժողովուրդը քաջ գիտակցում էր Ավարայրի բերդել նշանակությունը, որ «գիտակցական մահը անմահություն է», և իրոք, պարսկական բանակը ի վիճակի չդտնվեց վերջ տալու հայերի դիմադրությանը։

Պարսկական հրամանատարությունը տեսնելով, որ կռիվները երկարում են, դավաճան Վասակի միջոցով նորից բանակցություններ է սկսում ամրոցներում և բերդերում ամրացած նախարարների հետ, փորձելով համոզել նրանց, որ միակ փրկությունն անձնատուր լինելու մեջ է։ Բայց Վասակի այդ վերջին փորձը նույնպես անցնում է անհետևանք։ Հայերը լավ էին հասկանում Վասակի և պարսիկների խարդախ ու խորամանկ քաղաքականությունը և շարունակում ուժեղացնել իրենց դիմադրությունը։

Սակայն, չնայած դրան, պարսկական զորամասերին հաջողվում է, թե բանի և թե խորամանկ հնարավորություններով գրավել մի քանի կենտրոնական բերդեր ու ամրոցներ և դաժան պատասխան տեսնել բերդապահ զորքերի հետ։ Այդ տեսակետից ուշագրավ է Անգեղ բերդը, որտեղ Հովսեփ կաթողիկոսի, Ղևոնդ Երեցի հետ ապստամբ էին դուրս բնակչության մեծ բազմությունն և որոշ թվով դինվորներ Բակ զորավարի գլխավորությամբ։ Պարսկական զորքերի կողմից երկար ժամանակ պաշարված բերդի բնակիչները սպառել էին ուտելիքը և ընկել նեղ դրության մեջ։ Բերդում պաշարվածների մեջ կային նաև այնպիսի մարդիկ, որոնք հավատալով Վասակի նենգ խոստումներին, ցանկանում էին անձնատուր լինելով «փրկել» իրենց կյանքը։ Սակայն, Բակ զորավարը ոչ միայն չի համաձայնում անձնատուր լինել, այլև ուժեղացնում է բերդի պաշտպանությունը։ Պարսկական բազմաթիվ դինվորներ իրենց գերեզմանն են դտնում բերդի պարիսպների տակ։ Բակ զորավարը հաշվի առնելով, որ անձնատուր լինելու կողմնակիցների թիվը գնալով շատանում է, այն էլ ազդեցիկ մարդկանցով, ստիպված է լինում իր 700 դինվորները վերցնել և դուրս գալ բերդից։ Նա ճեղքում է թշնամու շղթան, լուրջ կորուստներ է պատճառում բերդը պաշարած պարսկական զորամասերին և իր գնդով ազատվում է։ Իսկ ամրոցում մնացած 213 դինվորները, բնակչությունը, Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ Երեցը և բազմաթիվ այլ հոգևորականներ անձնատուր են լինում, որովհետև այլևս վերկրության ելք չկար։ Պարսիկները բերդը գրավելուց հետո զորքերին և նրանց դեկավարներին անխիղճ կոտորում են,[1] իսկ ժողովրդին և հոգևորականներին ազատ են արձակում հույս ունենալով, որ ազատ արձակված հոգևորականները, մանավանդ Հովսեփ կաթողիկոսի և Ղևոնդ Երեցի միջոցով կկարողանան համոզել ժողովրդին անձնատուր լինելու։ Սակայն, երբ Հովսեփը և Ղևոնդը սկսում են մեղադրել Վասակին, այն ժամանակ Մուշկան-Նիսալավուրքը նրանց վերցնում է հսկողության տակ և զգուշությամբ պահում է Տիզբոն ուղարկելու համար։ Այդպիսի խորամանկ ու բռնի միջոցներով և Վասակի անմիջական օգնությամբ պարսկական զորամասերին հաջողվում է գրավել Արտաշատը, Արտաղը, Գապուլյաը և մի քանի այլ բերդեր ու ամրոցներ, բայց

[1] Տես «Հայսմավուրք» հատ. Բ. էջ 66, նիսան, էջ 160։

ու քանդ անել երկրի մի շարք կենտրոնական նահանգներ, գավառներ ու քաղաքներ։

Սակայն, հայերի դիմադրությունը շարունակվեց նաև հետագայում։ Երկրի տարբեր մասերում դեռ կային շատ բերդեր, ամրոցներ ու անառիկ վայրեր, որոնք շարունակում էին ոչ միայն դիմադրել պարսիկներին, այլ որոշ վայրերում ջախջախել թշնամուն, եւ շպրտել նրանց բերդերի պարիսպների տակից։ Այդպիսի դիմադրող ամուր վայրերից մեկն էր Տայքը։ Այդտեղ Համայակ Մամիկոնյանը, որ դեսպանության հետ մեկնել էր Բյուզանդիա օգնություն խնդրելու նպատակով և այնտեղից ձեռնունայն վերադառնալով չէր կարողացել մասնակցել Ավարայրի պատերազմին, ամրացել էր Տայք նահանգի Մաղասյաց գավառում։ Նա իր շուրջը համախմբելով Ավարայրի պատերազմից նահանջած զինվորների որոշ մասին, ինչպես և մի շարք նախարարների, ազատների ու դյուղացիների[1] լուրջ դիմադրություն է կազմակերպում պարսիկների դեմ։

Հայաստանում պարսիկների ձեռնարկած գործերն այնքան էլ հաջող ելք չունեցան։ Հազկերտ II-ը անբավական էր այնտեղ կատարված անցքերից, որովհետև նախ՝ չկարողացավ հասնել իր հետապնդած նպատակներին և երկրորդ՝ կորցրեց իր ընտիր զորամասերի զգալի մասը։ Հայկական ապստամբությունը ճնշելու ձախողումը և բերդերի ու ամրոցների շուրջը շարունակվող կռիվները ծանր կացություն էին ստեղծել Տիզբոնի համար։ Մանավանդ որ հոներն էլ իրենց հերթին թևև ուշացած, բայց արդեն արևելքից ու Դերբենդից սկսել էին իրենց արշավանքները։ Տիզբոնի արքունիքն ստիպված էր կռվել վտանգավոր այդ նոր թշնամու դեմ։ Հայկական կռիվների հետևանքով, Սասանյան արքունիքը զրկվել էր Հայաստանի կռվող ուժից, որը հաճախ օգտագործվում էր հոների դեմ պատերազմներ վարելիս։ Փարպեցու ասելով, Հազկերտը հատկապես շատ էր դժգոհում թե՛ Վարդանի նման կռվող զորավարի կորստյան պատճառով[2] և թե՛ այն հարկերից զրկվելու համար, որ պարսիկները գանձում էին Հայաստանից։ Այդ հանգամանքները հաշվի առնելով, Տիզբոնի

[1] Փարպեցի, էջ 157։
[2] Նույնը, էջ 155։

արքունիքը ստիպված էր փոխել իր վարած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և դործին նոր ընթացք տալ։

Հազկերտ II-ը հաշվի առնելով, որ երկու ճակատում պատերազմ վարելը ոչ միայն կորստաբեր է, այլև անհնարին, կարգադրում է Նիսալավուրտ զորավարին զորքի հիմնական մասը դուրս բերել Հայաստանից և շարժել հոների դեմ։ Վասակին նա ազատում է մարզպանության պաշտոնից, որովհետև նա ապստամբության ընթացքում իրեն վարկաբեկել էր և հնարավոր չէր նրան թողնել երկրի մարզպան։ Նրա փոխարեն նոր մարզպան է նշանակում Ատրոթմիդ պարսիկին, որը Նիսալավուրտի բանակում ծառայում էր որպես զորավար և մանավանդ էր Հայաստանում տեղի ունեցած կռիվներին ու հալածանքներին։ Նոր մարզպանը բերդերում և ամրոցներում պաշտպանված բոլոր հայերին հաղորդում է Թագավորի այն նոր կարգադրության մասին, ըստ որի Թագավորը խոստանում է թեթևացնել հարկերը, պաշտպանել քրիստոնեության, վերականգնել նախարարների ատենատիրական և կալվածային իրավունքները։ Իր հերթին մարզպանն ավելացնում է, որ բոլորին ներում է ջնորհում, կարող են բերդերից, Թաքստոցներից դուրս գալ և վարել խաղաղ ու նորմալ կյանք։[1]

Ատրոթմիդ մարզպանն ըստնելով առավել ևս դիջումների ճանապարհը, հրաժան է արձակում երկրի բնակչությանը, «պատանիներին», «շինականներին» և եկեղեցականներին, նրանց, որոնք երկրից փախել են, վերադառնան իրենց տեղերը, իսկ բերդերում, ամրոցներում, անառիկ վայրերում ամրացածները, Թաքնվողները, անխտիր դուրս գան և տեր դառնան իրենց կալվածքներին ու իրավունքներին։ Այս կարգադրություններն ու հրամանները մի կողմից դիջումներ էին, իսկ մյուս կողմից խորամանկ քաղաքականություն։

Այդ ճանապարհով մարզպանին հաջողվում է երկրի կռվող ուժի մեծ մասին բերդերից դուրս բերել։[2] Բայց չնայած դրան, մի շարք վայրերում, մանավանդ Տայքում, Արցախում և Տմո-

[1] Փարպեցի, էջ 156։
[2] Նույնը, էջ 160։

քիքուժ ապատամբ պարտիզանական խմբերը շարունակում են կռվել և անձնատուր չեն լինում։

Աարոմիզդ մարզպանը, Հմայակ Մամիկոնյանի գլխավորած Տայքի Ջոկատը ոչնչացնելու համար, նրա դեմ ուղարկում է պարսկական կանոնավոր մի զորամաս, ինչպես և դավաճան հայ իշխաններ Աբասն Գաբեղյանին և Վաբազշապուհ Պալունուն իրենց գնդերով, որովհետև Հմայակի խումբը լուրջ վնասներ էր պատճառում պարսիկներին։ Պատմագիրը Եղիշեի ասելով, մի անգամ, երբ պարսկական զորամասերից մի դունդ Նիսալավուրան ուղարկվել էր Տայք հանանդի Զորագլուխը ապատամբներին հարվածելու և այնտեղի հարստությունները ձեռք բերելու համար, վերջիններս հարձակման են ենթարկվում հայերի կողմից և մեծ կորուստներ տալով հետ են քշվում։

Աբասն Գաբեղյանի և Վաբազշապուհ Պալունու զորագնդերը հասնելով Տայք, գաղտնի կերպով հարձակվում են Որջնհաղ գյուղի վրա՝ որտեղ գտնվում էր Հմայակի պարտիզանական ջոկատը։ Ցերեկ է ընտրում կատարի կռիվ, հայերը պարսիկներին և դավաճան հայ իշխանների զորքի մի մասին գյուղում, իսկ մի մասին էլ այգիներում կորում ու հետ են շպրտում, բայց այդ կռվում սպանվում է Հմայակ Մամիկոնյանը։ Հայերը հաշվի առնելով իրենց զեկավարի սպանությունը, թողնում են Որջնհաղ գյուղը և քաշվում դեպի Պարխար լեռը։[1] Հետագայում այդ զորախումբը նորից վերակազմվում և շարունակում է իր պայքարը պարսկական նվաճողների դեմ։ Մի այլ պարտիզանական ջոկատ, որն ավելի ուժեղ էր, քան Տայքինը, Արցախի (Դարաբաղի) անառիկ վայրերում ու անտառներում ամրացած գնդերն էին, որոնք շարունակում են համառ ու կատաղի պայքար մղել պարսիկների դեմ։ Պարսկական կանոնավոր զորամասերը վախենալով դուրս չեն գալիս Արցախի գնդերի դեմ, որովհետև նրանք օգնություն էին ստացել հոներից, Վարդանի հետ կնքած պայմանագրի համաձայն։ Արցախի հայկական կռվող զորամասերին օգնության եկող հոնական սպառվական ուժերը, որոնք Պարսկաստանի մի շարք կողմերից հարձակումներ էին գործում, ստիպում են Հաղկերտին պարսկական գլխավոր զորամասերը, Նիսալավուրի գլխավորությամբ դուրս բերել Հայաստանից։

[1] Փարպեցի, էջ 158—159։

Պարսկաստանին լուրջ հարված են հասցնում նաև Տմորիքի հայկական ջոկատները։ Նրանք ոչ միայն պահպանեցին իրենց դոյությունը Տմորիքի անառիկ վայրերում և իրենց վրա հարձակվող պարսկական գնդերին ջարդելով ետ շպրտեցին, այլև հարձակումներ են գործում Միջագետքի վրա, հասնում մինչև Տիզբոնի դռները և մեծամեծ ավարներ պատճառում ապրեցող պարսիկներին, հրդեհելով, քանդելով և ավերելով նրանց քաղաքներն ու գյուղերը։

Բացի Արցախի, Տայքի և Տմորիքի պարտիզանական ջոկատներից, դեռ կային մի շարք այլ բերդեր ու ամրոցներ, որոնք անառիկ էին մնացել։ Իսկ դա ցույց էր տալիս, որ Տիզբոնի արքունիքը, չնայած իր գերազանց ուժին, ոչ միայն չէր կարողացել ընկճել հայ ժողովրդի հերոսական ոգին, այլև տեղի է տալիս նրա պայքարի առաջ։ Սակայն պարտիզանական բոլոր խմբերը հաշվի առնելով Տիզբոնի արքունիքի մեղմ քաղաքականությունը և տրված նոր արտոնությունները, ինչպես նաև Աարոմիզդ մարզպանի շողոքորթող ու սիրաշահող քաղաքականությունը, աստիճանաբար անձնատուր են լինում և ազատ արձակվում։ Սակայն, մարզպանն արքունիքի կարգադրության համաձայն, հարց ու փորձ է ենթարկում Ավարայրի պատերազմի և հետագա կռիվներին ակտիվ մասնակցություն ունեցող իշխաններին, զորավարներին և մարտիկներին։ Ըստ Փարպեցու 31 և ըստ Եղիշեի 35 հոգի աշխարհական և 8 հոգևորական՝ նա ուղարկում է Տիզբոն, որպես հանցավորներ դատի տալու համար։ Տիզբոն է մեկնում նաև Վասակը, իր զավաճանական արարքի վարձատրությունն ստանալու։

Տիզբոն են ուղարկվում նախարարական տներից հետևյալ իշխանները, Սյունյաց տոհմից 2 հոգի՝ Բարգեն և Բակուր եղբայրները, Արծրունյաց տոհմից 7 հոգի՝ Ներշապուհ, Շավասպ, Շնգին, Մերուժան, Պարգև, Տաճատ և Ապրատը, Մամիկոնյան տոհմից 4 հոգի՝ Համազասպյան, Համազասպ, Արտավազդ և Մուշեղ, կամսարականներից 5 հոգի՝ Արշավիր, Թաթուլ, Վարձ, Ներսեհ և Աշոտ, Սմատունյաց տոհմից 3 հոգի՝ Վահան, Առանձար և Առնակ, Դիմաքսյան տոհմից 2 հոգի՝ Թաթուլ և Սատո, Անձևացյաց տոհմից 3 հոգի՝ Շմավոն, Զևարեն և Առավան, Առավեղյան տոհմից 3 հոգի՝ Փառակ, Վարազդեն և Դատ, Մանդակունյաց

տոհմից 2 հոգի՝ Սեհակ և Փարսման, Ռուխյանց տոհմից 2 հոգի՝ Բաբիկ և Հոհան, Ռշտունյաց տոհմից՝ Վրեն և Գնունյաց տոհմից՝ Առոմը, ընդամենը 35 հոգի, բոլորն էլ Ավարայրի ճակատամարտին մասնակցողներ։ Բացի այդ, մի շարք նշանավոր տոհմերի՝ Մամիկոնյան, Կամսարական և այլ նախարարական տներից նաև պատգամաւորներ։

Դրանից հետո Հայաստանում մի առ ժամանակ տիրում է խաղաղություն։ Աշխատավոր գյուղացին և արհեստավորը նորից լծվում են իրենց խաղաղ աշխատանքին։ Երկիրը, որ ծանր հարվածներ էր ստացել կռիվների հետևանքով, հատկապես դավաճան Վասակի ավերածությունների պատճառով, վերաշինվում և բրնում է նորից իր տնտեսական ու կուլտուրական վերելքի ուղին։

XVII. ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԻԶՐՈՆՈՒՄ

Պատմագիր Ղազար Փարպեցու ասելով, Տիզրոն ուղարկված հոգևորականները ճանապարհին հանդիպում են Վասակ Սյունեցուն, որը շատ մեղմ է վերաբերվում նրանց հետ և նույնիսկ ճաշի է հրավիրում իր օթևանը։ Զրույցի ժամանակ Գնելոնդ Երեցը հայտնում է Վասակին, որ ինքը կենդանի չէ վերադառնա Հայաստան։[1] Մագաթյա Գարապաշյանի կարծիքով վերոհիշյալ հանդիպումը ճիշտ լինել չէ կարող, Վասակը դժվար թե «կապույտ» հոգևորականներին, որոնք պարսիկների կողմից իրրև հանցավորներ տարվում էին Տիզրոն, ճաշի հրավիրեր կամ սեղան նստեր նրանց հետ և զրույց ունենար։[2] Եղիշեի մոտ վերոհիշյալ փաստը չի հիշվում։

Մենք ճիշտ հակառակն ենք կարծում և չենք բաժանում Գարագաշյանի կարծիքը։ Վասակի հանդիպումը հոգևորականների հետ հավանական է։ Նա իր այդ քայլով աշխատում էր ցույց տալ, որ ինքը հանցավոր չէ և ապստամբությունը չպետք է տեղի ունենար։ Դրանով Վասակը միաժամանակ փորձում էր որոշ չափով մեղմացնել իր դեմ եղած թշնամությունը։ Մանավանդ որ Տիզրոնի արքունիքի քաղաքականությունը նա Հայաստանում կիրառել չկարողանալով, արքունիքի կողմից դիտվում էր որպես

1 Փարպեցի, 163—165։

2 Գարագաշյան, «Ազնվական պատմություն Հայոց», հատոր Դ., էջ 173։

անբարեհույս անձնավորություն։ Այդ էր պատճառը, որ նա ձգտում էր մի կերպ իր հավատարմությունը պահպանել արքունիքի առաջ և հայ իշխանների ու հոգևորականների կողմից խիստ հարձակումների չենթարկվել։

Աքսորյալ նախարարները և հոգևորականները Տիզրոն հասնելուն պես ենթարկվում են հարց ու փորձի և ապա դատի են տրվում՝ պարսկական մեծամեծների ներկայությամբ։ Դատավարական պրոցեսը վարում էր անձամբ ինքը, գոռոզ Հազկերտ Թագավորը, որը զայրացած պահանջում է իշխաններից բացատրություն տալ, թե ինչու դիմեցին այդ ահավոր պատերազմին։ Նախարարներն սկզբում լռությամբ են պատասխանում, իսկ հետո, բոլորի անունից հանդես է գալիս Ավարայրի պատերազմի մասնակիցների ամենակարկառուն դեմքերից մեկը, Արշավիր Կամսարականը, որը համառոտ բացատրություն է տալիս և աշխատում է իր բացատրության մեջ արդարացնել իրենց։ Վերջումն էլ նա մեղադրում է Վասակ մարզպանին՝ ապստամբությունը կազմակերպելու գործում։ Կամսարականը նրան մեղադրելու համար, մի շարք փաստեր է մեջ բերում ապացուցելով, որ նա է եղել ապստամբության դլխավոր կազմակերպողներից մեկը, նա է, որ Վարդան Մամիկոնյանին Բյուզանդիա գնալու ճանապարհից ետ է դարձրել, օգնություն է խնդրել հոներից, հույներից և արևմտյան հայ նախարարներից—նամակներ ու գրություններ է գրել, կնքել, ատորագրել և ուղարկել բյուզանդական կայսրին, հռոմեական կառավարիչներին, հայ իշխաններին և Անատոլ զորավարին, Նա վարդանին ուղարկեց Աղվանք պարսիկների հետ կռվելուց։ Դատարանը բերում է այն բոլոր նամակներն ու գրությունները հիմքերը, որ գրվել և ատորագրվել էին Վասակի կողմից։[1]

Արշավիր Կամսարականի վերոհիշյալ մեղադրանքը Վասակ Սյունեցու հարցին ցույց է տալիս, որ նրանք վաղուց պատրաստվել էին Վասակին մեղադրելու և պատասխանատու դարձնելու Հայաստանում կատարված անցքերի համար։ Գարագաշյանը գտնում է, որ մարզպանի գրած, ատորագրած ու կնքած նամակները և գրությունները, համարականը դժվար թե բերած լինեն դատական ատյանում, որովհետև հնարավոր չէր։[2] Մենք

1 Փարպեցի, էջ 177—181։

2 Գարագաշյան, հատոր Դ., էջ՝ 170։

ժիանգամայն հակառակն ենք կարծում։ Վասակի հակառակորդները կարող էին այդ զրույցներն ու նամակները, կամ նրանց հիմքերը ներկայացնել դատարանին հետևյալ պատճառներով։ Առաջին, որ կայսրի մերժումից հետո, նամակների և զրույցների որոշ մասը տեղ չէր հասել և գտնվում էր նրա հակառակորդների ժոռ և երկրորդ, ուղարկած նամակներին, զրույցների հիմքերը, կամ նրանց բովանդակությունն արձանագրված էին մայաններում՝ գավթարներում, ինչպես նաև երդումները գրել էին տալիս ավետարանի անդրիլ Թերթերում։ Օրինակ, պատմիչների ասելով, նախարարները Վասակի հետ միասին երկու անգամ երդվում են ավետարանի վրա,[1] ապստամբության գաղափարին հաստատ մնալու համար և նրանց երդումը արձանագրվում է ավետարանում։ Պարզ է, որ երդվողներից առաջինը պետք է լիներ Վասակը, որպես երկրի մարզպան՝ կառավարիչ։ Այդ ավետարանը պահվում էր կաթողիկոսարանում և Վասակի հակառակորդները միշտ էլ հնարավորություն ունեին այդ երդումների հիմքերը, ինչպես նաև մյուս նամակների ու զրույցների օրինակները ներկայացնել պարսկական դատարանին։ Այնպես որ փաստական շատ հիմքեր կային Վասակին մեղադրելու, քանի որ նա էր սկզբում ապստամբության գլխավոր կազմակերպողներից մեկը։ Իսկ Նիսալավուրսը մարզպանին մեղադրում է արքունի հարկերը յուրացնելու և Ամբարյերի պատերազմից հետո Հայաստանի ավերման գործում ակտիվ մասնակցություն ունենալու համար։ Վասակ մարզպանին մեղադրելու ակտով պարսկական դատարանում հանդես է գալիս նաև Ղևոնդ Երեցը իր կրակոտ ճառով և նույնպես մերկացնում է Վասակին, որպես ապստամբության մասնակցողի, գավաճանի և խաբեբայի, թե՛ մեկ և թե՛ մյուս կողմի նկատմամբ։

Պարսկական դատարանը երկարատև քննությունից հետո, որոշում է 8 հոգևորականներից 6-ին ենթարկել մահապատժի, որպես ավելի ծանր հանցավորների, որոնց թվում նաև Հովսեփ կաթողիկոսին և Ղևոնդ Երեցին, իսկ նախարարներին և երկու հոգևորականներին երկարամյա աքսորի։ Դատարանում հարուց-

1 Տե՛ս էջ 97։

վող մեղադրանքների հիման վրա, ըստ Եղիշեի, դատի է տրվում նաև Վասակ Սյունին, ըստ որում որոշվում է բանտարկել նրան որպես պարսկական արքունիքի շահերի դավաճանի և Հայաստանում արքունիքի քաղաքականությունը տապալողի և բռնագրավել նրա բոլոր ունեցվածքն ու կալվածքները։ Բացի դրանից Սյունիքի վրա էլ ծանր հարկեր են դնում, արքունի հարկերի յուրացման պատճառով։ Վասակը բանտային խիստ ռեժիմին չդիմանալով, մահանում է 454 թվին։ Փաթպեցու ասելով նրան չեն բանտարկում, այլ արգելում են Հայաստան վերադառնալ և նա Տիզբոնում մնալով այնտեղ էլ մահանում է։

Պատմական վաստերով ապացուցված պետք է համարել Եղիշեի տված տեղեկությունները Վասակին դատի տալու մասին, մանավանդ որ Վասակն այլևս Պարսկաստանից չի վերադառնում Հայաստան, զրկվում է Սյունյաց տանուտիրական իրավունքից, իր կալվածքներից և մնում է Տիզբոնում։ Դա պարզ ցույց է տալիս, որ Տիզբոնի արքունիքը նրան ևս մեղադրել է, որպես պարսկական պետության շահերի դավաճանի, նրա քաղաքականությունը Հայաստանում չհիրառողի և ապստամբության կազմակերպողի։

Տիզբոնի արքունիքում հայ իշխանների և հոգևորականների դատավարության ավարտումով փաստորեն նոր է վերջանում 450—451 թվերի՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ հայ ժողովրդի մղած ազատագրական առաջին մեծ պատերազմը Սասանյան բռնապետության դեմ։ Այդ պատերազմը բաժանվում է երեք էտապի։

Առաջին էտապը սկսվում է Անգեղի ժողովրդական ցույցով, երբ անկազմակերպ մասսան տաբերայնորեն, վրեժի ցասումով լցված, Ղևոնդ Երեցի գլխավորությամբ հարձակվում է մոգերի վրա, ջարդում և եռ է մղում նրանց Անգեղ գյուղի եկեղեցուց, որը փորձում էին վերածել տաբուշանի։ Ժողովրդական այդ տաբերային շարժման տարափի ազդեցության տակ մոգպետը զղում է, որ Թագավորի ձեռնարկությունը եղել է ավելորդ և չմտածված և որ նա Հայաստանում իր քաղաքականությունը տարածել չի կարող։ Ապա գալիս է պարսկական զորքերի ու մոգերի կոտորածը Զարեհավանում, հայկական կազմակերպված զորամասերի ու ժողովրդի կողմից՝ սպարապետ Վարդանի

307—11

դևհավորության համար։ Դա քաղաքական մի խոշոր ցուցչ էր պրքի և զորավարի կողմից, սակայնելու Սասանյան աշքացլին՝ դադարեցնելու իր հալածանքի քաղաքականությունը. ապա Աղվանքում վարդանի մղած հաղթական կռիվները պարսկական զորավար Սեբուխտի դեմ, ինչպես և հոների հետ կնքած պայմանագիրը։ Պարսկաստանի դեմ մղված ազատագրական կռիվների այս առաջին էտապում հայերը, վրացիները և ալվաններն հանդես են գալիս միասնաբար։ Միասնական էին նաև հայ իշխանները, որոնց մեջ դեռևս տարաձայնություններ չէին սկսվել։ Վասակ մարզպանը և վարդան սպարապետը որպես երկրի աչքի ընկնող դեկավարներ, գործում էին միասին, որովհետև պարսկական քաղաքականությունը սպառնում էր երկրի բոլոր իշխաններին, հոգևորականներին ու ժողովրդին։ Այդ բոլոր գործողությունները տեղի էին ունենում 450 թվին։

Երկրորդ էտապը, դա Ավարայրի դաշտում տեղի ունեցած ճակատամարտն էր, որը հանդիսանում էր պատերազմի բարձրագույն կետը։ Դա մի էտապ էր, երբ արդեն Վասակ մարզպանը հաշվի առնելով իր անձնական շահերը՝ ետ էր կանգնել ապստամբությունից, բանել էր դավաճանության ուղին, իր զորքով միացել էր պարսիկների հետ և օգնում էր վերջիններին։ Վասակի ազդեցության տակ Ավարայրի պատերազմին չէին մասնակցում նաև ալվանները։ Բայց սպարապետի շուրջը հավաքված ժողովուրդը, իշխանները իրենց զորքերով և հոգևորականությունը դուրս եկան ավելի համախմբված, նվիրված իրենց գործին ու անհրաժեշտ հակահարված տվին Թշնամու բանակին։

Երրորդ էտապը, դա Ավարայրից հետո տեղի ունեցած կռիվներն էին, որ շարունակում էին մղել հայերը։ Ավարայրից ետ քաշվելը ռազմական մանևր էր, որ ձեռնարկեցին կենդանի մնացած հայ զորավարները։ Նրանց նպատակն էր քաշել Թշնամու բանակին երկրի խորքերը, մասերի բաժանել, ներել ու հյուծել նրանց լեռնային կիրճերում, ձորերում, ամրոցների և բերդերի պարիսպների տակ։ Թշնամու զորամասերին հատկապես լուրջ հարված են հասցնում Տմորիքի, Տայքի և Արցախի հայ զորախմբերը, որոնք ոչ միայն կարողանում էին պահպանել ու շարունակել իրենց գոյությունը, այլ և հարված հարվածի հետևից հասցնել հակառակորդին ու ստիպել Տիզբոնի արքունիքին զորքը դուրս բերել Հայաստանից և դիջումներ անել։ Այս երրորդ էտապում թեև կռիվները թույլ էին, բայց նրանք ունեցան վճռական նշանակություն պարսկական բանակին հյուծելու և թուլացնելու տեսակետից։ Այս էտապում հայերի մղած կռիվները նույնպես ցույց տվեցին, որ հայ ժողովուրդը շարունակում է իր հատու պայքարը Սասանյան դաժան ագրեսորների դեմ հանուն իր անկախության։

XVIII. 450-451 ԹՎ. ԱՊԱՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայ գրականության մեջ 450—451 և 481—484 թ.թ. հայերի մղած ազատագրական պատերազմները, հատկապես Ավարայրի մեծ ճակատամարտը, ստացել են տարբեր մեկնաբանություններ ու գնահատականներ։ Եթե խմբավորելու լինենք բոլոր ուսումնասիրողների տեսակետները, ապա դրանց բոլորին էլ կարելի է բաժանել երկու խմբի կամ ուղղության։ Առաջին խումբը կրոնական ուղղությունն է, իսկ երկրորդը՝ ազգային-ֆեոդալական ուղղությունը։ Ուսումնասիրողների մեծագույն մասը՝ սկսած Մխքայել Չամչյանից, հետևելով Եղիշեին և Ղազար Փարպեցուն, այդ պատերազմներն ու Ավարայրի ճակատամարտը համարում են կրոնական։ Այդ տեսակետը պաշտպանողների թվին պետք է դասել գրեթե բոլոր դասագրքերի հեղինակներին, եկեղեցական պատմության գրողներին, բացառությամբ մի քանի դասագրքերից, հատկապես 1914 թվին Վենետիկում լույս տեսած Սահակ Տեր-Մովսիսյանի «Հայոց պատմության բարձրագույն դասընթացը» աշխատությունից, որի մեջ հեղինակը Վարդանանց և Վահանանց անցքերը մեկնաբանել է որպես «ազգային պատերազմներ», իսկ մնացածները որպես կրոնական հողի վրա առաջ եկած ապստամբություններ կամ պատերազմներ։ Այդ տեսակետից, մինչև վերջին դպրոցների դասագրքերի մեջ, անշուշտ առաջնակարգ տեղը պատկանում է Ստեփանոս Գալատեցյանի «Հայոց պատմություն»[1] աշխատությանը, որ 5-րդ դարի ժողո-

[1] Ստ. Գալատեցյան, «Պատմութիւն Հայոց, սկզբից մինչ մեր օրերը», Թիֆլիս, 1902 թ., էջ 198—238։

վերջին ազատագրական պատերազմները համարում է Առաջին և Երկրորդ կրոնական պատերազմներ:

450—451 թ.թ. պատերազմի և դրանից հետո տեղի ունեցած Վահանանց կռիվների մասին կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, սկսած 18-րդ դարից մինչև 20-րդ դարը, նույնիսկ գրվել են մի շարք պիեսներ, բանաստեղծություններ և մինչև անգամ պատմավեպ: Սակայն այդ բոլոր ուսումնասիրողները պատերազմների հիմքն ընդունել են կրոնը և կրոնական հալածանքներից առաջ եկած ապստամբությունները: Եղած արժեքավոր ուսումնասիրություններից առաջին տեղը պատկանում է Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց» եռահատոր աշխատությանը, որի երկրորդ հատորի 7—218 էջերը նվիրված են Վարդանանց և Վահանանց կռիվներին: Հեղինակը շատ դեպքերում բառացի հետևում է Եղիշեի և Ղազար Փարպեցու աշխատություններին և այդ կռիվները ընութագրում է որպես կրոնական պատերազմներ: Երկրորդ տեղը բռնում է Հովսեփ Վ. Գաթրճյանի «Տիեզերական պատմութիւն» աշխատությունը, որի երկրորդ հատորի 526—558 էջերը նույնպես նվիրված են Վարդանանց և Վահանանց դեպքերին, ուր դարձյալ այդ դեպքերը ընութագրվում են որպես կրոնական պատերազմներ և կրոնական հալածանքների հողի վրա տեղի ունեցած անցքեր: Երրորդ տեղը բռնում է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի հայ եկեղեցու եռահատոր ընդարձակ պատմությունը, հարակից քաղաքական համառոտ անցքերով՝ «Ազգապատում» խորագրով: Իր այդ ընդարձակ աշխատության մեջ հեղինակը դարձյալ Ավարայրի կռիվը համարում է կրոնական պատերազմ:[1] Եվ այսպես, ուսումնասիրողների ու բանասերների գրեթե ճնշող մեծամասնությունը կանգնած լինելով ֆեոդալական պատժապրության կոնցեպցիայի վրա, 5-րդ դարի Սասանյան իմպերիայի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պատերազմները մեկնաբանել է որպես կրոնական պատերազմներ և կրոնական հողի վրա առաջ եկած ընդվզումներ:

Մենք, ինչպես ցույց ենք տվել մեր նույն ուսումնասիրության մեջ, չենք ժխտում կրոնական ֆակտորի դերը, այն, որ

[1] Տես «Ազգապատում», հատոր Ա., 1912, կ. Պոլիս, էջ 339—389:

կրոնը մեջին դարերում մեծ դեր է կատարել և դա անժխտելի պատմական իրողություն է: Բայց, որ կրոնը չէր հայ շինականին և իշխանին 5-րդ դարում դեպի ազատագրական պատերազմները մղողը, այլ Տիզբոնի արքունիքի կողմից սահմանված ծանր հարկերը, իշխանների դարավոր իրավունքների սահմանափակումները, դատական գործը պարսիկ մոգերի ձեռքն անցնելը, պարսկական օրենքների ու սովորությունների Հայաստան մուծելը և հայերի ներքին ինքնավարական ու կուլտուրական անկախության վերացնելու փորձերը, դա նույնպես անժխտելի և պատմական իրողություն է: Վերոհիշյալ վերջին դեպքերն էին, որ ստիպեցին հայերին պարզել ազատագրական դրոշն իրենց ներքին ինքնավարությունը պաշտպանելու համար:

Ժխտելով 5-րդ դարի պատերազմների կրոնական բնույթը, որպես հիմնական նախադրյալ այդ պատերազմների համար, մենք այնուամենայնիվ չենք կարող բոլորովին աչքաթող անել այդ գործառույթը: Հայտնի է, որ Արշակունյաց թագավորներից Տրդատ III-ը, որն սկզբում խիստ հալածանք էր սկսել քրիստոնյաների դեմ, վերջ ի վերջո ստիպված եղավ ընդունել քրիստոնեությունը և կարճ ժամանակվա ընթացքում դարձնել այն պետական կրոն: Արդ, ինչն էր դրա պատճառը: Եթե մենք մի բոպե հետևվենք ընդհանուր պատմությանը, ապա կտեսնենք, որ հռոմեական նոր ձևակերպվող կայսրության սահմաններում ծնունդ առնող քրիստոնեական կրոնը, սկսվելով ստրուկներից ու պլեբեյականներից հիմնվող տարրերից, հասնում է մինչև սարկաւագներին, տեռատորներին ու կայսրներին: Իսկ քրիստոնեական կրոնի ընդունումն այլ ընթացք է ունենում Հայաստանում: Այստեղ հայոց թագավոր Տրդատ ընդունելով այն, որպես պետական կրոն, Գրիգոր Լուսավորչի հետ միասին նրանք աշխատում էին բանի դերով այդ կրոնը տարածել ժողովրդի մեջ, որի հետևանքով տեղի են ունենում կատաղի կռիվներ ու պայքար: Այդ պայքարն ու կռիվները կապկպվում են միայն դիջումներ անելով, այսինքն՝ հեթանոսական կրոնի որոշ տարրեր մուծվում են քրիստոնեության մեջ, քրմերին ներկրավում են հոգևորականների շարքը և աստիճանաբար մասսաներին ընդունել տալիս քրիստոնեությունը և հետզհետե ամրապնդում պետությունը: Դա ցույց է տալիս, որ քրիստոնեության ընդունման գործում վճռական դեր

 են խաղացել իշխող տարրերը, այսինքն Հայաստանում այդ կրոնը վերևից է թելադրվել ժողովրդին և նպատակ է նրա համախմբելու գործին հետագա պատերազմների ընթացքում։

Զրադաշտական կրոնի ու հունա-հռոմեական առևտրական ընկերությունների ազդեցության տակ կազմակերպված հայկական պանթեոնը շահագործվող մասսաներին չէր հրապուրում «հանդերձյալ աշխարհի արքայության» իդեոլոգիայի բնագավառում հնթանոսական կրոնը չէր բավարարում նաև շահագործող դասակարգին՝ սոցիալական հակասություններից առաջացած դասակարգային անտագոնիզմը մղողելու համար։ Դրան հակառակ քրիստոնեությունը, որ այս իրական աշխարհում տառապյալներին խոստանում էր այն աշխարհում վայելքներ, հարմար դրնք էր դառնում ֆեոդալական շահագործող դասակարգի ձեռքում։

Բայց այդ նոր գաղափարախոսության պրոպագանդան դանդաղ էր տարածվում Հայաստանում, որովհետև նա սկսում էր մուտք գործել այն ժամանակ, երբ կեղեքվող մասսաների ուժերից զատել էր տերակատերերին, իսկ հետագայում նաև ֆեոդալ-հողատերերի կրոն։ Սակայն, չնայած դրան, այնուամենայնիվ երրորդ դարի վերջում և չորրորդ դարի սկզբում, երկրի որոշ գավառներում քրիստոնյա քարոզիչներին հաջողվել էր տարածել այդ նոր կրոնը։ Թեև Տրդատը սկզբում խիստ հալածանք է սկսում քրիստոնյաների դեմ, բայց վերջում հայ ֆեոդալների հետ միասին ընդունում է այն։

Տրդատ III-ը, իր շուրջը համախմբված ֆեոդալների հետ, երկու կարևոր հանգամանք է նկատի ունենում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարելու գործում։ Առաջին, օգտագործել այդ կրոնը քայքայված ու թուլացած պետությունն ամրապնդելու համար, որովհետև քրիստոնեությունը որպես կրոն, ժողովրդական մասսաներին պետության շուրջը համախմբելու և տառապերկրյա նվաճողների դեմ պայքար կազմակերպելու գործում մեծ ուժ էր ներկայացնում, քան հնթանոսական կրոնը։ Երկրորդ, ամենագլխավորը, դա Սասանյան ագրեսիայի դեմ պայքարելու խնդիրն էր։ 226 թվին Պարսկաստանում հաղթություն տարած Սասանյանները, իրենց նվաճողական քաղաքականությամբ մշտապես սպառնալիքի տակ էին դրել ոչ միայն իրենց երկրից դեպի արևմուտք ընկած ժողովուրդներին, այլև հռոմեական հզոր կայսրությանը։ Սասանյան բռնակալները հետամուտ լինելով Աքեմենյան արքաների քաղաքականությանը՝ նպատակ ունեին տիրել այն երկրներին ու ժողովուրդներին՝ որոնք ենթակա էին եղել հզոր հին Աքեմենյան աշխարհակալության և իրենց պետության սահմաններում հաստնել Սև ու Միջերկրական ծովերին։

Սասանյան բռնակալներն իրենց այդ նվաճողական քաղաքականությամբ սպառնում էին հայերին, վրացիներին, պարսիկներին, ասորիներին, կիլիկեցիներին և մեր ամբողջ արևելքի բոլոր ժողովուրդներին, որոնց մեծագույն մասը 4-րդ դարի սկզբին, երբ Տրդատ թագավորը կրոնական հեղաշրջում է կատարում Հայաստանում, արդեն ընդունել էր քրիստոնեությունը։ Ուստի, վերոհիշյալ ժողովուրդներին համախմբելու և պարսկական նվաճողների դեմ միասնական պայքար կազմակերպելու համար, կարիք կար քրիստոնեական կրոնի օժանդակության, մի կրոն, որն իր կազմակերպչական կողմով շատ ավելի ուժեղ էր, քան հնթանոսականը։ Այդպիսով, քրիստոնեական կրոնի ընդունումը Հայաստանում քաղաքական ակտ է հանդիսանում, այսինքն մի-ջոց մի կողմից ամրապնդել Արշակունյաց թուլացած ֆեոդալական պետությունը, իսկ մյուս կողմից պայքար կազմակերպել Սասանյան բռնակալների դեմ և պահպանել հայ ժողովրդի անկախությունը։ Հետևաբար, կրոնական հարցը 5-րդ դարում ժողովրդի անկախության ու կուլտուրական ինքնավարության պահպանման ենթակա հարց էր։ Այստեղից էլ պարզ է, որ եթե պարսիկները մի շարք քաղաքական իրավունքների սահմանափակման և հարկերի ավելացման հետ, ձեռնամուխ են լինում նաև կրոնափոխության գործին, բնական էր, որ այդ քաղաքականությունը դիմադրության պետք է առաջ բերեր և բերեց։ Կրոնափոխության առաջարկը Հայաստանում եղած խորը դժգոհությունները, որոնք հանդես էին եկել ինքնավարության վերացման հողի վրա, հասցնում է իրենց կուլմինացիոն կետին, ուր անպայման պիտի տեղի ունենար պայքար։ Ուստի հայ ժողովուրդը, ինչպես նաև նրա դեկավար մասը, իրենց քաղաքական իրավունքները պահպանելու համար, պայքարին պետք է կրոնական գունավորում տային և իրոք, նրանք հանդես եկան քրիստոնեական կրոնը պայքարի դրոշ դարձնելով։ Եթե դրան ավե-

լացնենք նաև այն, որ Արշակունյաց թագավորության անկումից հետո կաթողիկոսի դերը զգալի չափով մեծացել էր երկրի նախարարական ու ռազմական ուժերը համախմբելու գործում, և հոգևորականների կատարած մեծ դերը ժողովրդական մասսաներին կազմակերպելու և նրանց դուրս բերելու Սասանյանների դեմ, այն ժամանակ ավելի ցայտուն կերպով կարտահայտվի պայքարի կրոնական առաջնությունը։ Ահա այն շարժառիթները, որոնք վերը հիշված ուսումնասիրողների ձեռքին մշտապես վենք են եղել, պատերազմին կրոնական բնույթ տալու համար։

Հինգերորդ դարի հայերի մղած կռիվների առիթը կազմել է կրոնը, իսկ հիմքը՝ քաղաքական անկախության վերականգնումը։ Հայ նախարարների համար կրոնափոխությունն այնքան էլ դժվար գործ չէր, եթե դա չէր շոշափում երկրի ինքնուրույնության շահերը։ Օրինակ, ինչպես կտեսնենք, Վարդանի եղբորորդի Վահանը, որ նույնպես քաջ ու հմուտ զորավար էր, հաշվի առնելով երկրի շահերը, կրոնափոխ է լինում 17-րդ—18-րդ դարերում վրացական մի շարք թագավորներ ու իշխաններ ընդունում էին ժամհեղական կրոնը և միում էին իրենց պաշտոնների ու շատ դեպքերում մնացին իրենց պաշտոնության պահպանման գործում։ Այդպիսով, կրոնափոխության առաջարկը իշխանական դասի համար պատերազմի կամ ապստամբության պատճառ չէր կարող լինել, նա լավագույն դեպքում կլիներ պատճառներից մեկը, ավելի շուտ, առիթը։ Դրանով էլ պետք է հերքել պատերազմներին լոկ կրոնական բնույթ վերագրելը։

Ուսումնասիրողների երկրորդ խումբը 5-րդ դարի պատերազմները բնութագրում է, որպես ֆեոդալական ապստամբություններ ուղղված Սասանյան գահակալների դեմ։ Պատմաբանների և բանասերների այդ թևը փորձում է ցույց տալ, որ 5-րդ դարի կռիվները կրում էին ինչֆեոդալական պայքարի կնիք, որ այդ կռիվները զուտ հայ իշխանների մղած պայքարն էր պարսից Սասանյան արքանների դեմ, իրենց քաղաքական իրավունքները ամենամոլեկանելու պատճառով և ժխտում են այդ պատերազմների ժողովրդական ազատագրական նշանակությունը։ Այդ թևի ամենաակարկառուն ներկայացուցիչը հանդիսանում է Մ. Գարագաշյանը, որն իր «Ինանական պատմություն Հայոց» շահեկան աշխատության չորրորդ հատորի 111—112 էջերը նվիրում է վարդանանց դեպքերի լուսաբանմանը։ Գարագաշյանի աշխատությունը՝ 5-րդ դարի պատերազմների մասին մինչև այժմ եղած բոլոր ուսումնասիրությունների հետ համեմատած՝ ամենալավագույն գործն է։ Նա է, որ խիզախում է և առաջին անգամ փորձ է անում դուրս գալ գարավոր սրտպիկանների դեմ և ժխտել այդ պատերազմների կրոնական բնույթը։ Բայց նա էլ ընկնելով ծայրահեղության մեջ, պատերազմին տալիս է մինչֆեոդալական պայքարի բնույթ։ Այդ մասին նա գրում է.

«Յազկերտի նպատակն էր արդարև ածել ղՀայս ի ծոցս քրիստոնէութեան, բայց ոչ այնպէս ինչպես կը ցուցնէ մեզ Փարպեցւոյն և մանաւանդ Եղիշէի պատմութիւնն, այսինքն յանկարծ և բռնաբար, այլ մեղմով և հնարիւք։ Հայոց մի մասն, մանաւանդ կղերն, զուշակելով Յազկերտի խորհուրդը՝ յանկարծ ուրիշ գոյն տուաւ գործին, և երկրին պատմիչք մեր, մանաւանդ Եղիշէ այս գունով կը ներկեն մեզ պատմութիւնը։ Յազկերտի քաղաքականութիւնն էր՝ առ նախարարաց ընդունել գէթ առ երես, իբրև քաղաքական հարկ կամ իբրև տէրութեան կրօնք՝ մոգութիւնը, այսինքն տալ մուտ կրակապաշտութեան իւրաքանչիւր իւր երկրին մէջ, թոյլ տալով շինել տաճարներ, հաստատել մոգութեան դպրոցներ, պարսից քաղաքական օրինաց հպատակեցնել երկիրը, և այնպէս ընդհանրացնելով ժողովուրդը մեղմով պարսկական քաղաքակրթութեան և վերջին՝ հեռացունել ազգն ի Յունաց»։[1]

Մ. Գարագաշյանի այս տեսակետը պաշտպանում են նաև ուրիշ ուսումնասիրողներ։ Բայց այդ կարծիքը չի համապատասխանում պատմական իրականության։ Հայկերտն այդպիսի քաղաքականություն էր վարում նախքան կրոնափոխության առաջարկն անելը, իսկ դրանից հետո, նրա քաղաքականությունը շատ կարուկ էր և կրոնափոխության առաջարկն արվում էր ամբողջ ժողովրդին։ Գարագաշյանի սխալը բխում է նրանից, որ նա Դենիսպուհի աշխարհագիրը դնում է 450 թվին և ոչ թե դրանից առաջ։ Գարագաշյանի այս տեսության հիմնական կռվանն այն է, որ Հայկերտը հրովարտակն ուղղել էր նախարարներին և ոչ թե ժողովրդին կամ ժարզպանին։ Բայց դա այնքան պարզ է, որ կոմենտարիա-

[1] Մ. Գարագաշյան, հատոր Դ., էջ 125։

նների կարիք չունեն։ Հաղկերտը մեծամեծ իշխաններին է ուղղել կրոնափոխության նամակը, որպես երկրի վարիչների և նրանց էր կանչում Գարեգին բացատրություն տալու և ոչ թե ժողովրդին։ Իսկ եթե Հաղկերտի քաղաքականությունն ուղղված լիներ միմիայն իշխանների իրավունքների սահմանափակմանը և չշոշափեր ամբողջ երկրի ու ժողովրդի շահերը, այն ժամանակ ապստամբական շարժում առաջ չէր գա պարսկական տիրապետության դեմ։

Հինգերորդ դարի հայ ժողովրդի մեծ ազատագրական պատերազմներն ուսումնասիրության նյութ են դառել նաև ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի համար։ Հարգելի ղեկանականը, հետևելով Գարեգին Տեր-Մկրտչյանին, նույնիսկ նրանից ավելի առաջ անցնելով, վերոհիշյալ դարի պատերազմները իր «Ժողովրդի հին Հայաստանում» աշխատության 280—302 էջերում (1934 թ. Երևան) պարզ ու որոշ բնութագրում է որպես նախաբարական ապստամբություններ, ուղղված պարսկական տիրապետության դեմ։ Թե Գարեգին Տեր-Մկրտչյանը և թե ակադեմիկոս Հ. Մանանդյանը, որպես երկրորդ խմբի նշանավոր ներկայացուցիչներ, նույնպես ճիշտ ելևէջներ ու բացատրություն չեն տալիս վարդանանց և վահանանց անցքերին։ Ճիշտ է, որ այդ ապստամբությունների կազմակերպման ու ղեկավարման մեջ նախարարների դերը մեծ է եղել, բայց դրանով երբեք պատերազմների ժողովրդական ազատագրական պայքարի բնույթը չի վերանում։ Հայնի է, որ միջին դարերում հայ շինականն առանց իշխանների մենակ չէր կարող դուրս գալ օտարերկրյա զավթիչների ու նվաճողների դեմ։ Այդպիսով, ժխտելով 5-րդ դարի պատերազմների մասին եղած ուսումնասիրողների երկու խմբի ոչ ճիշտ բնութագրումները, եզրակացնում ենք, որ 450—451 թ. թ. ինչպես նաև դրանից հետո 481—484 թ. թ. տեղի ունեցած հայ ժողովրդի ազատամարտերը լայն ժողովրդական ազատագրական պատերազմներ էին ուղղված պարսկական տիրապետության դեմ, երկրի անկախությունը կամ ինքնավարությունը վերականգնելու համար։ Որպես այդպիսին, այդ կռիվներին մասնակցում էին երկրի սոցիալական բոլոր խավերը, սկսած շինականներից, վերջացրած իշխաններով, հոգևորականներով, արհեստավորներով և առևտրականներով։

Այսուհետ, Հայաստանի օրինակով, տեղին է հիշատակել ու

ժխտել նաև եվրոպական պատմագիրների այն սխալ ու անհեղինակ կարծիքը, որ իբր թե արևելյան ժողովուրդները միշտ էլ հնուց ի վեր հնազանդ են եղել ճնշող բռնակալների ձեռքին և չեն ընդվզել նրանց դեմ։ Օրինակ, պատմաբան Թեոդոր Մոմզենը իր „Римская история“ պատմական նշանավոր աշխատության մեջ ասում է, որ ասիացիները ընդունակ չեն դուրս գալու իրենց շահագործող իշխանությունների դեմ։[1] Հայ ժողովուրդն իբրև ասիական ժողովուրդներից մեկը, օտարերկրյա բռնակալների դեմ ունեցած իր պայքարով օրինակ կարող էր ծառայել ժխտելու վերոհիշյալ հակապիտական տեսակետը և ցույց տալու, որ Արևելքի ժողովուրդները եվրոպացիների նման պայքարել են թե՛ ներքին և թե՛ արտաքին ճնշողների դեմ։

Հայ ժողովրդի պայքարը, ինչպես նշել ենք առաջաբանում, իր դարավոր պատմության ընթացքում ընթացել է երկու ուղղությամբ։ Առաջին ուղղությունը հանդես է եկել որպես դասակարգերի դեմ։ Իսկ մյուս կողմից հանդես է եկել որպես ժողովրդական ազատագրական պայքար, ուղղված օտար տիրապետողների դեմ։ Պայքարի առաջին ուղղությունը դիրաղնյապես ուղղված էր Հայաստանի ներքին տիրողների ու շահագործողների դեմ, իսկ մյուսին զարիրում հանդես էր գալիս կրոնական քողի տակ, որպես ազատագրական շարժումներ։ Այդ տեսակետից ուշադրավ են Պավլիկյան կամ Պաուլիկյան և Թոնդրակյան շարժումները Հայաստանում 7—11-րդ դարերում։ Պայքարի երկրորդ ուղղությունը դիրաղնյապես ուղղված է եղել օտարերկրյա տիրողների դեմ, որպես ժողովրդական ազատագրական պայքար։ Մեր կարծիքով, պայքարի վերջին ուղղությունն էլ կազմել է հայ ժողովրդի պատմության սակավիճիկ կողմը, որն անտեսվել է հայագետ պատմաբանների կողմից։ Պատմության այդ սակավիճիկ կողմն արդյունք է այն բանի, որ հայ ժողովուրդը իր դարավոր պատմության ընթացքում մեծ մասամբ չի ունեցել սեփական ազգային պետություն, նա կամ ենթակա է եղել օտար նվաճողների տիրապետությանը, կամ թե նրա գլխին դամոկլյան սրի նման կախված էին մշտապես դրսից եկող բռնակալների արշավանքների աղետն

[1] *Т. Момзен*, Римская история, т. II, Москва, 1887, стр. 269.

ու արհավիրքը։ Օտարերկրյա նվաճողների լուծը թոթափելը սոված է ժողովրդին իշխանների հետ միասին հանդես գալ այդ նվաճողների դեմ իր սեփական երկիրը պաշտպանելու և անկախություն ձեռք բերելու համար։ Վերոհիշյալ պայքարը 2000 տարվա ընթացքում խթանիչ գործոններից մեկն է եղել հայ ժողովրդի պատմության, մի հանգամանք, որ հաճախ ստվերի մեջ է թողել կամ թե հետին դեր վրա է մղել պայքարի առաջին ուղղությունը, որովհետև արտաքին նվաճողներն ու տիրողները միշտ ևլնց վրա են բևեռել ժողովրդի պայքարի ուղղությունը։ Սակայն ժողովրդական և ազգային-ազատագրական պատերազմները նույնպես կազմել են դասակարգային պայքարի արտահայտության ձևեր։ Այնինչ ֆեոդալական ապստամբությունները դասակարգային պայքարի ձևեր չեն, այլ ներդասակարգային պայքար, այսինքն, նախարարների կռիվ է իրենց սուվերենի դեմ, իրենց իրավունքների ընդարձակման համար և ոչ թե անկախության կամ թե երկրի ինքնուրույնության համար ժամած պայքար։

Հայ ժողովրդի մղած պայքարը 5-րդ դարում ուղղված էր Սասանյան բռնապետության դեմ, որի լուսաբանմանն է նվիրված մեր սույն ուսումնասիրությունը։ Դա պահանջում է պայքարի երկրորդ ուղղության՝ ճիշտ է, Տիրոնի արքունիքը երկրի ինքնավարության հետ դուգընթաց սահմանափակում է նաև նախարարների ֆեոդալական իրավունքներն ևս, դա նույնպես պարզ է և կոմիտասրյանների կարիք չունի, բայց դրանք ժողովրդական ազատագրական պայքարի կազմակերպման գործում երկրորդական նշանակություն ունեին, առաջնակարգը՝ երկրի ինքնուրույնության պահպանման խնդիրն էր, որովհետև, եթե երկրի ինքնավարությունը պահպանվեր, իշխաններն իրենց իրավունքները կարող էին պաշտպանել, իսկ եթե երկրի ինքնավարությունը վերացվեր, որքան էլ որ նախարարներն արտոնություններ ու իրավունքներ ունենային, վերջ ի վերջո պիտի կորցնեին այն։ Այդ պատճառով, նախարարների պայքարը միացած ժողովրդի պայքարի հետ, պայքար էր ինքնավարության պահպանման համար։ Այսպիսով, 5-րդ դարի հայ ժողովրդի մղած ազատագրական պատերազմները ֆեոդալական կամ նախարարական ապստամբություններ անվանելը ճիշտ չէ։ Ավա-

րայրի հակատաժարտը ոչ միայն ֆեոդալական չէ, այլև իր մեջ կրում է նաև հայրենական պատերազմի տարրեր, որովհետև թեև երկրի բոլոր դավառները չեն մասնակցում կռվին, բայց և այնպես մասնակցողների դիտակցությունն այնքան բարձր ու վեհ է եղել որ նրանց հասցրել է հայրենիքի պաշտպանման դիտակցության գաղափարին, իսկ դա երևում է սպարապետի այն ճառից, որ նա արտասանել է Ավարայրի պատերազմից առաջ։ Բայց Ավարայրը հայրենական պատերազմ չէ, այլ ժողովրդական-ազատագրական և անկախության համար ժամած պատերազմ։

Այժմ անդրադառնանք օրիենտացիայի հարցին և վառակ մարզպանի բռնած դիրքի գնահատմանը, որոնք մեր կարծիքով դարձյալ լավ չեն լուսաբանվել հայագիտների կողմից։ Հայ անցյալ պատմագրությունը կառչած մնալով հին պատմագիտների տեսակետին, հայ ժողովրդի պատմության հարցերը պարզաբանելիս միշտ էլ առաջնորդվել է այսպես կոչված օրիենտացիաների տեսանկյունով, այսինքն, որ հայ իշխանների, նախարարների մի մասը, որոնց կալվածքները մոտիկ ու սահմանակից լինելով Հռոմին կամ Բյուզանդիային, մշտապես վարել են հռոմեական կամ բյուզանդական քաղաքականություն, իսկ մյուս մասը, որի կալվածքները սահմանակից են եղել Պարսկաստանին, վարել են պարսկական քաղաքականություն։ Վերոհիշյալ տեսանկյունով են շարադրել իրենց աշխատությունները՝ Զամչյանը, Ամատուրյանը, Լևոն, Գարագաշյանը և շատ ու շատ ուրիշներ։ Վերոհիշյալ հեղինակները հայ ժողովրդի պատմությունը հյուսելիս նկատի են ունեցել պարսկասեր և հռոմասեր հոսանքների գործունեությունը։

Օրիենտացիայի հարցը պատմության հիմք կազմել չի կարող, օրիենտացիայով չի կարելի պարզաբանել պատմական հարցերը, որ անում են մի շարք հայ պատմաբաններ։ Նրանք հայ ժողովրդի պատմությունը հավասարելով միայն նախարարների և թագավորների պատմություն, նրանց բաժանում են պարսկասեր և հռոմասեր թևերի կամ հոսանքների և ամբողջ պատմությունն էլ բխեցնում են այդ թևերի կամ հոսանքների պայքարից, որոնք կապված էին կամ Պարսկաստանի և կամ թե Հռոմի հետ։ Դրանով նրանք հայ ժողովրդին կամ նրա վարիչներին զրկում են իրենց սեփական ազգային քաղաքականությունից,

նրանց խաղալիք դարձնելով պարսիկների կամ հռոմեացիների ձեռքին։ Անշուշտ, արտաքին երկու հզոր պետությունների ճնշումը մշտապես եղել է հայերի վրա։ Հաճախ հայ նախարարները, հաշվի առնելով իրենց երկրի շահերը, հաշվի են առել այս կամ այն պետության քաղաքականությունը, և դրա շուրջը առաջ է եկել ներքին պայքար։ Բայց դա չէր բնորոշողը, այլ այն, որ հայ ժողովուրդը և նրա իշխանական դասը զուրկ չեն եղել իրենց սեփական ազգային քաղաքականությունից և մշտապես խաղալիք չեն եղել արտաքին հզոր պետությունների ձեռքին, այլ ունեցել են իրենց օրիենտացիան և իրենց սեփական քաղաքականությունը։ Դա ցույց են տալիս 450—451 թ. թ. անցքերը։

Որ հայ ժողովուրդը և նրա դեկավարներն ունեցել են իրենց սեփական քաղաքականությունը և մշտապես խաղալիք չեն եղել օտար տիրողների ձեռքին, դա երևում է նախ և առաջ նրանից, որ հայկական ամենահզոր թագավոր Տիգրան II-ը ոչ միայն վարում էր իր սեփական քաղաքականությունը, այլև իր կամքն էր թելադրում Առաջավոր Ասիայի մի շարք պետություններին։ Նրա հաջորդ՝ որդի Արտավազդ II-ը (55—33) իր վարած ինքնուրույն քաղաքականության շնորհիվ կարողանում է Հայաստանն ազատով դուրս բերել Պարթևա-Հռոմեական մրցակցությունից և պահպանել երկրի անկախությունը։ Մեր էրայի 1—63 թ. թ. Հայաստանը կռվախնձոր է դառնում Հռոմի և Պարսկաստանի միջև, բայց հայ ժողովուրդը շնորհիվ իր վարած ինքնուրույն քաղաքականության, ոչ միայն կուլ չի գնում արտաքին անդադար ավերիչ պատերազմներին, այլև հանձին Պարթևական թեկնածու Տրդատի, 66 թվին կարողանում է վերականգնել իր կորցրած անկախությունը։

Հաջորդ դարի մի քանի հայ թագավորներ՝ Տիրանը, Արշակ II-ը և Պապը իրենց վարած ինքնուրույն քաղաքականությամբ պահպանում են իրենց հավասարակշռությունը պարսկա-հռոմեական մրցակցության ժամանակ և խուսափում են նրանց պատերազմներից։ Այդ բանը տեսնում ենք նաև հետագա դարերում։ Հայոց Պապ թագավորը, որ Հռոմի կայսրի օգնությամբ էր գահ բարձրացել, հաշվի առնելով իր երկրի շահերը, աշխատեց որոշ չափով լավ դնել նաև Տիզբոնի արքունիքի հետ, առանց

հաշվի նստելու հռոմեական կայսրության հետ, որովհետև նա լավ գիտեր, որ Սասանյանների հետ մշտապես թշնամի մնալը օտարված չէր Հայաստանի համար։ Իսկ Պապն այդ անում էր ոչ թե Տիզբոնի ճնշման տակ, այլ իր պետության քաղաքական կյանքը Մերձավոր Արևելքում բարձրացնելու համար։ Դա էլ հենց ցույց է տալիս, որ նա վարում էր ինքնուրույն քաղաքականություն, առանց խաղալիք դառնալու այս կամ այն տերության ձեռքին և այդ վարած ինքնուրույն քաղաքականության հաղի վրա էլ նա ապահովում է հռոմեական կայսրության կողմից։

Երկրորդը, դա հայերի մշած գործավոր պայքարն էր օտար նվաճողների ու տիրողների դեմ։ Հայ ժողովուրդը զուրկ չի եղել սեփական ինքնուրույն քաղաքականությունից, նրա բարձրացրած հաճախակի ապստամբությունները օտարերկրյա հափշտակիչների դեմ երկու հազար տարվա ընթացքում, ցույց են տալիս, որ այդ ժողովուրդը և նրա դեկավարները ունեցել և վարել են ինքնուրույն քաղաքականություն, ելնելով իրենց երկրի և ժողովրդի ինքնուրույնության պահպանման շահերից։

Պետք է նշել և ընդգծել, որ եթե հայերն իրենց գոյության ընթացքում մեծ մասամբ պետություն չեն ունեցել, եթե նրանք չունենային իրենց ինքնուրույն քաղաքականությունը կուլ կգնային պատմության ընթացքում, ճիշտ այնպես, ինչպես կուլ են գնացել բազմաթիվ այլ ժողովուրդներ։ Հայերը սկսած 5-րդ դարից իրենց գոյությունը պահպանեցին միմիայն այն երկարամյա պայքարի շնորհիվ, որ նրանք մղեցին օտար զավթիչների դեմ և դա էլ նրանց վարած ինքնուրույն քաղաքականության արդյունքն էր։

Գարագաշյանը, որին մենք համարում ենք լավագույն ուսումնասիրողներից մեկը, վարդանանց պատմությունը համարում է «երկու կուսակցության պատմություն»[1] Գարագաշյանի նման, մյուս հայ պատմաբանները՝ Լևոն և ուրիշները, գրեթե նույն կոնցեպցիայով են ոգեշնորհվել իրենց աշխատությունները շարադրելիս, որը ոչ միայն ճիշտ չէ, այլև հակագիտական է։

---

1 Մ. Գարագաշյան, «Բնական պատմություն Հայոց», հատոր Դ. 1895 թ. Թիֆլիս, էջ 143։

Վաղդանը, որ ըստ հայ-բուրժուական պատմագրության դրծում էր կղերականության խնամատարության տակ, պետք է, որ վարած լիներ մեծիմաստ բյուզանդական քաղաքականություն, այն ինչ, մենք հակառակն ենք նկատում։ Նրա երկարամյա գործունեության ընթացքում չենք տեսնում, որ նա որևէ դեպքում վարած լիներ հակապարսկական քաղաքականություն, նույնիսկ մի այնպիսի շրջանում, երբ Տիզբոնի արքունիքը վտանգել էր հայ Արշակունյաց պետությունը։ Ընդհակառակը, պատմական տվյալները ցույց են տալիս, որ նա իրրև սպարապետ շատ հաճախ հայկական այրուձիու գլուխն անցած երկար տարիներ կռվել է հոների դեմ, պարսիկների կողմը։ Եվ իր մեծ հաղթական ճակատամարտերի մեծ մասը կատարել է Տիզբոնի համար։ Իսկ դա արդյո՞ք նշանակում էր, որ Վաղդանն այն ժամանակ վարում էր պարսկական քաղաքականություն։ Ի հարկե, ոչ։ Սպարապետն այդ կատարում էր, որովհետև պարսիկները թեև վերացրել էին հայկական թագավորությունը, բայց չէին դիպել երկրի ինքնավարությանը և չէին խառնվում երկրի ներքին գործերին։

Իսկ երբ Հազկերտը փորձ է անում վերացնել հայերի ինքնավարությունը և խառնվել երկրի ներքին գործերին, այն ժամանակ Վաղդանը, որ մինչ այդ սուրը ձեռքին կռվում էր պարսիկների թշնամիների դեմ, այժմ ինքն է սուրը բարձրացնում նրանց դեմ, որպես թշնամիների։ Այստեղից էլ պետք է եզրակացնել, որ օրիենտացիաների և կուսակցությունների հարցը պետք է մեջտեղից վերացնել, քանի որ Վաղդանի համար այս կամ այն պետության օրիենտացիան ընդունելը բխում էր միայն իր հայրենիքի շահերից։ Ուստի նա վարում էր իր ժողովրդի սեփական օրիենտացիան, որովհետև, քանի որ Տիզբոնի արքունիքը հայերի նկատմամբ վարում էր մեղմ քաղաքականություն, Վաղդանը և իր հետևորդները հաշտ էին նրա հետ, իսկ երբ խըստացնում էր իր քաղաքականությունը, նա դառնում էր թշնամի։ Հետևաբար, նա չի վարել ոչ բյուզանդական և ոչ էլ պարսկական քաղաքականություն, այլ վարել է հայ ժողովրդի սեփական ինքնուրույն քաղաքականություն։ Այս է պատմական իրողությունը։

Նույնը պետք է ասել նաև Վասակ մարզպանի մասին։ Առհասարակ, պետք է ժխտել այն կարծիքը, որ երբ թե Սյունյաց

նախարարությունը մոտ լինելով Պարսկաստանին, վարել է վերջինի օրիենտացիան. «Սիւնեաց տեղագրական դիրքը, ուր նշանակելի է մանաւանդ իրենց Պարսկաստանի մօտաւորութիւնը, որ Երասխով միայն կը բաժանուի անկէ, քաղաքական յատուկ, լաւ ևս բնական ուղղութեան մը հետևելու ստիպուած են սիւնական նախարարները»[1], այսինքն վարելու պարսկական քաղաքականությունը։ Բարկեն վարդապետ Կյուլասերյանի վերոհիշյալ դրույթը ոչ միայն հակագիտական է, այլև մեղանչում է պատմական փաստերի առաջ։ Պատմական տվյալները ցույց են տալիս, որ Վասակի պապ Անդովկ Սյունեցին ոչ միայն չէր վարում պարսկական քաղաքականություն, այլև վերջում կատաղի թշնամի է դառնում պարսիկներին[2]։ Իսկ ինչ վերաբերում է Վասակին, նույնպես չենք կարող ասել, որ նա սկզբից և եթ ունեցել է պարսկական օրիենտացիա։ Մեր շարադրությունից պարզ երևաց, որ նա Ավարայրի ճակատամարտից առաջ, հատկապես Դենշապուհի աշխարհագրից հետո, լուրջ կերպով դժգոհում է Տիզբոնի արքունիքից, թշնամանում ու հեռանում նրանից և մոտենում է Վարդանին ու. գործում նրա հետ։ Պատմական այս փաստերը հերքում են ոչ միայն Կյուլասերյանի աշխարհագրական ֆակտորի դերը, այլև Գարագաշյանի և մյուսների օրիենտացիաների և կուսակցությունների տեսությունները, որոնց փաթաթել են հայ ժողովրդի պատմության վրա։

Եթե այդպես է եղել Վասակի օրիենտացիան, ապա մեզ համար ավելի պարզ է դառնում նրա դիրքը ապստամբության մասին։ Մենք արդեն ցույց տվինք վերջում, որ Վասակին սկզբից և եթ դավաճան համարել չի կարելի։ Նրա տասը տարվա մարզպանական գործունեությունը պետք է բաժանել երկու շրջանի։ Առաջին շրջանը, որը տևում է մինչև Դենշապուհի աշխարհագիրը, այսինքն քանի որ Հազկերտը չէր սկսել իր հայածանքի քաղաքականությունը, նա մյուս նախարարների նման եկել էր այն եզրակացության, որ պետք է լեզու գտնել Տիզբոնի արքունիքի հետ, պահպանել երկրի ինքնավարությունը, զարկ տալ կուլտուրային ու ճնշել մարզպանական պոռտուկ և

[1] «Եղիշէ. Քննական ուսումնասիրութիւն», 1909 թ. Վիեննա, էջ 244։
[2] Փավստոս, էջ 133—139։

այդ պատճառով օգտագործել մի կողմից վերոհիշյալ նպատակներին հասնելու, իսկ մյուս կողմից իր դիրքերը երկրում ավելի ամրապնդելու համար։ Եթե վասակի դիրքն ու գործունեությունն այդպիսին չլիներ, կորյունը նրա մասին գովեստով չէր խոսի,[1] որովհետև նա իր «վարք Մաշտոցի» աշխատությունը գրել է հենց այդ շրջանում։

Երկրորդ շրջանը սկսվում է Դենշապուհի կատարած աշխարհագրից հետո, այսինքն, 448 թվից մինչև 450 թվի նոյեմբերը ամիսը, երբ Վասակը, որպես պետական պաշտոնյա—մարզպան, նույնպես տուժելով Դենշապուհի գործունեությունից, թշնամանում է Տիզբոնի դեմ, միանում սպարապետ Վարդանի հետ և ակտիվ կերպով լծվում պատերազմական գործողություններ կազմակերպելու գործին։ Վասակը եղել է պատերազմի ամենաակտիվ կազմակերպիչներից մեկը։ Նա որպես մարզպան, դժգոհելով Տիզբոնի քաղաքականությունից, ձգտում էր ապստամբության միջոցով մեղմել Հազկերտի խիստ ու հալածիչ քաղաքականությունը, պահպանել երկրի ինքնավարությունը, միևնույն ժամանակ հասնել թագավորական դահին։ Ահա պատերազմին դիմելու նրա ձգտումների դրդապատճառները։

Երրորդ շրջանը, դա դավաճանության էտապն է, այսինքն 450 թվի նոյեմբերից մինչև նրա անկումը՝ 451 թվի մայիսի վերջը ամիսը, մարզպանությունից հեռացվելն ու դատի տրվելը։ Վասակի դավաճանության մեջ վճռական դեր է խաղացել այն, որ Իրանդական կայսրությունը հրաժարվում է խոստացած օգնությունը ցույց տալուց։ Նա ժամանակ ստելով կազմակերպված պատերազմին, մեծ հույս ուներ, որ կայսրությունից ստացած օգնության միջոցով կկանգնեցնեն պարսիկներին և կվերականգնեն իրենց անկախությունը կամ թե կպահպանեն եղած դրությունը։ Բայց երբ այդ օգնության հույսը կորչում է, հոների արշավանքների ձայները դեռևս չէին լսվում, Արևմտյան հայ իշխաններից և հունական կառավարիչներից օգնություն չէր գալիս, այն ժամանակ նա ետ է կանգնում իր իսկ կազմակերպած գործից և աշխատում է խափանել ապստամբությունը, որովհետև նա վախենում էր, որ իրենց թույլ ուժերով չեն կարողանա դիմադրել պարսկական հզոր բանակին և պարտություն կկրեն։ Որպես մարզպան և պետական պաշտոնյա այն ժամանակ ինքն ամենից ավելի պատասխանատվության պիտի ենթարկվեր և զրկվեր իր պաշտոնից, Այդ պատճառով էլ ետ է կանգնում իր իսկ կազմակերպած պատերազմից։ Ավելին, նա ոչ միայն ետ է կանգնում, այլև տեսնելով, որ չի կարողանում կասեցնել պատերազմը, իրեն հետագայում ապահովելու համար, անմիջապես դիմում է Միհրներսեհին և զրանով իսկ իր դավաճանությունը, որպես մորթապաշտ կարկերիա, վերջնականապես մերկացնում է։

Վասակի այդ քայլը, որ նա կատարում է իր մարզպանության գործունեության երրորդ շրջանում, երբեք չի արդարացվում անաչառ պատմության կողմից, ինչպես փորձում են ցույց տալ որոշ ուսումնասիրողներ։ Վասակին արդարացնելու ուղղությամբ դարձյալ առաջին անգամ փորձ է անում Գարագաշյանը. նա գրում է. «Սուտ և զրպարտություն է, թե Վասակայ սիրան էր կանխաւ թիւր հալ ի կրակապաշտութիւն աշխարհային յուսով և ի նոյն միտեցոյց գալլս։ Սակայն ստոյգ է, թէ մինչեան ոչին արդէն առած էր հաստոյր հարուածը։ Թէ առանց արտաքին ձեռնատուության, մանաւանդ Յունաց, ի զուր էր յուսալ յաղթութիւն՝ յայտնի էր ամենուն։ Մարտիրոսական պակի փառքը, որ կը թուէր լինել բարեպաշտութեան վերջին ակնկալութիւնը՝ չէր բաւական պատճառ Վասակայ պէս «յառաջիմաց» մարդոց բանալ դուռն անխորհուրդ ապստամբության, որոյ վախճանն կասկածոյ աղէտ։ Վասակ ետ կենայ ապստամբութենէն՝ երբ ելան ի դիրև ամէն հնարք կասեցուցանելոյ հակառակ կողմը, երկպառակութիւնը զօրացաւ, և պատերազմն եղաւ ներքին և արտաքին միանգամայն»։[1]

Իսկ մի այլ տեղում Գարագաշյանն իր տեսակետն ավելի պարզ ու որոշ է դրսևորում Վասակի մասին... «Եթէ ընդունինք թէ Վարդան, իբրև նախանձաւոր քրիստոնեայ, ունէր պատճառ ընտրելու անյոյս պատերազմ մը, տեսնելով հաստոյ աչօք մարտիրոսութեան պակ՝ պարտինք ընդունել, թէ Վասակ, իբրև իմաստուն քաղաքագէտ՝ ունէր գոնէ նոյնչափ պատճառ չանալու

1 Կորիւն, էջ 62։

1 Գարագաշյան, հատոր Դ, էջ 182։

խափանել այն պատերազմը, որը յանդուգն ձեռնարկութիւնն».[1]

Այդպիսով, ըստ Գարագաշյանի, Վասակը խոհեմ, հեռատես և հայրենասեր էր և նույնիսկ մի գլխով բարձր Վարդանից։

Գարագաշյանից հետո հայ բանասերներից Ն. Ադոնցն է, որ, նույնպես իր „Марзпан Васак перед судом историков"[2] աշխատության մեջ, փորձ է անում արդարացնել Վասակին, որ իբր թե նրա վարած քաղաքականությունն ավելի ճիշտ է եղել, քան Վարդանինը։ Նույն կարծիքին է նաև պատմաբան Լեոն (տես Ս. Մեսրոպ, Թիֆլիս, 1904 թ., էջ 289)։ Չի կարելի համաձայնել վերոհիշյալ հեղինակների հետ, որոնք անտեղի փորձ են անում արդարացնել Վասակին. նա արդարանալու ոչ մի հիմք չունի, ինչպիսի դիվանագիտություն էլ որ նա դրսևորած լիներ, որովհետև, երբ մի ժողովուրդ կազմակերպված դուրս է գալիս օտար նվաճողի դեմ հանուն իր անկախության, սոսկալ նրան կրկին անգամ միայ բռնակալի լծի տակ, անհնարին գործ էր և դա ոչ միայն մարզպանին, այլև անգամ սպարապետի ուժերից էլ վեր էր։ Իսկ Վասակը ոչ միայն դավաճանությամբ հեռանում է իր իսկ կազմակերպած պատերազմից, այլև իր գործերով միանում է Շապուհին և նրա հետ միասին ակտիվ կերպով պայքարում է ապստամբությունն արագ լիկվիդացնելու համար, որով էլ ավելի է դրսևորում իր իսկական դավաճանությունը և այստեղ այլևս ոչ մի դիվանագիտություն չի մնում, բացի սոսկ դավաճանությունից։

Իսկ ինչ վերաբերում է Գարագաշյանի այն պնդմանը, որ իբր թե Վարդանն իրեն մղում էր դեպի հուսահատական պատերազմ և անպայման որոշել էր մեռնել, դա նույնպես ճիշտ չէ։ Սպարապետը հայ ժողովրդին տանում էր դեպի Ավարայր մարտընչելու ու հաղթելու, և ոչ թե մեռնելու։ Թեև ինքը ճակատամարտում ընկնում է հերոսի մահով, բայց և այնպես պարսիկների դեմ կռվող հայերը վերջի վերջո դուրս են գալիս հաղթանակով և

[1] Գարագաշյան, հատոր Դ, էջ 143։

[2] *Н. Адонц*, «Марзпан Васак перед судом историков», записки Восточн. отдел. имп. русск. Археолог. общ., XV, С. Петербург, 1904, стр. 0121—0130.

ստիպում են Հազկերտին ետ կանչել իրանիզացիայի քաղաքականությունից և ձեռք քաշել հետապնդած նպատակներից։ Ահա թե ինչ են բերում Ավարայրը և նրանից հետո տեղի ունեցած կռիվները հայերի համար։

450—451 թ.թ։ Սասանյան Պարսկաստանի դեմ ժրած հայ ժողովրդի կռիվները, որոնք հայտնի են «Վարդանանց» պատերազմ անունով, իր էությամբ լայն ժողովրդական ազատագրական պատերազմի բնույթ էին կրում, ծածկված կրոնական քողով։ Իրենց այդ պատերազմով հայերը ձգտում էին թոթափել պարսկական բռնակալության ծանր լուծը և վերականգնել իրենց կորցրած անկախությունը։ 451 թվի ապստամբությունը մարզպանական Հայաստանի առաջին մեծ ժողովրդական ազատագրական պատերազմն էր ուղղված Սասանյան դեսպոտիզմի դեմ, որը ձգտում էր ոչնչացնել հայ ժողովրդի ինքնուրույնությունն ու կուլտուրան։

Վարդանանց պատերազմը հայերի համար ունեցավ այն խոշոր նշանակությունը, որ նրանք կարողացան վերականգնել իրենց ինքնավարությունը, տնտեսական, կուլտուրական և կրոնական արատնյալ վիճակն ու ձեռք բերել հարկերի և այրուձիու ծառայության թեթևացումը։

«Ռուսական բանակը, որի կեսը մնաց Բորոդինոյի դաշտում, իրեն ոչ պարտված էր զգում, ոչ պարտված էր համարում։

Իրեն պարտված չէր զգում նաև ռուս ժողովուրդը և նրա հիշողության մեջ Բորոդինոն մնաց ոչ որպես պարտություն, այլ որպես ապացույց, որ նա անցյալում ևս կարողացել է պաշտպանել իր ազգային անկախությունը ամենասոսկալի հարձակումներից ...» (Ե. Տարլե, «Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան 1812 թ.», Երևան, 1939 թ., էջ 193—194)։

Ճիշտ այսպիսի դրության մեջ էր նաև հայկական բանակը Ավարայրում։ Նա չպարտվեց, այլ գլխավոր հրամանատարի սպանությունից հետո միայն թողեց բաց ճակատամարտեր մղելու տակտիկան, ետ քաշվեց պատերազմի դաշտից և ընտրեց պարտիզանական կռիվ վարելու, թշնամու բանակը մասերի բաժանելու և հյուծելու տակտիկան։ Նա իր այդ կռվի նոր մեթոդներով դուրս եկավ հաղթանակով։

Հայ ժողովուրդը թե այդ ժամանակ և թե դրանից հետո

երբեք իրեն պարտված չի զգացել Ավարայրում։ Ավարայրը նրա պայքարի ու հաղթանակների սիմվոլն է եղել։

Վարդանանց անցքերը, հատկապես Ավարայրը, էլ ավելի է համախմբում հայ ժողովրդին իր վարդանների շուրջը, նրա մեջ զարթեցնում սերն ու պիտակցությունը դեպի իր անկախության համար մղած պայքարը և հավատ է ներշնչում իր հաղթանակների նկատմամբ։

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում միշտ էլ մեծ ոգևորությամբ է հիշել Ավարայրի հերոսներին, հատկապես Վարդանին և առելությամբ է հիշել Վասակին։ Ճիշտ է եղել պատմության անողոք դատավճիռը Վասակ Սյունու նկատմամբ, երբ վաղ կերպով նրա ճակատին դրոշմել է դավաճանի մակդիրը և զրկել անարգանքի սյունին։ Վասակ անունը հոմանիշ է դիտվել «դավաճան» բառի հետ։ Այնինչ շատ արդարացի կերպով Վարդան Մամիկոնյանը համարվել է Ավարայրի ճակատամարտի հերոսը և իր կյանքը հայրենիքի փրկության համար զոհողը։

Վարդան Մամիկոնյանի կերպարը, որպես քաջ զորավարի, 5-րդ դարից իր ամբողջ հասակով բարձրանում ու հասնում է մեր օրերը և խանդավառում է մեզ կռվելու հանուն հայրենիքի ու նրա անկախության։

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971